ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2017թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Առկա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրով 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ համալսարանում սովորող ականին համապատասխանաբար՝ 2273 և 1715 (75,5 %, աղ. 1):

2017 թվականին համալսարանը տվել է 631 շրջանավարտ (առկա ուսուցման համակարգից), որից 527-ը (83,5%) վճարովի համակարգից:

Առկա ուսուցման համակարգ ընդունվել են 578 դիմորդներ, որից 127-ը (21,9%) անվճար, իսկ 451-ը՝ (78,1 %) վճարովի համակարգում:

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ ակադեմիական արձակուրդ են ձևակերպել 758, իսկ 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 626 ուսանող, որից 613-ը վճարովի համակարգից, ընդ որում՝ 615 ուսանող զորակոչվել են ժամկետային զինծառայության:

Միայն համալսարանում (առանց մասնաճյուղերի) 2018թ-ի հունվարի 1-ին 2017 թվականի նույն ժամկետի համեմատությամբ ուսանողների թիվը առկա համակարգում և ՀԱԱՀ քոլեջում նվազել է համապատասխանաբար 419 և 91 ուսանողով, իսկ հեռակայում և մագիստրատուրայում կրճատվել են 355 ուսանողով և 22 մագիստրանտով:

Առկա ուսուցման համակարգում միայն գերազանց գնահատականներով սովորում են 205 ուսանող, որից 45-ը (21,9%) վճարովի համակարգից:

Բարձր առաջադիմությամբ 19 ուսանողներ արժանացել են համալսարանի անվանական կրթաթոշակի, 24 ուսանողի վարձավճար զեղչվել է «ԱՄՔՈՐ», 51 ուսանողինը՝ «ՎԻՎԱՍԵԼ», 38 ուսանողինը՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից: Նրանցից 15-ը սահմանամերձ համայանքներից են: Սոցիալապես անապահով 80 ուսանողների վարձավճարը զեղչվել է անկախ կրթական ծրագրերից և ուսուցման համակարգից (փոխհատուցվել է պետության կողմից 17200 հազար դրամ):

Համալսարանի միջոցների հաշվին, սկսած 2015 թվականից, անվճար համակարգի ուսանողների թվաքանակի 10%-ը (12 ուսանող) սովորում են անվճար համակարգում, որոնք հետագայում ենթակա են շրջափոխման:

Բացի վերը նշվածներից, հաշվետու տարում առկա համակարգում զեղչվել է 284 ուսանողների վարձավճարը:

2016-2017 ուստարում զեղչվել է նաև ապրիլյան քառօրյա պատերազմին մասնակցած 94 ուսանողի վարձավճարը (առկա համակարգում) և152 ուսանողի վարձավճարը (հեռակա ուսուցման համակարգում):

Ընդհանուր առմամբ հաշվետու տարում համալսարանի միջոցների հաշվին, ինչպես նաև համալսարանի աջակցությամբ տարբեր միջոցներից վճարովի համակարգի 1803 ուսանողների վարձավճարը զեղչվել է տարբեր չափերով (20-70%-ով), իսկ մի մասինը՝ ամբողջությամբ:

1.1.1. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 2016-2017 ՈՒՍՏԱՐՈՒՄ

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը և անցկացումը համալսարանի հիմնական գործառույթներից է, որը մշտապես գտնվել է համալսարանի գիտական խորհրդի, ռեկտորատի և բոլոր ստորաբաժանումների ուշադրության կենտրոնում:

Այս առումով պետք է նշել, որ ուսումնական տարվա սկզբից մշակվում և հաստատվում է կրթական բոլոր բաղադրիչների ժամանակացույցը: Ըստ այդ ժամանակացույցի՝ կազմակերպվել են կիսամյակային քննաշրջանները, պարտքերի առաջին և երկրորդ մարման ժամկետները և տրամադրվել ֆակուլտետներին:

Գիտելիքների ստուգման և վերահսկման կարգը քննարկվել են ռեկտորատում և համապատասխան ֆակուլտետներում:

Աղյուսակ 1

Տվյալներ ՀԱԱՀ-ի ցերեկային ուսուցման բակալավրային մասնագետների կրթական աստիճանում սովորող ուսանողների թվաքանակի վերաբերյալ

N	Ֆակուլտետներ / Ցուցանիշներ	Ընդամենը համալսարանում		Որից՝ ըստ ֆակուլտետների						
				Ագրոնո-միական	Ագրոբ.և շուկայ.	Տնտեսա-գիտակ.	Պարեն. տեխնոլոգ.	Անասնաբուժ. և անասնաբուծ.	Գ/Մ և Ա/Տ	ՄՋ և ՀՇ
1	Ուսանողների թվաքանակը առ 01.01.17թ.	ընդ	2692	278	443	797	517	257	178	222
		որից վճ	2143	176	389	742	363	186	121	166
2	Ուսանողների թվաքանակը առ 01.01.18թ.	ընդ	2273	307	273	509	545	242	183	214
		որից վճ	1715	185	227	469	379	168	130	157
3	Շրջանավարտների թվաքանակը տարվա ընթացքում	ընդ	631	34	188	260	49	31	32	37
		որից վճ	527	19	175	241	27	21	19	25
4	Ուսանողների ընդունելությունը տարվա ընթացքում	ընդ	578	125	24	25	183	78	83	60
		որից վճ	451	96	15	18	145	59	69	49
5	Հեռացումներ	ընդ	213	30	18	25	53	44	24	19
		որից վճ	197	27	16	24	48	40	23	19
6	Գտնվում են ակադեմիական արձակուրդում առ 01.01.17թ	ընդ	758	91	43	89	198	78	127	132
		որից վճ	748	88	43	88	194	76	127	132
	որից զին.ծառ.կապակցությամբ		744	91	39	88	190	77	127	132
7	Գտնվում են ակադեմիական արձակուրդում առ 01.01.18թ	ընդ	626	76	32	82	149	73	107	107
		որից վճ	613	73	32	80	145	72	104	107
	որից զին.ծառ.կապակցությամբ		615	75	30	79	145	72	107	107
8	Օգտվել են վարձավճարի զեղչից	16-17ուս.տ II կիս.	597	31	162	274	67	7	18	38
		17-18ուս.տ I կիս.	138	30	22	28	14	14	8	22
9	Ազատվել են վարձավճ. օրենսդ. սահմ. կարգ.	վճ.համ.	29	3	-	6	3	6	8	3
10	Գերազանց սովորող ուսանողների քանակը	ընդ	205	26	23	76	39	10	8	23
		որից վճ	45	-	5	38	-	-	-	2
11	ՀԱԱՀ անվանական կրթաթոշակ.	ընդ	15	2	2	2	2	2	3	2
12	Անվանական այլ կրթաթոշակներ	ընդ	2	2	-	-	-	-	-	-

Ընդունվել է 713 ուսանող, սակայն սեպտեմբերի 1-ին 135 ուսանող համալսարան չի ներկայացել

Քննությունների ժամանակացույցը կազմելիս հիմնականում հաշվի է առնվել ուսանողների կարծիքը քննական առարկաների հանձնման հերթականության սահմանման վերաբերյալ:

Գրաֆիկները համաձայնեցվել են նաև ամբիոնների հետ և վերջնական տեսքով ներկայացվել հաստատման: Հաստատված գրաֆիկները բազմացվել և քննաշրջանից 3-4 շաբաթ առաջ փակցվել են ֆակուլտետների հայտարարությունների ցուցափեղկերում, մեկական օրինակ տրամադրվել է ուսումնամեթոդական կենտրոնին և որակի վերահսկման խմբին, իսկ առանձին ամբիոններին վերաբերող քննական ժամանակացույցերը՝ քաղվածքի տեսքով դեկանների կողմից տրամադրվել են ամբիոններին և դասախոսներին: Քննաշրջանների ժամանակացույցը ներկայացվում է նաև համալսարանի կայքէջում, որպեսզի տեղեկացվեն նաև ուսանողների ծնողները և բոլոր շահառուները: Նախապես, ըստ կուրսերի, մասնագիտությունների և առարակների՝ հատկացվել են լսարանները, որոշվել ռեկտորատի ներկայացուցիչները (մեկ օր առաջ) և քննության անցկացման ժամանակը:

Քննություններն անցկացվել են կենտրոնացված կարգով՝ ռեկտորատի ներկայացուցիչների, դեկանների, ամբիոնների վարիչների և որակի վերահսկման խմբի վերահսկողությամբ:

Ստորև ներկայացվում են քննաշրջանի արդյունքներն ըստ կիսամյակների և մասնագիտությունների (աղ. 2):

2016-2017 ուստարվա առաջին կիսամյակում համալսարանում քննություններին պետք է մասնակցեր 2469 ուսանող, որից՝ ագրոնոմիական ֆակուլտետում՝ 257 ուսանող, տնտեսագիտական ֆակուլտետում՝ 807, անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում՝ 232, պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում՝ 457, գյուղ. մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետում՝ 177, հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետում՝ 182, ագրոբիզնեսի ու շուկայաբանության ֆակուլտետում՝ 357:

ՈՒսանողների բացարձակ առաջադիմության ամփոփիչ արդյունքներն ըստ ֆակուլտետների և կիսամյակների ներկայացված են ստորև (աղ.3):

Հատկանշական է, որ նախորդ տարվա նույն կիսամյակի համեմատությամբ շուրջ 8,5 %-ով բարձրացել է ուսանողների առաջադիմությունը ագրոնոմիական, 1,7%-ով՝ պարենամթերքի տեխնոլոգիաների, 5,4% ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում, 3,3%-ով տնտեսագիտական ֆակուլտետում, 2,2%-ով՝ անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության, իսկ հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետներում, Գյուղ.մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետներում առաջադիմությունը նվազել է 4 և 3,8%-ով:

Համալսարանի մակարդակով ուսանողների առաջին կիսամյակի բացարձակ առաջադիմությունը կազմել է 77 %, որը 3,5% գերազանցում է նախորդ տարվա նույն կիսամյակի ցուցանիշը:

2-րդ կիսամյակի քննությունների վերլուծությունից պարզվում է, որ 1898 ուսանողից սեսիոն քննությունների ժամանակ բոլոր քննությունները հանձնել է 1484-ը (առաջադիմությունը՝ 78.2%) ուսանող, ընդ որում՝ ամենացածր առաջադիմությունը գրանցվել է 1-ին կուրսերի ուսանողների մոտ՝ 74%, իսկ ամենաբարձր առաջադիմությունը՝ 5-րդ կուրսի ուսանողների մոտ՝ 90%:

2-րդ կիսամյակում համալսարանում ուսանողների առաջադիմության միջին բալը կազմել է 3,7, ինչպես և 1-ին կիսամյակում (անվճարում՝ 4.3, վճարովի համակարգում՝ 3,5): Առավել բարձր միջին միավոր ապահովել են ագրոնոմիական (3,8), և տնտեսագիտական (3.7), ֆակուլտետներում), իսկ ցածր միջին միավոր է գրանցվել է ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում (3,5):

1-ին կիսամյակում միայն գերազանց գնահատականներով քննությունները հանձնել է 338 ուսանող (14,4%), գերազանց և լավ գնահատականներով՝ 434 ուսանող (18,5%), խառը՝ 633 ուսանող (27,0%) և միայն բավարար գնահատականներով՝ 495 ուսանող (21,1%), իսկ անբավարար ստացել է 406 ուսանող (17,3%):

2-րդ կիսամյակում միայն գերազանց գնահատականներով քննությունները հանձնել է 250 ուսանող (16,8%), գերազանց և լավ գնահատականներով՝ 346 ուսանող (23,2%), խառը գնահատականներով 467 ուսանող (31,5%) և միայն բավարար գնահատականներով՝ 421 ուսանող (28,37%), իսկ անբավարար ստացել է 350 ուսանող (19,4%):

Աղյուսակ 2

Ուսանողների առաջադիմության ամփոփ արդյունքները՝ ըստ ֆակուլտետների (2016-2017 ուստարի)

Ֆակուլտետը	2016-2017 ուստարի						1-ին կիսամյակ						2-րդ կիսամյակ					
	1-ին կիսամյակ			2-րդ կիսամյակ			1-ին վերահանձնում			2-րդ վերահանձնում			1-ին վերահանձնում			2-րդ վերահանձնում		
	Ուսա-նողն. թիվը	Առա-ջադի-մութ. %	Միջին գնահա տակ.	Ուսա-նողն. թիվը	Առա-ջադի-մութ .%	Միջին գնահա-տակ.	Ուսա-նողն. թիվը	Առա-ջադի-մութ. %	Միջին գնահա-տակ.	Ուսա-նողն. թիվը	Առա-ջադի-մութ. %	Միջին գնահա-տակ.	Ուսա-նողն. թիվը	Առա-ջադի-մութ. %	Միջին գնահա-տակ.	Ուսա-նողն. թիվը	Առա-ջադի-մութ.%	Միջին գնահա-տակ.
Ագրոնոմիական	257	72,0	3,7	209	79,9	3,8	84	86,8	3,1	34	99,6	3,0	40	96,2	3,2	8	99,0	3,0
Անասնաբուժ. բժշկ.և անասնաբուծ.	232	83,6	3,6	231	81,0	3,6	11	99,1	3,0	-	-	-	16	98,7	3,6	-	-	-
Պարենամթերքի տեխնոլոգիական	457	84,5	3,7	422	87,0	3,6	60	97,5	3,1	11	100	3,0	47	98,1	3,0	8	100	3,0
ԳՄ և ԱՏ	177	74,0	3,6	131	67,2	3,6	23	94,3	3,3	10	98,9	3,1	38	86,2	3,4	18	100	3,1
ՀՄ և ՀՇ	182	68,1	3,7	155	62,6	3,6	58	87,9	3,0	22	100	3,0	58	93,5	3,0	10	100	3,0
Տնտեսագի-տական	807	81,8	3,7	530	80,0	3,7	98	93,9	3,1	49	99,9	3,0	93	97,5	3.1	13	100	3,0
Ագրոբիզնես և շուկայաբանութ.	357	61,6	3,6	220	70,0	3,5	153	90,9	3,2	35	99,4	3,0	56	96,4	3,1	8	100	3,0
ՀԱԱՀ	2469	77,0	3,7	1898	78,2	3,7	487	93,5	3,1	161	99,8	3,0	348	96,6	3.2	65	99,9	3,0

Աղյուսակ 3

Ուսանողների առաջադիմության ամփոփ տվյալների դինամիկան վերջին երեք ուսումնական տարիների տվյալներով

Ֆակուլտետը	2014-2015 ուս. տարի						2015-2016 ուս. տարի						2016-2017 ուս. տարի					
	1-ին կիսամյակ			2-րդ կիսամյակ			1-ին կիսամյակ			2-րդ կիսամյակ			1-ին կիսամյակ			2-րդ կիսամյակ		
	Ուսանող. թիվը	Առաջադիմութ. %	Միջին գնահատակ.	Ուսանող. թիվը	Առաջադիմութ .%	Միջին գնահատակ.	Ուսանող. թիվը	Առաջադիմութ. %	Միջին գնահատակ.	Ուսանող. թիվը	Առաջադիմութ. %	Միջին գնահատակ.	Ուսանող. թիվը	Առաջադիմութ. %	Միջին գնահատակ.	Ուսանող. թիվը	Առաջադիմութ.%	Միջին գնահատակ.
Ագրոնոմիական	184	52,2	3.4	142	67,6	3.6	211	63,5	3.5	192	73,4	3.7	257	72,0	3,7	209	79,9	3,8
Անասնաբուժ. բժշկ.և անասնաբուծ.	167	73,7	3.4	160	83,8	3.6	172	81,4	3.5	165	84,8	3.7	232	83,6	3,6	231	81,0	3,6
Պարենամթերքի տեխնոլոգիան.	353	73,9	3.4	223	82,5	3.5	389	82,8	3.6	341	85,9	3.7	457	84,5	3,7	422	87,0	3,6
ԳՄ և ԱՏ	153	64,7	3.4	116	67,2	3.1	144	77,8	3.4	118	72,0	3.5	177	74,0	3,6	131	67,2	3,6
ՀՄ և ՀՇ	186	60,2	3.6	135	54,1	3.5	179	72,1	3.7	162	62,3	3.6	182	68,1	3,7	155	62,6	3,6
Տնտեսագիտական	840	72,6	3.6	606	65,7	3.5	731	78,5	3.7	690	74,9	3.7	807	81,8	3,7	530	80,0	3,7
Ագրոբիզնես և շուկայաբանություն	530	62,8	3.5	360	50,3	3.5	395	56,2	3.4	355	63,4	3.6	357	61,6	3,6	220	70,0	3,5
ՀԱԱՀ	2413	67.7	3.5	1742	65.7	3.5	2221	73.5	3.6	2023	74.2	3.6	2469	77,0	3,7	1898	78,2	3,7

1.1.2.ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսանողների հաճախելիության հարցը միշտ էլ եղել և մնում է համալսարանի բոլոր ստորաբաժանումների, գիտական խորհրդի, ռեկտորատի, ֆակուլտետների և ամբիոնների ամենօրյա ուշադրության կենտրոնում:

Համալսարանի ուսանողների հաճախումների միջին ցուցանիշը 1-ին կիսամյակում կազմել է 90,65%, իսկ 2-րդ կիսամյակում՝ 92,8%:

2016-2017 ուստարվա 2-րդ կիսամյակում 1-ին կիսամյակի ուսանողների հաճախումների ցուցանիշների համեմատությամբ դարձյալ բարձր ցուցանիշ է գրանցվել անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում՝ 96,07/% և Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում 95,8%:

Աղյուսակ 4

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2016 - 2017 ՈՒՍՏԱՐԻ I ԿԻՍԱՄՅԱԿ

Ֆակուլտետը	Ուսանողների թիվը	Ուս. ժամերի քանակը , ժամ	Ուս. բացակայությունները , ժամ	Նույնը , %
Ագրոնոմիական	278	139230	15406	11,0651
Տնտեսագիտական	800	365047	38110	10,4398
Անասնաբուժ-բժշկ	259	47105	1400	2,9721
Պարենամթ. տեխն.	561	280080	12340	4,4059
ԳՄ և ԱՏ	207	102824	8714	8,4747
ՄՋ և ՀՇ	228	111590	15880	14,2307
Ագրոբիզն.և շուկ.	389	155697	20514	13,1756
Ընդ.	2722	1201573	112364	9,3514
2016 - 2017 ՈՒՍՏԱՐԻ II ԿԻՍԱՄՅԱԿ				
Ֆակուլտետը	Ուսանողների թիվը	Ուս. ժամերի քանակը, ժամ	Ուս. բացակայությունները , ժամ	Նույնը , %
Ագրոնոմիական	215	108875	11749	10,7913
Տնտեսագիտական	530	251770	23096	9,1735
Անասնաբուժ-բժշկ	215	37418	1470	3,9286
Պարենամթ.տեխն.	419	208522	10748	5,1544
ԳՄ և ԱՏ	131	64855	5980	9,2206
ՄՋ և ՀՇ	155	75429	8794	11,6586
Ագրոբիզն. և շուկ.	224	269590	11313	4,1964
Ընդ.	1889	1016459	73150	7,1966

1.1.3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ 2016-2017 ՈՒՍՏԱՐՎԱ ՇՐՋԱՓՈԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կրթության համակարգում սովորողների գիտելիքների գնահատումը մի գործընթաց է, որի հիման վրա կատարվում է անվճար-վճարովի համակարգերի ուսանողների շրջափոխումը: Այդ գործընթացին լավատեղյակ են բոլոր ուսանողները և ակտիվ մասնակցում են այդ մրցակցությանը: Նման մոտեցումը, որտեղ գործում է մրցակցություն, նպաստում է առավել բարձր որակի գիտելիքներ ստանալուն: Ուստարում շրջափոխումն իրականացվում է՝ հաշվի առնելով քննական առարկաների վարկանիշային միավորը՝ տարեկան ՄՈԳ-ը: Շրջափոխման դինամիկայի վերլուծությունից երևում է, որ շրջափոխման մակարդակը բարձր է 1-ին կուրսում և տատանվում է 10-76,9 %-ի սահմաններում, իսկ կուրսերի բարձրացմանը զուգընթաց այդ մակարդակը նվազում է (աղ. 5):

Ամփոփ տվյալները վկայում են այն մասին, որ 2016-2017 ուստարվա քննությունների արդյունքում առաջինից երկրորդ կուրս փոխադրված ուսանողների 31,8 %-ը վճարովի համակարգից փոխադրվել է անվճար համակարգ, երկրորդ կուրսից երրորդ կուրս փոխադրվածների 16,52 %-ը, երրորդ կուրսից չորրորդ կուրս փոխադրվածների 21,5 %-ը, չորրորդ կուրսից հինգերորդ կուրս փոխադրվածների 8,1%-ը: Համալսարանի մակարդակով այն կազմել է 20,6%:

Աղյուսակ 5

Ուսանողների շրջափոխման արդյունքները

2016-2017 ուս. տարվա առաջադիմության տվյալներով

N	Ֆակուլտետը	1-ին կուրսից 2-րդ կուրս			2-րդ կուրսից 3-րդ կուրս			3-րդ կուրսից 4-րդ կուրս			4-րդ կուրսից 5-րդ կուրս			Ընդամենը			Վճ-ից անվճ. տեղափոխված ուս. - %-ը
		Անվճար տեղերի քանակը	Նախկինում եղել են անվճ.	Նախկինում եղել են վճար.	Անվճար տեղերի քանակը	Նախկինում եղել են անվճ.	Նախկինում եղել են վճար.	Անվճար տեղերի քանակը	Նախկինում եղել են անվճ.	Նախկինում եղել են վճար.	Անվճար տեղերի քանակը	Նախկինում եղել են անվճ.	Նախկինում եղել են վճար.	Անվճար տեղերի քանակը	Նախկինում եղել են անվճ.	Նախկինում եղել են վճար.	
1	Ագրոնոմիական	27	20	7	27	20	7	7	5	2	14	13	1	75	58	17	22,7
2	Տնտեսագիտական	4	1	3	6	6	-	6	5	1	6	6	-	22	18	4	18,2
3	Ագրոբիզն.և շուկայաբան	10	7	3	9	7	2	7	6	1	7	7	-	33	27	6	18,2
4	Պարենամթերք. տեխն.	38	27	11	36	31	5	39	29	10	19	18	1	132	105	27	20,4
5	Անասնաբուժ.բժշկ և անասնաբուծ.	19	9	10	17	17	-	15	14	1	8	6	2	59	46	13	22,0
6	Գյուղ.մեք. և ԱՏ	13	10	3	9	7	2	8	6	2	9	8	1	39	31	8	20,5
7	Հիդրոմել. հողաշ.և հող.կադ.	10	9	1	11	8	3	11	8	3	11	10	1	43	35	8	18,6
	Ընդամենը ՀԱԱՀ	121	83	38	115	96	19	93	73	20	74	68	6	403	320	83	20,6

Ֆակուլտետների միջև շրջափոխման արդյունքների վերլուծությունից պարզվում է, որ առաջին կուրսում շրջափոխման արդյունքների ավելի բարձր ցուցանիշ է գրանցվել գյուղ.մեքենայացման և ավտոմոբ.տրանսպորտի ֆակուլտետում-76,9 %, տնտեսագիտական ֆակուլտետում (75 %), անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծական ֆակուլտետում (52,6 %), ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում՝ (30 %), իսկ ամենացածր ցուցանիշը գրանցվել է հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետում (40 %), ագրոնոմիական ֆակուլտետում (26 %): Տարեկան ամփոփ տվյալների (բոլոր կուրսերի) վերլուծության արդյունքում պարզվում է, որ ամենացածր շրջափոխման մակարդակ գրանցվել է տնտեսագիտական և ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետներում (18,2 %):

1.2. 2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱԱՀ-ի 2017 թ. առկա ուսուցման համակարգում ընդունելությունը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների ցանկի և ըստ մասնագիտությունների, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ընդունելության տեղերի թվաքանակի և քննությունների:

ՀՀ կառավարության 2013 թ. նոյեմբերի 28 N1329-Ն որոշման համաձայն՝ վճարովի համակարգում 21 մասնագիտությունների գծով ընդունելությունը կատարվել է ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի գնահատականների հիման վրա: Տնտեսագիտական երեք (ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա, ագրարային քաղաքականություն, խորհրդատվություն և տեղեկատվություն, ապրանքագիտություն) մասնագիտություններում անվճար և վճարովի ուսուցման համակարգ ընդունվելու համար դիմորդը պարտադիր հանձնում է մեկ միասնական քննություն՝ «Մաթեմատիկա» առարկայից, իսկ «Հայոց լեզու» և «Օտար լեզու» առարկաների համար հայտագրում է ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթում նշված առարկաների քննությունների գնահատականը:

Ըստ այդ ցանկի՝ 2017 թ. ՀԱԱՀ-ում ընդունելություն է կազմակերպվել 31 մասնագիտությունների գծով: Ըստ ֆակուլտետների՝ դիմորդների թիվը հետևյալն է.

1. Ագրոնոմիական՝ 93
2. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության՝ 71
3. Պարենամթերքի տեխնոլոգիաների՝160
4. Տնտեսագիտական՝ 24
5. Ագրոբիզնեսի և շուկայաբանության՝ 56
6. Գյուղ.մեքենայացման և տրանսպորտային փոխադրումներ՝ 61
7. Հիդրոմելիորացիա, հողաշինարարություն և հողային կադաստր՝ 64
8. Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա (ՊՆ)՝ 6

Ընդամենը՝ 535 դիմում:

2017 թ. ընդունելության կազմակերպումը և անցկացումը կարելի է բաժանել 2 մասի:

1. Փաստաթղթերի ընդունում՝ ըստ մասնագիտությունների

2. ՀԱԱՀ-ում օտար լեզուների գծով (այլ բուհերի համար) կենտրոնացված համակարգով ընդունելության քննությունների անցկացում

Փաստաթղթերի ընդունումն ըստ մասնագիտությունների կատարվել է ս.թ. մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը:

Օտարերկրյա քաղաքացիների և 2017 թ. գարնանային զորակոչից զորացրված դիմորդների և քոլեջների շրջանավարտների փաստաթղթերն ընդունվել են հունիսի 25-ից մինչև հուլիսի 2-ը (2-րդ փուլ):

II փուլում դիմել են 89 դիմորդ, որից՝

1. *Ագրոնոմիական՝ 18*
2. *Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության՝ 15*
3. *Պարենամթերքի տեխնոլոգիաների՝ 26*
4. *Տնտեսագիտական՝ 1*
5. *Ագրոբիզնեսի և շուկայաբանության՝ 2*
6. *Գյուղ.մեքենայացման և տրանսպորտային փոխադրումներ՝ 17*
7. *Հիդրոմելիորացիա, հողաշինարարություն և հողային կադաստր՝ 10*

Ընդամենը՝ 89 դիմում:

2017 թ. ընդունելության ցանկի համապատասխան՝ ՀԱԱՀ-ին հատկացված էր 1342 տեղ, որից 123 անվճար այդ թվում՝ 10 տեղ բանակից զորացրվածների համար, 11 տեղ նպատակային ընդունելության և 1219 վճարովի տեղ՝ ԱՏ համակարգ: Առաջին և երկրորդ փուլերով բոլոր մասնագիտությունների գծով ընդունվել է 624 դիմում (աղ. 6):

Աղյուսակ 6

ՀԱԱՀ առաջին հայտով դիմած դիմորդների թիվը

Ֆակուլտետ	Ընդամենը	Ատեստատով	
		թվաքանակը	%-ով ընդամենից
Ագրոնոմիական	111	59	53.2
Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության	86	48	55.8
Պարենամթերքի տեխնոլոգիաների	186	136	73.1
Տնտեսագիտական	25	-	-
Ագրոբիզնեսի և շուկայաբանության	58	-	-
Գյուղ.մեքենայացման և տրանսպորտային փոխադրումներ	78	51	65.4
Հիդրոմելիորացիա, հողաշինարարություն և հողային կադաստր	74	39	52.7
Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա (ՊՆ)	6	-	-
Ընդամենը	**624**	**333**	**53.4**

ՀԱԱՀ դիմորդների թիվը՝ ըստ ՀՀ մարզերի և այլ պետությունների

Մարզը	Միասնական քննությունով		Ատեստատով		Ընդամենը	
	թիվը	%-ը	թիվը	%-ը	թիվը	%-ը
Երևան	146	23.4	142	22.8	288	46.2
Տավուշ	6	1	9	1.4	15	2.4
Գեղարքունիք	15	2.4	16	2.6	31	5
Սյունիք	12	1.9	5	0.8	17	2.7
Վայոց ձոր	8	1.3	5	0.8	13	2.1
Արմավիր	27	4.3	36	5.8	63	10.1
Արարատ	19	3.1	24	3.8	43	6.9
Արագածոտն	13	2.1	19	3.0	32	5.1
Լոռի	3	0.5	6	0.9	9	1.4
Շիրակ	11	1.8	11	1.8	22	3.5
Կոտայք	45	7.2	45	7.2	90	14.4
Այլ պետություն	-	-	1	0.2	1	0.2
Ընդամենը	305	49	319	51	624	100

Բոլորից շատ դիմումներ ստացվել են հետևյալ մասնագիտությունների գծով՝

1. Ագրոէկոլոգիա՝ 43
2. Անասնաբուժություն՝ 40
3. Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն՝ 37
4. Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն՝ 80
5. Գյուղ. հումքի և պարեն. փորձ. ստանդարտացում և սերտիֆ.՝ 42
6. Կենս. անվտ. և անվտ. արտ. իրավիճակներում՝ 32
7. Գյուղ.մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ՝ 50:

Աղյուսակ 7

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ 2017-2018ԹԹ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՓԱՍՏԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Մասնագիտության ծածկագիրը	ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Հատկացված տեղ			Ընդունված						Ընդամենը
		անվճար	վճարովի	ընդամենը	անվճար	վճարովի	Չորակոչվել են բանակ	Ստեփանակերտ		Սկիզբ (վճ)	
								անվճար	վճարովի		
ԱԳՐՈԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
01	Ագրոէկոլոգիա	5	25	30	5	35					40
02	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	10	50	60	10	40					50
03	Բույսերի պաշտպանություն	6	24	30	6	18					24
04	Պաշտպանված գրունտի տեխնոլոգիա	4	21	25	4	23					27
05	Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում	4	26	30	4	12					16
ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
06	Գյուղատնտեսության և պարենային ապրանքի փաթեթավորման տեխնոլոգիա և դիզայն	2	23	25	2	15					17
07	Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում	4	31	35	4	40					44
08	Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն	5	50	55	5	68					73
09	Կաթ, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա	8	62	70	8	19					27
10	Կաշվի և մորթու արտադրանքի տեխնոլոգիա	3	22	25	3	6					9
11	Հացի, հրուշակեղենի և մակարոնի արտադրանքի տեխնոլոգիա	4	31	35	5	19					24
12	Ձկան և ձկնամթերքների տեխնոլոգիա	3	32	35	3	2					5
13	Մսի և մսամթերքի տեխնոլոգիա	4	31	35	4	21					25
14	Պահածոյացման և սննդախտանյութերի տեխնոլոգիա	4	31	35	4	7					11

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ - ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
15	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն	5	20	25	6	26					32
16	Անասնաբուժություն	7	53	60	7	38					45
17	Գյուղ. կենդանիների սելեկցիա, գենետիկա և կենսատեխնոլոգիա	6	24	30	6	1					7
ա) ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
18	Ագրոբիզնես	3	47	50	3	4					7
19	Ապահովագրական գործ	1	39	40	1	-					1
20	Հաշվապահական հաշվառում և հարկում	1	49	50	1	1					2
21	Ֆինանսներ	1	59	50	1	4					5
բ) ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
22	Ագրարային քաղաքականություն, խորհրդ. և տեղ.	4	66	70	4	4					8
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
23	Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա	2	98	100	3	16					19
24	Ապրանքագիտություն	1	39	40	1	9					10
ՊՆ											
25	Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա	2	-	2	2	-					2
ա)ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
26	Հողաշինարարություն և հողային կադաստր	3	47	50	3	5					8
27	Փոխադրումների, ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	5	65	70	5	2					7
բ)ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
28	Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիա և ավտոմատացում	2	28	30	2	19					21
29	Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	6	59	65	7	63					70
30	Կենսագործունեության անվտանգություն	3	27	30	3	43					46
31	Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում, հիդրո կառուցվածքներ	5	35	40	5	26					31
ԸՆԴԱՄԵՆԸ		123	1219	1342	127	586					713

Հուլիսի 15-20-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման հիման վրա կատարվել է 3-րդ փուլի ընդունելություն:
ՀԱԱՀ դիմել են թվով 141 դիմորդ՝ հետևյալ մասնագիտությունների գծով՝

1. Ագրոնոմիական՝ 50
2. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության՝ 8
3. Պարենամթերքի տեխնոլոգիաների՝ 44
4. Գյուղ.մեքենայացման և տրանսպորտային փոխադրումներ՝ 20
5. Հիդրոմելիորացիա, հողաշինարարություն և հողային կադաստր՝ 19:

7-րդ աղյուսակում բերված են ԱՏ համակարգին հատկացված անվճար և վճարովի տեղերը և փաստացի ընդունված ուսանողների թվաքանակը՝ ըստ մասնագիտությունների:

Ագրոնոմիական ֆակուլտետ է ընդունվել 157, Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծական ֆակուլտետ՝ 84, Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ՝ 235, Տնտեսագիտական ֆակուլտետ՝ 28 ուսանող, Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետ՝ 26, Հիդրոմելիորացիա, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետ՝ 85, Գյուղ. մեքենայացման և տրանսպորտային փոխադրումների ֆակուլտետ՝ 98 դիմորդ: Այսպիսով՝ ՀԱԱՀ-ում նախատեսված 1342 ուսանողի փոխարեն (123 անվճար, 1219 վճարովի ԱՏ) 1-ին կուրս են ընդունվել 713 դիմորդ: Փաստացի անվճար համակարգ ընդունվել է 127, իսկ վճարովի համակարգ՝ 586 դիմորդ:

Վերլուծելով 2017թ. ընդունելության արդյունքները՝ ընդունող հանձնաժողովն անում է հետևյալ առաջարկությունները.

1. Հաջորդ ընդունելության ընթացքում տարբերակված մոտեցում ցուցաբերել այն մասնագիտություններին, որոնց համար 2017-2018 ուստարում առաջացել են թափուր տեղեր:
2. Պարբերաբար հանրապետության տարբեր մարզեր գործուղել համալսարանի դասախոսներին՝ դիմորդների մասնագիտական կողմնորոշման նպատակով: Հատուկ ուշադրություն դարձնել այն մարզերին, որտեղից դիմորդների թվաքանակը քիչ է՝ կապ ստեղծելով հենակետային վարժարանի հոսքային դասարանների հետ:
3. Հատուկ ուշադրություն դարձնել նպատակային ընդունելությանը՝ կարևորելով գյուղատնտեսական ուղղվածությամբ մարզերի և սահմանամերձ ու բարձր լեռնային գոտիների երիտասարդների ներգրավումը:

1.3 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հեռակա ուսուցման ռազմավարական նպատակն է աշխատաշուկայի պահանջներին բավարարող կրթությամբ մասնագետների պատրաստումը և ագրարային ոլորտում կիրառական, կրթական, գիտական և ինտելեկտուալ ուղղություններով առաջատար դիրքերի նվաճումը: Հեռակա ուսուցման դեպարտամենտում անհրաժեշտ է նպատակային դարձնել անհատական, ինքնուրույն աշխատանքների և քննությունների կազմակերպումը:

Ինքնուրույն աշխատանքների պատշաճ մակարդակով կազմակերպման ու անցկացման, ժամանակացույցին համապատասխան և պահանջվող որակով ստուգողական աշխատանքների և կուրսային նախագծերի (աշխատանքների) կատարման և հանձնման համար առաջին հերթին ամբիոններում լուծվել են մեթոդական գրականության ապահովվածության հարցը:

Ագրարային համալսարանի գիտամանկավարժական կոլեկտիվը մեծ աշխատանքներ է տարել հեռակա ուսուցման ուսանողների անհատական, ստուգողական, կուրսային և դիպլոմային նախագծերն ու աշխատանքները ժամանակին և պահանջվող որակով կատարելու համար, ինչպես նաև մեթոդական գրականության ստեղծման, թարմացման և հաստատման ուղղություններով:

2017 թ. ՀԱԱՀ-ի հեռակա ուսուցման ընդունելության գործընթացը կազմակերպվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված համալսարանի կանոնակարգերով ու ժամանակացույցով:

Սահմանված 27 մասնագիտություններից 18 մասնագիտությունների գծով դիմորդը կարող է ընդունվել առանց ընդունելության քննություններ հանձնելու՝ որպես մրցութային առարկաների գնահատականներ հայտագրելով ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի նշված առարկաների քննությունների գնահատականը, իսկ

պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Մնացած 9 մասնագիտությունների գծով դիմորդը պարտադիր հանձնում է ընդունելության մեկից մինչև երեք քննություն: Առանց ընդունելության քննությունների ընդունվածների թիվը կազմում է 634, ընդունելության քննությունները հաջողությամբ հանձնել են 100 դիմորդ և 3 սփյուռքահայ դիմորդ ընդունվել է հարցազրույցի արդյունքներով: Այսպիսով, 2017 թ. ՀԱԱՀ հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունվել է 737 ուսանող:

Բարձր առաջադիմություն ցուցաբերած 102 շրջանավարտներ հանրապետության տարբեր քոլեջներից տեղափոխվել են համալսարանի հեռակա ուսուցման դեպարտամենտի համապատասխան կուրսեր:

Հեռակա ուսուցման բակալավրային կրթական աստիճանում 2017թ. հունվարի 1-ի դրությամբ ուսանողների թվաքանակը 5133 է: 2018 թ հունվարի 1-ի դրությամբ հեռակա ուսուցման ուսանողների թվաքանակը 4830 է, հաշվետու տարում բուհ են ընդունվել 737 դիմորդ, 431-ի համար ձևակերպվել է ակադեմիական արձակուրդ զին. ծառայության մեկնելու կապակցությամբ, 15 ուսանողների համար ձևակերպվել է ակադեմիական արձակուրդ առողջական վիճակի պատճառով (աղ. 8):

Մեկ տարվա ընթացքում հեռակա ուսուցման համակարգից հեռացվել է 1163 ուսանող:

Այսպիսով, 2018 թ. հուվարի 1-ի դրությամբ հեռակա ուսուցման համակարգում առկա ուսանողների թվաքանակը 4384 է:

Վարձավճարի զեղչի արտոնությունից օգտվել են քառօրյա պատերազմի մասնակից 152 ուսանող և 16 ուսանող օրենքով սահմանված տարբեր արտոնություններց, 45 ուսանողի վարձավճարը ամբողջապես փոխանցվել է պետական նպաստի ձևով՝ օրենքով սահմանված կարգով, 4 ուսանող օգտվել է պետության կողմից վարձավճարի մասնակի փոխհատուցումից:

Վեցերորդ կուրսում զեղչվել է 881 ուսանողի վարձավճար:

Ուսումնադաստիարակչական աշխատանքները տարվում են ռեկտորատի, ամբիոնների և դեպարտամենտի կողմից նախատեսված աշխատանքային պլանների համաձայն:

2016-2017 ուստարվա ընթացքում ուսանողների համար կազմակերպվել են տարբեր բնույթի խորհրդատվություններ դասախոսների և դեպարտամենտի աշխատակիցների մասնակցությամբ: Հաշվի առնելով հեռակա ուսուցման առանձնահատկությունները՝ մասնավորապես ուսանող-դասախոս լսարանային շփման սահմանափակ հնարավորությունը, դեպարտամենտի և ամբիոնների կողմից ստեղծվել են հնարավոր բոլոր պայմանները՝ ուսանողների ինքնուրույն և խորհրդատվությունների միջոցով անհատական աշխատանքների ծավալների մեծացման համար: Դեպարտամենտը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում աշխատանքային, ուսումնական և կատարողական կարգապահության հարցը: Մեր առաջնային խնդիրներից մեկը դասընթացներին ուսանողների լիարժեք մասնակցության հսկողությունն է:

Դեպարտամենտում և ամբիոններում դասընթացների կազմակերպման և իրականացման վերաբերյալ մշտապես տարվում են օպերատիվ հաշվառումներ: Դեպարտամենտի կողմից ամենօրյա ստուգման արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման գործում առանձին ամբիոններում տեղ են գտել որոշ թերացումներ ու բացթողումներ: Այդ ամբիոններում դասավանդող դասախոսի փոխարինումը տեղի է ունեցել դեպարտամենտին նախապես տեղյակ չպահելով, իսկ որոշ դեպքերում դասաձախողում գրանցելու պահին: Նման դեպքում, երբ փոքր ժամաքանակով առարկաները լիարժեք չեն կատարվում, անշուշտ բացասական ազդեցություն են թողնում ուսանողների առաջադիմության վրա: Տարվա ընթացքում այն ուսանողների հարցը, ովքեր ունեցել են մեծ թվով բացակայություններ (հիմնականում մասնավոր ձեռնարկություններում աշխատող ուսանողների մոտ) քննարկվել են դեպարտամենտի նիստերում: Դեպարտամենտը մեծ ուշադրություն է դարձրել ուսանողների և ամբիոնների աշխատակիցների աշխատանքային կարգապահության բարձրացմանը: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ համեմատաբար կրճատվել են անհարգելի բացակայությունները: Այդ ուղղությամբ ամբիոններում դեռևս զգալի աշխատանք պետք է կատարել բարձրացնելու դասախոսների, օժանդակ անձնակազմի աշխատողների պատասխանատվությունը և ուսանողների կարգապահությունը:

Ուսանողների առաջադիմության մակարդակը կախված է նաև նրանց հաճախումներից, այդ առումով վերջին տարիներին հեռակա ուսուցման կազմակերպման և իրականացման գործընթացում առաջանում են դժվարություններ մասնավորապես, մասնավոր ձեռնարկություններում աշխատող և արտագնա աշխատանքի մեկնող ուսանողների հաճախումների ցածր մակարդակը:

Հեռակա ուսուցման դեպարտամենտի և ամբիոնների հրատապ խնդիրներից մեկն է ուսանողների առաջադիմության բարձրացումը: Այդ նպատակին հասնելու համար Մեթոդական և Գիտական խորհուրդներում պարբերաբար քննարկվում են ուսումնամեթոդական մայրենի լեզվով գրականությամբ, դասախոսների տեքստերով և քննական առարկաների հարցաշարերով ամբիոնների ապահովվածությունը:

Համալսարանի գրեթե բոլոր ամբիոններում հեռակա ուսուցման ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարման համար մեթոդական ցուցումներն առկա են, բայց դրանց մի մասը դեռևս մեթոդական խորհրդի կողմից հաստատված չեն: Կան նաև հնացած և նորացման կարիք ունեցող մեթոդական ցուցումներ:

Աղյուսակ 8

ՏՎՅԱԼՆԵՐ
ՀԱԱՀ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ՇԱՐԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսանողների թիվը 01.01.2017թ. դրությամբ	**5133**
Առաջին կուրս են ընդունվել	737
Երկրորդ մասնագիտություն են ստանում	3
Տեղափոխվել են քոլեջներից	102
Տեղափոխվել են առկա ուսուցման համակարգից	353
Վերականգնվել են նախկին ուսանողներ	248
Տեղափոխվել են այլ բուհերից	1
Տեղափոխվել են մասնաճյուղեր	5
Տեղափոխվել են հեռակա ուսուցումից առկա ուսուցում	8
Շրջանավարտներ	571
Հեռացվել են	1163
Ուսանողների թիվը 01.01.2018թ. դրությամբ	**4830**
Գտնվում են ակադեմիական արձակուրդում զին. ծառ. կապակցությամբ	431
Գտնվում են ակադեմիական արձակուրդում այլ պատճառներով	15
Գործող ուսանողների թիվը 01.01.2018թ.դրությամբ	4384
Օգտվել են վարձավճարի զեղչից	16
Օգտվել են վարձավճարի զեղչից քառօրյա պատերազմի պատճառով	152
Վեցերորդ կուրսում վարձավճարի զեղչ	881
Օգտվել են պետության կողմից հատկացրած ուսման վարձավճարի ամբողջական փոխհատուցումից	45
Օգտվել են պետության կողմից ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցումից	4

Մասնագետների պատրաստման համար շատ կարևոր է լսարան – արտադրություն կապը, որն այսօր լիարժեք չենք օգտագործում: Ագրարային համալսարանը արտադրական պրակտիկաներն անցկացնելու համար համապատասխան կազմակերպությունների հետ ունի մի շարք պայմանագրեր, կարիք կա ընդլայնել ձեռնարկությունների ցանկը, որոնց հետ պետք է կնքել նոր պայմանագրեր՝ խնդրելով սեզոնային աշխատանքային տեղեր հատկացնել ուսանողներին, ինչը հնարավորություն կտա նրանց գործնական հմտություն ձեռք բերելուն:

2017թ. հեռակա ուսուցման դեպարտամենտի 21 մասնագիտությունների գծով ըստ հաստատված գրաֆիկների ապրիլի 11-ից մինչև հունիսի 20-ը կազմակերպվել են պետական համալիր առարկաների քննություններ և դիպլոմային աշխատանքների (նախագծերի) պաշտպանություններ:

Վերը նշված 21 մասնագիտություններից 6-ը՝ «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Ֆինանսների կառավարում», «Հաշվապահական հաշվառում և

աուդիտ», «Ապահովագրական գործ», «Ագրոբիզնես և շուկայաբանություն», «Ագրարային քաղաքականություն» մասնագիտությունների համար, որպես որակակորման ձև, սահմանվել է 2 պետական քննություններ, իսկ մնացած մասնագիտությունների համար 1 պետական քննություն և դիպլոմային աշխատանքի պաշտպանություն:

2016-2017 ուսումնական տարվա 21 մասնագիտությունների ավարտական 6-րդ կուրսի գործող ուսանողների թիվը 685 է, որոնցից տեսական կուրսն ավարտել են 615-ը, 44 ուսանող հեռացվել են: Բակալավրի որակավորում ստացել են 571 ուսանող: Նախորդ տարիներից 43 ուսանողի շնորհվել է բակալավրի որակավորում, որնցից 6–ը առկա ուսուցման շրջանավարտներ են:

1.4. ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Բարձրագույն կրթություն իրականացնելիս 2017-2018 ուստարվա Ի-ին կիսամյակի ընթացքում, ուսանողների տեսական գիտելիքների ձեռքբերմանը զուգընթաց, կարևորվում է նրանց գործնական ու կիրառական հմտությունների և կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Այս տեսակետից, կրթական բարեփոխումների պահանջներին համապատասխան, համալսարանն ուսումնական պլաններում ուսանողի ուսումնական ծանրաբեռնվածության մեջ ծանրության կենտրոնը տեսական ուսուցումից տեղափոխում է դեպի ուսանողների պրակտիկ կարողությունների զարգացում: Ներկայումս մենք պետք է ուսումնասիրենք և արագ արձագանքենք այն խնդիրներին, որոնք համահունչ են ապագա մասնագետների գործնական գիտելիքների, ունակությունների և հմտությունների զարգացմանը:

Ուսանողների ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաները կազմակերպելու և իրականացնելու նպատակով համալսարանը, բացի մեր երկու ուսումնափորձնական և երեք գիտական կենտրոններից ու տնտեսություններից, համագործակցում է նաև արտադրական ձեռնարկությունների, գյուղացիական, ֆերմերային տնտեսությունների, գիտական կենտրոնների, մարզային և տարածքային անասնաբուժական կայանների, բանկերի, պետական ու մասնավոր կազմակերպությունների և այլ առաջատար տնտեսությունների հետ:

2017-2021թթ. ֆակուլտետների բոլոր մասնագիտությունները գրեթե ապահովված են ուսումնաարտադրական բազաներով:

Հեռակա ուսուցման դեպարտամենտի, մագիստրատուրայի և քոլեջի ուսանողները նույնպես ուսումնաարտադրական պրակտիկաները անցկացնում են այն բազաներում, որոնց հետ կնքված են պայմանագրեր:

Համալսարանը հանրապետության 10 մարզերում և Երևան քաղաքում համապատասխան մասնագիտությունների գծով կազմակերպությունների հետ ունի կնքված պայմանգրեր մինչև 2021թ.:

2017-2018 ուս. տարվա առաջին կիսամյակի ընթացքում վերակնքվել են ժամկետն անց պայմանագրերը և կնքվել են նոր պայմանագրեր՝

1. «Ֆարինի» ՍՊԸ - 21.11.2017թ. - 21.11.2018թ.
2. «Բեկոն պրոդուկտ» ՍՊԸ - 21.11.2017թ. - 21.11.2018թ.
3. ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն – 22.12.2017թ. – 29.12.2018թթ.
4. «Սպայկա» ՍՊԸ - 11.10.2017թ. - 11.10.2018թ.

Արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների համար ժամանակին կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, ճշտվել են պայմանգրերի կնքման ժամկետներն ու ձեռնարկությունների հնարավորությունները, որից հետո միայն ուսանողները գործուղվել են համապատասխան կազմակերպություններ: Ելնելով գյուղատնտեսական արտադրանք մթերող կազմակերպությունների աշխատանքների սեզոնային բնույթից՝ որոշ մասնագիտությունների ուսանողների ուսումնական պրակտիկաների անցկացման համար կազմվել են սահուն գրաֆիկներ:

Արտադրական պրակտիկա մեկնող ուսանողներին տրամադրվել են օրագրեր, ըստ հրամանների ամեն մի ուսանող ստացել է ուղեգիր տվյալ վայր մեկնելու համար:

2017-2018 ուստարվա առաջին կիսամյակում ըստ ֆակուլտետների ուսումնական պրակտիկաներին ուսանողների մասնակցությունը կազմել է.

1. Անասնաբուժական բժշկագիտություն և անասնաբուծության – 83,6%
2. Ագրոնոմիական – 88,9%
3. Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի – 91,7%
4. Պարենամթերքի տեխնոլոգիաների – 91,1%
5. Քոլեջ – 97,8%

Ընդամենը համալսարանում – 88,8%:

1.5. ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առկա ուսուցման համակարգի 2016-2017 ուստարվա պետական քննությունների և դիպլոմային նախագծերի պաշտպանությունը սկսվել է 2017թ. ապրիլին և ավարտվել է մայիսին:

2016-2017 ուստարվա սկզբին համալսարանում ավարտական կուրսերի ուսանողների թիվը կազմել է 625, որը նույնն է մնացել մինչև ավարտական քննության սկիզբը, սակայն պետական քննություններին և դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությանը մասնակցելու թույլտվություն է ստացել 621-ը:

Շրջանավարտներից 616-ը, որը կազմում է պետական քննությանը և դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությանը թույլատրված ուսանողների 99,2 %-ը, ստացել են դրական գնահատականներ, 2 շրջանավարտ (0,32 %) ստացել է անբավարար գնահատական, իսկ 3 շրջանավարտ անհարգելի պատճառով չի ներկայացել պաշտպանությանը (0,48 %):

Դրական ստացած շրջանավարտներից 213-ը (34,3 %), ստացել են «5» գնահատական, «4» և «5» գնահատական է ստացել 182 ուսանող (29,3%), «3» գնահատական՝145 շրջանավարտ (23,4 %)՝ և 76-ը (12,2 %)՝ խառը գնահատականներ:

Պետական քննական հանձնաժողովների որոշմամբ 57 շրջանավարտ ստացել է գերազանցության դիպլոմ, որը կազմում է քննություններին և պաշտպանություններին թույլատրված ուսանողների թվի 9,2 %-ը, որը նախորդ տարի կազմել էր 2,7 %:

Դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությանը մասնակցել է 269 ուսանող, որից 129-ը (20,8%) ստացել են «5», 87-ը (14,0 %)՝ «4», 53-ը (8,5 %)՝ «3» գնահատական: Անբավարար գնահատական ստացող չի եղել:

Նախորդ տարիների շրջանավարտներից այս ուստարվա պետական քննություններին և դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությանը թույլատրվել են մասնակցելու 15 ուսանողի:

Այսպիսով, 2016-17 ուստարում առկա ուսուցման համակարգում 631 շրջանավարտի շնորհվել է բակալավրի որակավորման աստիճան:

2016-17 ուստարում հեռակա ուսուցման 21 մասնագիտությունների գծով տեսական կուրսն ավարտած և պետական քննություններին մասնակցած 615 ուսանողից առաջին պետական քննությունից 590 ուսանող ստացել են դրական, 17-ը՝ անբավարար գնահատական, իսկ 8 ուսանող քննությանը չեն ներկայացել:

2-րդ պետական քննությունից 4 ուսանող ստացել են անբավարար գնահատական, 5-ը, քննությանը չեն ներկայացել:

16 մասնագիտությունների գծով դիպլոմային աշխատանքների (նախագծերի) պաշտպանության թույլատրվել են 412 ուսանող, որից 18-ը չեն ներկայացել, 394-ը ստացել են դրական գնահատականներ:

Արդյունքում, 2016 թվականին հեռակա ուսուցման 21 մասնագիտությունների գծով բակալավրի աստիճան շնորհվել է 571 շրջանավարտի: Նախորդ տարիներին տեսական կուրսն ավարտած ևս 43 ուսանող պաշպանել և ստացել է բակալավրի որակավորում:

Այսպիսով, 2016-17 ուստարում բակալավրային ուսուցման առկա և հեռակա համակարգերում համալսարանն ավարտել է 1245 շրջանավարտ:

Համալսարանի պետական քոլեջում պետական քննություններին և դիպլոմային նախագծերի պաշտպանությանը թույլատրված 224 սովորողներից բոլորը հաջողությամբ հանձնել են պետական քննությունները ու պաշտպանել դիպլոմային նախագծերը: 224 շրջանավարտից 25-ը արժանացել են գերազանցության դիպլոմի:

Պետական ատեստավորման արդյունքները և հանձնաժողովների առաջարկություններն ու դիտողությունները քննարկվել են բոլոր ֆակուլտետների և համալսարանի գիտական խորհուրդներում:

1.6. ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

<u>ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐԺԸ</u>

2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում սովորել են չորրորդ ավարտական կուրսի 29 ուսանողներ, որոնցից մեկն ազատ ունկնդրի կարգավիճակով: Չորրորդ կուրսի ուսանողուհի Արմինե Միքայելյանը Էրասմուս+ ծրագրի շրջանակում գործուղվել է Պորտուգալիայի Մինհոյի համալսարան ուսումը 6 ամիս ժամկետով շարունակելու նպատակով:

2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում սովորել են երրորդ կուրսի 30 ուսանողներ, որոնցից մեկը ազատ ունկնդրի կարգավիճակով: Ուսանողներից 2-ը Վրաստանի քաղաքացիներ են:

Գարնանային քննաշրջանում բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ: Անհարգելի բացակայություններ չեն գրանցվել:

2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում, Ագրոբիզնեսի դեպարտամենտի երաշխավորությամբ, 4-րդ կուրսի 6 ուսանողներ ստացել են կրթաթոշակ Հիրայր և Աննա Հովնանյան հիմնադրամից 250,000-ական դրամի չափով:

2017թ. հունվարին ԱՄՆ ՄԶԳ-ի և ԻՆՈՎԵՅԹ Հայաստան նախագծի աջակցությամբ ICARE հիմնադրամը դեպարտամենտի չորրորդ ավարտական կուրսի ուսանողների համար իրականացրեց Սննդի անվտանգության համակարգերի կառավարում մեկամսյա կրթական ծրագիրը Փենսիլվանիայի նահանգային և Վիրջինիա Թեք համալսարանների հետ համատեղ: Դասընթացը ներառել է սննդագիտության ներածություն, սանիտարիա և սննդի միկրոկենսաբանություն, վերամշակման վերահսկողություն և թթվեցված սննդամթերք, HACCP համակարգ և սննդի պաշտպանություն մոդուլները և ուղեկցվել է գործնական պարապմունքներով և վերամշակող ընկերություններ այցելություններով:

2017թ. մայիսին դեպարտամենտում անցկացվեցին բակալավրիատի 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության քննությունները: Առաջին փուլում դիմորդները հանձնեցին գրավոր թեստ տնտեսագիտությունից, մաթեմատիկայից և անգլերենից, իսկ երկրորդ փուլում՝ բանավոր հարցազրույց: Ընդունելության արդյունքներով 26 ուսանողներ մասնակցել են ամառային նախապատրաստական դասընթացներին և հանձնել քննություններ «Գյուղատնտեսական տնտեսագիտության ներածություն», «Գործարար անգլերեն», «Համակարգիչների կիրառում» և «Հռետորական արվեստ» առարկաներից, որոնց արդյունքների հիման վրա 24 ուսանողներ ընտրվել են սովորելու Ագրոբիզնեսի դեպարտամենտում:

2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակում երրորդ կուրսի ուսանողների թիվը կազմում է 23: Երրորդ կուրսի ուսանողներից երեքը սովորում են անվճար համակարգում:

2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակ են տեղափոխվել չորրորդ ավարտական կուրսի 28 ուսանողները, որոնցից 1-ն ունի ազատ ունկնդրի կարգավիճակ:

Ցածր առաջադիմության պատճառով Արամ Աթանեսյանը, Անահիտ Պետրոսյանը և Միքայել Դարբինյանը չեն տեղափոխվել 4-րդ կուրս: Նրանց թույլատրվել է կրկնել 3-րդ կուրսը Ագրոբիզնեսի դեպարտամենտում: Միքայել Դարբինյանը դասերին չներկայանալու պատճառով հեռացվել է Ագրոբիզնեսի դեպարտամենտից:

Էրասմուս Մունդուս գործողություն-2 ծրագրի շրջանակում եվրոպական համալսարաններում 10 ամիս ժամկետով ուսումն ավարտած 4-րդ կուրսի ուսանողներ Արթուր Մնացականյանին, Էլիտա Ադոնցին և Հասմիկ Ջաքեյանին թույլատրվել է ուսումը շարունակել 2017-2018 ուստարվա 4-րդ կուրսում, վճարովի համակարգում:

Չորրորդ կուրսի առաջին կիսամյակից Էրասմուս Մունդուս ծրագրի շրջանակում Ելենա Գրիգորյանը գործուղվել է Լատվիայի Վիձեմեյի բնական գիտությունների համալսարան՝ ուսումը 6 ամիս ժամկետով շարունակելու նպատակով:

2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում, Ագրոբիզնեսի դեպարտամենտի երաշխավորությամբ, 4-րդ կուրսի 16 և երրորդ կուրսի 13 ուսանողներ

ստացել են կրթաթոշակ Հիրայր և Աննա Հովնանյան հիմնադրամից՝ համապատասխանաբար 200.000-ական և 250,000-ական դրամի չափով:

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԿՈՒՐՍ

2017թ. մայիսի 10-11-ին և 22-23-ին ավարտական կուրսի 28 ուսանողներ հանձնեցին երկու պետական համալիր (ամփոփիչ) քննություններ համապատասխանաբար «Ֆինանսների վերլուծություն», «Մարքեթինգի վերլուծություն», «Ռազմավարական կառավարում» և «Միկրոտնտեսագիտություն», «Մակրոտնտեսագիտություն», «Համաշխարհային էկոնոմիկա», «Բնական ռեսուրսների էկոնոմիկա» առարկաներից:

Առաջին պետական համալիր (ամփոփիչ) քննությանը մասնակցել են կուրսի 28 ուսանողներ, որոնց ստացած նիշերի 100 տոկոսը կազմել են գերազանց և լավ գնահատականները: Երկրորդ պետական համալիր (ամփոփիչ) քննությանը մասնակցել են կուրսի 28 ուսանողներ, որոնց ստացած նիշերի 64,3 տոկոսը կազմել են «գերազանց» և «լավ» գնահատականները:

Ագրոբիզնեսի դեպարտամենտի պետական քննական հանձնաժողովի 23.05.2017թ. որոշման համաձայն, դեպարտամենտի Ագրոբիզնես և շուկայաբանություն մասնագիտության 28 շրջանավարտներին շնորհվել է տնտեսագետ-շուկայագետի որակավորում: Պետական որակավորման հանձնաժողովի կողմից ուսանողներ Ինեսսա Արտակի Ավագյանին և Անի Աշոտի Սարիբեկյանին շնորհվել է գերազանցության դիպլոմ:

Ավարտական արարողությունը տեղի ունեցավ 2017թ. հունիսի 2-ին, որին ներկա էին ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Ռոբերտ Մակարյանը, ՀՀ-ում ԱՄՆ ՄԶԳ Կայուն զարգացման գրասենյակի տնօրեն Լայլա Բաշանը, GIZ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Աննե Կեմպան, Տեխասի A&M համալսարանի պրոֆեսոր Ջոն Նիքըլզը և պաշտոնատար այլ անձինք:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում դեպարտամենտի ուսանողները ուսումնա-ճանաչողական այցելություններ են ունեցել ագրոբիզնեսի 11 ձեռնարկություն, ինչպես նաև մասնակցել են Վայոց Ձորում կայացած Արենի գինու փառատոնին: Ուսանողները ծանոթացել են ընկերությունների արտադրական հոսքագծերին, մարկետինգային գործիքներին, կառավարման և բաշխման համակարգերին, ներմուծման և արտահանման իրավիճակին և առաջիկա ծրագրերին: Ճանաչողական այս այցերն ագրոբիզնեսի ձեռնարկություններ գործնական փորձ են հաղորդում ուսանողներին:

Գյուղատնտեսական կոոպերատիվներ առարկայի շրջանակում ուսանողները այցելել են 7 տարբեր կոոպերատիվներ (կաթնամթերք, օրգանական միրգ, հնդկածավար և չրեր արտադրողների) Շիրակում, Գյումրիում, Արմավիրում, Լուկաշինում, Ծովագյուղում և Գյումրիում, ուսումնասիրել և հաշվետվություն են ներկայացրել գործող կոոպերատիվների գործունեության, կառուցվածքի մասին, ինչպես նաև արել են առաջարկություններ կոոպերատիվների տնտեսական և սոցիալական գործունեության հետագա բարելավման ուղղությամբ:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

2017թ. հունիսի 26-ից կազմակերպվել է երրորդ կուրսի ուսանողների ամառային արտադրական պրակտիկան 5 շաբաթ տևողությամբ: Պրակտիկան անցկացվել է Հայաստանի ագրոբիզնեսի ձեռնարկություններում, բանկերում և միջազգային կազմակերպություններում: Պրակտիկայի արդյունքներն ամփոփվել են պրակտիկայի հաշվետվության համաժողովի ժամանակ, որտեղ ուսանողները ներկայացրել են աշխատանքի ընթացքում ձեռք բերած փորձն ու գիտելիքները:

ՍԵՄԻՆԱՐՆԵՐ, ՄՈԴՈՒԼՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում հրավիրյալ դասախոսների ուժերով դեպարտա-մենտում անցկացվել են հետևյալ մոդուլները. Օրգանական գյուղատնտեսություն և Ծրագրերի կառավարում մոդուլների դասախոսություններն անցկացրել է ՀՀ

գյուղատնտեսության փոխնախարար, դեպարտամենտի շրջանավարտ Արմեն Հարությունյանը: Գյուղատնտեսական ֆինանսներ և վարկեր մոդուլն ացկացրել են Ֆարմ Կրեդիտ Արմենիա վարկային կազմակերպության տնօրենի տեղակալ Հրանտ Եղիազարյանը և դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանը, Ագրոբիզնեսի արժեշղթայի կառավարում մոդուլը՝ ICARE հիմնադրամի հետազոտական ծրագրերի ղեկավար Աննա Երիցյանը, Սննդամթերքի մասին օրենք և որակի վերահսկողություն մոդուլը դասավանդել է ՀՀ ԳԱԱ սննդամթերքի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական կենտրոնի տնօրեն Դավիթ Պիպոյանը և Գերմանական միջազգային համագործակցության ընկերակցության արտահանման գծով ավագ փորձագետ Արամ Բաբայանը դասավանդել է Արտահանումների խթանում մոդուլը: Յուրաքանչյուր մոդուլի ավարտին ուսանողները ուսումնաճանաչողական այցելություններ են ունեցել ագրոբիզնեսի համապատասխան ձեռնարկություններ:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսանողների համար տարբեր դասախոսություններ ու սեմինարներ են անցկացրել նաև 24 հրավիրյալ տեղական և միջազգային փորձագետներ:

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

2017թ. մայիսին անգլերենի յոթամսյա խորացված դասընթացին մասնակցած ՀԱԱՀ առաջին և երկրորդ կուրսերի առավել առաջադիմած ուսանողները ստացան ավարտական հավաստագրեր: Մասնակիցները հիմնականում ՀԱԱՀ ԱՇ և տնտեսագիտական ֆակուլտետների կրտսեր կուրսերի ուսանողներ են: Դասընթացը վարում էր դեպարտամենտի դասախոս Սթիվեն Դոնաթելը: 2016թ. հոկտեմբերին սկսվեց անգլերենի վեցամսյա խորացված դասընթացը, որին մասնակցում են ՀԱԱՀ առաջին և երկրորդ կուրսերի 15 ուսանողներ:

ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (MAB)

2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրում սովորել են ավարտական կուրսի 16 և առաջին կուրսի 23 ուսանողներ: Առաջին կուրսի նշված 23 ուսանողներից Տիգրան Շիշմանյանը անձնական դիմումի համաձայն ազատվել է, իսկ Շուշանիկ Մկրտչյանը հեռացվել Ագրոբիզնեսի դեպարտամենտի մագիստրատուրայից:

2017թ. մայիսի 19-ին ավարտական կուրսի 16 մագիստրանտները, որոնցից 3-ը Վրաստանից են, հաջողությամբ պաշտպանեցին մագիստրոսական ավարտական աշխատանքները՝ ստանալով տասը գերազանց և վեց լավ գնահատականներ: Ավարտական արարողությունը տեղի ունեցավ 2017թ. հունիսի 2-ին: 16 շրջանավարտներին շնորհվեց տնտեսագիտության մագիստրոսի որակավորում: Շրջանավարտները ստացան ՀԱԱՀ դիպլոմներ և Տեխասի A&M համալսարանի հավաստագրեր:

2017-2018 ուստարում Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագիրը համալրվեց առաջին կուրսի 16 ուսանողներով, որոնցից 5-ը դեպարտամենտի 2017թ. շրջանավարտներ են: Ուսանողներից 3-ը սովորում են անվճար համակարգում: Նշված 16 մագիստրանտներից Աննա Ծատուրյանը և Մարիամ Այվազյանը անձնական դիմումի համաձայն ազատվել է Ագրոբիզնեսի դեպարտամենտի մագիստրատուրայից, իսկ Հրայր Շահնազարյանը առողջական խնդիրների պատճառով գտնվում է ակադեմիական արձակուրդում:

2017թ. հունիսի 19-ից կազմակերպվել է Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրի 21 ուսանողների ամառային արտադրական պրակտիկան տասը շաբաթ տևողությամբ: Պրակտիկան անցկացվել է Հայաստանի ագրոբիզնեսի ձեռնարկություններում, բանկերում և միջազգային կազմակերպություններում: Պրակտիկայի ավարտին ուսանողները ներկայացրել են գրավոր հաշվետվություն: Աշխատանքի ընթացքում ձեռք բերած փորձն ու գիտելիքները գնահատվել են՝ հաշվի առնելով նաև արտադրությունում պրակտիկայի ղեկավարի գնահատականը:

2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակում 2-րդ կուրս են փոխադրվել 20 ուսանողներ, որոնցից 3-ը սովորում են անվճար համակարգում: Ռոտացիայի արդյունքում անվճար համակարգ է տեղափոխվել Էլլա Աղաբաբյանը, իսկ Լիաննա Հովհաննիսյանը ընդգրկվել է վճարովի համակարգում:

2-րդ կուրսի մագիստրանտներ Մագդա Կոնդարիձեն և Արմինե Պողոսյանը անձնական դիմումի համաձայն ազատվել են Ագրոբիզնեսի դեպարտամենտի մագիստրատուրայից:

Ագրոբիզնեսի դեպարտամենտի երաշխավորությամբ 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակում մագիստրատուրայի 2-րդ կուրսի 1 ուսանող ստացել է կրթաթոշակ Հիրայր և Աննա Հովնանյան հիմնադրամից 410.000 դրամի չափով:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՐԹԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ

2017թ. ապրիլի 26-28-ը դեպարտամենտը մասնակցել է Երևանի էքսպո կենտրոնում անցկացված 17-րդ ամենամյա «Կրթություն և կարիերա» մասնագիտացված ցուցահանդեսին՝ ներկայացնելով Ագրոբիզնեսի մագիստրոսական (MAB) ծրագիրը: 2017թ. նոյեմբերի 21-ին դեպարտամենտը մասնակցեց ԱՄՆ դեսպանության աջակցությամբ Մարիոթ Արմենիա հյուրանոցում կազմակերպված Ձեռներեցության համաշխարհային շաբաթվան նվիրված ամփոփիչ միջոցառմանը:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում Ագրոբիզնեսի դեպարտամենտը և ICARE հիմնադրամը կազմակերպել են վերապատրաստման հետևյալ կարճաժամկետ դասընթացները.

- Հունիսի 6-7-ին դեպարտամենտի շրջանավարտ և դասախոս, ՔԱՐԴ հիմնադրամի նախագծի ղեկավար, հետազոտությունների և զարգացման բաժնի համակարգող Սոնա Թելունցն անցկացրեց «Նախագծերի կառավարում» թեմայով վերապատրաստման երկօրյա ծրագիր: Սեմինարին մասնակցեցին 40 մարդ, ովքեր իրազեկվեցին նախագծերի կառավարման՝ միջազգայնորեն ընդունված գործելակերպերի, դրա տարբեր ասպեկտների, մասնավորապես՝ այս ոլորտում փորձագետների հավաստագրման հետ կապված հարցերի մասին:
- Ապրիլի 26-28-ին դեպարտամենտի մագիստրոսական ծրագրի դասախոս, Չինաստանի Ֆինանսների և տնտեսագիտության Թիանջին համալսարանի պրոֆեսոր դոկտոր Արմենակ Անտինյանը տեսակապի միջոցով եռօրյա ինտենսիվ դասընթաց անցկացրեց «Քանակական գործիքներ մարկետինգի մասնագետների համար» թեմայով: Սեմինարին մասնակցեց ոլորտի 27 մասնագետ, ովքեր ծանոթացան համակցված և կլաստերային վերլուծության հիմունքներին, ANOVA վերլուծությանը, պարամետրիկ և ոչ պարամետրիկ թեստերին, նաև մարկետինգային վերլուծությունների համար անհրաժեշտ գործիքներին:
- Հունիսի 5-7-ին Տեխասի A&M համալսարանի և դեպարտամենտի մագիստրոսական ծրագրի դասախոս Ռաֆայել Բախտավորյանն անցկացրեց «Գործառնական կառավարում՝ օգտագործելով Սոլվեր հավելվածը» թեմայով 3-օրյա վերապատրաստման ծրագիր գործարար ոլորտի պատասխանատուների, խորհրդականների, բիզնես վերլուծաբանների և ուսանողների համար: Մասնակիցները, որոնք 23-ն էին, գործնական գիտելիքներ ստացան գծային ծրագրավորման մասին և սովորեցին, թե ինչպես կարելի է գործարար համատեքստում իրազեկ որոշումներ ընդունել և լուծել կոնկրետ խնդիրներ՝ օգտագործելով Solver հավելվածը:
- Մայիսի 11-ին և 12-ին դեպարտամենտի շրջանավարտ, նաև Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրի հետազոտող դասախոս Լենա Մամիկոնյանը երկօրյա ինտենսիվ դասընթաց անցկացրեց «Էկոնոմետրիկ մոդելների կիրառությունը STATA ծրագրակազմի միջոցով՝ տնտեսագիտական խնդիրների լուծման համար» թեմայով: Վերապատրաստման ընթացքում 24 մասնակիցները ծանոթացան STATA ծրագրակազմի հիմունքներին, ինչպես նաև ծրագրի միջոցով տնտեսագիտական մոդելների գնահատմանը:
- Մարտի 1-3-ին Լենա Մամիկոնյանը եռօրյա ինտենսիվ դասընթաց անցկացրեց «Կանխատեսումներ ագրոբիզնեսի ոլորտի ղեկավարների համար» թեմայով: Սեմինարին մասնակցել են ոլորտի 33 մասնագետներ:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

2017թ. մարտի 28-31-ը ընկած ժամանակահատվածում Դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանը մասնակցել է Մոսկվայում կայացած Պարենի ապահովության եվրասիական կենտրոնի ռազմավարական քննարկումներին:

2017թ. հունիսի 6-27-ը ընկած ժամանակահատվածում Դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանը գործուղվել է ԱՄՆ՝ «Գյուղատնտեսական կրթության և վերապատրաստումների համակարգերի հզորացում» վերտառությամբ միջազգային գիտաժողովին մասնակցելու նպատակով: Գիտաժողովում պարոն Ուռուտյանը ներկայացրել է «Սննդի անվտանգության համակարգերի կառավարում» դասընթացի ներդրման փորձը Ագրոբիզնեսի դեպարտամենտում: Նա նաև հանդիպումներ է ունեցել Բոստոնում, Նյու Յորքում և Լոս Անջելեսում հայ համայնքների ներկայացուցիչների հետ:

Դեպարտամենտի ծրագրերի ղեկավար Աննա Երիցյանը և «Հարակայուն ձկնաբուծարաններ՝ հանուն Հայաստանում ջրային ռեսուրսների բարելավման» ծրագրի համակարգող Լուսինե Թադևոսյանը Կալիֆորնիայի Բերկլիի համալսարանում մասնակցեցին Կիրառական կենսատնտեսական հետազոտությունների միջազգային կոնսորցիումի 21-րդ գիտաժողովին: «Կենսատնտեսությունը անցման փուլում. Նոր խաղորդներ և նոր գործիքներ» վերտառությամբ գիտաժողովին ներկայացրեցին «Ինչպես հասնել գրունտային ջրերի հարակայուն շահագործման՝ ձկնաբուծարաններում ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման միջոցով» զեկույցը:

Դեպարտամենտի ծրագրերի օգնական Աստղիկ Սահակյանը Գերմանիայի Հալլե քաղաքում մասնակցեց Անցումային տնտեսություններում գյուղատնտեսության զարգացման Լայբնիցի ինստիտուտի (IAMO) «Եվրասիական սննդարդյունաբերությունը գլոբալացման և աշխարհաքաղաքականության արանքում» վերտառությամբ համաժողովին: Համաժողավին Աստղիկ Սահակյանը ներկայացրեց «Եվրասիական տնտեսական միություն. Հայաստանի առևտուրը անդամակցությունից առաջ և հետո» թեման:

Ագրոբիզնեսի դեպարտամենտի մագիստրոսական ծրագրի դասախոս Լենա Մամիկոնյանը Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող Erasmus+ ՀԳ1 «Միջազգային կրեդիտային շարժունություն» ծրագրի շրջանակում նոյեմբերին մեկ շաբաթ դասախոսություններ է կարդացել Լեհաստանի Կրակովի Յագիելոնյան համալսարանում: Հրավիրյալ դասախոսություններին մասնակցել են Կրակովի Յագիելոնյան համալսարանի մագիստրատուրայի կառավարման և հաղորդակցման ֆակուլտետի, հաշվապահության և կառավարման մասնագիտության 80-ից ավելի ուսանողներ: Լենան դասավանդել է ռիսկային կանխատեսման մոդելներ SIMETAR ծրագրի միջոցով: Դեպարտամենտի պետը, ինչպես նաև Ի-Վի-էն գինու ակադեմիայի աշխատակազմը, ուսանողները ու շրջանավարտները 2017թ. նոյեմբերի 23-24-ին մասնակցել են «Գինու համաշխարհային միտումները և լավագույն փորձը. հետևություններ ու առաջարկություններ Հայաստանի համար» խորագրի ներքո անցկացված գինու միջազգային համաժողովին:

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանը, դեպարտամենտի ծրագրերի ղեկավար Աննա Երիցյանը, դեպարտամենտի ծրագրերի օգնական Աստղիկ Սահակյանը գիտական զեկուցումներով հանդես են եկել միջազգային և տեղական մի շարք համաժողովների ժամանակ, հրատարակել իրենց աշխատությունները: Հոդվածները հետևյալն են.

- «Հետսովետական երկրներում ագրոպարենային առևտրային քաղաքականության փոփոխությունների վերաբերյալ ակնարկ 2014-2015» հոդվածը հրապարակվել է ՄԱԿ-ի Պարենի և Գյուղատնտեսության Կազմակերպության կայքում:
- «Եվրասիական տնտեսական միություն. Հայաստանի առևտուրը անդամակցությունից առաջ և հետո» հոդվածը զեկուցվել է Անցումային տնտեսություններում գյուղատնտեսության զարգացման Լայբնիցի ինստիտուտի (IAMO) «Եվրասիական սննդարդյունաբերությունը գլոբալացման և աշխարհաքաղաքականության արանքում» վերտառությամբ համաժողովին:
- «Ինչպես հասնել գրունտային ջրերի հարակայուն շահագործման՝ ձկնաբուծարաններում ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման միջոցով» հոդվածը զեկուցվել է Կալիֆորնիայի Բերկլիի համալսարանում կայացած Կիրառական կենսատնտեսական հետազոտությունների միջազգային կոնսորցիումի 21-րդ գիտաժողովին:

2017թ. նոյեմբերի 25-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում կայացած «Կայուն էներգետիկայի ակադեմիա 2017»-ի «Վերականգնվող էներգիան ձեր համայնքում» խորագրով եզրափակիչ գիտաժողովին «Հարակայուն ձկնաբուծարաններ հանուն Հայաստանում ջրային ռեսուրսների բարելավման» (SFEWRA) նախագծի հետազոտական

թիմը ներկայացրեց «Այլընտրանքային էներգետիկա ձկնաբուծարանում՝ որպես կայուն արտադրական լուծում» նախագիծը և 18 ներկայացրած նախագծերի մեջ ճանաչվեց 3 լավագույններից մեկը:

1.7. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2017 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀԱԱՀ Մագիստրատուրայում 16 որակավորումների 41 կրթական ծրագրերով սովորում են 312 մագիստրանտներ, որոնցից 47-ը հեռակա ուսուցմամբ, 248-ը ցերեկային ուսուցմամբ, 10-ը գտնվում են տարկետման, իսկ 7-ը գործուղման մեջ: Պետ.պատվերով ուսուցման համակարգում մագիստրանտների թիվը կազմել է 177, իսկ վճարովի համակարգում՝ 135: Մագիստրատուրայում ուսուցումն ունի երկկողմանի ուղղվածություն՝

1. Լսարանային դասաժամերի (դասախոսությունների, գործնական և լաբարատոր պարապմունքների) անցկացում:
2. Գիտական հետազոտություններ (մագիստրոսական ատենախոսության պատրաստում):

- Մագիստրանտների լսարանային բեռնվածությունը շաբաթական չի գերազանցում 20 ժամը:

Մագիստրատուրայի բաժնի կողմից կատարվում է ուսումնական գործընթացի անընդհատության և հաճախումների համակարգված ստուգում:

ՀԱԱՀ Մագիստրատուրայում դասավանդում են 155 դասախոսներ, որոնցից 95-ը գիտությունների թեկնածու են, 37-ը՝ գիտությունների դոկտորներ:

Բոլոր մագիստրանտների գիտական ղեկավարներն ունեն գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտ. աստիճան և դոցենտի կամ պրոֆեսորի կոչում:

2017թ. հունվարի 1-ից մինչև 2018թ. հունվարի մեկը ՀԱԱՀ ռեկտորի հրամանով ստեղծված ատեստավորման հանձնաժողովը 2 անգամ ատեստավորել է մագիստրանտների գիտական գործունեությունը:

2017-2018 ուստարվա արդյունքներով առկա մագիստրանտներն անցել են դրական ատեստավորում, և նրանց թույլատրվել է շարունակելու գիտ. աշխատանքը և մասնակցելու քննաշրջաններին:

Մագիստրանտների ավարտական գործընթացը կազմակերպելու նպատակով ռեկտորի հրամանով ստեղծվել են Պետական որակավորման հանձնաժողովներ, որոնց ներկայությամբ սահմանված ժամանակացույցի համաձայն մագիստրանտները հրապարակայնորեն պաշտպանել են իրենց մագիստրոսական ատենախոսությունները:

Բոլոր մասնագիտությունների համար նախատեսված ուսումնական ծրագրերը ներկայացվել են ՀԱԱՀ Մագիստրատուրա և հաստատվել են Մագիստրատուրայի գիտամեթոդական խորհրդի կողմից, այնուհետև ներկայացվել և հաստատվել են ՀԱԱՀ գիտամեթոդական խորհրդի կողմից:

2016-2017 ուստարում ՀԱԱՀ մագիստրատուրան ավարտել է 16 որակավորումների 41 կրթական ծրագրերով 241 մագիստրոսներ՝ 24-ը հեռակա ուս. համակարգի մագիստրանտներ, 217 ցերեկային ուս. համակարգի մագիստրանտներ, որոնցից 75-ը Պետական որակավորման հանձնաժողովի որոշմամբ ստացել են գերազանցության դիպլոմներ:

2017-2018 ուստարում ՀԱԱՀ Մագիստրատուրա ընդունվել են 234 մագիստրանտներ, որոնցից պետ.պատվերի համակարգում 105, իսկ 129-ը վճարովի ուսուցման համակարգում:

2017-2017 ուստարում հեռակա ուսուցմամբ ՀԱԱՀ Մագիստրատուրա ընդունվելու նպատակով դիմել են 296 դիմորդներ:

2010-2011 ուստարվանից ՀԱԱՀ Մագիստրատուրայում գործում է Ագրոբիզնես դեպարտամենտի «Ագրոբիզնես և շուկայաբանություն» մասնագիտությամբ անգլերեն լեզվով միջազգային մագիստրոսական ուսուցում, որտեղ ուսումնառությունը կազմակերպվում է ՀԱԱՀ-ի և Տեխասի A&M համալսարանների կողմից հաստատված ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: 34 մագիստրանտներ սովորում են նշված ծրագրով, որից 1-ին կուրսում 16, իսկ 2-րդ կուրսում՝18 մագիստրանտներ:

Շրջանավարտների հետ Մագիստրատուրայի բաժնի մշտական կապը ցույց է տալիս, որ ՀԱԱՀ Մագիստրատուրայի շրջանավարտների գերակշռող մասը աշխատանքի են անցել գյուղատնտեսության և հումքի վերամշակման ոլորտի առաջատար ձեռնարկություններում,

բանկային համակարգում, ինչպես նաև մրցութային կարգով աշխատանքի են անցել պետ. ծառայության համակարգում:

Միջազգային և միջբուհական փոխանակային ծրագրերով լավագույն մագիստրանտներն իրենց ուսումը՝ կարճաժամկետ կամ երկարաժամկետ, շարունակել և շարունակում են Տեխասի, Ֆրեզնոյի, Վաշինգտոնի (ԱՄՆ) համալսարաններում, «Տեմպուս» ծրագրի շրջանակներում՝ Հոլանդիայի և Գերմանիայի համալսարաններում, Հունաստանում, Գերմանիայի Վայհենշտեֆանի համալսարանում:

Ուսանողների փոխանակային ծրագրերով ՀԱԱՀ Մագիստրատուրան ավարտել են Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ, ինչպես նաև նախատեսվում է այլ օտարերկյա քաղաքացիների ուսուցման կազմակերպումը ՀԱԱՀ Մագիստրատուրայում:

Մագիստրանտների պրակտիկ գործունեության կազմակերպումը ուսումնական պրոցեսի կարևորագույն բաղադրիչներից մեկն է, որն իրականացվում է գիտաարտադրական և գիտա-մանկավարժական պրակտիկաների ձևով՝ Հանրապետության առաջատար ֆերմերային տնտեսությունների, հումքի վերամշակող ձեռնարկությունների, բանկային և հարկային դաշտի կազմակերպությունների հետ սերտ համագործակցության արդյունքում, որն էլ նպաստում է ՀԱԱՀ մագիստրատուրայի շրջանավարտների հետագա աշխատանքային գործունեությունը կազմակերպելուն:

2016-2017 ուստարվանից ՀԱԱՀ Մագիստրատուրայում ուսուցումն իրականացվում է առկա համակարգում 1 տարի, իսկ հեռակա ուս.համակարգում՝ 1,5 տարի տևողությամբ՝ 16 որակավորումների 41 կրթական ծրագրերով: Բոլոր մասնագիտությունների ուսումնական պլաններում ընդգրկված առարկաների համար նոր չափորոշիչներին համապատասխան մշակվել են առարկայական ծրագրեր, որոնք կարծիքների և գրախոսման նպատակով ներկայացվել են այլ բուհերի համապատասխան գիտական գործունեությամբ զբաղվող անձանց:

ՀԱԱՀ Մագիստրատուրայում հաշվետու տարում զեղչվել է 7 մագիստրանտների վարձավճարներ, իսկ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անվճար ուսուցման արտոնությունից օգտվող մագիստրանտների թվաքանակը կազմում է 3 հոգի, որոնցից երեքն էլ ցերեկային ուսուցման մագիստրանտներ են:

2018 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀԱԱՀ Մագիստրատուրայում 16 որակավորումների 41 կրթական ծրագրերով սովորում են 265 մագիստրանտներ, որոնցից 77-ը հեռակա ուսուցմամբ, 178-ը ցերեկային ուսուցման մագիստրատուրայում, 7-ը գտնվում են տարկետման, իսկ 1-ը ՝ գործուղման մեջ: Պետ.պատվերով ուսուցման համակարգում մագիստրանտների թիվը կազմել է 95, իսկ վճարովի համակարգում՝ 191:

01.01.2017 - 01.01.2018թթ ժամանակահատվածում մագիստրանտների շարժը ըստ եռամսյակների ներկայացվում է համապատասխան աղյուսակներով:

ՄԱԳԻՍՏՐԱՆՏՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մագիստրանտների թիվը	ՑԵՐԵԿԱՅԻՆ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ	
	պ.պ	վճ.
01.10.2016թ. դրությամբ	185	139
Ընդունված	-	8
Վերականգնվել են	-	-
Գործուղում, տարկետում	3տ+3գ	7տ+4գ
Տարկետում, բանակ	2	-
Շրջանավարտներ	-	-
Հեռացվել են	7	13
Տեղափոխվել է վճ. ուս. համ. այլ բուհից	-	-
Տեղափոխվել է վճ. ուս. համ-ից	-	0
Տեղափոխվել է պետ.պատվերից վճ. ուս. համ.	1	1
Նախապատրաստական	-	-
Մագիստրանտների թիվը 01.01.2017թ. դրությամբ	**177**	**135**

ՄԱԳԻՍՏՐԱՆՏՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մագիստրանտների թիվը	ՑԵՐԵԿԱՅԻՆ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ	
	պ.պ	վճ.
01.01.2017թ. դրությամբ	177	135
Ընդունված	-	31
Վերականգնվել են	-	-
Գործուղում, տարկետում	5տ	9տ+2գ
Տարկետում, բանակ	2	-
Շրջանավարտներ	-	-
Հեռացվել են	7	2
Տեղափոխվել է վճ. ուս. համ. այլ բուհից	-	-
Տեղափոխվել է վճ. ուս. համ-ից	-	-
Տեղափոխվել է պետ.պատվերից վճ. ուս. համ.	-	-
Նախապատրաստական	-	-
Մագիստրանտների թիվը 01.04.2017թ. դրությամբ	**170**	**164**

ՄԱԳԻՍՏՐԱՆՏՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մագիստրանտների թիվը	ՑԵՐԵԿԱՅԻՆ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ	
	պ.պ	վճ.
01.04.2017թ. դրությամբ	170	164
Ընդունված	85	0
Վերականգնվել են	-	-
Գործուղում, տարկետում	5տ	11տ
Տարկետում, բանակ	2	-
Շրջանավարտներ	157	77
Հեռացվել են	5	8
Տեղափոխվել է վճ. ուս. համ. այլ բուհից	-	-
Տեղափոխվել է վճ. ուս. համ-ից	-	-
Տեղափոխվել է պետ.պատվերից վճ. ուս. համ.	-	-
Նախապատրաստական	-	-
Մագիստրանտների թիվը 01.07.2017թ. դրությամբ	**93**	**79**

ՄԱԳԻՍՏՐԱՆՏՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մագիստրանտների թիվը	ՑԵՐԵԿԱՅԻՆ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ	
	պ.պ	վճ.
01.07.2017թ. դրությամբ	93	79
Ընդունված	10	96
Վերականգնվել են	-	-
Գործուղում, տարկետում	2գ+1տ	10տ
Տարկետում, բանակ	-	
Շրջանավարտներ	-	-
Հեռացվել են	1	2
Տեղափոխվել է վճ. ուս. համ. այլ բուհից	-	-
Տեղափոխվել է վճ. ուս. համ-ից	3	3
Տեղափոխվել է պետ.պատվերից վճ. ուս. համ.	-	-
Նախապատրաստական	-	-
Մագիստրանտների թիվը 01.10.2017թ. դրությամբ	**105**	**170**

ՄԱԳԻՍՏՐԱՆՏՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մագիստրանտների թիվը	ՑԵՐԵԿԱՅԻՆ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ	
	պ.պ	վճ.
01.10.2017թ. դրությամբ	105	170
Ընդունված	-	34
Վերականգնվել են	2	4
Գործուղում, տարկետում	1գ	7տ
Տարկետում, բանակ	-	-
Շրջանավարտներ	-	-
Հեռացվել են	10	13
Տեղափոխվել է վճ. ուս. համ. այլ բուհից	-	-
Տեղափոխվել է վճ. ուս. համ-ից	-	-
Տեղափոխվել է պետ.պատվերից վճ.ուս. համ.	-	-
Նախապատրաստական	-	-
Մագիստրանտների թիվը 01.01.2018թ. դրությամբ	**95**	**191**

«Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագիր

2017թ. «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրում ընդունելություն կատարվել է հունիս և սեպտեմբեր ամիսներին:

2017թ. հունվարի դրությամբ «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրում սովորել են 29 մագիստրանտներ, որոնցից 7-ը՝ գերմանալեզու առաջին կուրսում, 3-ը՝ հայալեզու առաջին կուրսում, 8-ը՝ գերմանալեզու երկրորդ կուրսում և 1-ը՝ հայալեզու երկրորդ կուրսում, մյուս 10 մագիստրանտի նկատմամբ ձևակերպված է եղել գործուղում: 2017թ. ապրիլի դրությամբ 8 մագիստրանտների նկատմամբ՝ 2 երկրորդ կուրսում և 6 առաջին կուրսում, հունիս ամսին ևս 1 ուսանողի նկատմամբ եղել է ուսման պրոցեսի դադարեցում՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում պրակտիկա անցնելու և ուսանելու կապակցությամբ:

2017թ. դեկտեմբերի վերջի դրությամբ «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրում սովորել են 30 մագիստրանտներ, որոնցից 11՝ գերմանալեզու առաջին կուրսում, 4՝ հայալեզու առաջին կուրսում, 7՝ գերմանալեզու երկրորդ կուրսում, 2՝ հայալեզու երկրորդ կուրսում և ևս 6 ՎԿԳՀ-ում գրանցված և ՎԿԳՀ-ի վերջին կիսամյակը ՀԱԱՀ-ում շարունակող մագիստրանտներ: 1 մագիստրանտի նկատմամբ եղել է ուսման պրոցեսի դադարեցում՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում պրակտիկա անցնելու և ուսանելու կապակցությամբ, իսկ 1 մագիստրանտի նկատմամբ ձևակերպվել է տարկետում:

Պետ.պատվերի ուսուցման համակարգում փաստացի մագիստրանտների թիվը կազմել է 19:

ԱՄՁ-մագիստրոսական ծրագրում ուսուցումն ունի եռակողմ ուղղվածություն՝

1. Լսարանային դասաժամերի անցկացում,
2. Գիտական հետազոտություններ,
3. Տուտորիումներ և սեմինարներ:

Մագիստրանտների լսարանային ծանրաբեռնվածությունը շաբաթական չի գերազանցում 20 ժամը:

ԱՄՁ գերմանալեզու մագիստրոսական կուրսում հիմնականում դասավանդում են գերմաներենի գերազանց իմացությամբ Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի շրջանավարտները (ովքեր պարբերաբար վերապատրաստվում են ՎԿԳՀ-ում ՀԱԱՀ-ի և ՎԿԳՀ-ի միջև համագործակցության շրջանակներում), իսկ հայալեզվում դասավանդում են և՛ ՎԿԳՀ-ի շրջանավարտները, և՛ ՀԱԱՀ-ի համապատասխան ամբիոնների դասախոսները:

ՀԱԱՀ ռեկտորի հրամանով ստեղծված ատեստավորման հանձնաժողովը յուրաքանչյուր ուստարվա ընթացքում երկու անգամ ատեստավորում է մագիստրանտների գիտական գործունեությունը:

2016-2017 ուստարում մագիստրանտների ավարտական գործընթացը կազմակերպելու նպատակով ռեկտորի հրամանով ստեղծվել են պետական որակավորման հանձնաժողովներ, որոնց ներկայությամբ, սահմանված ժամանակացույցի համաձայն 8 մագիստրանտները (7 գերմանալեզու) հրապարակայնորեն պաշտպանել են իրենց մագիստրոսական ատենախոսությունները:

2017թ. դեկտեմբերի 18-ին ևս 6 մագիստրանտներ պաշտպանել են իրենց մագիստրոսական ատենախոսությունները: Միջազգային և միջբուհական համագործակցությունների շրջանակներում ԱՄՁ-ի լավագույն մագիստրանտներից 1–ը (առաջին կուրս) շարունակում է իր ուսումը ՎԿԳՀ-ում, 4-ը գրանցված են ՎԿԳՀ-ում և ՎԿԳՀ-ի իրենց վերջին կիսամյակը շարունակում են ՀԱԱՀ-ի «Ագրարային մենեջմենթ» ծրագրում, 2-ը՝ էրասմուս+ ծրագրի շրջանակներում 1 կիսամյակ ՎԿԳՀ-ում սովորելուց հետո վերադարձել և սովորում են ՀԱԱՀ-ի «Ագրարային մենեջմենթ» ծրագրի ավարտական կիսամյակում, 4 մագիստրանտ անցկացրել է գյուղատնտեսական պրակտիկա ՀԱԱՀ-ի և ՎԿԳՀ-ի միջև համագործակցության շրջանակներում և 2 մագիստրանտ անցկացրել է գյուղատնտեսական պրակտիկա Պրաքս-կազմակերպությունում: Նրանք վերադառնալով շարունակում են իրենց ուսումը ՀԱԱՀ-ի ԱՄՁ-մագիստրոսական ծրագրում: ԱՄՁ-մասնագիտության բոլոր մագիստրանտները գիտաարտադրական պրակտիկան անցնում են հանրապետության առաջատար ֆերմերային տնտեսություններում, հումքի վերամշակման ձեռնարկություններում: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում նմանատիպ տնտեսություններում և ձեռնարկություններում անցած պրակտիկան ճանաչվում է վավեր՝ հիմք ընդունելով համագործակցության պայմանագրերը և մագիստրանտի վկայականը պրակտիկայի վերաբերյալ:

DAAD-գերմանական փորձի փոխանակման ծառայության նյութական աջակցությամբ տեխնիկապես կահավորվել 1-346 համակարգչային լսարանը և գույքային՝ 2-417 լսարանը, ինչպես նաև տրամադրվել է գրականություն:

ՀԱԱՀ «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական կրթական ծրագիրը ACQUIN հավատարմագրող կազմակերպության կողմից 2016թ. սեպտեմբերի 27-ին ստացավ միջազգային հավատարմագրում, որի հիման վրա 2018թ. Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանում գրանցված բոլոր հայ մագիստրանտներին կտրամադրվի կրկնակի դիպլոմ:

1.8.ՀԱԱՀ-ի Ա.Ե. ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՔՈԼԵՋ

ՀԱԱՀ-ի Ա. Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջում գործում է առկա ձևը:

Առկա ուսուցման համակարգում 2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակում սովորել են 536 ուսանողներ (աղյուսակ 9):

2016-2017 ուստարում քոլեջում դասավանդվող 45 ամբիոնների ուսումական ծանրաբեռնվածությունը կազմել է 57242 ժամ:

Առկա ուսուցման համակարգից 21 ուսանողների ՀՀ ազգային բանակ մեկնելու կապակցությամբ ձևակերպվել է տարկետում, 26 ուսանողներ առկա ուսուցման համակարգից վերադարձել են ակադեմիական արձակուրդից:

Պետական ավարտական քննություններին և դիպլոմային նախագծերի պաշտպանությանը թույլատրված 224 ուսանողներից վերոհիշյալին մասնակցեցին 224-ը:

Լավագույն ցուցանիշներով առանձնացավ առկա ուսուցման «Ֆինանսներ (Ագրոպարենային համակարգում)» մասնագիտության 3-րդ կուրսը, որտեղ 22 շրջանավարտներից առաջին համալիր պետական ավարտական քննությանը «5» գնահատական ստացան 10 ուսանողներ, չորսը՝ «12», միջին բալը կազմեց 4,5 միավոր, առաջադիմությունը՝ 100 %, երկրորդ համալիր պետական ավարտական քննությանը «5» գնահատական ստացան 10 ուսանողներ, չորսը՝ «12», միջին բալը կազմեց 4,5 միավոր, առաջադիմությունը 100 %:

Աղյուսակ 9

ՀԱԱՀ-ի Ա. Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի սովորողների շարժը
(01. 01. 2017թ. առ 01. 01. 2018թ.)

№	Ցուցանիշներ	Ցերեկային ուսուցում	
1	Ուսանողների թվաքանակը առ 01.01.2017թ.	ընդ.	536
		որից վճ.	203
2	Ուսանողների թվաքանակը առ 01.01.2018թ.	ընդ.	445
		որից վճ.	77
3	Շրջանավարտների թվաքանակը տարվա ընթացքում	ընդ.	224
		որից վճ.	123
4	Ուսանողների ընդունելությունը տարվա ընթացքում միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությամբ	ընդ.	2
		որից վճ.	2
5	Ուսանողների ընդունելությունը տարվա ընթացքում հիմնական ընդհանուր կրթությամբ (9-րդ դաս. հիմքով)	ընդ.	171
		որից վճ.	-
6	Հեռացումներ	ընդ.	58
		որից վճ.	20
7	Գտնվում են ակադեմիական արձակուրդում առ 01.01.17թ., որից զին. ծառ. կապակցությամբ	ընդ.	22
		որից վճ.	19
8	Գտնվում են ակադեմիական արձակուրդում առ 01.01.18թ., որից զին. ծառ. կապակցությամբ	ընդ.	51
		որից վճ.	32
9	Օգտվել են վարձավճարի զեղչից	16-17 ուս.տ II կիս.	9
		17-18 ուս.տ I կիս.	9
10	Ազատվել են վարձավճ. օրենսդ. սահմ. կարգ.	վճ. համ.	4
11	Գերազանց ուսանողների քանակը	ընդ.	57
		որից վճ.	1
12	Կրթաթոշակ ստացողներ	ընդ.	239

Քոլեջի 224 շրջանավարտներից առկա ուսուցման քսանհինգ ուսանողներ արժանացել են գերազանցության դիպլոմների:

1.9.ՀԱԱՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

2016-2017 ուստարում վարժարանում գործել են 14 դասարաններ՝ թվով յոթ 10-րդ դասարան (աշակերտների թիվը 119), երեք 11-րդ դասարան (աշակերտների թիվը 44) և չորս 12-րդ դասարան (աշակերտների թիվը 74), ընդամենը 237 աշակերտ:

2016-2017 ուստարում ՀԱԱՀ ռեկտորի հրամանով վարժարանի առարկայական մեթոդմիավորումների աշխատանքը համակարգվեց ՀԱԱՀ մաթեմատիկայի և տեսական մեխանիկայի, հայոց և ռուսաց լեզուների, օտար լեզուների, կենսաբանության, պատմության ամբիոնների վարիչների կողմից:

2017թ. գարնանը վարժարանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին խրախուսելու նպատակով կազմակերպվել են այցելություններ նախագահի նստավայր և ՄԱԿ-ի գրասենյակ, ինչպես նաև Ագրոբիզնեսի ուսումնական կենտրոն:

12-րդ դասարանում մասնագիտական կողմնորոշում տալու նպատակով վարժարանի տնօրեն Սարգսյանը հաճախակի կազմակերպել է բաց քննարկումներ աշակերտների հետ, որտեղ ներկայացրել է ՀԱԱՀ-ի մասնագիտությունների առավելությունները և ուսուցման օգտակարությունը արտերկրում ուսումը շարունակելու նպատակով:

2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակում մասնագիտական կողմնորոշման նպատակով վարժարանի 12-րդ դասարանների համար կազմակերպվել են «Մասնա-գիտական կողմնորոշում», «Նորագույն տեխնոլոգիաների կիրառությունը ագրարային տնտեսությունում» և «Համակարգչային ուսուցում» դասընթացները, ինչպես նաև

մասնագիտական կողմնորոշմանը նվիրված հանդիպումներ: Հանդիպումներ են եղել ագրոնոմիական ֆակուլտետի դեկան Գ.Սանթրոսյանի և տնտեսագիտական ֆակուլտետների դեկաններ Է.Ղազարյանի և Հ. Ջավադյանի հետ: Նրանք ներկայացրել են համալսարանի մի շարք առավելություններ համեմատած այլ բուհերի հետ: Աշակերտներն այցելել են Ագրոբիզնես ուսումնական կենտրոն, Երևանի գարեջրի գործարան, ՀՀ կենտրոնական բանկ, Եղվարդի «Բերրիություն» գյուղմեքենաների կայան և այլ հիմնարկություններ:

Վարժարանի տնօրինության կողմից նույնպես հաճախակի կազմակերպվել են հանդիպումներ 12-րդ դասարանցիների հետ՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով: 2017թ. մարտ ամսին վարժարանի 11 դասարաներում ԳԹԿ-ի կողմից կազմակերպվել է գիտելիքերի ստուգում «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից: Արդյունքները գոհացուցիչ չեն եղել:

2016-2017 ուստարում 120-200 ժամ բացակայություն ունեցող աշակերտների թիվը կազմել է 7, որից երկուսը 12-րդ դասարան, երեքը 11-րդ դասարան և երեքը 10-րդ դասարան: 2016-2017 ուսումնական տարում կազմակերպվել և անցկացվել են 10-11-րդ դասարանների փոխադրական քննություններ՝ «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից: 10-րդ դասարանում «Հանրահաշիվ» առարկայից վերաքննության են մնացել 22 աշակերտ, «Հայոց լեզու» առարկայից՝ 23 աշակերտ, իսկ 11-րդ դասարանում՝ համապատասխանաբար 23 և 12 աշակերտ: Արդյունքները մտահոգիչ են, առաջադիմությունը ցածր է:

2016-2017 ուստարում վարժարանի 12-րդ դասարանն ավարտել են 74 աշակերտներ, և բոլորը երաշխավորվել են մասնակցելու պետական ավարտական և միասնական քննություններին: Միասնական քննություններին մասնակցել են աշակերտների 40%-ը: Միասնական քննություններից անբավարար գնահատական է ստացել 1 աշակերտ՝ «Հայոց լեզու և գրականություն» առարկայից, ով հուլիսի 3-ին վերահանձնել է այդ քննությունը և ստացել ատեստատ: Ագրարային համալսարանի տարբեր ֆակուլտետներ են դիմել ավարտած աշակերտների մոտ 83%-ը:

2016-2017 ուստարում վարժարանում գործածության մեջ են դրվել 20 տեղանոց ռազմագիտության և 11 համակարգչով համակարգչային դասարանները: Սակայն համակարգչային դասարանում որպես համակարգչային սեղաններ հարմարեցված են աշակերտական սեղանները և կա պայմանավորվածություն այդ սեղանները համակարգչային սեղաններով փոխարինելու համար:

Վարժարանում հաճախակի կազմակերպվել են ռազմահայրենասիրական միջոցառումներ, որոնց ներկա են եղել զինվորական զորամասերի սպաներ, ովքեր ներկայացրել են զինվորական զորամասերի ծառայության վիճակը: Կազմակերպվել է այցելություն Երևան քաղաքի ռազմական զորամաս վարժարանի 10 և 11-րդ դասարանի աշակերտների համար:

2017-2018 ուստարում վարժարանում գործում են 16 դասարաններ՝ թվով 6 10-րդ դասարան (աշակերտների թիվը 135), 7 11-րդ դասարան (աշակերտների թիվը 112) և 3 12-րդ դասարան (աշակերտների թիվը 46), ընդամենը 293 աշակերտ:

2017 թվականի օգոստոսի 31-ին վարժարանում կայացել է մանկավարժական խորհրդի առաջին նիստը, որտեղ հաստատվել է ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը, ուսումնական պլանը, դասաբաշխումը և դասարանների ըստ դասղեկների բաշխումը:

Սեպտեմբերի 1-ին վարժարանում իրականացվել է գիտելիքի օրվան նվիրված ցերեկույթ և մասնակցություն ՀԱԱՀ-ի նոր ուսումնական տարվա ողջույնի արարողությանը: 10-րդ դասարանի աշակարտները մասնակցել են նաև Վիկտոր Համբարձումյանի արձանի մոտ աշակերտական երդման արարողությանը:

Սեպտեմբերի 4-ին կազմակերպվել է 10–րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգում «Մաթեմատիկա» առարկայից, որից պարզվել է, որ աշակերտների միայն 20%-ն ունի մաթեմատիկա առարկայից գիտելիքներ:

Վիկտոր Համբարձումյանի 108 ամյակի առթիվ վարժարանում սեպտեմբերի 19-ին կազմակերպվել է ցերեկույթ-կինոդիտում:

Սեպտեմբերի վերջին շաբաթվա ընթացքում բոլոր դասարաններում կազմակերպվել են ծնողական ժողովներ, որոնց ժամանակ ընտրվել են ծնողական կոմիտեի և աշակերտական կոմիտեի նախագահներ:

Հոկտեմբեր ամսին կազմակերպվել է ուսուցչի օրվան նվիրված միջոցառում:

Վարժարանի ագրարային հոսքի դասարանների աշակերտների համար կազմակերպ-վել է այցելություն ՀԱԱՀ–ի կենդանաբանական թանգարան:

Ագրարային հոսքի դասարանի աշակերտների համար կազմակերպվել են նաև այցելություններ ՀԱԱՀ քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներ, որոնց ժամանակ աշակարտները ներկա են գտնվել տարբեր լաբորատոր փորձերի անցկացմանը:

2017 թվականի հոկտեմբերի 26-ին կայացել է վարժարանի մանկավարժա-կան խորհրդի հերթական նիստը, որտեղ քննարկվել են աշակերտների առաջադիմության և բացակայության հարցերը:

Համալսարանի հանրակրթական առարկաների ամբիոնի վարիչներն հաճախակի այցելել են վարժարան և կազմակերպել դասալսումներ: Դեկտեմբեր ամսվա ընթացքում ամբիոնի վարիչները կազմակերպել են օլիմպիադաներ բոլոր առարկաներից:

2017թ. դեկտեմբերի 22-ին կայացել է վարժարանի հերթական մանկավարժական խորհրդի նիստը, որտեղ քննարկվել են վարժարանի առաջադիմությանը և հաճախումներին վերաբերող հարցերը, ինչպես նաև 2-րդ կիսամյակում կայանալիք ավարտական և միասնական քննությունների նախապատրաստական աշխատանքները:

Վարժարանում հաճախակի կազմակերպվել են կոլեկտիվի ընդհանուր ժողովներ, որտեղ քննարկվել են կարգապահական և առաջադիմությանը վերաբերող հարցեր:

Պետք է նշել, որ այսօր էլ վարժարանում դեռևս առկա է ուսումնադաստիարակչական աշխատանքները կատարելագործելու անհրաժեշտություն, հատկապես ուսուցման որակի բարձրացման և ուսման հանդեպ աշակերտների հետաքրքրության մեծացման հարցերում:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ

2.1.ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի արդյունավետ գործունեությունը պայմանավորված է կրթական ծրագրերով, ուսանողների թվաքանակով և տարեկան շարժով: Մասնաճյուղում ուսումնական գործընթացը պլանավորվել և կազմակերպվել է սահմանված ժամկետներում՝ ըստ ուսումնական պլանների և տարեկան աշխատանքային ժամանակացույցի:

Մասնաճյուղի դասախոսական կազմը բաղկացած է 75 հիմնական աշխատողներից, որոնցից 2-ը՝ պրոֆեսոր, 4-ը՝ դոկտոր, 14-ը գիտությունների թեկնածու, որից 9-ը՝ դոցենտ, մյուսներն աշխատում են ավագ դասախոսի, դասախոսի և ասիստենտի տարակարգերով: Ժամավճարային հիմունքներով հրավիրվել է 11 դասախոս, որոնցից 3-ը՝ գիտությունների թեկնածու, 3-ը՝ դոցենտ:

ՀԱԱՀ-ի համապատասխան ամբիոններում ձևակերպված մասնաճյուղի 36 հայցորդների կողմից հրատարակվել են տասնյակ գիտական հոդվածներ: 9 հայցորդ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը:

Մասնաճյուղի դասախոսների կողմից 2017թ. ընթացքում հրատարակվել են 50-ից ավելի գիտական աշխատություններ, այդ թվում՝ գրքեր, մեթոդական ձեռնարկներ և մենագրություններ:

Նշված ժամանակաշրջանում անցկացվել են գիտամեթոդական խորհրդի 7 և տնօրինության խորհրդի 2 նիստեր, որոնցում համապատասխանաբար քննարկվել են տարաբնույթ 28 և 8 հարցեր, այդ թվում 20-ը կամ 55,5 %-ը՝ ուսումնագիտական գործընթացին վերաբերող:

Տնօրինության և գիտամեթոդական խորհուրդների նիստերում պարբերաբար քննարկվել և ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ մասնաճյուղում ուսումնական գործընթացի պատշաճ մակարդակն ապահովելու ուղղությամբ: Որոշում է կայացվել նաև 2016-2017 ուստարվա 22 և 2017-2018 ուստարվա 18 սոցիալապես անապահով ուսանողների նկատմամբ 25 %-ի չափով ուսման վճարի զեղչ կատարել:

Մասնաճյուղում գործում է բարձրագույն կրթության երկաստիճան ուսուցման համակարգ՝ բակալավրիատ և մագիստրատուրա, ունի նաև միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոն:

Ուսումնական գործընթացն իրականացվում է երկու ֆակուլտետների՝ ագրարային տնտեսագիտության (ԱՊՀ էկոնոմիկայի, ագրոբիզնեսի, հաշվապահական հաշվառման և աուդիտի, Հումանիտար առարկաների, ֆիզիկական կուլտուրայի և ՆՁՊ-ի, Մաթեմատիկայի և ինֆորմատիկա ամբիոններով) ու ագրոկենսաբանական, տեխնոլո-գիական և ճարտարագիտական, (Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության, Ագրոնոմիայի և ագրոէկոլոգիա, Գյուղմեքենայացման, տրանսպորտային փոխադրումների, տեսական մեխանիկայի և ֆիզիկայի, Հողաշինարարության, հողային կադաստրի, պարենամթերքների տեխնոլոգիայի և ընդհանուր քիմիայի ամբիոններով) միջոցով:

2016-2017 ուստարվա ծանրաբեռնվածությունը կազմել է 78695 ժամ, 2017-2018 ուստարվանը՝ 47716 ժամ:

2017թ. հունվարի 1-ի դրությամբ մասնաճյուղում ուսանողների թիվը կազմել է 1056, որից բակալավրիատի առկա ուսուցման համակարգում՝ 233 ուսանող, հեռակա ուսուցման համակարգում՝ 391, ՄՄԿՕԿ-ի առկա ուսուցման համակարգում՝ 95 ուսանող, հեռակա ուսուցման համակարգում՝ 6, մագիստրատուրայում առկա ուսուցման համակարգում 22 մագիստրանտ:

Բակալավրիատի առկա ուսուցման համակարգում հեռացվել է 6, զինծառայության է մեկնել՝ 20, հեռակա ուսուցման համակարգ է տեղափոխվել .... ուսանող: Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում զինծառայությունից վերադարձել՝ 22, հեռացվել՝ 6, տեղափոխվել են առկայից հեռակա՝ 4 ուսանող:

ՄՄԿՕԿ հեռակա ուսուցման համակարգում զինծառայությունից վերադարձել է 5 ուսանող:

2016-2017 ուստարում թողարկվել է 321 շրջանավարտ, որից բակալավրիատի առկա ուսուցման համակարգում՝ 78, հեռակայում՝ 70, ՄՄԿՕԿ–ի առկա ուսուցման համակարգում՝ 140, հեռակայում՝ 33, իսկ մագիստրատուրայում առկա ուսուցման համակարգում՝ 22 մագիստրանտ:

2016թ. նոյեմբերի 30-ի դրությամբ մասնաճյուղում ուսանողների թիվը կազմել է 1120, (718-ը կամ 64,1 %-ը վճարովի համակարգում), որից բակալավրիատի առկա ուսուցման համակարգում՝ 327 ուսանող, հեռակա ուսուցման համակարգում՝ 205, ՄՄԿՕԿ-ի առկա ուսուցման համակարգում՝ 237 ուսանող, հեռակա ուսուցման համակարգում՝ 30, մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգում՝ 21 մագիստրանտ: Ուսանողների շարժի վերաբերյալ տվյալները ներկայացվում են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10

Մասնաճյուղում ուսանողների շարժը

Ուսուցման համակարգերը	Ուսանողների թիվը առ 01.01.2017թ	Մուտք				Ելք				
		Ընդունվել են	այլ բուհերից	վերադարձել են բանակից	այլ	հեռացված-ներ	մեկնել են բացակ	այլ	շրջանա-վարտներ	Ուսանող-ների թիվը առ 30.12.2017թ
Մագիստրատուրա										
Առկա	21	-	-	-	1	-	-	-	-	22
Բակալավրիատ										
Առկա	315	-	-	18	4	6	20	-	78	233
Հեռակա	449	-	-	22	11	6	11	4	70	391
ՄՄԿՕԿ										
Առկա	236	-	-	19	3	16	7	-	140	95
Հեռակա	35	-	-	5	1	2	-	-	33	6
Ընդամենը	1056	0	0	64	20	30	38	4	321	747

Մասնաճյուղում 2017-2018 ուստարում ընդունելություն չի կազմակերպվել, քանի որ ԼՂՀ կառավարության 2015թ.-ի դեկտեմբերի 28-ի № 912-ն որոշման համաձայն հանվել է մասնաճյուղի կողմից ներկայացված մասնագիտությունների ցանկը:

2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակում բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 30 խմբերում (327 ուսանող) նախատեսված է կազմակերպվել124 քննություն: Երկրորդ կիսամյակի քննությունների արդյունքում գերազանց գնահատականները կազմել են 249, լավը՝ 155, բավարարը՝ 130, անբավարար՝ 15, միջին բալը կազմել է 4,2: Նույն ժամանակահատվածում ՄՄԿՕԿ-ում կազմակերպվել է 30 քննություն, գրանցվել է 253 գերազանց, 240 լավ, 158 բավարար, 23 անբավարար, միջին բալը՝ 4,3:

2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի բակալավրի առկա ուսուցման 21 խմբերում (233 ուսանող) նախատեսված է կազմակերպվել 105 քննություն:

2016-2017 ուստարվա բակլավրիատի հեռակա ուսուցման համակարգի ավարտական 8 խմբերում (78 ուսանող) կազմակերպվել է 14 քննություն: Քննությունների արդյունքներով գերազանց են ստացել 12, լավ՝ 62, բավարար՝ 64, չներկայացած և չթույլատրված 70 ուսանող: 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակում

ՄՄԿՕԿ հեռակա ուսուցման համակարգի 2 խմբերում (5 ուսանող) կազմակերպվել է 62 քննություն, որոնց արդյունքներով գրանցվել է 6 գերազանց, 99 լավ, 383 բավարար, 50 չներկայացած: Առաջադիմությունը կազմել է 97,5%, իսկ միջին միավորը՝ 3,4:

2016-2017 ուստարվա բակալավրի առկա ուսուցման համակարգի երկրորդ կիսամյակում 21 խմբերում հանձնել են 30 կուրսային աշխատանքներ, գրանցվել են 136 գերազանց, 62 լավ, 43 բավարար գնահատականներ և 3 չներկայացած: Նույն ժամանակահատվածում ՄՄԿՕԿ 3 խմբերում (70 ուսանող) ստացել են 57 գերազանց, 47 լավ, 12 բավարար գնահատականներ:

ՄՄԿՕԿ-ում 70 ուսանող հանձնել է 6 պետական քննություն, գրանցվել է 46 գերազանց, 63 լավ, 11 բավարար գնահատականներ:

2016-2017 ուստարվա բակալավրի առկա ուսուցման համակարգի երկրորդ կիսամյակում ուսանողների բաց թողած ժամաքանակը կազմել է 1403 ժամ, 1 ուսանողի հաշվով՝ 6,3 ժամ, հեռակա ուսուցման համակարգում՝ համապատասխանաբար, 804 ժամ և 5,3 ժամ: Նույն ժամանակահատվածում ՄՄԿԾԿ առկա ուսուցման համակարգում բացակայությունները կազմել են 1403 ժամ, մեկ ուսանողի հաշվով՝ 14,5 ժամ:

Մասնաճյուղը նախօրոք 26 կազմակերպությունների հետ՝ (մասնավորապես Արցախ Ֆրուտի, կաթի գործարանի, հանրապետական բանկերի, «Ստեփանակերտի ավտոկայան» ՓԲԸ-ի, Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի, ԼՂՀ գյուղ. նախարարության, Բույսերի պաշտպանության լաբորատորիայի, Սերմաբուծության և սելեկցիոն նվաճումների պահպանման կենտրոնի, «Տոհմային կայան» ՓԲԸ-ի, գինու և կոնյակի գործարանների, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության և այլ պետական և մասնավոր հիմնարկ - ձեռնարկությունների) պայմանագրեր է կնքել՝ փորձուսուցումները անցկացնելու համար: Բոլոր փորձուսուցումների հաշվով համապատասխան դասախոս-ղեկավարների կողմից ներկայացվել են հաշվետվություններ, որոնց քննարկումներն իրականացվել են ամբիոններում:

2016-2017 ուստարվա արդյունքներով շրջափոխման են ենթարկվել բակալավրիատի 21 և ՄՄԿԾԿ-ի 9 ուսանողներ:

2017-2018 ուստարում մասնաճյուղի բակալավրիատի առկա ուսուցման համակարգում ուսանողների բաց թողած ժամերի ընդհանուր թիվը կազմել է 26746 ժամ, մեկ ուսանողի հաշվով բաց թողած ժամաքանակը կազմել է 90,5ժամ, ՄՄԿԾԿ-ում՝ համապատասխանաբար 11180, մեկ ուսանողի հաշվով բաց թողած ժամաքանակը կազմել է 41,7 ժամ, բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի մեկ ուսանողի հաշվով բաց թողած ժամաքանակը կազմել է 11,2, իսկ ՄՄԿԾԿ-ում՝ 5,1: Մեր կողմից պարզաբանված տվյալներով երկու ֆակուլտետների քննություններին և ստուգարքներին ուսանողների չներկայանալու պատճառները հիմնականում կապված են եղել Ղարաբաղա-ադրբեջանական սահմանում տիրող լարված իրադրությամբ և ապրիլյան դեպքերով: 2016-2017 ուստարվա հաշվետու ժամանակաշրջանում Ագրարային տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների կողմից բաց թողնված ժամաքանակը կազմել է 6280 ժամ, մեկ ուսանողի հաշվով՝ 20,9 ժամ, Ագրոկենսաբանական, տեխնոլոգիական և ճարտարագիտական ֆակուլտետում՝ 7774 ժամ, մեկ ուսանողի հաշվով՝ 23,4 ժամ:

Մասնաճյուղը ուներ հարուստ գրադարան: Այս ուսումնական տարում գրադարանը համալրվել է ևս 224 կտոր նոր գրքերով ու մեթոդական ձեռնարկներով: Մինչ ՇՏՀ տեղափոխվելը գրադարանում առկա էր 17772 կտոր գիրք, որից 1867-ը՝ մեթոդական ձեռնարկ: Մասնաճյուղի գրադարանը սպասարկում էր 600-ից ավելի ընթերցողի:

2017թ. մասնաճյուղում տարբեր գերատեսչությունների հետ համատեղ կազմակերպվել են գիտական ընթերցումներ:

ԱՀ ԿԳ և սպորտի նախարարության 2017թ. նոյեմբերի 30-ի №365/Մ որոշման համաձայն ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի ուսանողներին, պրոֆեսորադա-սախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկման անձնակազմը տեղափոխվեց Շուշիի տեխնոլոգիական համալսարան:

2.2.ՀԱԱՀ ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հաշվետու ժամանակահատվածում ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղում կատարվել են աշխատանքներ ուսումնական գործընթացը համալսարանի ռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան և բավարար մակարդակով կազմակերպելու, ուսուց-ման որակն ապահովելու, ուսումնական բազան լաբորատոր սարքավորումներով և նյութերով համալրելու ուղղությամբ: Մասնաճյուղում ուսումնական գործընթացը ամբողջությամբ կազմակերպվում է մայր բուհ-ի հեռակա ուսուցման դեպարտամենտի կրթական չափորոշիչներին համապատասխան:

2017թ. դեկտեմբերի 22-ի դրությամբ մասնաճյուղի ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 406 ուսանող, որից 38-ը գտնվում են զինվորական ծառայության մեջ: Տարվա ընթացքում մայր բուհից մասնաճյուղ է տեղափոխվել 6 ուսանող, մասնաճյուղից հեռացվել է

64 ուսանող: 2017թ-ին հեռակա ուսուցմամբ մասնաճյուղի առաջին կուրս է ընդունվել 72 ուսանող:

Ստորև ներկայացվում է մասնաճյուղի հեռակա ուսուցման կուրսերի ուսանողների շարժի վերաբերյալ համառոտ տվյալները 22.12.2017թ. դրությամբ.

- Ուսանողների ընդհանուր թիվը 01.01.2017թ. դրությամբ	- *447*
- Փոխադրվել են այլ բուհերից	- *0*
- Փոխադրվել են ՀԱԱՀ-ից	- *6*
- Վերականգնվել են նախկին ուսանողներ	- *8*
- Փոխադրվել են ՀԱԱՀ	- *0*
- Հեռացվել են	- *64*
- Շրջանավարտներ	- *63*
- Ընդունելություն	- *72*
- Գտնվում են զին. ծառայության մեջ	- *38*
- Առկա ուսանողների թիվը	- *368*
- Ուսանողների ընդհանուր թիվը 22.12.2017թ. դրությամբ	- *406*

Մասնաճյուղի հեռակա ուսուցման «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում», «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Հողաշինարարություն և հողային կադաստր», «Հաշվապահական հաշվառում և աուդիտ», «Գյուղատնտեսության մեքենայացում», «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում» մասնագիտությունների գծով 34 կուրսերում ուսումնական գործընթացը կազմակերպվել է մայր բուհի հեռակա ուսուցման դեպարտամենտի կրթական չափորոշիչներին համապատասխան:

Առարկայական ծրագրերին համապատասխան՝ ստուգողական և կուրսային աշխատանքների նախապատրաստման համար ուսանողներն ակտիվորեն օգտվել են մասնաճյուղի կահավորված գրադարան-ընթերցասրահից և էլեկտրոնային գրադարանից: Գրադարանում առկա է շուրջ 3806 կտոր մասնագիտական գրականություն, որը հիմնականում մասնաճյուղին է տրամադրվել ՀԱԱՀ-ի գիտական գրադարանի կողմից՝ համալսարանի ռեկտոր Ա.Պ.Թարվերդյանի հանձնարարականին համապատասխան, իսկ մի մասն էլ ձեռք է բերվել գրախանութներից, կամ ստացվել են նվիրատվության կարգով: 2017-2018 ուսումնական տարվա ընթացքում մասնաճյուղում ժամավճարային հիմունքներով դասավանդել են 77 դասախոս, որոնցից 38-ը Վանաձոր են գործուղվել Հայաստանի ազգային ագրարային համալսարանից, 5-ը մասնաճյուղի հաստիքային աշխատողներ են, իսկ 34-ը Վանաձոր քաղաքում գործող պետական բուհերից, հանրակրթական դպրոցներից և այլ կազմակերպություններից հրավիրված մասնագետներ: Դասավանդող 77 դասախոսներից 45-ն ունեն գիտական կոչումներ և աստիճաններ, որը կազմում է 58,44 %:

Ուսումնական գործընթա ցում առկա են եղել նաև թերություններ և բացթողումներ, այդ թվում նաև դասաձախողման փաստեր, որոնք ունեցել են օբեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Բաց թողնված բոլոր դասաժամերը լրացվել են:

Ուսումնական գործընթացի կազմակերպման ամբողջ ընթացքում մասնաճյուղը ստացել է բազմակողմանի աջակցություն և օժանդակություն համալսարանի ռեկտորատի, ուսումնական մասի, հեռակա ուսուցման դեպարտամենտի և ամբիոնների կողմից: Ամենօրյա ուշադրության կենտրոնում է պահվել կրթության որակի ապահովման և վերահսկողության իրականացման, երիտասարդ դասախոսական կադրերի վերապատրաստման հարցերը: Անցած ուստարում թվով 7 երիտասարդ ասիստենտներ ՀԱԱՀ-ում մասնակցել են որակավորման բարձրացման դասընթացներին և ստացել համապատասխան հավաստագրեր:

Մասնաճյուղի բոլոր կուրսերում փոխադրական քննություններն անցկացվել են կազմակերպված և թափանցիկ: Քննությունները կազմակերպվել և անցկացվել են մասնաճյուղի ուսումնական գործընթացի ժամանակացույցին համապատասխան: Քննությունների անցկացման ընթացքը մշտապես գտնվել է մասնաճյուղի տնօրինության ուշադրության կենտրոնում: Անհատական զրույցների, ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվող միջոցառումների և ուսումնական գործընթացին առնչվող հարցերի քննարկումների ժամանակ ուսանողները հայտնել են իրենց գոհունակությունը փոխադրական քննությունների ճիշտ կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

Մասնաճյուղի տնօրենի, փոխտնօրենի, մեթոդիստի և երկու առարկայական բաժինների վարիչների կողմից կատարվել են դասալսումներ բակալավրիատի բոլոր խմբերում: Յուրաքանչյուր դասալսումից հետո անցկացվել են քննարկումներ և կատարվել է վերլուծություն, տրվել են կոնկրետ ցուցումներ: Տարվա ընթացքում մասնաճյուղի դասախոսների կողմից կազմվել և տպագրվել են 2 մեթոդական ցուցումներ: Հայաստանի Հանրապետությունում և հանրապետությունից դուրս տարբեր ամսագրերում և շաբաթաթերթերում տպագրվել են երկու մասնագիտական հոդվածներ և արվել են առաջարկություններ առաջավոր փորձի ներդրման վերաբերյալ:

Բարձրագույն կրթական ծրագրերի իրականացմանը համընթաց մասնաճյուղում քայլեր են արվել նաև առանձին թեմաներով գիտական հետազոտությունների իրականացման ուղղությամբ: Կատարվում են հետազոտական աշխատանքներ, որոնք հիմնականում ուղղված են Լոռու մարզի և հանրապետության հյուսիսային տարածաշրջանի գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններում առաջավոր փորձի տեղայնացմանը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը և շրջակա միջավայրի պահպանության խնդիրներին: Ուսումնական և արտադրական պրակտիկաների մի մասը հաջողությամբ անցկացվում է համալսարանի Սպիտակի ուսումնափորձնական տնտեսությունում:

Համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված կանոնակարգի՝ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին մասնաճյուղում դիմորդներից կատարվել են փաստաթղթերի ընդունելություն հեռակա ուսուցման համակարգում: Արդյունքում՝ ըստ մասնագիտությունների մասնաճյուղ ընդունվող դիմորդների թվաքանակը հետևյալն է.

	Մասնագիտությունը	Ընդունելության քննություններով		Առանց ընդունելության քննությունների		Ընդամենը	
		Դիմորդների թիվը	Ընդունվել են մասնաճյուղ	Դիմորդների թիվը	Ընդունվել են մասնաճյուղ	Դիմորդների թիվը	Ընդունվել են մասնաճյուղ
1	Անասնաբուժ. սան. փորձ.	-	-	10	10	10	10
2	Անտառ. տնտ. և բնակ. կանաչ.	-	-	16	16	16	16
3	Գյուղ. հումքի և պար. փորձ., ստանդ. և սերտ.	-	-	17	17	17	17
4	Գյուղատնտ. մեքենայացում	-	-	16	16	16	16
5	Հաշվապ. հաշվառ. և աուդիտ	8	6	-	-	8	6
6	Հողաշին. և հող. կադաստր	9	7	-	-	9	7
	Ընդամենը՝	17	13	59	59	76	72

Շարունակական աշխատանքներ են տարվում մասնաճյուղի ուսումնական բազան հարստացնելու, լաբորատոր սարքավորումներ, նյութեր և գույք ձեռք բերելու ուղղությամբ: Ընթացիկ տարվա նոյեմբեր ամսում մասնաճյուղի արտաբյուջետային միջոցների հաշվին, ձեռք է բերվել նոր սերնդի 1 ինտերակտիվ գրատախտակ, համակարգչային տեխնիկա և այլ անհրաժեշտ միջոցներ:

Մասնաճյուղի տնօրինության և կոլեկտիվի կողմից հնարավոր ամեն ինչ կարվի 2018թ. հաջողությամբ սկսելու և ուսումնական գործընթացը մայր բուհի կրթական չափորոշիչներին համապատասխան կազմակերպելու համար:

2.3.ՍԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղում հաշվետու տարում իրականացվել են աշխատանքներ, որոնք միտված են դիմորդների հոսքի

և ուսանողական համակազմի կայունացման, կրթության որակի աճի, նյութատեխնիկական բազայի արդիականացման, տեղեկատվական համալիր ապահովվածության և մայր բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ համագործակցության ուղղություններով:

Մասնաճյուղում իրականացվող կրթական գործընթացների հիմնական ուղղություններն են՝

ա) ուսման որակի բարելավում և կատարելագործում

բ) ուսանողների տեսական ու փորձնական գիտելիքների զուգակցում և ամրապնդում

գ) ուսանողակենտրոն ուսուցում

դ) Հայաստանի Հանրապետության ագրոպարենային համակարգը բարձրակարգ մասնագետներով ապահովում:

Մասնաճյուղում բակալավրային համակարգում գործում է ուսուցման հեռակա ձևը՝ հետևյալ մասնագիտությունների ցանկով՝

- «Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա» - I, II կուրսեր
  «Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում» - III, IV, V, VI կուրսեր
- «Հաշվապահական հաշվառում և հարկում» - I կուրս
  «Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ» - VI կուրս
- «Հողաշինարարություն և հողային կադաստր» - V, VI կուրսեր
- «Կաթի և կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա» - I կուրս
  «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» - IV կուրս
- «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» - I, II, III, IV, V, VI կուրսեր
- «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա»- I, II կուրսեր
  «Ագրոնոմիա» - III, IV, VI կուրսեր:

2017-2018 ուստարում մասնաճյուղ են ընդունվել 55 ուսանող՝ 5 մասնագիտությունների գծով. «Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա»՝ 13, «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն»՝ 10, «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա»՝ 15, «Հաշվապահական հաշվառում և հարկում»՝ 8, «Կաթի և կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա»՝ 9 ուսանող: Ընդունելության պայմանները բավականին դյուրացվել են, որի շնորհիվ նախորդ տարվա համեմատությամբ ընդունելությունն առաջին կուրսերում ավելացել է 10 ուսանողով, որի արդյունքում ձևավորվել են «Կաթի և կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա» և «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությունները:

ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղում 2017-2018 ուստարվա ընդունելության արդյունավետ կազմակերպման նպատակով բավարար աշխատանք է կատարվել դիմորդների մասնագիտական կողմնորոշման, ընդունելության գովազդարշավի ընդլայնման ուղղությամբ՝ առավելագույնս ներգրավելով այդ գործընթացում մասնաճյուղի գիտամեթոդական խորհրդին, դասախոսական կազմին, ուսանողական խորհրդին, հիմնական գործընկեր ձեռնարկություններին ու այլ շահագրգիռ կազմակերպություններին:

Աշխատանքները համակարգելու նպատակով մասնաճյուղում կազմվել էր 2017 թվականի ընդունելության գործընթացի նախապատրաստման և կազմակերպման միջոցառումների պլան և բոլոր աշխատանքներն իրականացվել են ըստ ժամանակացույցի: Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ են իրականացվել Սյունիքի մարզի, առավելապես Սիսիանի, Քաջարանի, Մեղրիի, Ագարակի և մյուս համայնքների հանրակրթական և ավագ դպրոցներում:

2016 թվականին ստեղծված «Հայաստանի ազգային ագրարային համալսարան Սիսիանի մասնաճյուղ» ֆեյսբուքյան էջում անընդհատ թարմացվում և տեղադրվում են զանազան նյութեր և նկարներ՝ ուսանողների լաբորատոր աշխատանքների և հատկապես արտադրական պրակտիկաների կատարման ուղղությամբ: Սահմանված կարգով կազմավորվել է մասնաճյուղի դիմորդների փաստաթղթերն ընդունող հանձնաժողով: Առանձնացվել և կահավորվել է փաստաթղթերի ընդունման համար նախատեսված սենյակ, ուր տեղադրվել են մասնագիտությունները լուսաբանող և գովազդող նյութեր, ընդունելության պլանային ցուցանիշներ, կանոններ, ինչպես նաև ըստ մասնագիտությունների դիմորդների շարժը լուսաբանող վահանակներ:

Աղյուսակ 11

Մասնագիտությունը	Ընդունելության պլանային տեղերը	Դիմորդների թիվը
«Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա»	20	13
«Հաշվապահական հաշվառում և հարկում»	20	8
«Հողաշինարարություն և հողային կադաստր»	20	0
«Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա»	20	15
«Կաթի և կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա»	20	9
«Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն»	20	10
«Անասնաբուծություն»	20	0
Ընդամենը	**140**	**55**

ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի հեռակա ուսուցման 2017 թ. ընդունելության պլանային 140 տեղի համար դիմել են 55 դիմորդ, որից ընդունվել են 55-ը (աղյուսակ 11): Ընդունելության արդյունքներն ըստ մասնագիտությունների բերված է աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12

Հ/հ	Մասնագիտություն	Ընդունելության պլանային տեղերը	Դիմում-հայտերի թիվը	Ընդունված դիմորդների թիվը
1.	«Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբե-ության էկոնոմիկա»	20	13	13
2.	«Հաշվապահական հաշվառում և հարկում»	20	8	8
3.	«Հողաշինարարություն և հողային կադաստր»	20	0	0
4.	«Ագրոնոմիա,սելեկցիա և գենետիկա»	20	15	15
5.	«Կաթի և կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա»	20	9	9
6.	«Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն»	20	10	10
7.	«Անասնաբուծություն»	20	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ		**140**	**55**	**55**

ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղ դիմած հեռակա ուսուցման 55 դիմորդներից ընդունվել են 55-ը (100 %):

Մասնաճյուղի հեռակա ուսուցման համակարգում սովորում է 225 ուսանող:

Աղյուսակ 3-ում բերված է ուսանողական համակազմը 2016-2017 ուսումնական տարում (29.12.2017 թ. դրությամբ):

Աղյուսակ 13

Հ/Հ	Մասնագիտություն	Դասիչ	Ուսուցման ձև	Ուսանողների թիվ
1.	«Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում»	311101	հեռակա	62
2.	«Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ»	311103	հեռակա	12
3.	«Հողաշինարարություն և հողային կադաստր»	310901	հեռակա	22
4.	«Ագրոնոմիա»	310102	հեռակա	50
5.	«Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա»	310709	հեռակա	15
6.	«Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն»	310301	հեռակա	64
ԸՆԴԱՄԵՆԸ				225

2017 թվականին համալսարանից հեռացվել է 20 ուսանող, 16-ը գտնվում են ակադեմիական արձակուրդում՝ ժամկետային զինվորական ծառայության կապակցությամբ, այդ թվում 7 ուսանող ժամկետային զինվորական ծառայության են մեկնել 2017 թվականին, իսկ նախկին 8 ուսանող վերականգնվել են՝ մասնաճյուղում շարունակելու իրենց ուսումը, որից 4-ը՝ մայր բուհի նախկին ուսանողներ:

2016-2017 ուստարում ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղը ունեցել է 43 շրջանավարտ:

ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղում սովորող ուսանողների թվաքանակը և շարժը (2017 թ.)

Աղյուսակ 14

Հ/Հ	Ցուցանիշները	Հեռակա ուսուցում
1.	Ուսանողների թվաքանակը 01.01.2016 թ.	252
2.	Ընդունելությունն առաջին կուրս	55
3.	Փոխադրվել են մասնաճյուղից ՀԱԱՀ-ի հեռակա ուսուցման դեպարտամենտ	1
4.	Փոխադրվել են այլ բուհերից, քոլեջից	1
5.	Փոխադրվել են ՀԱԱՀ-ի ներսում՝ցերեկային ուսուցումից հեռակա ուսուցում (մասնաճյուղի ներսում)	0
6.	Վերականգնվել են նախկին ուսանողները	4
7.	Փոխադրվել են այլ բուհեր	0
8.	Փոխադրվել են մասնաճյուղ ՀԱԱՀ-ի հեռակա ուսուցման դեպարտամենտից	4
9.	Փոխադրվել են մասնաճյուղ ՀԱԱՀ-ի ցերեկային ուսուցման համակարգից	1
10.	Փոխադրվել են ՀԱԱՀ-ի ներսում՝ հեռակա ուսուցումից ցերեկային ուսուցում (մասնաճյուղի ներսում)	0
11.	Շրջանավարտների քանակը	43
12.	Հեռացվել և ազատվել են համալսարանից	20
13.	Գտնվում են ակադեմիական արձակուրդում, զին.ծառ. կապակցությամբ 01.01.2017 թ.-ից	7
14.	Գտնվում են ակադեմիական արձակուրդում, առողջական վիճակի պատճառով և այլն 01.01.2017 թ.-ից	2
15.	Գտնվում են ակադեմիական արձակուրդում, զին.ծառ. կապակցությամբ	16
16.	Գտնվում են ակադեմիական արձակուրդում, առողջական վիճակի պատճառով և այլն	2
17.	Գործող ուսանողների թիվը 01.01.2017 թ.	225
18.	Ուսանողների թիվը 01.01.2017 թ.	243
19.	Օգտվել են վարձավճարի զեղչից	3
20.	Գերազանց և լավ գնահատականներով սովորում են	44
21.	Ազատվել են վարձավճարից օրենսդր. սահմ. կարգով	17

2.4. «ՇԻՐԱԿԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«ՀԱԱՀ Շիրակի գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղում (այսուհետև՝ քոլեջ) գործում են ուսուցման առկա և հեռակա ձևերը:

Քոլեջում գործող մասնագիտությունների ցանկը հետևյալն է.

- «1041 – Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (Ավտոտրանսպորտում)»
- «0411 – Հաշվապահական հաշվառում»
- «0413 – Մենեջմենթ (Կառավարում)»
- «0414 – Ապրանքագիտություն»
- «0421 - Իրավագիտություն»
- «0721 – Մսի և մսամթերքների տեխնոլոգիա»
- «0728 – Սպառողական ապրանքների որակի փորձաքննություն»

2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մասնագի-տություն	Առկա ուսուցման				Հեռակա ուսուցման	
	Ընդունելության տեղերի թիվը		Փաստացի ընդունված		Ընդունելության տեղերի թիվը	Փաստացի ընդունված
	անվճար	վճարովի	անվճար	վճարովի	վճարովի	վճարովի
0411	5	10	5	6	15	0
0413	5	10	5	8		
0414	5	10	5	3	15	0
0421	0	10	0	0	15	6
1041	5	15	5	2	15	0
1041*	25	5	25	2		
0721	5	5	5	5		
0728	5	10	5	4		
Ընդամենը	**55**	**75**	**55**	**30**	**60**	**6**

* - հիմնական ընդհանուր կրթությամբ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի «Շիրակի ակադեմիկոս Մ.Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղի 2017-2018 ուստարվա անվճար ուսուցման համակարգով դիմորդների թիվը գերազանցում էր նախատեսված սահմանային տեղերը 30 ուսանողի թվաքանակով: Համաձայն ՀՀ ԿԳՆ հրաման № 1062-Ա/2 11.09.2017թ. փոփոխություններ և լրացումներ կատարելուց հետո վճարովի համակարգով ընդունված 30 ուսանողների համար հատկացվել են անվճար տեղեր:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐԺԸ ԱՌԿԱ և ՀԵՌԱԿԱ ԲԱԺԻՆՆԵՐՈՒՄ

	Ցերեկային ուսուցում / որից պետպատվեր	Հեռակա ուսուցում
Ուսանողների թիվը 01.01.2017թ. դրությամբ	**160 / 145**	**12**
Ընդունելություն	85 / 85	6
Փոխադրվել են քոլեջի ցերեկային բաժնից հեռակա բաժին		
Փոխադրվել են քոլեջի ներսում՝ վճարովի ուսուցումից անվճար ուսուցում	- / 5	
Փոխադրվել են քոլեջի ներսում՝ անվճար ուսուցումից վճարովի ուսուցում	-/ 1	
Փոխադրվել են այլ բուհից /կամ վերամասնագիտացում/		6
Վերականգնվել է	3 / -	2
Հեռացվել են	34 / 32	4
Վճարովի համակարգից տեղափոխվել են անվճար		
Շրջանավարտներ	36 / 32	4
Ձորակոչվել են բանակ	5 / 5	
Վերադարձել են բանակից	4 / 2	
Ուսանողների թիվը 31.12.2017թ. դրությամբ	**177 / 167**	**18**

Առկա ուսուցման համակարգում 2017թ. հունվարի դրությամբ սովորել է 160 ուսանող, որից 15-ը վճարովի համակարգում, իսկ հեռակա ուսուցման համակարգում 2017թ. հունվարի դրությամբ սովորել է 12 ուսանող:

Առկա ուսուցման համակարգում հաշվետու ժամանակահատվածում վերականգնվել է 3 ուսանող առկա բաժնում և հեռակա բաժնում 2 ուսանող: 6 ուսանող վերականգնվել են հեռակա ուսուցման համակարգ վերամասնագիտանալու նպատակով:

2017թ. հունվարից մինչև 2017թ. դեկտեմբեր ավարտել և ստացել է որակավորում 36 ուսանող առկա ուսուցմամբ և 4 ուսանող հեռակա ուսուցմամբ: Զորակոչվել են բանակ 5 ուսանող, որից 5-ը անվճար համակարգից, իսկ 4 ուսանող վերադարձել են բանակից:

Քոլեջն ունեցել է առկա բաժնում 85 դիմորդ անվճար համակարգում և հեռակա բաժնում 6 դիմորդ վճարովի համակարգում:

2017թ. ցերեկային ուսուցմամբ ունեցել ենք 36 շրջանավարտներ «Մենեջմենթ», «Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ», «Իրավագիտություն», «Պարենային ապրանքների որակի փորձաքննություն», «Ապրանքագիտություն», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտությունների գծով: 35 շրջանավարտներից 3-ն ավարտել են գերազանցության դիպլոմով: Չեն ներկայացել պետական քննությանը 4 ուսանող:

ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Մասնագի-տություն	Որակավորման ձևը	Ուսանողների թվաքանակը	Ստացել են գնահատական					Առաջադիմու-թյունը, %	Մ/Բ
			5	4	3	2	ՉՆ		
ՑԵՐԵԿԱՅԻՆ									
0421	I Պետական քննություն	4	5	3				100	9.25
	II Պետական քննություն		1	2	1			100	4.00
0411	I Պետական քննություն	8	1	5	1		1	87.5	4.00
	II Պետական քննություն	9	3	5			1	88.8	4.38
0413	I Պետական քննություն	9	5	3	1			100	4.44
	II Պետական քննություն		4	5				100	4.44
0414	I Պետական քննություն	6	1	5				100	4.17
	II Պետական քննություն			6				100	4.00
0728	I Պետական քննություն	4		3	1			100	3.75
	II Պետական քննություն			2	2			100	3.50
1041	Դիպլոմային աշխատ. պաշտպանություն	10	1	4	2		3	70.0	3.10
ՀԵՌԱԿԱ									
1041	Դիպլոմային աշխատ. պաշտպանություն	3		3				100	3

3. ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ, ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՈՐԱԿԻ ՆԵՐՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանն իր առաքելությանն ու ՀՀ կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան շարունակում է կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական ոլորտների բարելավումները:

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման քաղաքականությունը ագրարային համալսարանի համար շարունակում է մնալ ռազմավարական զարգացման գլխավոր ուղղություններից մեկը:

Համալսարանում շարունակվում են աշխատանքներ տանել բարեվարքության ամրապնդման, կրեդիտային համակարգի լիարժեք ներդրման, որակի ապահովման ու գնահատման եվրոպական չափանիշների արմատավորման, ծրագրային բարեփոխումների իրականացման, ուսանողների և դասախոսների անարգել ակադեմիական շարժունության խթանման, շարունակական կրթության համակարգի ձևավորման և համալսարանում կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մարդկային ու նյութատեխնիկական ռեսուրսների ապահովման ուղղություններով:

Ակնհայտ է, որ կրթական ոլորտի բարեփոխումները նպաստելու են համալսարանին՝ համապատասխանեցնելու իր գործունեությունը երկրում ձևավորվող գիտելիքահեն տնտեսության և ագրարային ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին, բարձրացնելու իր արտաքին գրավչությունն ու մրցունակությունը և ընդլայնելու համալսարանի սոցիալական առաքելությունը:

2017 թվականի ընթացքում համալսարանի ձեռքբերումներն ակնհայտ են, սակայն կրթության համակարգն իր առաքելության համապատասխան լիարժեք իրականացման, այս ոլորտում մշտապես առաջ եկող նոր խնդիրների ու մարտահրավերների հաղթահարման, բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման գործում համալսարանի մրցակցության բարձրացման, ագրարային ոլորտում կիրառական նշանակության արժեքավոր գիտահետազոտական աշխատանքների կատարման, արտադրությունում դրանց արդյունքների ներդրման, խորհրդատվական ու տեղեկատվական համակարգերի բարելավման և համալսարանում բարեվարքության ամրապնդման ոլորտներում դեռևս շատ անելիքներ կան:

3.1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Վերջին տարիներին համալսարանի զարգացման ռազմավարության մեջ կարևորվում է բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների առաջնայնությունը:

Համալսարանում որակի ընդհանուր եվրոպական չափանիշների և չափորոշիչների ներդրման հիմնական գրավականը որակի համընդհանուր մշակույթի զարգացումն է, և այս առումով համալսարանի հիմնական ուշադրությունը արդեն պետք է տեղափոխվի դեպի ուսուցման որակի բարելավումը և ներդաշնակեցումը եվրոպական չափանիշներին:

Բարձրագույն կրթության որակի ընդհանուր կառավարումը ենթադրում է կրթության որակի ապահովման գործուն և ամբողջական համակարգի ստեղծման, որակի վերահսկողության, ինքնավերլուծության ու ինքնագնահատման, արտաքին հավատարմագրման և որակի մշակույթի ձևավորման ու տարածման գործընթացների իրականացում:

2017 թվականին համալսարանում իրականացվել են որակի ապահովմանն ուղղված մի շարք գործընթացներ.

2017 թվականի ընթացքում մշակվեցին, հաստատվեցին և գործողության մեջ դրվեցին հետևյալ փաստաթղթերը.

- «ՀԱԱՀ կառավարման և վարչարարության քաղաքականության և ընթացակարգ»,
- «Սկսնակ դասախոսների խնամակալության (մենթորության) քաղաքականություն և կարգ»,
- «Հայաստանի ազգային ագրարային համալսարանում ներառական կրթության կազմակերպման և իրականացման 2017-2020 թթ. ծրագիրը», որում ներառված է «Ներառական կրթության կազմակերպման կարգը»:

Վերջին տարիներին համալսարանում ձևավորվեց և այժմ արդեն գործում է որակի ներքին ապահովման համակարգը, իրականացվում է որակի ապահովման ոլորտի միջազգային փորձի ուսումնասիրություն և հնարավորինս տեղայնացում:

Ուսուցանելու կամ վերապատրաստման նպատակով համալսարանում պարբերաբար իրականացվել է ուսումնառողների և դասախոսական կազմի շարժունության ապահովում արտերկրյա համալսարաններ: Պարբերաբար իրականացվում է դասախոսական կազմի մասնագիտական որակների և դասավանդման որակի և համալսարանի շահակիցների կարիքների և կրթական գործունեության մշտադիտարկում և գնահատում:

- Համալսարանի կողմից հաստատված չափորոշիչների հիման վրա գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի միջոցով իրականացվում է ուսանողների գիտելիքների գնահատում և սահմանված ժամանակացույցի համաձայն վերապատրաստումների միջոցով դասախոսական կազմի որակավորման բարձրացում:

Իրականացվել է համալսարանի նյութատեխնիկական բազայի համակարգչային տեխնիկայով համալրում և նոր մասնագիտական լաբորատորիաների բացում և նոր կրթական տեխնոլոգիաների ներդրում:

Իրականացվել է համալսարանում ինֆորմացիոն հոսքերի կառավարման ավտոմատ ինֆորմացիոն համակարգերի մշակում և ներդրում և Համալսարանի կայքէջի միջոցով հասարակությունը կանոնավոր տեղեկատվության տրամադրում:

Ապահովվել է համալսարանի գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը, իսկ Համալսարանի շահակիցների հետ պարբերաբար՝ հետադարձ կապ:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018 թթ. միջոցառումների ծրագրի արդյունավետ իրագործման նպատակով Եվրոպայի խորհրդի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակում 2017 թվականին համալսարանում ձևավորվեց աշխատանքային խումբ, որի կողմից 2017 թվականի մայիս-նոյեմբեր ամիսներին մշակվեցին հետևյալ փաստաթղթերը.

1. էթիկայի կանոնագիրք համալսարանի ուսումնառողների համար
2. էթիկայի կանոնագիրք համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի համար
3. էթիկայի կանոնագիրք համալսարանի կառավարման մարմինների համար
4. էթիկայի հանձնաժողովի կանոններ
5. Շահերի բաշխման քաղաքականություն
6. Գիտական ազնվության և գրագողության դեմ քաղաքականություն
7. Կոռուպցիայի կանխարգելման քաղաքականություն
8. Ահազանգողների պաշտպանության քաղաքականություն:

Մշակված փաստաթղթերի նախագծերը նաօրոք տեղադրվել են համալսարանի կայքէջում և բաժանվել են բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներին: Ստացված դիտողությունները և առաջարկությունները քննարկվել են և հաշվի են առնվել փաստաթղթերի մշակման հաջորդ փուլում:

Լայն քննարկումների արդյունքում մշակված փաստաթղթերը նպատակ ունեն բարելավել կրթական ոլորտի օրանսդրական և ինստիտուցիոնալ կարողությունները, մասնավորապես՝ բարձրագույն կրթության շահառուների շրջանում բարձրացնել կոռուպցիոն ռիսկերի և բարեվարքության ամրապնդման ռազմավարությունների վերաբերյալ իրազեկվածությունը, ինչպես նաև ավելացնել վերջիններիս օրենսդրական գիտելիքները և փորձը կոռուպցիայի դեմ պայքարում:

3.2. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ (ՄԿԾ) ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Բոլոնիայի գործընթացի և ագրարային ոլորտի ներկա պահանջներին համապատասխան՝ այսօր խիստ արդիական է դարձել համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի ինչպես կառուցվածքային, այնպես էլ խորքային բովանդակային փոփոխությունների իրականացումը:

Նոր սերնդի կրթական ծրագրերի նախագծման, վերանայման և բարելավման, ինչպես նաև հետագա իրականացման համար մեկնակետ հանդիսացավ շրջանավարտների ակնկալվող կրթական վերջնարդյունքների հիման վրա ձևակերպված կրթական ծրագրերի մշակումն ու իրականացումը, ինչը հնարավորություն տվեց կրթական ծրագրերի կառուցվածքն ու բովանդակությունը համապատասխանեցնելու աշխատաշուկայի պահանջներին, ինչն էլ իր հերթին կարևորագույն նախադրյալ է շրջանավարտների ծառայունակության, մրցունակության և կարիերայի հնարավորությունների բարձրացման համար:

Այս առումով մշակվեցին, հաստատվեցին և գործողության մեջ դրվեցին մասնագիտության կրթական ծրագրերի արտոնմանը, մշակմանը, մշտադիտարկմանը և վերանայմանը վերաբերող մի շարք նորմատիվային փաստաթղթեր:

Համալսարանում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի, առար-կայական ծրագրերի, ուսումնական պլանների և պրակտիկաների կազմակերպման գործընթացների վերաբերյալ ագրոպարենային ոլորտի գործատուների հետ կազմակերպված քննարկումների արդյունքների հիման վրա 2016 և 2017 թվականների ընթացքում վերանայվեցին և արմատապես բարելավվեցին բակալավրային և մագիստրոսական կրթական ծրագերի ուսումնական պլանները:

Բոլոր մասնագիտությունների գծով վերանվանվեց «Գյուղատնտեսության արտադրության կազմակերպում» առարկայի ծրագիրը, այն էականորեն փոխվեց և վերանայվեց «Ֆերմերային տնտեսությունների կազմակերպում և կառավարում» անվանումով և ներառվեց համալսարանի բոլոր մասնագիտությունների ուսումնական պլաններում:

Քննարկումների արդյունքում գործատուների կողմից կարևոր առաջարկություններ ներկայացվեցին մասնագիտական և թողարկող ամբիոններում դասավանդող առարկաների ծրագրերի և հատկացված ժամաքանակների վերանայման, ամբիոնների լաբրատոր բազան տեխնիկական և տեխնոլոգիական ժամանակակից միջոցներով համալրման, պրակտիկաների արդյունավետ կազմակերպման վերաբերյալ:

Համալսարանում դասավանդող առարկաների առարկայական ծրագրերի վերանայման ու բարելավման նպատակով, համապատասխան ոլորտների գործատուների մասնակցությամբ ստեղծվեցին փորձագիտական խմբեր և 2016 և 2017 թվականներին ագրարային ոլորտի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ուսանողների և համալսարանի մյուս շահակիցների սպասելիքներին համահունչ արմատապես վերանայվեցին և բարելավվեցին բակալավրային և մագիստրոսական կրթական ծրագրերի առարկայական ծրագրերը:

Վերը նշված աշխատանքներին զուգընթաց, 2015 թվականից սկսած Tempus Armenqa դրամաշնորհային ծրագրի աջակցությամբ համալսարանի կողմից Որակավորումների եվրոպական և ազգային շրջանակների պահանջներին համապատասխան՝ մշակվեց «Որակավորումների գյուղատնտեսական շրջանակը»:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի և բաղադրիչների արդյունավետ ձևավորման նպատակով 2015-2017 թթ. դասախոսական կազմի վերապատրաստմանը նվիրված կազմակերպվեցին և իրականացվեցին բազմաթիվ սեմինարներ և թրեյնինգներ:

Սեմինարների ընթացքում դասախոսական կազմին ներկայացվեցին ՀՀ Որակավորումների ազգային և ոլրորտային շրջանակները և դրանց համադրումը, դասընթացների համար կրթական վերջնարդյունքների ձևակերպմանը ներկայացվող պահանջներն ու սկզբունքները, մասնագիտության կրթական ծրագրերի նպատակների և կրթական վերջնարդյունքների ձևակերպման հիմնախնդիրները, դասավանդման և ուսումնառության մեթոդների ճիշտ ընտրության և այլ առանցքային հարցեր:

Իրականացված աշխատանքների արդյունքում համալսարանի աշխատակիցների կողմից մշակվեց մասնագիտության կրթական ծրագրերի փաթեթի ձևաչափ (մոդել), որի հիման վրա ֆակուլտետների, դեկանատների, մասնագիտությունների կրթական ծրագրերի պատասխանատուների և դասախոսական կազմի կողմից 2017 թվականի ընթացքում մշակվեցին համալսարանում իրականացվող բոլոր կրթական ծրագրերի փաթեթները՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի համար:

Իրականացված աշխատանքները, դասախոսական կազմի վերապատրաստումները և կրթական վերջնարդյունքների հիման վրա մշակած ծրագրերի առկայությունը հնարավորություն կտա ոչ միայն բարելավելու համալսարանում իրականացվող մասնագիտությունների

կրթական ծրագրերի ու դրանց իրականացման որակը, այլև լուրջ նախադրյալներ է ստեղծում առաջիկա ծրագրային հավատարմագրումը պատշաճ մակարդակով իրականացնելու համար:

3.3. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՉԱՓ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹՑՆԵՐ

Բոլոնիայի գործընթացի վերջին տասնամյա գործունեության ուղղություններից մեկը թափանցիկության բազմաչափ գործիքների ներդրումն է և տվյալների հավաքագրման արդյունավետության ու թափանցիկության բարձրացումը:
Թափանցիկության ապահովման կարևորագույն գործիքներից է համալսարանների վարկանիշավորումը, որը համադրելի և բաց տեղեկատվություն է տրամադրում տարբեր բուհերի վերաբերյալ:

Վերջին չորս տարիներին ՀՀ ԿԳ նախարարության կողմից «Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի» շրջանակներում համալսարանի գործունեության տարբեր ոլորտների ցուցանիշների վերաբերյալ իրականացվում է վարկանիշավորման գործընթաց:

ՀԱԱՀ-ն իր գործունեության թափանցիկության ապահովման նպատակով 2017 թվականի ընթացքում իրականացրել են հետևյալ միջոցառումները՝

- Ֆակուլտետային մակարդակի վրա իրականացվող գիտակրթական գործունեության իրականացման վերաբերյալ հաշվետվողականության ապահովում,
- Համալսարանի գիտակրթական գործունեության իրականացման վերաբերյալ հաշվետվողականության ապահովում համալսարանի գիտական խորհրդի նիստերին,
- Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտների անցկացման արդյունքների ներկայացում,
- Համալսարանի գործունեությանը վերաբերող հաշվետվության ներկայացում համալսարանի գիտական խորհրդի նիստին և հրապարակում ՀԱԱՀ կայքի «Հաշվետվություններ» բաժնում:
- Համալսարանի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտի արդյունքների հրապարակում www. azdarar.am կայքում:
- Համալսարանի գիտական հրապարակումների ներկայացում համալսարանի կայքէջում (http://anau.am/hy/science/science-pub):
- Շրջանավարտների կարիքների հետազոտության անցկացման արդյունքների ներկայացում համալսարանի կայքէջում (http://anau.am/hen-gear/):
- Համալսարանի դասախոսական կազմի գործունեությանը վերաբերող տեղեկատվության հրապարակում համալսարանի կայքէջում (person.anau.am) և այլն:

Համալսարանի կայքէջում զետեղված են նաև տեղեկատվություն տարբեր շահակիցների համար.

- Դիմորդներ (http://anau.am/hy/2011-10-24-07-02-23),
- Ուսանողներ (http://anau.am/hy/component/content/article/483),
- Պրոֆեսորդասախոսական կազմ (http://anau.am/hy/2011-11-07-07-27-03),
- Շրջանավարտներ (http://anau.am/hy/2011-11-07-07-19-59),
- Գործատուներ (http://anau.am/hy/2011-11-07-07-48-51):

Համալսարանը կայքի միջոցով (www.anau.am) ներքին և արտաքին շահակիցներին լիարժեք տեղեկատվություն է տրամադրում և ապահովում իրականացվող գործընթացների թափանցիկությունը:

Համալսարանի կայքէջում տեղադրված է տեղեկատվություն նաև առկա մասնագիտությունների, գործող կրթական ծրագրերի, նորմատիվային փաստաթղթերի, ընդունված որոշումների, նորությունների և այլնի մասին:

Կայքում համակարգված ներկայացված է տեղեկատվություն ՀԱԱՀ-ի պատմության, կրթական, գիտական և տեղեկատվական գործունեության և ձեռքբերումների, միջազգային կապերի, ուսանողական կյանքի, մասնաճյուղերի և կառուցվածքային ստորաբաժանումների, «ՀԱՍԿ» պաշտոնաթերթի հերթական համարների, գիտական աշխատաժողովների Տեղեկագրերի և այլ տեղեկություններ:

ՀԱԱՀ-ն իր գործունեության և նվաճումներին վերաբերող տեղեկատվությունը հրապարակում է նաև ռեկտորի տարեկան հաշվետվության միջոցով, որը տեղադրված կայքի հաշվետվու-

թյուններ բաժնում՝ նպատակ ունենալով ապահովելու տեղեկատվության իրականացվող գործընթացների թափանցիկությունը:

Համալսարանի կայքը պարբերաբար թարմացնում է ինֆորմացիայիով, մասնավորապես համալսարանում տեղի ունեցող իրադարձություններով (միջազգային հանդիպումներ, աշխատաժողովներ, սեմինարներ ուսանողների և դասախոսական կազմի շրջանում և այլն):

Համալսարանի շահակից կողմերը հնարավորություն ունեն իրենց կարծիքն արտահայտել համալսարանի կայքէջում (www.anau.am) առկա հետադարձ կապի գործիքի միջոցով, որը առկա է բոլոր կառուցվածքային ստորաբանումների էջում, ինչպես նաև համալսարանի ֆեյսբուքյան էջում (www.facebook.com/Armenian-National-Agrarian-University-ՀԱԱՀ-363415383766092/):

Հարկ է նշել, որ Համալսարանի կայքում առանձին Որակի ապահովման էջով տեղեկատվություն է ներկայացվում ՀԱԱՀ-ի կրթության որակի ոլորտում համալսարանի քաղաքականության, որակի ապահովման ներքին համակարգի կառուցվածքի մասին և այլն (http://anau.am/hy/asau/2012-03-22-08-44-44):

2017 թ. իրականացվել են համալսարանի պաշտոնական կայքում ստեղծված «Որակի ապահովում» էջի ընթացիկ թարմացումներ, մասնավորապես՝

- նորմատիվային փաստաթղթային բազայի և այլ ենթաբաժինների ընթացիկ թարմացում:

2017 թ. թարմացվել է Ուսումնամեթոդական կենտրոնի կայքէջը՝ ըստ բոլոր ենթաբաժինների (http://anau.am/hy/study-prosecc/learning-center):

2017թ-ի մարտ ամսին իրականացվել է համալսարանի կայքէջի «Որակի ապահովման» բաժնի ընթացիկ թարմացում որակի ապահովմանն ուղղված փաստաթղթերով՝ ավելացնելով նոր բաժիններ: Ակտիվացել է բաժնի էջի համա այցելությունները ֆիքսող Google Analitic համակարգը:

Համալսարանն ունի էլեկտրոնային այլ հարթակներ, որտեղ ներկայացվում է տեղեկատվություն համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության, կարիերայի վերաբերող տեղեկատվություն, շրջանավատրների շրջանում իրականացված հարցումների և այլնի մասին:

Համալսարանի ներքին և արտաքին շահակիցները որակի ապահովման գործընթացների մասին ոչ միայն ստանում են տեղեկատվություն, այլև հաճախ իրենք ևս ընդգրկվում և մասնակցում են այդ գործընթացին՝ միաժամանակ ապահովելով վերջինիս տրամադրման թափանցիկությունը (այդ տեղեկատվությունը անմիջականորեն փոխանցում են այլ ներքին ու արտաքին շահակիցներին):

2017 թ. ուսումնամեթոդական կենտրոնի կողմից կազմակերպվել և իրականացվել է Համալսարանի կողմից սահմանված գործունեության առանցքային ցուցանիշների հավաքագրում ըստ համալսարանի գործունեության յոթ ուղղությունների՝

- Ընդունելություն և ուսանողական համակազմ,
- Ուսումնական գործընթաց,
- Ռեսուրսներ և կառավարում,
- Ենթակառուցվածք,
- Գիտություն և ինովացիա,
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն:

ԳԱՑ-երի հավաքագրումը և վերլուծությունը հիմք է համալսարանի գործունեության քանակական վերլուծության համար և դրանք պետք է հրապարակվեն համալսարանի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով:

Համալսարանի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովման կարևոր գործիքակազմ հանդիսացավ Եվրոպայի խորհրդի և Եվրոմիության կողմից իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակում ՀՀ ԿԳՆ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից ստեղծված բուհերի կառավարման թափանցիկության և հաշվետվողականության առցանց պորտալին համալսարանի մասնակցությունը:

Համալսարանում ըստ առանձին ոլորտների նշանակվեցին պատասխանատուներ և 2017 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին համալսարանի գործունեության վեց առանցքային ուղղություններով (Կառավարման մարմիններ, ռազմավարական պլանավորում, ֆինանսական կառավարում, մարդկային ռեսուրսների կառավարում, ընդունելության ու ուսանողների գնահատում և տեղեկատվության կառավարում) հավաքագրեց և կենտրոնական պորտալ (etag.emis.am) մուտքագրվեց մեծածավալ տեղեկատվության:

3.4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

2017 թվականի փետրվար-մարտ և սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Ուսումնամեթոդական կենտրոնն իրականացրել է համալսարանի շահակիցների շրջանում կարիքների բացահայտման գործընթաց, որն իրականացվել է նախապես մշակված և վալիդացված անկետաների միջոցով:

Հարցմանը մասնակցել են համալսարանի յոթ ֆակուլտետների 1-ին կուրսի 435 ուսանող, 431 շրջանավարտ և պրոֆեսորադասախոսական կազմի 440 ներկայացուցիչ:

Հարցումների արդյունքները մուտքագրվել և մշակվել են SPSS սոցիոլոգիական վիճակագրական ծրագրի միջոցով:

Ուսանողների շրջանում անցկացված հարցման նպատակն էր բացահայտել ուսանող-ների տեղեկացվածության մակարդակը և գնահատել ու վերլուծել ուսանողների կրթական կարիքները:

Ուսանողների շրջանում անցկացված հարցումները թույլ են տալիս հաստատել, որ համալսարանի կողմից մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության ապահովման մեծածավալ աշխատանքներ են տարվում ՀՀ շրջանների դպրոցներում: Բացի այդ, ուսանողները որպես տեղեկատվության աղբյուր նշում են նաև ծնողներին, համալսարանում սովորող այլ ուսանողների, համալսարանի աշխատակիցների և համալսարանի կայքէջը:

Հարցմանը մասնակցած ուսանողների 92 %–ը նշել է, որ առաջին հայտով դիմել է ագրարային ոլորտի մասնագիտություններ:

Շրջանավարտների շրջանում անցկացրած հարցման նպատակն էր բացահայտել և գնահատել կրթության որակից համալսարանի շրջանավարտների բավարարվածության մակարդակը:

Հարցումների արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ շրջանա-վարտները բավարարված են ստացած կրթության որակից, կրթական ծրագրերի իրակա-նացումից, ստացած տեսական գիտելիքների արդիականության մակարդակից և ուսումնա-ռության տարիներին ձեռք բերած հմտություններից և կարողություններից:

Շրջանավարտները բավարարված չեն եղել լաբորատոր լսարանների նյութատեխ-նիկական հագեցվածությունից, համալսարանի մասնաշենքերի սանհանգույցներից և մարզադահլիճներից, ինչպես նաև ուսանողների գիտելիքների գնահատման համակարգից և պրակտիկաների անցկացման պայմաններից: Պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում անցկացված հարցման նպատակն էր գնահատել դասախոսական կազմի կարիքները, գնահատել դասախոսների վերաբերմունքը համալսարանում կատարվող փոփոխությունների նկատմամբ և բացահայտել այն գործոնները, որոնք կնպաստեն դասախոսների ավելի արդյունավետ աշխատելուն:

Դասախոսական կազմի շրջանում անցկացված հարցումներից պարզվել է, որ դասախոսները ավելի շուտ բավարարված են աշխատանքային միջավայրից, տեղեկացվա-ծության և խոսքի ազատության մակարդակից և կառավարումից:

Դասախոսները ոչ բավարար են գնահատել դասավանդման գործընթացում լսարանների ապահովվածությունը համակարգչային միջոցներով:

Բաց հարցերում դասախոսական կազմի կողմից կատարվել են հետևյալ հիմնական դատողությունները.

- թարմացնել լաբորատոր սարքավորումները և նյութատեխնիկական բազան,
- թարմացնել լսարանային գույքը,
- վերանայել և բարելավել ուսումնաարտադրական պրակտիկաների անցկացման պայմանները,
- ապահովել բժշկական ապահովագրություն:

Շահակիցների շրջանում անցկացված հարցումների արդյունքների համադրման հիման վրա կատարվել են հետևյալ եզրակացությունները.

- համակարգչային լսարանները քիչ են կամ հագեցված չեն անհրաժեշտ տեխնիկական միջոցներով,
- ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը անհրաժեշտ է վերանայել և բարելավել,
- դասախոսական կազմին անհրաժեշտ է պարբերաբար վերապատրաստել,

- պրակտիկաներն անհրաժեշտ է ավելի արդյունավետ կազմակերպել,
- անհրաժեշտ է ուշադրության դարձնել լսարանների և լաբորատորիաների նյութատեխնիկական հագեցվածությանը,
- բարելավել ուսանողներին և այլ շահակիցներին անհրաժեշտ տեղեկատվության ապահովման գործընթացը:

3.5 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Ուսումնական գործընթացի վերահսկման, ինքնավերլուծության և որակի կառավարման բաժինը, առաջնորդվելով 2016-2017 ուստարվա աշխատանքային պլանով, որոշակի աշխատանքներ է կատարել, որը նպաստել է ուսումնական պարապմունքներին ուսանողների հաճախումների մակարդակի բարձրացմանը, բաց թողած ժամերը ժամանակին և որակով լրացմանը, ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված աշխատանքների բարելավմանը, ուսման առաջադիմության և պատրաստվող մասնագետների որակի բարձրացմանը: Սկսած 2016 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2017 թ. հուլիսի 15-ը մեծածավալ աշխատանքներ են տարվել ուսումնական գործընթացի բարելավման, նորագույն մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ու դրանց արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Ուսումնական պարապմունքների իրականացման գործընթացի նկատմամբ ամենօրյա վերահսկողության արդյունքները ներկայացվել են համապատասխան ամբիոնների վարիչներին, դեկաններին և պարբերաբար տեղեկատվություն ներկայացվել համալսարանի ղեկավարությանը: Գործող կանոնակարգի ու նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ վերահսկողությունը տվել է իր դրական արդյունքները:

Կրթության որակի վերահսկման հանձնախումբը հատուկ ուշադրություն է դարձրել դասախոսություններին, լաբորատոր-գործնական պարապմունքներին ուսանողների պարտադիր մասնակցությանը, անհարգելի բացակայությունների վերացմանը և բաց թողած դասերը սահմանված ժամկետում ու որակով լրացմանը: Մի շարք ամբիոններում (Բուսաբուծության և բանջարաբուծության, Ագրոէկոլոգիայի, Ընդհանուր կենսաբանության, Այգեպտղաբուծության և բույսերի պաշտպանության, Անտառագիտության, Կենսաքիմիայի և մանրէակենսաբանության, Թերապիայի, Կլինիկական ախտորոշաբանության, Համաճարա-կաբանության և մակաբուծաբանության, Վիճակագրության և բիոմետրիայի, Ավտոմոբիլների և տրակտորների, Գյուղ. տեխնիկայի շահագործման, Գյուղ. էլեկտրիֆիկացիայի, Գրաֆիկայի և այլն), ուսումնասիրել են կուրսային աշխատանքների (նախագծերի) և դիպլոմային աշխատանքների թեմատիկայի արդիականությունը, հանձնարարման, կատարման, գրախոսման և պաշտպանության կազմակերպման գործընթացները, վեր են հանվել թերությունները, քննարկվել ամբիոններում, ֆակուլտետների և համալսարանի գիտական խորհրդներում և թերությունների վերացման ուղղությամբ մշակվել կոնկրետ հանձնարարականներ: Ուսումնասիրվել է նաև ամբիոններում ըստ առարկաների ուսումնական գրականությամբ, ուսումնամեթոդական նյութերով, անհրաժեշտ տեխնիկական միջոցներով ապահովվածության մակարդակը, միջանկյալ և ամփոփ քննությունների (գրավոր աշխատանքների) կազմակերպման, ստուգման և գնահատման օբյեկտիվության աստիճանը և այլն: Նշված մի շարք այլ ամբիոններում (Կենսագործունեության անվտանգության, Հիդրոտեխնիկական կառուցվածքների, Հողաշինարարության և հողային կադաստրի, Նյութերի դիմադրության, Ընդհանուր քիմիայի, Ֆիզիկայի և ջերմատեխնիկայի, Ագրոբիզնեսի կազմակերպման և կառավարման, էկոնոմիկայի և այլն) մանրամասն ուսումնասիրել են նաև առարկայական ծրագրերը, օրացուցային պլանները, պարբերաբար ենթարկել մասնագիտական փորձաքննությունների և դրանց շարունակական բարելավման համար մշակել կոնկրետ առաջարկություններ և ներկայացրել ամբիոնների վարիչներին: Ուսումնական գործընթացի բարելավման և որակի բարձրացման նպատակով թվով 88 դասախոսի մոտ կազմակերպվել է դասալսումներ, որոնց արդյունքները քննարկել են ամբիոնների նիստերում կամ ամբիոնի վարիչի ու դասախոսների մասնակցությամբ վեր են հանել թերություններն ու բաց թողումները և տրվել կոնկրետ հանձնարարականներ:

Ուսումնական տարվա ամբողջ ընթացքում վերահսկողություն է իրականացվել ուսումնական գործընթացում դասավանդման որակի, լաբորատոր ու գործնական պարապմունքներն անհրաժեշտ մակարդակով կազմակերպման, հաստատված չափորոշիչներին ու կանոնակարգին համապատասխան ուսանողների պատրաստվածության ու բազմագործոնային սկզբունքով գիտելիքների գնահատման գործընթացների նկատմամբ: Որակի վերահսկման հանձնախումբը մանրամասն ուսումնասիրել և վերլուծության է ենթարկել նաև ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, ուսումնամեթոդական նյութերով ամբիոնների ապահովվածության մակարդակը և տեխնիկական միջոցների ու լաբորատոր սարքավորումների նպատակային և արդյունավետ օգտագործմանն առնչվող հարցերը: Հատուկ ուշադրություն է դարձվել ուսանողների առաջադիմության որակական միջին գնահատականների համակարգերի ձևավորմանը, կրեդիտային բաղադրիչների կուտակմանը, ռեյտինգային գնահատմանը, ներդրմանը և ուսման առաջադիմության բարձրացմանը: 2016-2017 ուսումնական տարվա ամբողջ ընթացքում ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակի գնահատման և բարելավման նպատակով Կրթության որակի վերահսկման հանձնախումբը ուսումնասիրություններ է իրականացրել.

- Ագրոնոմիական ֆակուլտետի դեկանատում ու դրա կազմում ընդգրկված 8 ամբիոններում,
- Անասնաբուժական բժշկագիտության ֆակուլտետի դեկանատում ու դրա կազմում ընդգրկված ամբիոններում,
- Տնտեսագիտական ֆակուլտետի 5 ամբիոններում,
- Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետի 5 ամբիոններում,
- Գյուղ.մեքենայացման և տրանսպորտի ֆակուլտետի 5 ամբիոններում:

Ուսումնասիրություններ են կատարվել ագրոնոմիական ու անասնաբուժական բժշկագիտության ֆակուլտետների դեկանատներում ու դրանց ամբիոններում, իսկ 2017 թ. նոյեմբերին ուսումնասիրե են արձանագրված թերությունների և բաց թողումների վերացման ընթացքը և տրվել համապատասխան գնահատական:

2017 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ուսումնասիրություններ է կատարվել 2016-2017 ուստարում գիտական խորհրդի հանձնարարականների կատարման ընթացքի հետ կապված, որոնց արդյունքներն ամփոփվել են և ներկայացվել նոյեմբերի 30-ին գիտական խորհրդի քննարկմանը: Ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ համալսարանի գիտական խորհրդի որոշումները բոլոր ստորաբաժինների կողմից հիմնականում կատարվել են, որոշները գտնվում են կատարման ընթացքում, սակայն առանձին դեպքերում եղել են վրիպումներ, որոնց հաշվի առնելու համար տրվել են զգուշացումներ: Միաժամանակ գիտական խորհուրդը հանձնարարել է գիտական քարտուղարին, ըստ ուսումնական տարիների, կազմել գիտական խորհրդի հանձնարարականների կատարման ժամանակացույց և սահմանված ժամկետում տրամադրել պատասխանատու կատարողներին՝ միաժամանակ վերահսկողություն սահմանելով դրանց կատարման նկատմամբ:

Սկսած ուսումնական տարվա սկզբից մինչև ավարտը բոլոր ուսումնական մասնաշենքերում առավոտյան ժամը 9-ից ամենօրյա վերահսկողություն է սահմանվել դասընթացներին ուսանողների հաճախումների նկատմամբ, ինչի շնորհիվ գրեթե վերացել են անհարգելի բացակայությունները, ուշացումները (հատկապես առաջին-երկրորդ ժամերին) հասցվել նվազագույնի, հաճախումների միջին տոկոսը համալսարանում հասցվել է 95-96 %-ի: Ուսումնասիրելով հաճախումների իրական վիճակը վերահսկման հանձնախումբը վերահսկողություն է իրականացրել նաև ուսանողների կողմից բաց թողած ժամերի ժամանակին և լիարժեք լրացման նկատմամբ՝ ամենօրյա վերահսկողության տակ պահելով ուսումնական գործընթացի կազմակերպման ամբողջ ընթացքը: Ուշադրությունից դուրս չի մնացել նաև ամբիոններում ուսումնական, ուսումնադաստիարակչական, հայրենասիրական, ինչպես նաև մասնագիտությունների, կուրսերի համակարգողների և կուրատորների ընտրության, կուրսերին կցման և արդյունավետ գործունեության հետ կապված շատ հարցեր: Հանձնախումբը ուշադրության կենտրոնում է պահել նաև կանոնակարգով սահմանված գործող չափորոշիչներին համապատասխան ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների կազմակերպման և կատարման գործընթացները, ինչպես և հաշվետվությունների կազմման, գրախոսման և պաշտպանության կազմակերպման ու գնահատման ընթացքը: Ուսումնական տարվա ընթացքում համալսարանի 26 ամբիոններում մանրամասն

ուսումնասիրվել են կուրսային աշխատանքների (նախագծերի) և դիպլոմային աշխատանքների թեմատիկան, դրանց հրատապությունը, սահմանված ժամանակացույցի համապատասխան հանձնարարման, պահանջվող որակով կատարման, մասնագիտորեն գրախոսման և պաշտպանության կազմակերպման ու գնահատման ամբողջ ընթացքը: Ընտրական կարգով ըստ որոշ առարկաների ուսումնասիրվել են ուսանողների առաջադիմության, կրեդիտների կուտակման ռեյտինգային գնահատման ու միջին որակական գնահատականի համակարգի ներդրման գործընթացները: Ուսանողների ուսման առաջադիմության բարձրացման, ուսումնական գործընթացի կազմակերպման մակարդակի բարելավման և պատրաստվող մասնագետների որակի բարձրացման համար վերջին տարիներին համալսարանում կատարվել է տեխնիկական վերազինում, լաբորատորիաները համալրվել են անհրաժեշտ սարքավորումներով, բացվել համակարգչային նոր լսարաններ, գրադարանը համալրվել է անհրաժեշտ գրականությամբ և ուսումնական գործընթացի կազմակերպման համար ստեղծվել են ավելի բարենպաստ պայմաններ, հրատարակվել են բավականին ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր և ուսումնաօժանդակ նյութեր:

Այս ամենով հանդերձ ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման գործընթացներում դեռևս առկա են որոշակի թերություններ և բացթողումներ: Լաբորատոր սարքավորումները, համակարգչային լսարանները, ուսումնական կաբինետները, գրադարանային ֆոնդը և նյութատեխնիկական բազան դեռևս արդյունավետ չեն օգտագործվում, համարժեք ձևով չի բարձրանում ուսումնական գործընթացում ուսանողների մոտ ձևավորվող գիտելիքների մակարդակն ու արդյունավետությունը: Ուսումնասիրությունների ընթացքում մի շարք ամբիոններում (Գրաֆիկայի և մեքենաների նախագծման հիմունքների, Ագրոբիզնեսի կազմակերպման և կառավարման, Ագրոպարենային համակարգի էկոնոմիկայի, Ֆինանսների կառավարման, ինֆորմատիկայի և մաթ. մեթոդների), որոշակի թերություններ են արձանագրվել կուրսային աշխատանքների (նախագծերի), դրանց թեմաների արդիականության, հանձնարարման, պահանջվող մակարդակով կատարման, գրախոսման և պաշտպանության կազմակերպման գործընթացներում: Ուսումնասիրությունների արդյունքները քննարկվել են ֆակուլտետների համատեղ նիստերում, համալսարանի ռեկտորատում և գիտական խորհրդում և ձեռնարկվել համապատասխան միջոցներ, տրվել կոնկրետ հանձնարարականներ: Որոշ ամբիոններում որոշակի թերություններ են արձանագրվել ուսանողների առաջադիմության կրեդիտային համակարգով գնահատման, կրեդիտների կուտակման և առաջադիմության միջին որակական գնահատականի ձևավորման գործընթացում: Կատարված դրական աշխատանքների հետ մեկտեղ ամբիոններում արձանագրվել են որոշ թերություններ, վրիպումներ, որոնց մի մասը արդեն հաշվի են առնվել, մյուս մասը բոլոր դասախոսների և ամբիոնի վարիչների ուշադրության կենտրոնում է և ամենօրյա աշխատանք է տարվում դրանց վերացման ուղղությամբ: Որոշ ամբիոններում ցածր մակարդակի վրա է գործավարությունը, աշխատանքային և կատարողական կարգապահությունը (էլեկտրիֆիկացիա, ֆինանսների կառավարում), երբեմն ամբիոնի նիստերը ձևական բնույթ են կրում, որոշ ամբիոնների աշխատանքային պլաններում ընդգրկված հարցերը ուսումնական գործընթացը լիարժեք չեն բնութագրում, քննարկվում են երկրորդական հարցեր, հստակ և հասցեական չեն ձևակերպվում ամբիոնների նիստերում քննարկված հարցերի վերաբերյալ որոշումները: Ուսումնասիրություններն ավարտվելուց հետո արդյունքները մանրամասն քննարկվել են համապատասխան ամբիոններում, տրվել են կոնկրետ հանձնարարականներ և հսկողություն է սահմանվում դրանց կատարման նկատմամբ: Կրթության որակի վերահսկման հանձնախումբը 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար վերահսկողություն է սահմանել միջանկյալ քննությունների, իսկ կիսամյակներն ավարտվելուց հետո վերջնական ամփոփ քննությունների կազմակերպման ընթացքի նկատմամբ: Հանձնախումբը, ակտիվացնելով գործունեությունը և համագործակցելով դասախոսների, ամբիոնի վարիչների և դեկանների հետ, լուրջ աշխատանք է տարել դասընթացներին ուսանողների հաճախումների մակարդակի բարձրացման, անհարգելի բացակայությունների նվազեցման, դասաձախողումների բացառման և բաց թողած ժամերը ժամանակին և որակով լրացման ուղղությամբ: Դրա շնորհիվ դրական տեղաշարժ է արձանագրվել միջանկյալ և վերջնական քննությունների արդյունքներում:

3.6.ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ կառավարության 01.11.2016 թվականի № 02/02.17/[377630]-16 նիստի 6-րդ կետի հանձնարարականների կատարման կապակցությամբ Հայաստանի ազգային ագրարային

համալսարանում ագրոպարենային համակարգի համար թողարկվող մասնագիտությունների որակի բարձրացման, մասնավորապես ոլորտի գործատուների կողմից շրջանավարտների կիրառական ու գործնական հմտությունների վերաբերյալ ներկայացվող պահանջների բարելավման նպատակով 2016 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին քննարկվել, նախապատրաստվել, իրականացվել են երեք խոշորամասշտաբ ծրագրեր և սահմանված ժամկետներում ներկայացվել են ՀՀ կառավարությանը, ՀՀ Կրթության և գիտության ու ՀՀ գյուղատնտեսության նախարարություններին:

1. Համալսարանում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի գծով բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստման հիմնախնդիրների քննարկման և առաջարկությունների ներկայացման նպատակով ագրոպարենային ոլորտի հիմնական գործատուների, ընկերությունների և կազմակերպությունների ղեկավարների ու արտադրության առաջատար մասնագետների մասնակցությամբ 2016 թ. նոյեմբերի 10-ից 15-ը համալսարանում ըստ ոլորտների ուղղվածության կազմակերպվեցին հինգ խորհրդակցություններ, որոնց ժամանակ քննարկվեցին հետևյալ հարցերը.

1) Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում, փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության հիմնավորում:

2) Մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնական պլանների, ընդհանուր մասնագիտական ու թողարկող ամբիոններում դասավանդվող առարկաների ցանկի և առարկայական ծրագրերի վերլուծություն, գնահատում և առաջարկությունների ներկայացում:

3) Թողարկվող մասնագետների գործնական հմտությունների ձևավորման գործող համակարգի (լաբորատոր և գործնական պարապմունքների,ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների կազմակերպում) վերլուծություն և առաջարկությունների ներկայացում:

4) Արտադրությունում աշխատող մասնագետների, ֆերմերների վերապատրաստման և վերաորակավորման գործող համակարգի վերլուծություն և դրա կատարելագործմանն ուղղված առաջարկությունների քննարկում:

5) Ոլորտը որակյալ մասնագետներով ապահովելուն ուղղված գործատուների այլ առաջարկությունների քննարկում:

Քննարկումների արդյունքում գործատուների կողմից կարևոր առաջարկություններ ներկայացվեցին մասնագիտական և թողարկող ամբիոններում դասավանդվող առարկաների ծրագրերի ու հատկացված ժամաքանակների վերանայման, ամբիոնների լաբորատոր բազան տեխնիկական ու տեխնոլոգիական ժամանակակից միջոցներով համալրման, պրակտիկաների արդյունավետ կազմակերպման և հանրապետության մարզերում համալսարանի դասախոսների կողմից գյուղատնտեսության ոլորտի մասնագետների ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպման վերաբերյալ:

2. Համալսարանի հետ համատեղ կրթական գործընթացների արդյունավետության քննարկման և ուսումնասիրման կապակցությամբ ՀՀ ԿԳ նախարարությանը տրված ՀՀ կառավարության հանձնարարականների հետ կապված, հիմք ընդունելով նաև մարզպետարանների կողմից համապատասխան մարզերում մասնագիտությունների պահանջարկի մասով իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, համալսարանում մշակվեցին ծրագրեր մասնագիտական գիտելիքների կատարելագործման (կրթական ծրագրերում ավելացնելով գործնական աշխատանքների ժամաքանակները) և արդյունավետ կիրառման համար:

Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ներկա փուլում նշանակալի դեր ունեն ճկուն գործելաոճով, մրցակցությանը դիմակայելու հմտություններ ունեցող ոլորտի ոչ միայն բարձրագույն, այլ նախնական (արհեստագործական), բանվորական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների (մասնագիտացումների) համապատասխան որակավորմամբ կադրերը: Հիմք ընդունելով նաև այս առումով մարզպետարանների, գործատուների և արտադրության աշխատողների առաջարկությունները՝ 2017 թ. սկսած բակալավրային կրթական ծրագրերին համահունչ, շուրջ 34 բանվորական մասնագիտությունների գծով համալսարանի ուսանողների և գյուղատնտեսական արտադրության աշխատողների համար համալսարանի կողմից կկազմակերպվեն արհեստագործական և լրացուցիչ (բանվորական) կարճաժամկետ դասընթացներ:

3. Ուսանողների կիրառական հմտությունների բարելավման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ Ագրարային համալսարանի Բալահովիտի ուսումնափորձնական

տնտեսությունում կաթի վերամշակման արտադրամասի գործարկումը, որտեղ ոլորտի ապագա մասնագետներն անմիջապես ծանոթանում են կաթի վերամշակման ու կաթնամթերքի արտադրության տեխնոլոգիաներին:

Նորարարությունների մրցակցային հիմնադրամի ծրագրերի շրջանակներում «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ-ի աջակցությամբ, 2015 թվականին համալսարանում ստեղծվեց «Ագրոպարենային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնը», որի համար ձեռք բերվեց գյուղատնտեսական տեխնիկայի ամբողջ լրակազմը՝ մոտ 70 մլն դրամ արժողությամբ:

2016 թվականից համալսարանում իրականացվում է «Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում» ծրագիրը՝ 150.0 մլն դրամ արժողությամբ, որի հիմնական նպատակը գինեգործական բարձրորակ կրթության համար նյութատեխնիկական լիարժեք բազայի ստեղծումն է, ինչպես նաև համալսարանին պատկանող տարբեր ստորաբաժանումների գիտական և նյութական ռեսուրսները մեկ միասնական համակարգի մեջ միավորելը:

Համալսարանում (հատկապես վերջին 4 տարիներին) հետևողական աշխատանքներ են տարվում առկա 74 լաբորատորիաների և 2 ուսումնափորձնական տնտեսությունների նյութատեխնիկական բազան ամրապնդելու ուղղությամբ: Նորացվել են գործող լաբորատորիաների սարքավորումները, ստեղծվել է 8 նոր մասնագիտացված լաբորատորիա: Բարելավվել են համալսարանի տնտեսությունների վարելահողերը, խոտհարքները և արոտավայրերը, հիմնվել են խաղողի ու պտղատու նոր այգիներ: Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսությունում 2015 թվականին շահագործման հանձնվեց խորքային ջրհորը, ինչը հնարավորություն ընձեռեց ընդարձակելու ուսումնագիտաարտադրական բազան:

Միաժամանակ, Ագրարային համալսարանը մշակել է ծրագրեր՝ ուղղված սեփական բազայի զարգացմանը և ուսումնափորձնական տնտեսությունների հզորացմանը, որոնք հիմք կհանդիսանան բոլոր մասնագիտությունների համար ձեռք բերելու գործնական գիտելիքներ ու հմտություններ:

Մշակվել է 18 ծրագիր՝ ուղղված պահածոյացման և սննդախտանյութերի, մսի և մսամթերքի տեխնոլոգիաների, բուսաբուծության, պտղաբուծության և խողողագործության, ջերմատնային տնտեսության, մշակաբույսերի ոռոգման, ոչխարաբուծության, տոհմային այծաբուծության, տոհմային տավարաբուծության, խոզաբուծության, երկրատեղեկատվական համակարգերի և հեռավար զոնդավորման տեխնոլոգիաների և այլ բաղադրիչների զարգացմանը:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կազմում, որպես կառուցվածքային ստորաբաժանումներ, գործում է երկու գիտահետազոտական ինստիտուտ, մեկ հետազոտական կենտրոն, հինգ գիտական պրոբլեմային լաբորատորիա: 2012 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կազմից երեք գիտական կենտրոն մասնաճյուղի կարգավիճակով միացվեց Ագրարային համալսարանին:

Ագրարային համալսարանի կազմում, կենտրոնացնելով գիտական կենտրոնների ներուժն ու ռեսուրսները, հնարավորություն ընձեռվեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանին նպատակաուղղված գործընթացներ իրականացնել՝ համալսարանը արևմտյան տիպի հետազոտական համալսարան դարձնելու ուղղությամբ:

ՀՀ Կառավարության հանձնարարականների կատարման շրջանակներում համալսարանում տարբեր ոլորտի մասնագետներից կազմված խմբի կողմից շուրջ 600 ֆերմերի համար 2017 թվականի փետրվար-հուլիս ամիսներին հանրապետության բոլոր մարզերում կազմակերպվեցին և իրականացվեցին ֆերմերների կարճաժամկետ վերապատրաստման ծրագրեր անասնաբուժության, անասնաբուծության, բուսաբուծության, պտղաբուծության, ֆերմերային տնտեսությունների կազմակերպման և այլ թեմաների վերաբերյալ:

ՀՀ Կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 16-ի, ՀՀ վարչապետի 2016 թվականի հոկտեմբերի 26-ի հանձնարարականների հիման վրա և դրանցով պայմանավորված ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման, ՀՀ Կրթության և գիտության և ՀՀ Գյուղատնտեսության նախարարությունների ներկայացրած ծրագրերի հիման վրա 2017 թվականին մշակվեց և 2017 թվականի փետրվարի 17-ին հաստատվեց «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի զարգացման եռամյա ծրագիրը» 2017-2019 թվականների համար:

Ծրագրում ներառվեցին կրթության, ուսումնաարտադրական բազայի և տեղեկատվական տեխնոլոգիաների և գիտության զարգացման եռամյա ծրագրերը:

3.7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Համալսարանում վերջին տարիներին պլանավորվել և բարձրագույն կրթության ոլորտում ներդրվել են համակողմանի բազմաբնույթ միջոցառումներ, որոնք միտված են կոռուպցիոն երևույթների և ռիսկերի նվազեցմանը, սուբյեկտիվ երևույթների կանխարգելմանը, կրթության որակի բարելավմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև հրապարակայնության և թափանցիկության ապահովմանը:

Այս տեսանկյունից կարևոր խնդիր է կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրսևորման կանխարգելման տեսանկյունիցհամալսարանում կրթության ոլորտի կանոնակարգերի, ընթացակարգերի վերանայումը: Վերջին տարիներին վերանայվել են համալսարանում կրթության կազմակերպման և իրականացման վերաբերյալ կանոնակարգերը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության համապատասխան իրավական և նորմատիվային ակտերը, ինչպես նաև ուսանողության և այլ շահառուների (ծնողների, գործատուների) առաջարկությունները:

Կրթության ոլորտի թափանցիկության ապահովման նպատակով համալսարանում 2010 թվականին ստեղծվել է տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը և համալսարանի կայքը (anau.am), որտեղ տեղադրված են համալսարանի գործունեությանը վերաբերող բոլոր կանոնակարգերը, որոնցում մանրամասն լուսաբանված են ուսանողների իրավունքները և պարտականությունները, ինչը էապես բարձրացրել է համալսարանում հրապարակայնության և վերահսկողության արդյունավետությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը իր մեջ ներառում է գիտական գրադարանը, տեղեկատվական համակարգերի կառավարման բաժինը, տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժինը, տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժինը, ինչպես նաև էլեկտրոնային ուսուցման և ինտերնետ կապի համակարգչային կաբինետները:

Համալսարանի ուսանողներն ունեն ռեկտորի հետ ազատ շփվելու լիակատար հնարավորություն:

Թափանցիկության և հրապարակայնության կարևոր գործոններից է բուհի հոգաբարձուների խորհրդում ուսանողության, ՀՀ ԿԳ նախարարության և ՀՀ կառավարության կողմից նշանակված ներկայացուցիչների ներգրավվածությունը:

Հակակոռուպցիոն աշխատանքների ողջ համակարգում իր կարևոր տեղն ունի ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգը, երբ ուսանողը գնահատվում է ամբողջ կիսամյակում տարբեր գործոններից կուտակած արդյունքների հաշվեկշռային միավորով:

Համալսարանի համար առավել կարևորվում է թափանցիկության ապահովումը քննությունների ու գիտելիքների ատեստավորման ու գնահատման տարբեր մակարդակներում և օբյեկտիվության ապահովումը: Այս նպատակով համալսարանում մշակվել և ներդրվել է ուսանողների գիտելիքների ընթացիկ ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման և գնահատման կանոնակարգ:

Բուհում ընդունված և ներդրված է հատուկ կարգ, որի համաձայն կիսամյակային ամփոփիչ բոլոր քննություններն անխտիր կազմակերպվում են գրավոր, ռեկտորատի, դեկանատի, կրթության որակի վերահսկողության բաժնի, ամբիոնի վարիչի և դասախոսի մասնակցությամբ: Բոլոր գրավոր աշխատանքները ստորագրվում են հանձնաժողովի պատասխանատու անդամի կողմից և ապա տրամադրվում է ամբիոնին ստուգման: Ուսանողների իրավունքների պաշտպանության և բողոքարկման հնարավորության ընձեռման տեսանկյունից իրականացվում են հետևյալ աշխատանքները. գրավոր քննության արդյունքները անմիջապես տեղեկագիր չեն անցկացվում, այն քննարկվում է տվյալ խմբի (հոսքի, կուրսի) ուսանողների հետ, բոլոր ուսանողների ներկայությամբ, քննարկվում են բողոքները (առկայության դեպքում), որից հետո արդյունքները գրանցվում են համապատասխան տեղեկագրում: Այս մեթոդի ներդրումը հավանության է արժանացել ուսանողության շրջանում: 2010-2011 և 2011-2012 ուստարիների ընթացքում նույն սկզբունքը ներդրվել է հեռական ուսուցման համակարգում, որտեղ ստուգողական, կուրսային աշխատանքների ընդունումը և սեսիոն քննությունները իրականացվում են հանձնաժողովների ներկայությամբ: Սկսած 2011-2012 ուստարվանից՝ արմատապես վերանայվել են ուսանողների ավարտական պետական ատեստավորման աշխատանքները: Բոլոր մասնագիտությունների գծով պետական ատեստավորման հանձնաժողովների անդամների 50 %-ից ավելին արտադրության, վերա-

մշակող կազմակերպությունների, բանկային, ապահովագրական, ֆերմերային տնտեսությունների և համապատասխան ոլորտների գերատեսչություններից ներգրավված մասնագետներ են, ովքեր կարևոր դերակատարություն ունեն ոչ միայն ավարտական ատեստավորման աշխատանքների հրապակայնության, գիտելիքների գնահատման գործընթացում, այլ նաև իրենց առաջարկություններով նպաստում են առարկաների ծրագրերի բարելավման, կիրառական հմտությունների ձեռքբերման և ընդհանրապես կրթության որակի ապահովման առաջընթացին: Այս համակարգի դրական երևույթներից է նաև այն, որ տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչները շահագրգիռ են լավագույն շրջանավարտներին ընտրելու և իրենց մոտ աշխատանքի ընդունելու, ինչպես նաև համալսարանի հետ ակտիվ համագործակցելու տեսանկյունից:

Սկսած 2011-2012 ուստարվա երկրորդ կիսամյակից՝ պետական ատեստավորման ողջ գործընթացը ձայնագրվում է, որը հնարավորություն է ընձեռում ուսանողներին բողոքարկելու գնահատման արդյունքները:

Ուսանողների գիտելիքների գնահատման ողջ գործընթացում կոռուպցիոն դրսևորման երևույթների կանխարգելման լավագույն օրինակներից մեկը, որը համալսարանը ներդնում է սկսած 2009 թվականից, գնահատման բազմագործոնային համակարգն է: Այս համակարգի ներդրումը նվազեցնում է դասախոսի դերը ամփոփիչ քննության (գիտելիքների ամփոփիչ ստուգումների) ժամանակ, քանի որ ուսանողը ամբողջ կիսամյակի ընթացքում կուտակում է միավորներ, իսկ գիտելիքների ամփոփիչ ստուգումը ընդամենը մի բաղադրիչ է:

Համալսարանում ապահովված է կրթական բարեփոխումների հրապարակայնությունը, թափանցիկությունը և հասանելիությունը բոլոր ուսանողներին: Կանոնակարգերը կամ դրանց հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտնում համալսարանի կայքում, «Հասկ» թերթում, ուսանողների համար հրատարակվող բուկլետներում, կազմակերպվող սեմինարներում:

Կոռուպցիոն ռիսկերի բացահայտման և կանխարգելման առավել արդյունավետ մեթոդը, որը վերջին տարիներին սիստեմատիկ կիրառվում է համալսարանում, յուրաքանչյուր կիսամյակում ռեկտորի պարբերաբար հանդիպումներն են ուսանողական խորհրդի և բոլոր կուրսերի ուսանողների, անհրաժեշտության դեպքում նաև ծնողների հետ: Այս հանդիպումներում բացահայտված բոլոր թերությունները, որոնք ուսանողները ներկայացնում են ռեկտորին շատ ազատ և անկաշկանդ, անմիջապես, օպերատիվ քննարկվում են ռեկտորատի նիստերում և ձեռնարկվում անհրաժեշտ միջոցառումներ սկսած սանիտարահիգիենիկ պայմաններից մինչև կրթության որակի բարելավման և ապահովման խնդիրները, և տարբեր տիպի դրսևորումները, այդ թվում նաև կոռուպցիոն ռիսկերը:

Հակակոռուպցիոն միջոցառումների շարքից են վերջին տարիներին համալսարանում ներդրված կրթության շարունակության ապահովման գործընթացում գիտելիքների ստուգման (քննությունների) բաղադրիչի վերացումը, ինչպես օրինակ՝ միջնակարգ մասնագիտական կրթության ծրագիրը բարձր գնահատականներով ավարտած շրջանավարտների կրթության շարունակումը բակալավրիատում, բակալավրիատի շրջանավարտների ընդունելությունը մագիստրատուրայում և երկրորդ մասնագիտության ձեռքբերման հնարավորությունները նախորդ կրթության դիպլոմի միջուկի գնահատականների արդյունքներով: Թվարկած բոլոր կրթական հաջորդական մակարդակների անցումը իրականացվում է դրան նախորդող կրթական ծրագրի ընթացքում ձեռք բերած գիտելիքների միջին ցուցանիշների հիման վրա, մրցութային կարգով, ըստ սահմանված տեղերի և կարգի, որը զերծ է կոռուպցիոն ռիսկից:

Ակնհայտ է, որ կրթական համակարգում կոռուպցիոն ռիսկերը հիմնականում առաջանում են այն ուսանողների (կամ նրանց հովանավորները) մոտ, ովքեր վատ են մասնակցում ուսումնական գործընթացին: Նման ռիսկը բացառելու կամ հիմնականում մեղմելու նպատակով համալսարանում մշակվել է կանոնակարգ և ներդրվել է ուսանողների հաճախումների խիստ վերահսկողություն: Համալսարանի ուսումնամեթոդական կենտրոնում ստեղծված է աշխատանքային հատուկ խումբ, որը յուրաքանչյուր օր և յուրաքանչյուր ժամ ստուգում է ուսումնական պարապմունքների կայացման, ուսանողների հաճախումների վիճակն ամբողջ համալսարանում և յուրաքանչյուր օրվա ընթացքում համալսարանի ղեկավարությունը ստանում է բոլոր տվյալները հաճախումների վերաբերյալ: Ստացված արդյունքները վերլուծելով ձեռնարկվում են օպերատիվ միջոցառումներ համապատասխան ֆակուլտետների, ամբիոնների և դասախոսների ու ուսանողների հետ: Անհրաժեշտության դեպքում ֆակուլտետների դեկանները, իսկ առանձին դեպքերում համալսարանի ռեկտորը կազմակերպում են հանդիպումներ սիստեմատիկ բացակայող ուսանողների ծնողների հետ: Ուսանողների

հաճախումների հարցը մշտապես գտնվում է համալսարանի ռեկտորատի ուշադրության կենտրոնում, յուրաքանչյուր ամիս քննարկվում է նախորդ ամսվա հաճախումների արդյունքները և ձեռնարկվում անհրաժեշտ միջոցառումներ: Համալսարանում ներդրված նման համակողմանի աշխատանքների շնորհիվ ուսանողների հաճախելիության մակարդակը կազմում է 90-93 %-ի: Նման արդյունքների համալսարանը հասել է ուսանողական խորհրդի և ուսանողության հետ սիստեմատիկ, հետևողական բաց և հրապարակային աշխատանքների շնորհիվ, բայց և այնպես այս գործընթացն առավել բարելավման կարիք ունի, մասնավորապես ուսանողության շրջանում գիտակցության մակարդակի բարձրացման տեսանկյունից:

Համալսարանում ուսանողների ներքին և արտաքին շարժունությունն ապահովելու և տարբեր տեսակի ռիսկերը բացառելու նպատակով ստեղծված են հանձնաժողովներ: Մասնավորապես «Էրասմուս-Մունդուս», «Ագրարային մենեջմենթ» ծրագրերի շրջանակներում համալսարանը համագործակցում է Հունաստանի, Գերմանիայի, Պորտուգալիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Էստոնիայի, Լիտվայի և այլ երկրների ագրարային համալսարանների հետ, որի արդյունքում իրականացվում է ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների և դասախոսների փոխադարձ շարժունություն: Մրցութային կարգով նման գործընթացի իրականացման և շարժունությանը մասնակցող երիտասարդության հետ համակողմանի աշխատանքների արդյունքում, ծրագրերի արտասահմանյան ղեկավարները բազմիցս նշել են ագրարային համալսարանում ստեղծված նպաստավոր պայմանները, թեկնածուների օբյեկտիվ ընտրությունը և ծրագրերի պատշաճ իրականացումն ու հրապարակայնության ապահովումը: Բոլոր ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը տարածվում է համալսարանի կայքի, «Հասկ» թերթի և հայտարարությունների միջոցով:

ՀՀ Կրթության և գիտության նախարարության համապատասխան կարգի և հանձնարարականի հիման վրա համալսարանում մշակվել և ներդրվել է ուսումնական տարվա առաջադիմության արդյունքով ուսանողների շրջափոխման գործընթացը: Այս կարգը համալսարանում ներդրված է շուրջ 10 տարի, որի համար համալսարանում ստեղծված է մանդատային հանձնաժողով, մշակված է կանոնակարգ, որը 2 անգամ վերանայվել և վերահրատարակվել է: Սույն կարգը տեղադրված է համալսարանի կայքէջում և հրատարակվել է «Հասկ» թերթում: Ուսանողների առաջադիմության արդյունքները բազմագործոնային համակարգով քննարկվում են բոլոր մասնագիտությունների 2-րդ և բարձր բոլոր կուրսերում, ուսանողական խորհրդում, մանդատային (շրջափոխման) հանձնաժողովում և ռեկտորատում: Վերջնական արդյունքները մասսայականացվում են ուսանողության շրջանում: Քննարկումները բաց են բոլոր ուսանողների համար և կոռուպցիոն ռիսկն այս գործընթացում բացառված է, դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ յոթ տարիների ընթացքում շրջափոխման նկատմամբ որևէ բողոք չի արձանագրվել, իսկ եթե որևէ հարց ուսանողի կողմից առաջարկվում է, ապա օպերատիվ քննարկվում է և ըստ գործող կարգի տրվում է համապատասխան լուծում:

Համալսարանում մշակված են անհրաժեշտ կանոնակարգեր դասախոսական կազմի ընտրության, նշանակման, առաջխաղացման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման թափանցիկության և հրապարակայնության օրինականությունն ապահովելու ուղղությամբ: Համալսարանում խիստ կարևորվում են պրոֆեսորադասախոսական կազմի բնականոն սերնդափոխության խնդիրները: Մի շարք ամբիոններում դասախոսների միջին տարիքը 60 և ավելի է, սահմանվում են ստաժոր-դասախոսի հաստիք: Այդ էր պատճառը, որ համալսարանում հիմնվեց «Ստաժորի» ինստիտուտ: Այս առումով որևէ ռիսկ բացառելու տեսանկյունից ամբիոնում և ֆակուլտետում քննարկվում և ռեկտորին է ներկայացվում մագիստրատուրան և ասպիրանտուրան հաջող ավարտած երիտասարդ մասնագետների թեկնածությունը ստաժորի տարակարգում ընդգրկելու համար, միաժամանակ ամբիոնը պարտավորվում է ստաժորի դասընթացը ավարտելուց հետո տվյալ երիտասարդին սահմանված կարգով ընդգրկել դասախոսական կազմում: Պրոֆեսորադասախոսական կազմի համալրման նման եղանակի կիրառման արդյունքում վերջին տարիներին ամբիոնները հիմնականում համալրվել են երիտասարդ դասախոսներով : Միայն վերջին 5 տարիների ընթացքում ամբիոնները համալրվել են շուրջ 90 երիտասարդ դասախոսներով:

Կոռուպցիոն դրսևորումների բացահայտման և կանխարգելման տեսանկյունից համալսարանում յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո կազմակերպվում են ուսանողների կողմից դասախոսների գնահատման անանուն հարցման աշխատանքները, որը իրականացվում է ուսումնամեթոդական կենտրոնի, ֆակուլտետների դեկանատների և ուսանողական խորհրդի անդամների մասնակցությամբ՝ ըստ սահմանված կարգի և հարցաթերթիկի:

Հարցաթերթիկը բաղկացած է 2 բաժնից՝ յուրաքանչյուրը 6-ական հարցից: Ստացված արդյունքները մշակվում են ըստ դասախոսների, ամբիոնների և ֆակուլտետների: Դասախոսների գնահատումը կատարվում է 5 բալային սանդղակով: Այն դասախոսները, ովքեր ուսանողների կողմից գնահատվում են 3-ից ցածր միավորով, նրանց հետ տեղի է ունենում անհատական քննարկում ռեկտորի, պրոռեկտորի, ֆակուլտետի դեկանի կամ ամբիոնի վարիչի կողմից՝ բացահայտելու այն թերությունները, որոնք նշել են ուսանողները, և նախանշել ու միջոցառումները, որոնք պետք է նպաստեն թերությունների վերացմանը:

- Հակակոռուպցիոն աշխատանքները հրապարակային և թափանցիկ դարձնելու նպատակով սկսած 2011 թվականից սեմինար պարապմունքներ են իրականացվել տարբեր կուրսերի ուսանողության շրջանում՝ «Մարդու իրավունքների ինտեգրումը, հակակոռուպցիոն օրակարգ. մարտահրավերները, հնարավորություններն և կարողությունները» ծրագրով:

Սեմինարների նպատակն է.

- Բարձրացնել իրազեկվածությունը և քննարկումներ ծավալել կոռուպցիայի մասին

- Ներգրավել ուսանողների թափանցիկության խթանման և կոռուպցիոն դեպքերի դիտարկման խնդիրներին

- Խթանել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարման գործընթացին:

Այդուհանդերձ, վերը իրականացված բոլոր աշխատանքները այս կարևոր խնդրի լուծման նախնական քայլերն են այն պետք է ունենա շարունակական բնույթ: Հակակոռուպցիոն ծրագրի ամբողջ համատեքստում առավելագույնս կարևորվում են կրթության որակի ապահովման հիմնախնդիրները: Ներկայումս համալսարանը կրթության որակի գնահատման ու բարելավման համակարգում որոշիչ քայլեր է կատարում՝ ելնելով Բոլոնիայի գործընթացի և այն խնդիրներից, որոնք դրված են բարձրագույն կրթության համակարգի առջև:

Այս տեսանկյունից համալսարանը կարևորել է նախ և առաջ կրթական ոլորտի համապատասխան կառույցի և քաղաքականության մշակումը՝ ներառելով այն համալսարանի ռազմավարական ծրագրում:

Ակնհայտ է, որ համալսարանում իրականացվող կրթական բարեփոխումները, կրթական ծրագրերի մերձեցումը եվրոպական ընդհանուր չափանիշներին, կհանգեցնի համալսարանի միջազգային մրցակցության և գրավչության բարձրացմանը, պատրաստվող մասնագետների որակի բարելավմանը:

2009-2010 ուսումնական տարում համալսարանում ստեղծվել և գործում են կրթության որակի վերահսկման և ապահովման մշտական գործող ներբուհական կառույց ու հանձնաժողով:

Ներքին գնահատման առավել արդյունավետ եղանակների ներդրման՝ ինքնավերլուծության և ինքնագնահատման նպատակով մշակվել և ներդրվում են.

- 2009 թվականին գիտական խորհրդում հաստատվել է Կրթության որակի վերահսկման և ապահովման մշտական գործող հանձնախմբի ժամանակավոր կանոնակարգ (27.10.2009թ., արձ. № 2):

- Մշակվել է ՀԱԱՀ-ի «Կրթության որակը և կառավարման ռազմավարությունը» :

- «Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կրթության որակի վերահսկման ապահովման» ուղեցույցը:

- «Ուսումնական գործընթացի որակի գնահատման ինտելեկտուալ համակարգը» ուղեցույցը:

- «Կրթության որակի վերահսկումը ՀԱԱՀ-ում» (համակարգվածությունը և հակասությունները):

- 2013 թվականից գործում է նաև ուսանողների գնահատման բողոքարկման ընթացակարգը, որի համար հիմք են հանդիսացել ՀՀ ԿԳ նախարարության «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը»:

- «Որակի ներհամալսարանական վերահսկողության ու կառավարման մեթոդաբանությունը»:

- «Ուսուցման որակի մոնիտորինգի դիագրամայի» կառուցման մեթոդով ՀԱԱՀ-ում ինքնավերլուծության գործընթացի իրականացման ուղեցույց:

- «Ատեստավորման և կրթության որակի վերահսկողության անկախ համակարգը»:

- «Ուսումնական գործընթացի որակի վերահսկողություն և ապահովում» ժամանակավոր ուղեցույց:

-Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կրթության որակի վերահսկման և ապահովման հայեցակարգ (2010-2015 թթ.):

Համալսարանի կողմից իրականացված ինքնավերլուծության և արտաքին փորձագետների զեկույցի արդյունքների հիման վրա 2015 թվականի մարտին համալսարանը 4 տարի ժամկետով ստացավ ինստիտուցիոնալ հավատարմագրման վկայագիր:

Ինքնավերլուծության արդյունքների հիման վրա, ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող և դրանց մասնագիտությունների հավատարմագրման կարգի» համաձայն Հայաստանի ազգային ագրարային համալսարանը ձեռնամուխ է եղել այդ բարդ և պատասխանատու գործընթացին:

Ելնելով համալսարանի հավատարմագրման հանձնաժողովի առաջարկություններից՝ ներկայումս համալսարանում մշակվում են կրթության որակի բարելավման, նյութատեխնիկական բազայի հարստացման, կառավարման, աշխատակիցների և ուսանողների բողոքարկման, բուհի արդյունավետության բարձրացման և այլ հիմնահարցերի քաղաքականություն և կանոնակարգեր:

Կրթական համակարգում ակադեմիական անազնվության դրսևորումները նվազեցնում են ինչպես ակադեմիական միջավայրի ուղղակի շահառուների գործունեության, այնպես էլ ուսումնական գործընթացի ու ակադեմիական ողջ համակարգի արդյունավետությունը և համակարգի նկատմամբ հասարակայնության վստահությունը:

Կրթության ու գիտության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի միջոցառումների համալիր ծրագրի շրջանակներում համալսարանում իրականացվեցին մի շարք գործընթացներ:

Ակադեմիական միջավայրում անազնիվ դրսևորումների կանխարգելման ու բացառման համար կրթական գործընթացների անհրաժեշտ կանոնակարգման և վերահսկման օբյեկտիվ մեխանիզմների ներդրման ու հետևողական կիրառման նպատակով մշակվեց և գործողության մեջ դրվեց <<Ակադեմիական ազնվության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգը>> և ոլորտը կարգավորող մի շարք այլ փաստաթղթեր:

Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացում ակադեմիական ազնվության սուբյեկտիվ դրսևորումների կանխարգելման նպատակով համալսարանում հստակեցվեցին գնահատման չափանիշները և քննության ձևերի ընտրությունը: Վերջին տարիներին համալսարանում թե՝ առկա, թե՝ հեռակա ուսուցման համակարգում կիսամյակային ավարտական քննությունները կազմակերպվում և իրականացվում են կենտրոնացված կարգով, գրավոր-բանավոր սկզբունքով՝ ռեկտորատի, դեկանատի և ամբիոնների ներկայացուցիչների հսկողությամբ:

Քննությունների անցկացման այս ձևն արդյունավետ է և՛ գնահատման օբյեկտիվության, և՛ թափանցիկության, և՛ պատշաճ վերահսկողության ապահովման առումներով:

Կրթական գործընթացներում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և ակադեմիական ազնվության ապահովման գործընթացների շրջանակներում Կրթության որակի վերահսկման հանձնախմբի և տարբեր հանձնաժողովների ներկայացմամբ 2017թ. ընթացքում համալսարանի Գիտական խորհրդի նիստերում լսվել, քննարկվել և որոշումներ են կայացվել առանձին ֆակուլտետներում, ամբիոններում և այլ ստորաբաժանումներում տեղ գտած թերությունների ու բացթողումների վերացման ու բացառման կապակցությամբ:

Գիտական խորհրդում ընդունված որոշումները վերաբերում են ուսումնական գործընթացի բարելավմանը, ուսանողների հաճախումների պատշաճ մակարդակի ապահովմանը, դասավանդման որակի բարձրացմանը, ուսանողների գիտելիքների օբյեկտիվ ու թափանցիկ գնահատման գործընթացի ապահովմանը, ներբուհական վերահսկողական մեխանիզմների կատարելագործմանը և մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայմանն ու բարելավմանը:

2017թ. ընթացքում համալսարանի ռեկտորատի նիստերում նույնպես քննարկվել և որոշումներ են կայացվել առկա և հատկապես հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման, ինչպես նաև գնահատման գործընթացներում կոռուպցիոն ռսիկերի նվազեցման ու բացառման կապակցությամբ:

Հակակոռուպցիոն գործընթացների շրջանակներում համալսարանում վերջին տարիներին աշխատակազմի գործունեությունը հիմնականում միտված է այս ուղղությամբ ուսանողության հետ տարվող աշխատանքների ինտենսիվացմանը:

Այս առումով ռեկտորի, պրոռեկտորների, հեռակա ուսուցման դեպարտամենտի պետի և դեկանների կողմից բազմաթիվ հանդիպումներ են կազմակերպվում թե՛ առկա, և թե՛ հատկապես հեռակա ուսուցման համակարգի ուսանողների հետ ակադեմիական ազնվության պահպանման, տարբեր կարգի ռիսկերի նվազեցման և քննական գործընթացների օբյեկտիվ ու թափանցիկ անցկացման հարցերով:

Հանդիպումների ժամանակ ուսանողների կողմից բարձրացված բոլոր հարցերը, մտահոգությունները և առաջարկությունները քննարկվում են և դրանց հիման վրա կայացվում են համապատասխան որոշումներ:

Ուսանողների առաջարկությունների և համապատասխան քննարկումների արդյունքների հիման վրա 2017թ. ընթացքում համալսարանի որոշ ամբիոնների վարիչներ ու մի շարք դասախոսներ ստացել են կարգապահական տույժեր:

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2017 Թ. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կազմում, որպես կառուցվածքային ստորաբաժանումներ, գործում է երկու գիտահետազոտական ինստիտուտ (ԳՀԻ)՝ «Գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրիֆիկացման և ավտոմոբիլային փոխադրումների», «Պարենամթերքի տեխնոլոգիաների, սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիաների», «Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության» հետազոտական կենտրոնը, ինչպես նաև հինգ պրոբլեմային լաբորատորիա՝ «Պեստիցիդների և բույսերի պաշտպանության», «Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի», «Էկոլոգիայի և օրգանական գյուղատնտեսության», «Անասնաբուժության և անասնա-բուժական սանիտարական փորձաքննության», «Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի և կերակրման» և՝ մասնաճյուղի կարգավիճակով երեք գիտական կենտրոն՝ «Հրանտ Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն»-ը (ՀԱՄԳԿ), «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն»-ը (ԽՊԳԳԿ) և «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն»-ը:

ՀՀ պետական բյուջեից ՀԱԱՀ-ում «Գիտական, գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բաղադրիչով 2017 թ. ֆինանսավորման ծավալների բաշխվածությունը

Աղյուսակ 14

Գիտական կառուցվածքի անվանումը	Հաստիքների քանակը	Աշխատակիցների քանակը	Ֆինանսա-վորման ծավալը, հազար դրամ
Գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրիֆիկացման և ավտոմոբիլային փոխադրումների ԳՀԻ	17	30	16832.3
Պարենամթերքի տեխնոլոգիաների, սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ	18	28	17822.3
Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի և կերակրման պրոբլեմային լաբորատորիա	7	15	6830.9
Պեստիցիդների և բույսերի պաշտպանության լաբորատորիա	10	11	3901.3
Գիտական կենտրոնի պահպանում և զարգացում	8	9	7467.0
Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի լաբորատորիա	7	9	6930.9
Էկոլոգիայի և օրգանական գյուղատնտեսության պրոբլեմային լաբորատորիա	5	11	4950.7
Անասնաբուժության և անասնաբուժական սանի-տարական փորձաքննության պրոբլեմային լաբո-ռատորիա	14	32	13861.9
Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոն	6	12	6863.6
Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն	34	34	40256.9
Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն	23	24	26508.7
Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրո-քիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն	80	86	95715.0
Ընդամենը	229	301	253041.5

Համալսարանում իրականացվող գիտահետազոտական ծրագրերի ֆինանսավորման աղբյուրը 2017 թ. (ինչպես նախորդ տարիներին) հանրապետության պետական բյուջեն է, որից «Գիտական, գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բազային բաղադրիչով ֆինանսավորումը կազմել է 253,042 միլիոն դրամ (աղյուսակ 14), ինչպես նաև գիտական աստիճանների համար հավելավճար՝ 31,85 միլիոն դրամ ծավալով:

Պետական բյուջեից տրամադրված ֆինանսական միջոցներից աշխատավարձի ֆոնդը կազմել է մոտ 91,02 %:

Գիտական կենտրոններում, ԳՀԻ-ներում, գիտական պրոբլեմային լաբորատորիաներում տարվա ընթացքում ընդգրկվել են 299 աշխատակիցներ, այդ թվում՝ վարչատնտեսական աշխատողներ 58, լաբորատորիայի կամ բաժնի վարիչ՝ 22, գլխավոր գիտաշխատող՝ 8, առաջատար գիտաշխատող՝ 30, ավագ գիտաշխատող՝ 48, գիտաշխատող՝ 69, կրտսեր գիտաշխատող՝ 29 և լաբորանտ՝ 35: Գիտական կենտրոններում, ԳՀԻ-ներում և պրոբլեմային լաբորատորիաներում աշխատում են գիտությունների 36 դոկտոր և 124 թեկնածու (աղյուսակ 15):

Գիտական ստորաբաժանումներում աշխատակիցների կազմն ըստ տարակարգերի

Աղյուսակ 15

Գիտական ստորաբաժանում	Վարչա-տնտեսական աշխատակիցներ	Լաբ. կամ բաժնի վարիչ	Գլխ. գիտ. աշխ.	Առաջ. գիտ. աշխ.	Ավագ գիտ. աշխ.	Գիտ. աշխ.	Կրտսեր գիտ. աշխ.	Օժանդակ անձ-նակազմ (լաբ.)	Ընդամենը
Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն	14	3	-	3	6	4	2	2	34
Հ. Պետրոսյանի անվան հողագիտություն, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն	34	6	-	1	11	8	5	21	86
Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն	10	-	-	-	5	4	1	4	24
ՀԱԱՀ-ի գիտական կառույցներ	-	13	8	26	26	53	21	8	155
Ընդամենը	***58***	***22***	***8***	***30***	***48***	***69***	***29***	***35***	***299***

Համալսարանում 2017 թ. իրականացվել է նաև ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող տասնմեկ դրամաշնորհային ծրագիր՝ 80.46 միլիոն դրամ ֆինանսավորմամբ, 54 հաստիքներով:

2017 թ. համալսարանում իրականացվել է նաև երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության մեկ ծրագիր (ղեկավար՝ Ա.Վ. Ալթունյան) 2.5 միլիոն դրամ ֆինանսավորումով և ասպիրանտների հետազոտությունների աջակցության երկու ծրագիր (ղեկավարներ՝ Դ. Խաժակյան և Ա. Եղիազարյան) 2.3 միլիոն դրամ ֆինանսավորումով:

2017 թ. ՀՀ պետական բյուջեից գիտական բոլոր ծրագրերի և թեմաների ֆինանսավորումը կազմել է 370.15 միլիոն դրամ:

2017 թ. համալսարանի երկու աշխատակից պաշտպանել են դոկտորական, 23 աշխատակից և ասպիրանտ թեկնածուական ատենախոսություն, որոնցից 6-ը համալսարանի հեռակա ուսուցման ասպիրանտ՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ: Ատենախոսությունների պաշտպանություններն ըստ մասնագիտությունների ունեն հետևյալ պատկերը՝ ագրոնոմիական՝ 5 թեկնածուական, տնտեսագիտական՝ 11 թեկնածուական, գյուղատնտեսության մեքենայացում՝ 2 թեկնածուական, անասնաբուժական՝ երկու դոկտորական և 1 թեկնածուական, տեխնոլոգիական՝ 3, հողաշինարարություն՝ 1 թեկնածուական ատենախոսություն:

2017 թ. նոյեմբերի 2-3-ը Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կազմակերպվեց «ՀՀ գյուղատնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողով, որին մասնակցել են ՀՀ տարբեր գիտակրթական կառույցների և արտերկրի ագրարային համալսարանների ներկայացուցիչներ, գիտաժողովի 10 բաժանմունքներում կարդացվել է 165 զեկուցումներ:

2003 թ. Ագրարային համալսարանը ռուսերեն և անգլերեն լեզուներով գունավոր տպագրությամբ հրատարակում է «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տեղեկագիր» գիտական միջազգային պարբերականը: 2017 թ. հրատարակվել է 107 հոդված,

բացի ՀԱԱՀ-ից հոդվածներ են ներկայացվել հանրապետության տարբեր բուհերից, գիտական կենտրոններից և արտերկրից: Արտերկրի հոդվածների թիվը կազմում է 13:

2017 թ. ագրարային համալսարանը տպագրել է հայերեն և ռուսերեն լեզուներով ժողովածու, որում ընդգրկվել է 2017 թ. միջազգային գիտաժողովի 72 զեկուցում:

2003 թ. Հայաստանի ազգային ագրարային համալսարանը Թբիլիսիում Վրաստանի, Ադրբեջանի ագրարային համալսարանների և Գերմանիայի Դաշնության բնապահպանության գործակալության հետ համատեղ տպագրում է «Ագրարային գիտությունների տեղեկագիր» գիտական միջազգային պարբերականը, որի համահրատարակիչներն են նաև Վիեննայի բնապահպանական ռեսուրսների և կյանքի մասին գիտության համալսարանը, Գերմանիայի հողերի գնահատման բյուրոն, Իտալիայի հողերի Եվրոպական ցանցի բյուրոն, Ռուսաստանի Վ. Դոկուչաևի անվան հողագիտության ինստիտուտը, Ռուսաստանի ազգային ակադեմիայի հողագիտության ինստիտուտը, ինչպես նաև Վրաստանի տարբեր գիտակրթական կառույցներ:

2017 թ. հունվար ամսից «Ագրարային գիտության տեղեկագիր» գիտական միջազգային պարբերականը ընդգրկվել է միջազգային բարձր վարկանիշ ունեցող գիտական պարբերականների Scopus շտեմարանում:

2017 թ. ընթացքում հրատարակչական-խմբագրական բաժինը տպագրության է հանձնել հետևյալ նյութերը.

1. Մեթոդական ցուցումներ՝ 48 անվանում՝ 123 տպ. մամուլ ընդհանուր ծավալով:
2. Գիտական պարբերական (3 համար) և գիտական աշխատությունների ժողովածու՝ 77 տպ. մամուլ:
3. Հաշվետվություններ, տարեկան զեկույց, բուկլետ և այլ նյութեր՝ 40 տպ. մամուլ:

2017 թ. ընթացքում հրատարակված աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 240 տպագրական մամուլ:

2017 թ. սեպտեմբերի 23-ից տպագրության է պատրաստվում «Օգնություն ֆերմերին» գիրքը:

2016 թ. ընթացքում հրատարակված աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 442,6 տպագրական մամուլ:

2017 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ Ագրարային համալսարանի դոկտորանտների, ասպիրանտների և հայցորդների թիվը կազմում է 91, այդ թվում ասպիրանտուրայի առկա անվճար ուսուցման համակարգում 22, հեռակա 23, որից Հայաստանի Հանրապետությունից 22, 22-ն էլ անվճար համակարգում, 1-ը Իրանի Իսլամական Հանրապետությունից, որպես հայցորդներ ձևակերպված են 56-ը, որից 14-ը ԼՂՀ-ից (աղյուսակ 16):

ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված և ագրարային համալսարանում 7 մասնագիտությունների գծով ասպիրանտների ղեկավարումն իրականացնում են գիտությունների 15 դոկտորներ և 9 թեկնածուներ:

ՀԱԱՀ ասպիրանտուրայի շարժը առ 01.01.2018թ
ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ

Աղյուսակ 16

	I		II		III		IV		Ընդամենը
	առկա	հեռակա	առկա	հեռակա	առկա	հեռակա	առկա	հեռակա	
Ագրոնոմիական		1/0		1/0		0/1			
Տնտեսագիտական	2/0	5/0	3/0	4/0	2/0	3/0		3/0	
Ագրոբիզնես									
Տեխնոլոգիական	1/0	1/0	2/0		2/0			1/0	
Ճարտարագիտական	2/0	1/0	2/0	1/0					
Անասնաբուժական									
Հիդրոմելիորացիա	3/0		1/0	1/0	2/0				
Ընդամենը	**8**	**8**	**8**	**7**	**6**	**4**		**4**	**45**
Այդ թվում արտերկրից	**-**	**-**				**1**			**1**

* Հայաստանից/Իրանի Իսլամական Հանրապետությունից

Ընդհանուր 45 ասպիրանտ, որից

Առկա՝ 22 ասպիրանտ

Հեռակա՝ 23 ասպիրանտ
Հայաստանի Հանրապետությունից՝ 22 ասպիրանտ
Իրանի Իսլամական Հանրապետությունից՝ 1 ասպիրանտ
Ավարտած՝ *13 ասպիրանտ Հայաստանի Հանրապետությունից*
Հայցորդներ *56, որից 14-ը ԼՂՀ-ից, 32-ը ՀՀ-ից :*

2017 Թ. ՄՇԱԿՎԵԼ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ 14 ԾՐԱԳՐԵՐ

1. ԿԱՐՏՈՖԻԼԻ ՎԻՐՈՒՍԱԶԵՐԾ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ տեխնոլոգիա - Գիտական ղեկավար՝ Սահակյան Ա.Ջ.
2. «ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՄԻՋԲՆԱՅԻՆ - ՄԵՐՁԲՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» - Գիտական ղեկավար՝ Շ.Մ. Գրիգորյան
3. «ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՄԻՋՎԱՁԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» - Գիտական ղեկավար՝ Շ.Մ. Գրիգորյան
4. «ՈՉ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԷԼԵԿՏՐԱՄԵԼԻՈՐԱՑՄԱՄԲ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐԻ ԱՂՈՒՏ-ԱԼԿԱԼԻ ՀՈՂԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ» - Գիտ. ղեկավար՝ Հ.Ղ. Ղազարյան
5. ԱՆՁՐԴԻ ԵՎ ՉՈՐԱՅԻՆ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ (ԱՇՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆ, ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ԳԱՐԻ) ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՆԵՐԴՐՄԱՆ - Գիտական ղեկավար՝ Ս.Կ. Երիցյան
6. «ՌՈԿՖՈՐ ՊԱՆՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԹԱԼԻՆԻ «ԲՈՆԻԼԱՏ» ՍՊԸ-ՈՒՄ» - Գիտական ղեկավար՝ Ռ.Ա. Բեգլարյան
7. «ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄՆԱՑՈՐԴ ԽԱՂՈՂԻ ՄԱՄԼՎԱԾՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ՁԱՆԳՎԱԾԻՑ ՍԵՐՄԵՐԻ ԱՆՋԱՏՄԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ՅՈՒՂԻ ՍՏԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ » - Գիտական ղեկավար՝ Վ.Ն. Յավրույան
8. «ՏՈՀՄԱՅԻՆ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ»-Գիտական ղեկավար՝ Վ.Ա. Աբրահամյան
9. «ԿԱԹՆԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼԻԱՌԱՑԻՈՆ ԿԵՐԱԽԱՌՆՈՒՐԴՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԵՐ ՆԱԽԱԳԾՈՒՄ» - Գիտական ղեկավար՝ Ս.Ե. Մարգարյան
10. «Հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացմանն աջակցող ռեսուրսապահովվածության գույքագրում երկրատեղեկատվական (GIS) և հեռահար զոնդավորման (RC) տեխնոլոգիաների կիրառմամբ Վայոց Ձորի մարզի օրինակով» - Գիտ. ղեկավար՝ Գ. Մ. Եղիազարյան
11. «ՏՈՀՄԱՅԻՆ ԱՅԾԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ և ԱՅԾԻ ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» - Գիտական ղեկավար՝ Յու. Գ. Մարմարյան
12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԵՐՈՒՄ «ԲԱՅԿԱԼ-1» ՊԱՏՐԱՍՏՈՒԿՈՎ ԿՈՄՊՈՍՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ - Գիտ. ղեկավար՝ Հ.Ղ. Ղազարյան
13. ՀԱԱՀ ԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՆՈՖՈՆԴԻ ԵՎ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԳԱՐՈՒ, ՑՈՐԵՆԱՇՈՐԱՅԻ, ՍՈԽԻ ԵՎ ՍԽՏՈՐԻ ՆՈՐ ՍԵԼԵԿՑԻՈՆ ՍՈՐՏԱՆՄՈՒՇՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ - Գիտական ղեկավար՝ Ա.Շ. Մելիքյան
14. «ՀՀ ՄՇԱԿՈՎԻ ԵՎ ՎԱՅՐԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՒՄՔԻՑ ԵԹԵՐԱՅՈՒՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» - Գիտ. ղեկավար՝ Ժ. Գ. Աղաջանյան

2017 թ. ՀԱԱՀ-ում կատարվել է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող տասնմեկ դրամաշնորհային (թեմատիկ) գիտական ծրագրեր:

1. «Պտղատու այգիների միջբնային գոտու մշակության մեքենա», գիտական ղեկավար Ա. Թարվերդյան:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է այգիների միջբնային և մերձբնային տարածությունների մշակման մեքենայի սկզբունքային սխեման, պատրաստվել է մեքենայի փորձանմուշը: Մեքենայի տեխնոլոգիական, կինեմատիկական և դինամիկական ցուցանիշների ճշգրտման և լավարկման նպատակով մեքենան ենթարկվել է լաբորատոր–դաշտային փորձարկումների ՀԱԱՀ-ի լաբորատորիաներում և Երասխահունի փորձակայանի ծիրանի այգում:

Գիտափորձերի արդյունքների հավաստիությունն ու նշանակալիությունն ապահովելու նպատակով մշակվել է գիտափորձերի իրականացման մեթոդիկան, ընտրվել են տեխնոլոգիական գործընթացի օպտիմալացման պարամետրերը և ազդող գործոնները: Թեմայի ֆինանսավորման շրջանակներում ձեռք են բերվել համապատասխան չափիչ–գրանցիչ սարքեր, նյութեր և այլ պարագաներ, ենթապայմանագրային համագործակցության շրջանակներում մեքենայի փորձանմուշի պատրաստման և լավարկման աշխատանքներն իրականացվել են Վանաձորի ՉԻՆ-ՎԱՆ գործարանում:

Տեսական և գիտափորձնական հետազոտությունների արդյունքները հիմք են տալիս փաստելու պտղատու այգիների միջբնային գոտու մշակման առաջարկվող մեքենայի առավելությունները նմանատիպ այլ մեքենաների նկատմամբ՝ կառուցվածքային պարզության և տեխնոլոգիական գործընթացի կատարման բարձր որակի տեսանկյունից: Մեքենան գնային առումով մատչելի է ֆերմերային տնտեսություններին և հարմարեցված է Հայաստանի այգեպտղագործական շրջանների հողային և ռելիեֆային պայմաններին:

Մեքենան հնարավորություն է տալիս ի սպառ վերացնել միջբնային գոտու մշակման ձեռքի աշխատանքը, տեխնոլոգիական գործընթացն իրականացնել ագրոպահանջներին համապատասխան և սեղմ ժամկետներում:

2. «Տեղական ծագման բույսերի վտանգված սորտերի և հազվագյուտ տեսակների in vitro վերականգնում և պահպանություն», գիտական ղեկավար Գ.Մելյան:

Հյուսվածքային կուլտուրայի, մասնավորապես in vitro կուլտուրայի կիրառմամբ բազմացվել են կարևոր նշանակություն ունեցող մշակաբույսերի վտանգված սորտերի և դրանց վայրի ազգակիցների ոչնչացվող, եզակի տեսակներ, նմուշներ:

Մշակվել են խաղողի Արևառ, Բոյարխանի, Մորմորի, ինչպես նաև քիչ տարածված, բարձր համային հատկանիշներ ունեցող Սպիտակ մուսկատի սորտերի բազմացման տեխնոլոգիաներ:

Գարնանացան ցորենի և պոմիդորի մեկական սորտ (Պոմիդոր՝ Տավուշի պոպուլացիա և գարնանացան ցորեն `Քռիկ) in vitro աճեցվել էին 2016-ին, 2017 թ. վերարտադրվել են դաշտային պայմաններում և պատրաստ են երկարատև պահպանության դնելու համար:

Մշակված են նաև բնության մեջ հազվադեպ հանդիպող Կատվախոտ դեղատուի (Valeriana officinalis L.), Ֆիզալիսի (Physalis alkekengi), հապալասի (Vaccinium myrtillus) ռեգեներացիայի և արմատակալման արդյունավետ տարբերակները: Դեղաբույսերի հետագա in vitro մշակությունը էապես կնպաստի բնության մեջ հանդիպող այս տեսակների պաշարների հետագա ապահովմանը:

Ցորենի վայրի տեսակներից՝ Triticum araratricum-ը, Triticum urartu-ն և Triticum bioticum-ը, նունպես բազմացվել և դրվել են երկարատև պահպանման:

ՀՀ ամբողջ տարածքում որոշվել են վայրի սպանախի տարածման արեալները, ուսումնասիրվել են այդ բույսի սերմերի in vitro ծլունակության որոշ օրինաչափություններ: Հայտնաբերվել է Lactuca aculiata տեսակը, որը մինչ այժմ նշված չէ, որ գոյություն ունի Հայաստանում: Ի դեպ տվյալ բույսի աճելավայրը դեռևս հայտնաբերվել էր նախորդ տարիներին, սակայն վեգետացիայի տարբեր փուլերում բույսը ուսումնասիրելուց հետո վերջնականապես հաստատվեց տեսակի գոյությունը: Բույսի հյուսվածքը բազմացվում է սերմեր ստանալու նպատակով:

3. «Թույլ աղակալած-ալկալիացած հողերի բարելավումը ամոնիում սուլֆատի կիրառմամբ» գիտական ղեկավար Վ. Պապինյան:

Հաշվետու տարում 15T-4c202 ծածկագրով թեմայի շրջանակներում թույլ աղակալած ալկալիացած հողերի բարելավման համար դաշտային պայմաններում օգտագործվել է ամոնիումի սուլֆատը ($(NH_4)_2S0_4$): Մեկ հա-ի համար պահանջվել է 50-60 տ/հա մելիորանտ: Փորձերից ստացված արդյունքները դրական են, հողը աղազերծվել և աղակալիազերծվել է: Գյուղատնտեսական իրացման առաջին տարում ստացվել է 37,6 g աշնանացան ցորենի բերք:

4. «Բնական կերահանդակների բարելավման հիմնախնդիրները արդի պայմաններում», գիտական ղեկավար Ա. Մարկոսյան:

15T-4C076 ծածկագրով «Բնական կերահանդակների բարելավման հիմնախնդիրները արդի պայմաններում» գիտական թեմայի շրջանակներում 2017թ. իրականացվել են հետազոտություններ էրոզացված և էրոզավտանգ կերային հանդակներում հակաէրոզային համալիր մարգագետնամելիորատիվ միջոցառումների կիրառման արդյունավետությունը բացահայտելու ուղղությամբ: Վերջիններս շնորհիվ հնարավորություն կստեղծվի Հայաստանի Հանրապետության բնական կերահանդակների արդյունավետության բարձրացման համար՝ միաժամանակ հնարավորություն ստեղծելով այդ հողատեսքերում բնական բերրիության պահպանմանը և ավելացմանը, ինչպես նաև դեգրադացման գործոնների ազդեցության նվազմանը, իսկ որոշ դեպքերում նաև իսպառ վերացմանը:

5. «Ուսումնասիրել Արարատյան հարթավայրի հողերի մելիորատիվ վիճակի վատթարացման գործընթացները՝ կապված գրունտային ջրերի մակարդակի իջեցման հետ», գիտական ղեկավար Ս. Սահակյան:

Թեմայի շրջանակներում ուսումնասիրվել է Արարատյան հարթավայրի գերխոնավ հողերի մելիորատիվ վիճակի վատթարացման գործընթացները կապված գրունտային ջրերի մակարդակի իջեցման հետ և մշակել միջոցառումներ մեղմելու հողերում ընթացող բացասական ազդեցությունները և նպաստել դրանց բերրիության և մշակաբույսերի բերքիատվության բարձրացմանը:

6. «Գյուղատնտեսական կենդանիների բրուցելյոզի մոնիթորինգի անցկացումը Հայաստանի Հանրապետությունում և պայքարի միջոցառումների կազմակերպումը», գիտական ղեկավար Ս. Գրիգորյան:

Գյուղատնտեսական կենդանիների բրուցելյոզի նկատմամբ միջոցառումների արդյունավետության բարձրացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում երկու ժամկետներով՝ 2016թ. հունվարի և 2017 թ. դեկտեմբեր ամիսներին 15T-4A203 ծածկագրով թեմայի կատարողները գործուղվել են ՀՀ Շիրակի, Վայոց ձորի, Գեղարքունիքի և Տավուշի, տարածաշրջաններ:

Բրուցելյոզի համաճարակաբանական շրջանացման նպատակով ուսումնասիրվել են տարբեր կենդանիների մոտ հիվանդության դրսևորման ինտենսիվությունը:

Հետազոտության երկամյա տվյալներով պարզվել է, որ 4 տարածաշրջաններում և 75 գյուղական համայնքներում, անապահովության տեսակետից հանրապետությունում առկա են բրուցելյոզի 17 համաճարակային օջախներ:

Այն բացատրվում է նրանով, որ հետազոտվող տարածաշրջանների տնտեսություններում շիճուկաբանական ռեակցիայով բացահայտված կենդանիները չեն ենթարկվում հարկադիր սպանդի՝ պահպանելով հրահանգով նախատեսված բոլոր գործողությունները:

Հետազոտությունների արդյունքում հիվանդ (վիժած) խոշոր և մանր եղջերավոր կենդանիներից կամ վիժված պտուղներից վերցված ախտաբանական նյութից առանձնացվել է հարուցչի մաքուր մանրէական զանգված և բացահայտվել դրանց պատկանելությունը համապատասխան շիճուկաբանական տիպերի և կենդանատեսակների:

Ստացվել է միասնական հակածին ագլուտինացիայի և կոմպլեմենտի կապակցման ռեակցիաների համար, ինչպես նաև Բենգալյան փորձի հակածին՝ որպես բրուցելյոզի առանձնահատուկ ախտորոշիչ միջոց:

7. «Հայաստանի քաղաքների շրջակա միջավայրի օբյեկտների ուսումնասիրությունը կենդանիների և մարդու առողջության համար վտանգավոր մակաբույծներով վարակվածության նկատմամբ», գիտական ղեկավար Հ.Նաղաշյան:

Հետազոտվել են հանրապետության խոշոր քաղաքների (Երևան, Գյումրի, Վանաձոր, Գավառ, Հրազդան, Դիլիջան, Գորիս, Կապան) շրջակա միջավայրի օբեկտների վարակվածությունը կենդանիների և մարդու առողջության համար վտանգավոր մակաբույծների ձվերով, թրթուրներով, սաղմնապարկերով և տրվել է դրանց անասնաբուժասանիտարական գնահատականը:

8. «Տեղանքային (տերուարային) գինիների արտադրության հեռանկարների ուսումնասիրումը Հայաստանում», գիտական ղեկավար Գ.Սամվելյան:

«Տերուարային» տերմինը բնորոշում է խաղողի այգիները՝ նրանց բնութագրումն ըստ հողի, կլիմայի, խաղողի սորտի, մշակման ձևի, ծովի մակերևույթից բարձրության մակարդակի և այգու թեքության աստիճանի: Հետազոտությունները կատարվել են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի խաղողագործական շրջաններում, նշվել են այն

տարածքները, որոնք պիտանի են տվյալ գինիների արտադրության նպատակով խաղողի այգիների մշակության համար:

9. «ՀՀ լանդշաֆտների դեգրադացման գործընթացները և կանխարգելման միջոցառումների մշակումը անապատացման պայմաններում», գիտական ղեկավար Ա. Մկրտչյան:

Թեմայի շրջանակներում կատարվել է ՀՀ լանդշաֆտների էկոլոգիական վիճակի գնահատում, ուսումնասիրվել է հողերի դեգրադացվածության աստիճանը, կենսաբազմազանության փոփոխումը, հողի օրգանական նյութերի (հումուս/ և հիմնական սննդատարրերի (N, P_2O_5, K_2O) ընդհանուր և մատչելի ձևերի դինամիկան ու դրանց միգրացիան, ուսումնասիրություններն իրականացվել են Տավուշի, Կոտայքի, Վայոց ձորի, Արարատի մարզերի բնահողային գոտիներում:

10. «Հայաստանի մշակովի և վայրի խաղողի կենսաբազմազանության նշանակությունը բնապահպանական հաշվեկշռում», գիտական ղեկավար Գ. Մելյան:

Իրականացվել է շուրջ 40 ավտոխտոն սորտերի, ներ- և միջտեսակային հիբրիդների տերևներից գենոմային ԴՆԹ-ի անջատում ու ֆլյուրոտոֆոտոմետրի կիրառմամբ որոշվել է ԴՆԹ-ի որակը և խտությունը: Ստացված ԴՆԹ-ն օգտագործվել է գենոտիպավորման աշխատանքներում՝ միկրոսատելիտային 9-ը գենետիկական նիշերի կիրառմամբ, որի արդյունքում սորտերի համար ստեղծվել են գենոտիպային անձնագրեր՝ համաձայն միջազգային "GrapeGen-06" նախագծի կողմից առաջադրված ստանդարտների:

Խաղողի բերքատվությունը գնահատելու համար իրականացվել է սորտերի վերարտադրողական համակարգի բջջասաղմնաբանական հետազոտություն: Ստացված արդյունքները կարևոր են խաղողի ծաղկաթափի բարձր մակարդակի և համապատասխանաբար ցածր բերքատվության պատճառները հայտնաբերելու համար, ինչպես նաև փնտրելու ուղիներ ու միջոցներ՝ վնասները նվազեցնելու ուղղությամբ, ինչպես նաև անսերմ սորտերի մոտ անսերմության բնույթը պարզելու համար:

Ստացված տվյալները հիմք կհանդիսանան խաղողի հայկական սորտերի ֆենոտիպային և գենոտիպային անձնագրավորմանը՝ գենետիկական ռեսուրսների տվյալների բազա ստեղծելու համար, որը հեռանկարում կնպաստի սորտերի պահպանմանը, լավագույնների բազմացմանը և բարձրորակ նոր սորտերի ստեղծմանը:

Կատարվել են նաև ուսումնասիրվող սորտերի պտուղներում պոլիֆենոլային միացությունների և անտոցիանինների քանակական վերլուծություն:

Համապատասխան գենետիկական նիշերի կիրառմամբ միլդիու և օիդիում հիվանդությունների նկատմամբ իրականացվել են խաղողի հայկական սորտերի ռեզիստենտ գեների վերլուծություն:

11. «Մաթեմատիկական ֆիզիկայում ծագող որոշ դասերի ոչ գծային ինտեգրալ հավասարումների լուծելիության հարցեր», գիտական ղեկավար Ա. Խաչատրյան:

Ուսումնասիրվել են Համերշտեյնի և Ուրիսոնի տիպի ոչ կոմպակտ օպերատորներով ամբողջ առանցքի և կիսաառանցքի վրա ոչ գծային ինտեգրալ հավասարումների լուծելիության հարցերը: Նշված հավասարումները ծագում են p-ադիկ մաթեմատիկական ֆիզիկայում, գազերի կինետիկ տեսության, ճառագայթման տեղափոխման տեսության մեջ, էկոնոմետրիկայում և այլն: Կառուցվել են Համերշտեյնի և Ուրիսոնի տիպի ոչ կոմպակտ ոչ գծային օպերատորների համար անշարժ կետեր: Ուսումնասիրվել են նաև կառուցված լուծման ասիմպտոտիկ վարքը, մոնոտոնությունը, միակությունը և այլ հատկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ, ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐՈՒՄ, ԳԻՏԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ 2017 Թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ.

4.1.«Գյուղատնտեսության մեքենայացման էլեկտրիֆիկացման և ավտոմոբիլային փոխադրումների ԳՀԻ»

4.1.1 Դաշտավարության մեքենայացման բաժին

Բաժնում տարվում են երեք թեմաներ.

ԿԱՐՏՈՖԻԼԱՏՆԿԻՉԻ ՀԵՏ ՀԱՄԱԼՐՎՈՂ ԿԵՆՍԱՀՈՒՄՈՒՍԱՑԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՄՇԱԿՈՒՄ

Անցած 2017թ. հաշվետու ժամանակաշրջանում թեմայի կատարման արդյունքում մշակված ապարատի էսքիզային նախագծով պատրաստվել և լաբորատոր դաշտային փորձարկումներ են կատարվել Գավառի տարածքի Լանջաղբյուր գյուղի ֆերմեր Ս.Գևորգյանի դաշտում, ֆերմերի՝ Չինաստանում արտադրվող երկշարքանի № - 202 մակնիշի կարտոֆիլատնկիչի վրա:

Հաշվի առնելով նոր կարտոֆիլատնկիչի պատրաստման դժվարությունները՝ գործարանային մեքենայի երկու ապարատներից մեկը փոխարինել ենք մշակված ապարատով և կազմակերպել դաշտային համեմատական փորձարկումներ՝ մի ապարատով ներմուծվել է կենսահումուս, մյուսով՝ հանքային պարարտանյութ:

Փորձադաշտում կենսահումուսով համատարած 3-4 տ/հա նորմայով պարարտացման փոխարեն, փոխարինվել է միջին հաշվով 1տ/հա (120 գր/մ) նորմայով, կենսահումուսի անընդհատ հոսքով, պալարների հետ շաղախված ցանք:

Արդյունքում տնտեսվել է 2-3 տ /հա կենսահումուս, կամ 200-300 հազար դր/հա:

«Մոտոբլոկային կարտոֆիլատնկիչի կառուցվածքի մշակում և պարամետրերի հիմնավորում»

2017թ. պլանային առաջադրանքով մշակվել է մոտոբլոկային ժապավենա-գդալիկավոր կարտոֆիլատնկիչ մեքենայի կառուցվածք, որը հնարավորություն է տալիս մեքենայացնել կարտոֆիլատնկման աշխատանքները փոքր տարածքների վրա, զգալիորեն կրճատել ձեռքի աշխատանքը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը: Մոտոբլոկային կարտոֆիլատնկիչում պալարների մատուցման համար կիրառվել է ժապավենագդալիկային ապարատ, որը հնարավորություն է տալիս լիովին բացառել, նույնիսկ, յարովիզացված պալարների վնասումը: Մոտոբլոկային կարտոֆիլատնկիչի մշակված էսքիզային նախագծով կկազմակերպվի փորձնական նմուշի պատրաստումը և արտադրական պայմաններում փորձարկումը: Ստացված արդյունքներով վերջնականորեն կվերամշակվի կարտոֆիլատնկիչի կառուցվածքը և հնարավոր կլինի կազմակերպել դրա արտադրությունը:

«Ֆերմերային տնտեսություններում կարտոֆիլի բերքահավաքի արդյունավետ տեխնոլոգիայի և մեքենաների համակարգի մշակում»

Կարտոֆիլի մշակության տարբեր հողատիպերում կարտոֆիլահավաք տեխնիկայի շահագործա-տեխնոլոգիական ցուցանիշները չափազանց ցածր են՝ պալարահողային զանգվածի անջատման գործակիցը հասնում է մինչև 0,4-ի՝ 0,8-ի փոխարեն: Արդյունքում պալարային զանգվածի ավելի քան 15%-ը մնում է դաշտում էլևատորների վրայից թափված հողածածկի տակ:

Կարտոֆիլահավաք տեխնիկայի աշխատանքի տեխնոլոգիական ցածր որակը արդյունք է փոխադրիչի վրա, պալարահողային զանգվածում հողակոշտերի զգալի գերակշռությամբ: Այս ուղղությամբ վերջին տասնամյակում կատարված տեսական-գիտափորձնական աշխատանքների արդյունքում մշակվել և փորձարկվել է կարտոֆիլահանի կոշտաջարդիչը, որը չնայած գործողության դինամիկական սկզբունքին, կարիք ունի բանող օրգանի պարտադիր ձևափոխման:

Կարտոֆիլահանի ռոտացիոն կոշտաջարդիչն ապահովում է մարգաթմբի մակերևույթի կոշտերի ջարդում և կողհեռացում, ինչի շնորհիվ լավանում է պալարների սեպարացումը, բարձրանում է ագրեգատի արագությունը, արտադրողականությունը և նվազում էներգետիկ ծախսերը:

<u>4.1.2. Կերարտադրության և անասնապահական ֆերմաների մեքենայացման բաժին</u>

Կատարվել են կերախառնուրդների պատրաստման, ընդհատումներով ու հոսքային եղանակով գործող արտադրամասերի մեքենասարքավորումների լաբորատոր և արտադրական փորձարկումները: Դրա համար ընտրվել են հանրապետության այն տնտեսությունները, որտեղ աշխատում են մեր մեքենաները:

Մեքենասարքավորումները գնահատվել են շահագործական ցուցանիշներով. արտադրողականությամբ, էներգատարությամբ, հուսալիությամբ ու մաշվող մեքենամասերի երկա-

ռակեցությամբ, ինչպես նաև պատրաստման տեխնոլոգիամիտությամբ և տնտեսական արդյունավետությամբ:

Խոտի ու ծղոտի մանրիչ մեքենայի շահագործական ցուցանիշները դրական են եղել: Սակայն ունիվերսալացնելու, նաև խոտալյուր պատրաստելու նպատակով, կառուցվածքային բարեփոխումներ են կատարվել:

Հատիկամանրիչ մեքենաների փորձարկումները ցույց տվեցին, որ ուղղագիծ ռոտորային մեքենաներն աշխատունակ են և երաշխավորվում են ներդրման համար:

Հատիկային ու հանքային կերերի մանրիչի փորձարկումները ցույց տվեցին, որ ֆուրաժային հատիկներ մանրացնելուց բացի հաջողությամբ մանրացնում է նաև պեռլիտ, բետոնիտ, քարաղ և նմանատիպ այլ կերատեսակներ:

Արմատապալարապտուղների երկու մանրիչների փորձարկումները ցույց տվեցին, որ մեկի արտադրողականությունն ու էներգածախսերը մեծ են, իսկ մյուսինը՝ շատ ցածր և շահագործումը հուսալի չէ: Նախագծվել է պահանջվող պարամետրերով նոր մեքենա: Ներկայումս տարվում են դրա պատրաստման աշխատանքները:

Ընդհատումներով գործող կերախառնիչի փորձարկումները ցույց տվեցին, որ աշխատունակ է և հաջողությամբ կաշխատի փոքր անասնապահական տնտեսություններում:

Հոսքային եղանակով գործող կերախառնուրդների արտադրամասում հաջողությամբ կարելի է օգտագործել շնեկաթիակային կերախառնիչը: Դրա փորձարկումները ցույց են տվել, որ աշխատունակ է և աշխատանքում հուսալի:

Նախագծվել, պատրաստվել և նախնական փորձարկումներն են անցել նաև երկու տեսակի բունկերներն ու չափավորիչները:

Հրատարակվել են հոդվածներ և զեկուցումներ են կարդացվել միջազգային գիտաժողովներում:

4.1.3. Ավտոմոբիլային տրանսպորտի բաժին

«Կոմերցիոն ավտոմոբիլների վառելանյութի շահագործական ծախսի նորմավորման մեթոդիկայի կատարելագործումը ըստ փաստացի երթային ռեժիմների» 2017 թ. կատարված գիտահետազոտական աշխատանքների:

2017 թ. շարունակվել է ավտոմոբիլների վառելիքի շահագործական ծախսը ձևավորող պարամետրերի ուսումնասիրությունը և դրանց կապը ավտոմոբիլի շարժման ռեժիմների հետ: Շահագործական պայմանների ազդեցությունը ավտոմոբիլի շարժման ռեժիմների վրա դիտարկվել է որպես դոմինանտ գործոն վառելիքի ծախսի վրա: Անալիտիկ եղանակով ուսումնասիրել և դուրս է բերվել շարժիչի վառելիքի տեսակարար ծախսը: Այն Երևանի ներքաղաքային ուղևորափոխադրումների համար ստացվել է 165 գր/կվտ.ժամ բենզինով աշխատելու դեպքում և 185 գր/կվտ.ժամ բնական սեղմած գազով աշխատելու դեպքում:

Վառելիքի շահագործական ծախսի նորմավորման նպատակով դիտարկվել է տեղանքի ծովի մակերևույթից տարբեր աշխարհագրական բարձրությունների վրա վառելիքի ծախսի փոփոխությունը կախված շարժիչի գլանում օդի ավելցուկի գործակցի արժեքներից, ընդ որում գնահատվել է վառելիքի ծախսը ինչպես բենզինով, այնպես էլ սեղմած բնական գազով աշխատելու համար:

Հարցի անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն տեխնիկական, այլ նաև տնտեսական բաղադրիչով, քանի որ տրանսպորտային ծախսերը համախառը ներքին արդյունքի մեջ հասնում են 6 %-ի, իսկ փոխադրումների ինքնարժեքի մեջ տրանսպորտային բաղադրիչը՝ արդյունաբերությունում 15 % է, շինարարությունում 25 %, իսկ գյուղատնտեսությունում և առևտրի բնագավառում մինչև 40 %:

4.2.«Պարենամթերքի տեխնոլոգիաների, սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ»

4.2.1. Կենդանական ծագման հումքի և մթերքի վերամշակման տեխնոլոգիայի բաժին

Կենդանական ծագման հումքի և մթերքների վերամշակման տեխնոլոգիայի բաժինը լայնածավալ աշխատանքներ է կատարում բարձր կենսաբանական և կենսատեխնոլոգիական ակտիվությամբ օժտված լակտոբակտերիաների արտադրական-արժեքավոր շտամների և մակարդների օգտագործման ուղղությամբ:

Բաժնի աշխատակիցների կողմից հետազոտվել և պատրաստվել է ֆունկցիոնալ սննդամթերք յոգուրտ, ացիդոֆիլին տարբեր պրեբիոտիկներով, լցոններով (մորի, ելակ, դեղձ), որոնք օրգանիզմը մաքրում են ախտածին մանրէներից, բարերար ազդեցություն են թողնում օրգանիզմի նյութափոխանակության, հիվանդությունների կանխարգելման և բուժման գործընթացների վրա:

Նշված մթերքները ներդրվել են համալսարանի կաթի ուսումնափորձնական գործարանում, «Խաք» ՍՊԸ-ում, ինչպես նաև ներկայացվել են Արքպրոդէքսպո ցուցահանդեսին և ստացել են բարձր գնահատական:

4.2.2.Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժին

2017թ ուսումնասիրությունների հիմնական նպատակն է հանդիսացել ՀՀ տնտեսություններում ոչխարների աղիքային միկրոբիոտայի գերակշռող կուլտիվացվող բակտերիաների հակաբիոտիկակայունության, թաղանթների մակերևութային հիդրոֆոբության և կենսաֆիլմեր առաջացնելու ընդունակության հետազոտումը:

Ոչխարների աղիքային միկրոբիոտայից անջատվել են 1157 լակտոբացիլներ և 73 կոմենսալ աղիքային ցուպիկների շտամներ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ աղիքային բակտերիաների կենսաթաղանթ առաջացնելու կարողությունը կարևոր է աղիներում կոմենսալների և պաթոգենների մրցակցության համար և որոշում է բակտերիալ ինֆեկցիաների նկատմամբ ոչխարների դիմադրողականությունը:

4.3. «ԲՈՒՍԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԹԵՐՔԻ ԵՎ ՀՈՒՄՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ»

ՊՏՈՒՂԲԱՆՋԱՐԵՂԵՆԱՅԻՆ ՉԻՊՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՄ

«Բուսական ծագման մթերքների և հումքի վերամշակման նորագույն տեխնոլոգիաների կատարելագործում»

Աշխատանքի նպատակն է եղել՝ իրականացնել անհրաժեշտ հետազոտական աշխատանքներ հետևյալ ենթաթեմաների ուղղությամբ՝

1. Բուսական ծագման հումքատեսակներից պտուղբանջարեղենային չիպսերի տեխնոլոգիայի մշակում առանց բուսայուղում հումքի տապակման:
2. Խաղողի սերմերից բուսայուղի ստացման մեքենայացված հոսքագծի մշակում և ներդրում արտադրությունում:
3. Ստևիոզիդի կիրառմամբ ֆունկցիոնալ ալրային հրուշակեղենի տեխնոլոգիաների մշակում:

Առաջին ենթաթեմայի մշակման արդյունքում հաստատվել է, որ չիպսերի պատրաստման գործընթացում հումքի բուսայուղում տապակման գործընթացը կարող է չեղարկվել, քանի որ այդ եղանակով ստացվող չիպսերը վտանգավոր են մարդու առողջության համար: Առաջարկվել է չիպսերը ստանալ բաղադրիչների (միրգ, բանջարեղեն և այլն) կոնվեկտիվ և միկրոալիքային չորացման եղանակների զուգորդումով, ինչը ապահովում է էկոլոգիապես բացարձակ մաքուր սննդամթերքի ստացում:

Թեմայի հետագա ընթացքը պայմանավորված է մշակված տեխնոլոգիայով ստացված չիպսերի արտադրական փորձարկումների արդյունքներից, որոնք ըստ նախնական տվյալների ապահովված են դրական ելքով:

Երկրորդ ենթաթեմայի կատարման արդյունքում ապացուցված է, որ խաղողի սերմեր ընդգրկող մամլածքը մշակված տեխնոլոգիայի համաձայն վերամշակելուց հետո ստացվում է սերմերի չոր զանգված, որը պատրաստի հումք է շնեկային մամլիչով նրանից բուսայուղ ստանալու համար: Ենթաթեման պատրաստ է արտադրական փորձարկումների համար, որը կիրականցվի 2018թ. գարնան ընթացքում:

Երրորդ ենթաթեմայի կատարման արդյունքում պարզվել է, որ բուժիչ բույսերի չոր էքստրակտներից ստացված ֆիտոփոշին ապահովում է ցորենի ալյուրի և խմորի ռեոլոգիական հատկությունների զգալի բարելավում:

4.4. Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոն

Ընթացիկ տարում կենտրոնում իրականացվել է «ՀՀ գյուղատնտեսական արտադրանքի իրացման, մրցունակության բարձրացման կառուցակարգերի կատարելագործումը և արտահանման ընդլայնման ուղիները» գիտական թեման, որն իր մեջ ներառում էր 2 ենթաթեմաներ՝

1. «ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրանքի իրացման կազմակերպական կառուցակարգերի կատարելագործումը»,
2. «Գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության բարձրացման և արտահանման ընդլայնման ուղիները ԵԱՏՄ անդամակցության պայմաններում»:

Թեմայի շրջանակներում հավաքագրվել են արտադրատնտեսական բնույթի ցուցանիշներ, մշակվել են աղյուսակներ և արվել համապատասխան վերլուծություններ: Վեր են հանվել գյուղատնտեսական արտադրանքի իրացման և մրցունակության բարձրացման հիմնախնդիրները: Ուսումնասիրության արդյունքների հիման վրա թեման կատարողները զեկուցումներով հանդես են եկել ՀԱԱՀ-ում կազմակերպված «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները» գիտաժողովում, ինչպես նաև ՀԱԱՀ և ԳԱԱ համատեղ նիստում:

4.5. Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության պրոբլեմային լաբորատորիա

Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետությունում մեծ տարածվածություն ունեն գյուղատնտեսական կենդանիների, թռչունների և ձկների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունները, որոնք խոչընդոտում են ճյուղի զարգացմանը, իսկ բնակչությանը մատակարարում են սննդային ցածր արժեքով կենդանական ծագում ունեցող սննդամթերք:

Ծրագրի նպատակն էր ուսումնասիրել հանրապետության տարածքում գյուղատնտեսական կենդանիների, թռչունների և ձկների մոտ մեծ տարածում ունեցող վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունները, բացահայտել դրանց առաջացման և տարածման պատճառները ու դրանց նկատմամբ մշակել բուժկանխարգելիչ միջոցառումներ:

Հանրապետության Արմավիրի, Արարատի Արագածոտնի, Կոտայքի մարզերի և Երևան քաղաքի շրջակայքի անհատական թռչնաբուծական տնտեսություններում 2017թ. տարվա բոլոր եղանակներին կատարված հետազոտությունների արդյունքում պարզվեց, որ մինչև մեկ տարեկան թռչունները վարակված էին ասկարիդիոզ հիվանդությամբ, որը խիստ բացասաբար է ազդում նրանց աճի և զարգացման, ինչպես նաև մսատվության և ձվատվության:

Խոզերի անաերոբային դիզենտերիայի նկատմամբ մշակվել է նոր պատվաստանյութ, որը ներկայումս գտնվում է փորձարկման փուլում:

Կովերի մոտ ձվարանի կայուն դեղին մարմնի հայտնաբերման ճանապարհով սիմպտոմատիկ անպտղությունը կանխարգելելու և բուժելու նպատակով փորձարկվել են, էնրոֆլոքսացինի և օքսիտոցի տարբեր համադրություններ, որոնք առաջադրվել են ներդնելու հանրապետության տնտեսություններում:

2017թ. ընթացքում կատարվել է Երևան քաղաքի մի քանի համայնքների (Կենտրոն, Նոր Նորք, Շենգավիթ, Արաբկիր) խանութներում վաճառվող ձկների սննդային արժեքի հետազոտություններ:

2017թ. ընթացքում ուսումնասիրվել է հանրապետության ֆերմերային տնտեսություններում բուծվող տավարի նյութափոխանակության խանգարումների և մասնավորապես կետոզի առաջացման պատճառները և մշակվել են բուժ-կանխարգելիչ միջոցառումներ:

4.6. Էկոլոգիայի և օրգանական գյուղատնտեսության պրոբլեմային լաբորատորիա

2017 թ. շարունակվել են հանրապետության տարբեր ագրոկլիմայական գոտիներում էկոլոգիական տեսակետից անվտանգ բուսաբուծական մթերքների արտադրության տեխնոլոգիաների մշակման և դրանք արտադրության մեջ ներդնելու ուղղությամբ տարվող աշխատանքները, 2017 թվականի գարնանից ձեռնամուխ է եղել Աբովյան քաղաքում հայ-նորվեգական «Օրվակո» կազմակերպության կողմից (կենցաղային թափոններից) արտադրված «Օրգանոմիքս» օրգանական պարարտանյութի և ԻԻՀ-ից բերված

«Ազոտոբարվար» «Ֆոսֆորոբարվար» կենսաբանական պարարտանյութերի, ինչպես նաև գոմաղբի, թռչնաղբի, կենսահումուսի և հանքային պարարտանյութերի համարժեք չափաքանակների համեմատական ուսումնասիրությունների վերաբերյալ հետազոտությունների կատարմանը:

Համալսարանի «Ոսկեհատ» ուսումնափորձնական տնտեսությունում դաշտային փորձերի և վեգետացիոն տնակում կատարված վեգետացիոն փորձերի մեկ տարվա արդյունքներով բացահայտվել է, որ գոմաղբի, թռչնաղբի, օրգանոմիքսի և կենսահումուսի համարժեք չափաքանակները գրեթե հավասարաչափ են ազդել պոմիդորի և տաքդեղի բերքի քանակի և որակի վրա: Չնայած նշված օրգանական պարարտանյութերը 12-15%-ով պակաս բերք են ապահովել, քան հանքային պարարտանյութերի համարժեք չափաքանակները, սակայն ստացված սննդամթերքներն իրենց որակական հատկանիշներով գերազանցել են հանքային պարարտանյութերի կիրառությունից ստացված բերքի որակին:

Առաջին անգամ փորձարկված «Օրգանոմիքս» օրգանական պարարտանյութի և Իրանից բերված բակտերիալ պարարտանյութերը, չնայած թռչնաղբի, կիսափտած գոմաղբի և կենսահումուսի համեմատ 8-14 %-ով ցածր արդյունք են ապահովել, սակայն դրանց կիրառությունը նպաստում է ինչպես հողի բերրիության բարձրացմանը (բակտերիալ պատրաստուկները նպաստում են մթնոլորտային օդից ազոտի ֆիքսմանը և հողում մատչելի ֆոսֆորի քանակության ավելացմանը), այնպես էլ շրջակա միջավայրը մաքուր պահելուն և անթափոն արտադրության կազմակերպմանը:

Պրոբլեմային լաբորատորիայի կողմից վերոհիշյալ ուսումնասիրությունները շարունակվելու են ևս երկու տարի հետազոտվող տեխնոլոգիաների վերաբերյալ վերջնական եզրակացությունների հանգելու և արտադրության մեջ դրանց ներդրման նպատակահարմարությունը որոշելու համար:

4.7. <u>ԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՆՈՖՈՆԴԻ ԵՎ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ</u>

1. Հաշվետու տարում շարունակվել են լաբորատորիայում պահպանվող սերմերի առկա հավաքածուն հարստացնելու, ինչպես նաև մշակաբույսերի վայրի ազգակիցների տարածման արեալներում մոնիթորինգի նպատակով կազմակերպվել գիտարշավային ուսումնասիրությունները ՀՀ 6 մարզերում (Լոռի, Արմավիր, Տավուշ, Գեղարքունիք, Կոտայք, Շիրակ), որի ընթացքում հավաքվել է 58 սերմային նմուշ (բանջարային, պտղատու, արոմատիկ և դեղաբույսեր), պատրաստվել է 44 թերթ հերբարիում: Երկարատև (-18°C) պահպանության են դրվել 15 սերմային նոր նմուշ: Ներկայումս հավաքածուն ընդգրկում է ***5500*** սերմային նմուշ և **1436** թերթ հերբարիում: Երկարատև պահպանության է դրված 303 սերմային նմուշ՝ ՀՀ-ում նման հավաքածուների շարքում ամենամեծը:

2. 40 տարուց ավելի պահպանվող հին նմուշների կենսունակության մոնիթորինգի արդյունքների հիման վրա իրականացվել են վերարտադրության աշխատանքներ:

3. Շարունակվում են հացազգիների, սոխի, սխտորի նոր սորտերի սելեկցիոն աշխատանքները: 2017 թ-ին աշնանացան գարու «Մարինա», «Հայկ 1», սխտորի «Ձյունիկ» և սոխի «Արմավիրի» սորտանմուշներն անցել են պետական սորտափորձարկում, իսկ աշնանացան գարու «Հայկ 2» և աշնանացան ցորենաշորայի «Սիս 2» սորտանմուշները սորտափորձարկման ընթացքում են: Հաճարի (Գառնի), ցորենաշորայի (Ճյուղավոր), սոխի և աշնանացան սխտորի մեկական սորտանմուշներ գտնվում են բազմացման փուլում հետագայում պետական սորտափորձարկման ներկայացնելու համար:

4. Հավաքվել է լոբու 4 տեղական սորտ-պոպուլյացիաներ և կատարվել դրանց մորֆոլոգիական ցուցանիշների ուսումնասիրություն հետագայում բազմացման և նոր սորտերի ստացման համար, որպես ծնողական ձևեր օգտագործելու նպատակով:

5. Շարունակվում են Լաբորատորիայում *ex situ* պահպանվող հավաքածուում առկա նմուշների գնահատումը գենային մակարդակով՝ ագրոկենսաբանական տարբեր հատկանիշներ՝ չորադիմացկունություն, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ կայունություն, պահունակություն, սննդի տեսակետից արժեքավոր նյութերի մեծ առկայություն պայմանավորող գեների հայտնաբերման, դրանց գենային քարտեզի կազմման ուղղությամբ: 2017 թ-ից այդ աշխատանքներին մասնակցում են՝ Նորվեգիայի Թրոմսոյի համալսարանի գիտնականները՝ «Նորվեգիա-Հայաստան համագործակցության բույսերի մոլեկուլյար կենսաբանության և կենսատեխնոլոգիայի բնագավառում» ծրագրի շրջանակներում:

6. Լաբորատորիայի գիտաշխատողները մասնակցել են 6 հանրապետական և միջազգային սեմինարների և դասընթացների, կարդացվել է 8 գիտական զեկուցում:

7. Հաշվետու տարում պաշտպանվել է մեկ թեկնածուական ատենախոսություն, հրատարակվել է 3 գիտական հոդված:

Ավարտվել են «Մշակաբույսերի Հայաստանում տարածված վայրի ցեղակիցները և օգտակար վայրի բույսերը» եռալեզու մոնոգրաֆիկ երկհատոր ատլաս-գրքի հայերեն տարբերակի ստեղծման աշխատանքները, իսկ 2018 թ-ին այն կթարգմանվի նաև անգլերեն և ռուսերեն լեզուներով ու կներկայացվի տպագրության:

4.8. Բույսերի պաշտպանության և պեստիցիդների սինթեզի պրոբլեմային լաբորատորիա

Լաբորատորիայում երկար տարիներ լայնածավալ և նպատակային աշխատանքներ են իրականացվում հետերոցիկլիկ միացությունների շարքի կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզի ուղղությամբ:

Հաշվետու տարում նպատակային սինթեզներն իրականացվել են ինչպես N,O,S-պարունակող հինգանդամանի և վեցանդամանի հետերոցիկլերի, այնպես էլ դրանց չկոնդենսված և կոնդենսված բի- և տրիցիկլիկ համակարգերի ածանցյալների շարքերում: Ուսումնասիրությունները տարվել են հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Նախկինում ստացված N, S, O - պարունակող բազմատոմ հետերոցիկլիկ միացությունների ֆունկցիոնալացում:

2. Երկու, երեք կամ չորս տարբեր հետերոցիկլեր պարունակող չկոնդենսված և կոնդենսված համակարգերի նոր ածանցյալների նպատակային սինթեզներ՝ պեստիցիդային երկու հատկությունների համադրությամբ նոր պատրաստուկների հայտնաբերման ակնկալիքով:

3. Սինթետիկ եղանակների վերամշակում «կանաչ քիմիայի» և բնապահպանական պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

4. Սինթեզված միացությունների նախնական լաբորատոր-վեգետացիոն սկրինինգ, դրանցից ընտրված առավել ակտիվ նյութերի հետագա խորը ուսումնասիրությունների և դաշտային փորձարկումների համար:

Լաբորատորիայում սինթեզված մոտ 250 միացությունների հիմնական մասը ենթարկվել է կենսաբանական սկրինինգի, որի արդյունքում հայտնաբերվել են հերբիցիդային ակտիվությամբ օժտված 4 միացություններ և մի շարք աճախթանիչներ: Վերջիններից չորսը իրականացված դաշտային փորձարկումների ընթացքում ցուցաբերել են բարձր արդյունավետություն:

4.9. Գյուղատնտեսական կենդանիների գենետիկայի, սելեկցիայի և կերակրման պրոբլեմային լաբորատորիա

«Տավարի մթերատու հատկությունների կատարելագործումը սինթետիկ պոպուլյացիաների ստեղծմամբ»

Թեմայի նպատակն է բուծման հնարքների կիրառմամբ էապես նպաստել ցանկալի հատկանիշներով օժտված տավարի եռացեղ կենդանիների խմբաքանակների ստեղծմանը և ընտրասերման պարամետրերի սահմանմանը:

- էկզոգեն ցեղերի գենոտիպերի օգտագործմամբ կաթնատու տիպի սինթետիկ պոպուլյացիաների ստեղծումը, որի համար կազմակերպվում է միջազգային գենետիկական ռեսուրս հանդիսացող ցեղերի գենոֆոնդի օգտագործումը՝ միջցեղային տրամախաչման մեթոդով համակցված ժառանգականությամբ կենդանիներ ստանալու նպատակով:

- Ստացված սինթետիկ պոպուլյացիաների երրորդ ծնում կաթնատվությունը հասցնել 6500 կգ՝ 4,1-4,2 % կաթում յուղի և 3,4-3,6 % սպիտակուցի պարունակությամբ կենդանիներ:

- Շարունակվում են կովկասյան գորշ, ջերսեյ, շվից, հոլշտին և ֆլեկվեյ ցեղերի «մաքուր բուծմամբ» և տրամախաչմամբ բարձր կաթնատու սինթետիկ պոպուլյացիաների ստեղծման գործընթացը:

- Կաթնային մթերատվության հաշվառում (305 օրվա կաթի քանակը, կաթի մեջ յուղի և սպիտակուցի պարունակությունը, կաթնայուղի և կաթնասպիտակուցի քանակը, կաթնատվության գործակիցը, լակտացիոն կորագիծը, կայունության գործակիցը):

Ոչխարաբուծություն ծրագրի նպատակն է

- Հանրապետությունում բուծվող ոչխարի ցեղերի և կորիդելի տիպի ոչխարների գենոֆոնդի պահպանման համար ստեղծել տոհմային տնտեսություններ:
- Կազմակերպել նորածին էգ գառների ճարպապոչի փոքր բարձիկի հատում, հետագայում մաքուր կաթ ստանալու համար:
- Հայաստանի Հանրապետությունում ոչխարներից ստացվող կաթնային մթերատվության բարձրացում՝ բարձր կաթնային մթերատվություն ունեցող մաքիների ընտրության միջոցով:
- Ոչխարաբուծության արտադրանքի արտադրության ուղիների և ճյուղի վարման տեխնոլոգիաների կատարելագործումը:

Այծաբուծություն

- Հանրապետությունում տոհմային այծաբուծության ստեղծում ու զարգացում,
- Պտղատվությամբ և վաղահասությամբ աչքի ընկնող այծի նոր ցեղի ստացում, որը հնարավորություն կտա լակտացիայի ընթացքում ունենալ միջինը 350-400 կգ կաթնատվությամբ և 50 կգ կենդանի զանգվածով կենդանիներ:
- Ներկրված տեղական վերարտադրության այծերի բուծում՝ «մաքուր բուծման» եղանակով:
- Ուսումնասիրվում է տարբեր ցեղերի այծերի և խառանծինների իմունային բջիջների կողմից գլյուտամինի յուրացման ինտենսիվությունը, գլյուտամինազ և ադենոզինդեզամինազ ֆերմենտների ակտիվությունը in vitro փորձերում հորմոնների ազդեցության ներքո:

<u>ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>

- Տրամախաչումից ստացված բարձր սերունդների խառանածինները կաթնային մթերատվությամբ 2-3 անգամ գերազանցում են տեղական այծամայրերին:

Գենետիկական ուսումնասիրությունների նպատակն է.

- ՀՀ-ում բուծվող ոչխարի և այծերի տարբեր ցեղերի և դրանց հիբրիդների, ինչպես նաև հայկական վայրի ոչխար մուֆլոնի ծագումը, էվոլյուցիան, օգտակար տնտեսական հատկանիշների ժառանգման օրինաչափությունների պարզաբանումը,
- ըստ տեսակների բջջագենետիկական բնութագիրը,
- արյան խմբերի և կենսաբանական ու տնտեսական նշանակություն ունեցող սպիտակուցների բազմաձևության ժառանգումը,
- մահաբեր և կիսամահաբեր գեների առկայությունը և վիճակը,
- հիվանդությունների նկատմամբ բնական դիմադրողականության հնարավոր պարզաբանումը գենետիկական մարկերների օգնությամբ:

<u>ԽՆԴԻՐՆԵՐԸ</u>

–ՀՀ-ում բուծվող ոչխարի և այծերի տարբեր ցեղերի և դրանց հիբրիդների, ինչպես նաև հայկական վայրի ոչխար մուֆլոնի ալելոտիպերի և գենոտիպերի բնութագրումը:

–Ուսումնասիրվող տեսակների և հիբրիդների ծագման, գենոտիպերի ժամանակագրական ձևավորման, գենետիկական նմանության և հեռավորության որոշումը:

4.10.<u>ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</u>

- Հայկական վայրի մուֆլոնի, կորիդելի և դրանց հիբրիդների գենետիկական բնութագիրն ըստ տրանսֆերինի, ցերուլոպլազմինի և հեմոգլոբինի լոկուսների:
- Հայկական վայրի մուֆլոնի, կորիդելի և դրանց հիբրիդների բնական դիամդրողականության ուսումնասիրությունը դաբաղ հիվանդության նկատմամբ:
- Ուսումնասիրվում է ՀՀ էնդեմիկ գենետիկական ռեսուրսների հիման վրա ստեղծված ոչխարների տարբեր ցեղերի և տիպերի գենոտիպերը՝ արյան համակարգերի և խմբերի, սպիտակուցների և ԴՆԹ-ի բազմաձևության, կարիոտիպերի և սատելիտային ԴՆԹ-ի մակարդակներով:
- Շարունակվում են նաև պոլիմորֆ սպիտակուցների ուսումնասիրությունները:

ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

- Հետազոտությունները շարունակվում են խառնածին այծերի F_4 սերնդի արյան շրջանառող իմունային կոմպլեքսների պարզաբանման ուղղությամբ, հասակային դինամիկայի առանձնահատկությունների վերհանման միտումով:

4.11.«ԱԳՐՈԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Աշխատանքներ են իրականացվել կենսատեխնոլոգիական մեթոդների կիրառմամբ մշակաբույսերի, դեկորատիվ և դեղատու բույսերի բազմացման տեխնոլոգիաներ մշակելու ուղղությամբ: Կարտոֆիլի որոշ հեռանկարային սորտերի (Ագիլա, Ալեգրիա, Կուրաժ, ֆավորիտ, Բելառոզա, Սառայա) համար մշակվել են էքսպլանտների ախտահանման, վիրուսազերծ ռեգեներատների ստացման, միկրոբազմացման, ադապտացման արդյունավետ եղանակներ:

Աերոպոնիկ համակարգում արտադրվել են առողջացված մինիպալար և վերարտադրվել դաշտային պայմաններում:

Տարվել են աշխատանքներ կարտոֆիլի աղակայուն սորտերի հայտնաբերման ուղղությամբ ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի» հետ համատեղ, աշխատանքները դեռևս լիովին ավարտված չեն:

Մշակվել է Խաղողի «Ռուսկիյ Կոնկորդ» սորտի, «Խաթուն խարջի» և «Մորմոր» սորտերի մեկական կլոնի, ելակի՝ ռուսական սորտ՝ «Զեմֆիրա» , ամերիկյան Անփուշ մոշի սորտ «Թորնֆրի»-ի մասսայական միկրոբազմացման տեխնոլոգիաներ:

Խաղողի ֆիլոքսերադիմացկուն պատվաստակալների և ընկուզենու արմատագոյացման տարբերակների ընտրության ուղղությամբ ևս տարվել են որոշակի աշխատանքներ:

Մշակվել են ծաղկային կուլտուրաներից լիզիանտուսի (Էուստոմա) երեք արժեքավոր հիբրիդային ձևերի, շուշանի, գարտենզիայի, քրիզանթեմայի, դեկորատիվ մանուշակի ռեգեներացման և միկրոբազմացման ամբողջական տեխնոլոգիաներ:

Իրականացվել են նաև աշխատանքներ պտղատու կուլտուրաներից ունաբի, գոջիի (Lycium Barbarum) և դեղաբույսերից՝ մեղրախոտի, միրտի միկրոբազմացման տեխնոլոգիաների բարելավման ուղղությամբ:

Բույսերի գենբանկում շարունակվել են իրականացվել տեղական ծագման մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների գենետիկական ռեսուրսների ձեռք բերման, ռեգեներացման, բնութագրման, փաստաթղթավորման և պահպանման աշխատանքները:

Վեգետատիվ եղանակով աճող բույսերի՝ in vitro պահպանության ժամկետների երկարաձգման նպատակով տարվել են հետազոտություններ:

In vitro պայմաններում պահպանվող վեգետատիվ բազմացող մշակաբույսերի (կարտոֆիլ, ունաբ, խաղող, անփուշ մոշ, ելակ և այլն) թվով 220 նմուշներ վերակտրոնավորվել են:

Ս.թ. օգոստոսին իրականացվել է էքսպեդիցիա Ն.Ի.Վավիլովի անվան Համառուսաստանյան բուսաբուծության ինստիտուտի (ԹԼՀ), Նիդերլ անդների Թագավորություն «Ռիկ Զվան» (Rijk Zwaan) կազմակերպության և Հարավային Կորեայի գյուղատնտեսական գիտությունների ազգային ինստիտուտի գիտնականների հետ համատեղ՝ բանջարանոցային մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների, մասնավորապես վայրի գազարի (D. carota), ծնեբեկի (Asparagus officinalis), կաթնուկի (L. seriola), եղերդակի (Cichorium L.) համակեցությունների ուսումնասիրման նպատակով:

4.12. «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն» մասնաճյուղ

4.12.1.Խաղողագործության բնագավառում

Խաղողի կոլեկցիոն (ամպելոգրաֆիական) այգիների համալրման նպատակով՝ հաշվետու տարում գիտարշավային հետազոտությունների միջոցով խաղողի սորտերի, կլոնների, վայրի ձևերի ապրոբացիոն և կլոնային սելեկցիոն աշխատանքներ են իրականացվել հանրապետության խաղողագործական շրջանների մի շարք այգետարածքներում՝ ընդգրկելով խաղողագործական բոլոր գոտիները (Արարատյան դաշտավայր և նրա նախալեռնային գոտին, Հյուսիս-արևելյան, Զանգեզուրի և Վայոց ձորի):

Խաղողի տնկարաններ են հիմնվել Արմավիրի մարզի Մերձավան գյուղում և գիտական կենտրոնի Նալբանդյանի գիտա-փորձարարական տնտեսությունում՝ մոտ 30 սորտերի ներգրավմամբ:

Հրատարակման է նախապատրաստվել «Ամպելոգրաֆիա» աշխատությունը, որն ընդգրկում է խաղողի 89 սորտեր: Հիմնականում ընդգրկվել են հանրապետությունում լայնորեն մշակվող և հեռանկարային հանդիսացող տեղական աբորիգեն ու սելեկցիոն սորտերի նկարագրությունները՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

Աշխատությունը գտնվում է տպարանում ու մինչև տարվա վերջ կհրատարակվի 500 տպաքանակով, 200-210 էջ ծավալով:

Ապրիլին Իտալիայից ներկրված ֆիլոքսերադիմացկուն 6 և Երևանի կոնյակի գործարանի (Pernod Ricard) Բերդի մասնաճյուղից ներկրված 4 սորտ-պատվաստակալների կիլչեցված կտրոններով հիմնադրվել է 2,0հա ֆիլոքսերադիմացկուն սորտ-պատվաստակալների մայրուտային այգի:

Ուսումնասիրվել են խաղողի սելեկցիոն մի շարք սորտերի վազերի աչքերով բեռնվածության ազդեցությունը մշակման տնտեսական արդյունավետության վրա և ընտրվել լավագույն տարբերակները:

4.12.2.Պտղաբուծություն

Աշխատանքներ են իրականացվել աբորիգեն և ներմուծված պտղատու մշակաբույսերի սորտերի ու կլոնների հայտնաբերման, հավաքագրման և ուսումնասիրության ուղղությամբ:

Վեգետացիայի ընթացքում Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերի մի շարք ֆերմերային տնտեսություններում պտղատու մշակաբույսերի նկատմամբ իրականացվել են ֆենոլոգիական դիտարկումներ, սորտերի նույնականացում, նկարագրություններ, քիմիական կազմի անալիզներ:

Մասնավորապես ուսումնասիրվել են 15 պտղատու մշակաբույսերի ֆենոլոգիական փուլերի ընթացքը: Ֆենոլոգիական դիտարկումներ են իրականացվել նաև ծիրանենու՝ 27 սորտերի նկատմամբ:

Կատարվել են խնձորենու 9 սորտերի թարմ պտուղների քիմիական անալիզներ:

Ուսումնասիրությունների հիման վրա արտադրությանն է առաջարկվում ծիրանենու վաղահաս և ուշահաս 14 սորտեր, որոնք ծիրանենու հասունացման ժամանակահատվածը 20-25 օրվա փոխարեն Արարատյան դաշտավայրում կերկարաձգվեն՝ հասցնելով 90-100, իսկ Նախալեռնային գոտում՝ 120-130 օրվա, ինչը վերամշակող և արտահանող կազմակերպություններին 3-4 ամիս անընդմեջ կապահովի ծիրանի պտուղների թարմ հումքով:

Հաշվետու տարում շարունակվել են աշխատանքները Կոտայքի մարզի Նոր-Գեղի համայնքում հիմնված խնձորենու այգում՝ նպատակ ունենալով պարզելու տարբեր մանրէների և ֆերմենտների (ինվերտազա և ուրեազա) ակտիվության դինամիկան արմատային գոտում:

4.12.3.Գինեգործություն

Միկրոգինեգործության մեթոդով ուսումնասիրություններ են իրականացվում խաղողի աբորգեն և սելեկցիոն տեխնիկական մի շարք սորտերի և էլիտային ձևերի գինենյութերի (մասնավորապես սեղանի, կիսաքաղցր և աղանդերային) որակների պարզաբանման ուղղությամբ:

Որոշվել են ցնդող ու բուրավետ բաղադրամասերի պարունակությունը տարբեր ծառատեսակների (նռնենի, կաղնի, մուշմուլա, գիհենի, սալորենի, դեղձենի, թթենի, ծիրանենի, խնձորենի, արքայանարնջի, փշատենի և կեռասենի) հատուկ մշակված բնափայտերի կիրառմամբ պահորակված խաղողի թորվածքներում և ջրասպիրտային թուրմերում:

4.13.«Հ.Պետրոսյանի անվան Հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաճյուղ

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են՝

- Հանրապետության լեռնաանտառային գոտու հողերի դեգրադացման և անապատացման ընթացքում վարելահողերում տեղի ունեցող փոփոխությունների պատճառահետևանքային կապերը, տրվել են բացասական ազդեցություն ունեցող երևույթների կանխարգելման, հողերի բերրիության բարձրացման, բարելավման և արդյունավետ կառավարման հնարավոր ուղիները:
- տարվել են թռչնաղբի կիրառման արդյունավետության ուսումնասիրման աշխատանքներ, որոնք իրականացվել են վեգետացիոն փորձերի միջոցով: Նախկինում հետազոտությունների արդյունքում պարզվել էր, որ բանջարեղենի (լոլիկ, տաքդեղ) ցանքերում թռչնաղբի կիրառման օպտիմալ նորման 2.5 տ/հա էր: Սակայն նպատակահարմար չէ պարարտացման հիմքում դնել միայն թռչնաղբը: Կարելի է վերջինիս նորման կրճատել այն փոխարինելով հանքային պարարտանյութերով:
- Իրականացվել են ուսումնասիրություններ կապված նոր բաղադրության համակցված պարարտանյութերի ստացման և պարարտացման արդյունքների համակարգի մշակման հետ օրգանական և ավանդական երկրագործությունում:
- ուսումնասիրվել է Արմավիրի փորձամելիորատիվ կայանի մելիորացված հողերի արդի վիճակը:
- Նմանատիպ ուսումնասիրություններ է կատարվել նաև ՀԱԱՀ-ի Ոսկեհատի տնտեսությունում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսումնասիրվող տարածքը աղակալված չէ, հողում առկա են նպաստավոր պայմաններ մշակաբույսերի աճման համար:
- Բուսական մնացորդների քայքայումն արագացնելու նպատակով գիտական կենտրոնում շարունակվել են ուսումնասիրություններ մանրէների սելեկցիայի ուղղությամբ: Առանձնացվել են բակտերիաների և բորբորասնկերի մի շարք շտամներ, որոնց կիրառման համար կատարվում են փորձարկումներ:
- Առաջարկվել է ՀՀ-ում մեծ պաշարներով հայտնի կալիումով հարուստ ռեոլիդ դացիտային տուֆերից ստացված վերամշակված դացիտային տուֆը որպես կալիում, կալցիում և ֆոսֆոր պարունակող պարարտանյութ կիրառելու հնարավորությունը և արդյունավետությունը հացահատիկային մշակաբույսերի (աշնանացան ցորեն, գարնանացան գարի) ցանքերում: ՀՀ-ում և այլ երկրներում կալիումական պարարտացումների կիրառումը կարևոր դեր է կատարում մշակաբույսերի աճի, բերքատվության, ձմեռադիմացկունության բարձրացման գործում: Ակնհայտ է, որ կալիումի պակասի դեպքում թուլանում է բույսերի ֆոտոսինթեզը, դանդաղում է տերևներում սինթեզված ածխաջրերի տեղաշարժը դեպի բերք և պահեստային օրգաններ, բույսերն ավելի հեշտ են տուժում սնկային հիվանդություններից:

Գիտական կենտրոնում կատարվել են մի շարք պայմանագրային աշխատանքներ.

- Համաձայն QSE-11/05 պայմանագրի, որը կնքվել է Երևանի կոնյակի գործարանի տնօրինության և ՀԱԱՀ-ի «Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի միջև, հաշվետու տարում Արմավիրի և Այգեվանի կոնյակի գործարանների կողմից ստացվող թափոնը (12.200 մ^3) տրվել է Արմավիրի մարզի Զարթոնք համայնքի տարածքում 0,5 հա-ի վրա սոդային աղուտ-ալկալի հողի բարելավման համար:

Բերդի մասնաճյուղի կողմից ստացվող թափոնը (800 մ^3) օգտագործվել է Տավուշ համայնքի տարածքի խաղողի այգում (0,5 հա-ի վրա), 1 չափաբաժին-1400 մ^3/հա նորմայով, նոսրացված վիճակում (1 մաս բարդա + 2 մաս ոռոգման ջուր):

Բարդայի ազդեցությամբ նկատվել է խաղողի վազերի փարթամ աճ և բերքատվության բարձրացում: Հավելյալ բերքը ստուգիչի նկատմամբ ավելացել 1չ/բ բարդայի դեպքում՝ 19,8 g/հա: Առաջարկվել է արտադրությանը բարդան օգտագործել խաղողի այգիներում նոսրացված վիճակում:

2017թ. գիտական կենտրոնը, «Կորսան-Կորզիամ Կոնստրուկցիոն» Հայաստանյան մասնաճյուղի հետ կնքված պայմանագրի համաձայն, «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Մ 1 Աշտարակ - Թալին ավտոճանապարհի (հատված 1 երկարությունը 16.5 կմ) վերակառուցման և բարելավման աշխատանքների շրջանակներում կատարվել են դաշտային ուսումնասիրություններ, հողափոսերի տեղադրում, որոնք ամրագրվել են դաշտային (աշխատանքային) քարտեզների վրա և նմուշառվել:

«Ֆուլ-Տրաստ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրով նախատեսված առաջադրանքի, դաշտային պայմաններում ուսումնասիրվել է ՀՀ Արագածոտնի մարզի Մաստարա համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրում գտնվող բլրի կտրվածքի կառուցվածքը:

Ուսումնասիրության արդյունքները՝ աղյուսակի տեսքով և քարտեզներով, եզրակացության հետ միասին հանձնվել է պատվիրատուին:

Մասնակցել ենք ՄԱԿ-ի շրջանակներում կլիմայի փոփոխության, մեղմացման համար տեխնոլոգիական կարիքների գնահատման և իրազեկման բարձրացման տեխնիկական աշխատաժողովների և բնական պաշարների նախարարության կողմից կազմակերպված աշխատանքային խմբի նիստերի աշխատանքներին:

ՀՀ Կառավարության ս/թ մարտի 30-ի № 401-Ա որոշմամբ Երասխահունի (Արմավիրի) փորձակայանի հանրակացարանները և վարչական շենքը Հայաստանի ազգային ագրարային համալսարանից հետ վերցնելու, դրանք նվիրատվության կարգով որպես սեփականություն այնտեղ ապրող բնակիչներին հատկացնելու նպատակով, ՀԱԱՀ-ի ռեկտոր Ա. Թարվերդյանի 03.09.2017թ. թիվ 41/01-04-1134 գրության շրջանակներում «Գեոքարտ» ՊՈԱԿ-ի հետ կնքված պայմանագրի գիտական կենտրոնի հողաշինարարության և հողային կադաստրի բաժնի մասնագետների հետ համատեղ կատարվել են փորձակայանի տարածքի չափագրում, արտաքին սահմանների և հողատեսքերի ճշտում, շենք-շինությունների չափագրում և տեղադրում քարտեզի վրա:

Դաշտային և կամերալ աշխատանքների արդյունքում կազմվել է նոր հատակագիծ (քարտեզ), հաշվետվություն գյուղատնտեսական հողատեսքերի և այլ նպատակային և գործառնական նշանակություն ունեցող հողատարածքների առկայության վերաբերյալ և ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տեսքով հանձնվել է պատվիրատուին:

Գիտական կենտրոնում նաև կատարվել է Հայ-ռուսական կիրառական հետազոտությունների համատեղ նախագիծը՝ «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՌԴ ԻԱՀ – 2016», «Մշակել և պատրաստել թորման եղանակով ջրերի մաքրման փորձարարական սարք՝ օգտագործելով արևի և այլ տեսակի էներգիաներ» թեման:

Իրականացվել է նաև Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO, Իտալիա) կողմից ֆինանսավորվող փոքր գրանտի՝ «Բացահայտել աղակալման և ալկալիացման գործընթացների բացասական ազդեցությունը Արարատյան դաշտավայրի հողերի բերրիության վրա և առաջարկել միջոցառումներ դրանց մելիորատիվ վիճակի բարելավման համար» ծրագիրը:

5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Սույն հաշվետվությունը ներառում է ՀԱԱՀ ՏՏ և ԻՕ կենտրոնի տեղեկատվական համակարգերի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի սպասարկման, տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժինների, գիտական գրադարանի, տպարանի, հրատարակչական-խմբագրական, աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժինների, պատմության թանգարանի, ինտերնետ կապի և էլեկտրոնային ուսուցման համակարգչային կաբինետների՝ 2017թ. ընթացքում կատարած աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում ՏՏ և ԻՕ կենտրոնը հետևողականորեն շարունակել է իրականացնել ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգի, էլեկտրոնային ուսուցման, ներքին փաստաթղթաշրջանառության, էլեկտրոնային լսարանային և գրքային ֆոնդերի ընդլայնման, ընդհանուր գրադարանային աշխատանքների արդյունավետության բարձրացման և համալսարանում տեղեկատվական մի շարք այլ համակարգերի ներդրման ու զարգացման աշխատանքներ:

Ստորև ներկայացված են 2017թ. ընթացքում իրականացված աշխատանքներից առավել հատկանշականները.

- 2017թ. ևս Կենտրոնի կողմից շարունակվել են eBuh ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգի զարգացման և վերջնական ներդրման աշխատանքները: Համակարգը հնարավորություն է ընձեռնում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունների կիրառմամբ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպել ժամանակակից կրթական չափորոշիչներին համապատասխան: eBuh համակարգը, զգալիորեն նվազեցնելով մարդկային գործոնի կողմից թույլ տրվող սխալների հավանականությունը, տեղեկատվությունը վերջնական հասցեատիրոջն է հասցնում անհամեմատ արագ՝ ապահելով դեկանատների և մյուս ստորաբաժանումների գործունեության թափանցիկությունը: Համակարգն արդեն պիլոտային ներդրվել է ամբողջ համալսարանում և ներկայումս գտնվում է թեստավորման փուլում, որի արդյունքները ամփոփելուց և համակարգում հայտանբերված թերությունները շտկելուց հետո այն արդեն կհանձնվի շահագործման: Համակարգի նախագծումից մինչև ամբողջական ներդրում տևեց 4 տարի, որի ընթացկում կատարվեց զգալի մեծ աշխատանք և այսօր Ագրարային համալսարանի այս ծրագրից օգտվելու և փորձը ուսումնասիրելու ցանկություն են հայտնել հանրապետության առաջատար պետական բուհերը:
- «Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսությունում տարվա ընթացքում շարունակվել են գինեգործարանի շենքային պայմանների բարեկարգման աշխատանքները, որոնք ավարտվել են տարեվերջին: Տարվա ընթացքում ուսումնափորձնական արտադրամասը համալրվել է Հայաստան ներկրված իտալական արտադրության անհրաժեշտ բոլոր սարքավորումներով՝ թվով 30 անուն և տեղական արտադրության 30 կաղնե տակառներով: Գինեգործության վերաբերյալ տպագրվել է 4 ձեռնարկ՝ յուրաքանչյուրից 50 օրինակ և «Գինեգործական ձեռնարկությունների սարքավորումներ» դասագիրքը՝ 100 օրինակ: Պատրաստվել է wine.anau.am կայքը, որը հանրությանը կներկայացնի Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսության գործունեությունը, հնարավորություններն ու արտադրանքը: Կայքն ունի նաև առցանց գրադարան, որտեղ տեղադրվում են գինեգործության վերաբերյալ հայկական և արտասահմանյան գրականություն, տարբեր ուսումնական նյութեր: Կայքը ներկայումս գտնվում է ինֆորմացիոն համալրման փուլում, որից հետո կհանրայնացվի: Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսության՝ հասարակության հետ կապն արդյունավետորեն ապահովելու նպատակով ստեղծվել է սոցիալական էջ «Ֆեյսբուք» համացանցային հարթակում:

ՏՏ և ԻՕ կենտրոնի՝ «Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում» ծրագրային թիմի անդամները հաշվետու ժամանակաշրջանում փորձի ուսումնասիրման նպատակով եղել են Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, ուսումնասիրել տարբեր համալսարանների ուսումնափորձնական գինեգործարանների փորձը՝ Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսությունում կիրառելու համար:

Ծրագրի արդյունավետության բարձրացման նպատակով հունիսին իրականացվել է սեմինար՝ «Կրթական նոր մոտեցումների կիրառման, դասավանդման մեթոդների արդյունավետության բարձրացման, ինչպես նաև գիտական գաղափարի շուկայահանման և ոլորտի շահագրգիռ սուբյեկտների հետ փոխհամագործակցության կազմում» թեմայով: Այժմ ուսումնագիտաարտադրական կենտրոնն ամբողջությամբ պատրաստ է շահագործման և 2 տարվա ծրագրի արդյունքում հնարավորություն է ստեղծվել պատրաստել ոլորտի մասնագետներ՝ ունենալով տեսական և գործնական բոլոր անհրաժեշտ ռեսուրսային բազան: Անհրաժեշտ է նշել որ համալսարանը իր սեփական ռեսուրսներից նույնքան ֆինանսական ներդրում կատարեց ծրագրի իրականացման համար, որքան որ համաշխարհային բանկի կողմից տրամադրված դրամաշնորհն էր:

- Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսությունում ընթացող աշխատանքներին զուգահեռ իրականացվել են գինեգործության ոլորտին անհրաժեշտ տարբեր մասնագետների պատրաստման դասընթացներ: Ագրոտուրիզմը, մասնավորապես գինու տուրիզմը, Հայաստանում զարգացնելու նպատակով Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող Տեմպուս LeAGUe «Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում ցկյանս ուսուցման զարգացման ցանց» ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետի երրորդ և չորրորդ կուրսերի ավելի քան 30 ուսանողի համար ՏՏ և ԻՕ կենտրոնի նախաձեռնությամբ կազմակերպվել են «Ագրոտուրիզմ. գինու տուրիզմը Հայաստանում» թեմայով անվճար դասընթացներ: Դասընթացի մասնակիցները ծանոթացել են ՀՀ-ում գինեգործության ու գինու տուրիզմի զարգացման հնարավորություններին ու հեռակարներին, սովորել ագրոտուրիստական բիզնեսը գովազդելու, առաջ մղելու հմտություններ: Դասընթացը հաջողությամբ ավարտած ուսանողները ստացել են մասնակցության հավաստագրեր, ինչպես նաև հնարավորություն՝ միանալու համալսարանում ձևավորվող գինեգործների և շուկայագետների թիմին, միասին կատարելու շուկայի ուսումնասիրություն, ստեղծելու նոր բրենդ, պիտակ և այլն՝ դրանով իսկ նպաստելով համալսարանի գինեգործարանի կայացմանն ու զարգացմանը:
- Հաշվետու տարվա նոյեմբերի 24-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարան էին այցելել Խաղողի և գինու միջազգային կազմակերպության նախագահ դոկտոր Մոնիկա Քրիստմանը և Գերմանիայի Դաշնության Գայզենհայմի համալսարանի նախագահ դոկտոր Հանս Ռեյներ Շուլցը: Այցի հիմնական նպատակն էր ուսումնասիրել գինեգործության ոլորտում երկու կողմերի կայուն ավանդույթներն ու փորձը՝ խորացնելով համագործակցությունը գինու տեխնոլոգիայի մասնագետների պատրաստման ու վերապատրաստման, ինչպես նաև գինու զբոսաշրջության ու մենեջմենթի բնագավառներում:
- 2017թ. Կենտրոնի կողմից բարեհաջող կատարվել և ավարտին են հասցվել ՏԵՄՊՈՒՍ ծրագրերի շրջանակներում իրականացվող LeAGUe և GOVERN ծրագրերով նախատեսված աշխատանքները:

Հարկ է նշել, որ GOVERN («Աջակցություն բուհական ինքնավարությանը և հաշվետվողականությանը. Բարձրագույն կրթության կառավարման ժամանակակից և Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համահունչ համակագի մշակում արդյունավետ փոփոխությունների իրականացման նպատակով») ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել համակարգչային սերվեր և համակարգիչ, ինչպես նաև կազմակերպվել է բուհում կառավարման ավտոմատացված ծրագրի ներդումը և ծրագրային մի շարք այլ գործողություններ:

LeAGUe («Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում ցկյանս ուսուցման զարգացման ցանց») ծրագրի շրջանակներում ռեկտորատի սենյակը կահավորվել է ժամանակակից տեխնիկայով, պատշաճ կերպով իրականացվել են ծրագրով նախատեսված բոլոր սեմինարներն ու աշխատանքները:

- ՏՏ և ԻՕ կենտրոնի համապատասխան բաժինների աշխատակիցները հաշվետու տարվա ամբողջ ընթացքում մշտապես իրականացրել են բուհի կայքի համալրման և թարմացման աշխատանքներ: Հանգամանորեն լուսաբանվել է ՀԱԱՀ-ում իրականացված բոլոր միջոցառումները, որոնք տեղադրվել են համալսարանի պաշտոնական կայքէջի «Նորություններ» բաժնում, առավել ուշագրավները նաև՝ այլ ՁԼՄ-ների էջերում: 2017թ. ընթացքում համալսարանի կայքի «Նորություններ» բաժնում տեղադրվել է ավելի քան 140 նյութ, որոնք թարգմանվել են ռուսերեն և անգլերեն, տարածվել համալսարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջով: Հաշվետու տարում կայքում տեղադրվել է 75 հայտարարություն (ուսման, տեղական և միջազգային ծրագրերի հրավերներ, ծանուցումներ թափուր

աշխատատեղերի և այլնի մասին): Հաջորդ՝ «Ագրոլուր» բաժնում, տեղադրվել է ագրոպարենային ոլորտի նորություններն ու զարգացումները ներկայացնող 65 նյութ:

- Հաշվետու ժամանակահատվածում ՀԱԱՀ-ում անցկացված միջոցառումները նկարահանվել, մոնտաժվել և տեղադրվել են www.youtube.com հարթակի ՀԱԱՀ ալիքում, իսկ լուսանկարները՝ www.flickr.com հարթակում:
- Թվայնացվել և արխիվացվել են ՀԱԱՀ-ի մասին նկարահանված, համալսարանական ու համագործակցային միջոցառումները լուսաբանող նյութերն ու գովազդային հոլովակները:
- Ուսումնական տարվա ընթացքում ՏՏ և ԻՕ կենտրոնը ստեղծել է երկու պրեզենտացիա, համալսարանի պատմության, ծավալած աշխատանքների և մասնագիտությունների, ինչպես նաև դիմորդներին հետաքրքրող հարցերի վերաբերյալ:
- Կենտրոնի կողմից տպագրվել են բազմաբնույթ նյութեր՝ եռալեզու բուկլետներ, տեղեկատվական թերթիկներ, բրոշյուրներ և այլն, որոնք ներկայացնում են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, նրա տարբեր կառույցների, ստորաբաժանումների գործունեությունն ու ձեռքբերումները, ընդունելության կարգը, ՀԱԱՀ-ում ուսումնառության ընձեռած բազմաթիվ հնարավորությունները:
- Կենտրոնի մի քանի բաժինների համատեղ աշխատանքի շնորհիվ պարբերաբար վերանայվել և թարմացվել է ՀԱԱՀ շրջանավարտների, դասախոսների և երախտավորների persons.anau.am միասնական տեղեկատվական շտեմարան-կայքէջը, որի նպատակը ուսանողներին և դասախոսներին, ինչպես նաև համալսարանի արտաքին շահակիցներին համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, շրջանավարտների և երախտավորների ու նրանց գործունեության մասին տեղեկատվություն մատուցելն է:
- Հաշվետու տարում Տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժնի աշխատակիցների կողմից շարունակվել է էլեկտրոնային ուսուցման զարգացման և դասախոսների վերապատրաստման գործընթացը: 2014թ.-ից սկսած՝ վերապատրաստվել է 65, իսկ հաշվետու տարվա սկզբին՝ 20 դասախոս, որոնց տվյալները տրամադրել են ֆակուլտետների դեկանները: Վերապատրաստման դասընթացների արդյունքում դասախոսները ծրագրի միջոցով մշակել են դասավանդվող մեկական առարկա: Մշակված առարկաները տեղադրվել են ՀԱԱՀ-ի էլեկտրոնային ուսուցման elearning.anau.am հարթակում, որը տարվա երկրորդ կեսին թարմացվել է, վերազինվել նոր գործիքակազմով: Վերապատրաստման և էլեկտրոնային ուսուցման ծրագիրը շարունակական է, և առաջիկայում նախատեսվում է նրանում ընդգրկել նոր խմբեր, իսկ դասախոսների անհատական այցելությունների ու խորհրդատվությունների միջոցով պարբերաբար թարմացվում են հարթակում տեղադրված ուսումնական նյութերը: Էլեկտրոնային ուսուցման դասընթացը բարեհաջող ավարտած և ատեստավորված աշխատակիցները ստացել են համապատասխան վկայականներ:
- Տարվա ընթացքում ՏՏ և ԻՕ կենտրոնը շարունակել է համակարգել ՀԱԱՀ շրջանավարտների մասին տեղեկատվության մուտքագրման աշխատանքները ԵՄ HEN-GEAR ՏԵՄՊՈՒՍ ծրագրի շրջանակներում ներդրված էլեկտրոնային բազայում, որտեղ 2017թ. տարեվերջի դրությամբ գրանցված է համալսարանի ավելի քան 3200 շրջանավարտ:
- ՏՏ և ԻՕ կենտրոնի կողմից ստեղծված աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի career.anau.am կայքում շարունակվել են ուսանողների և գործատուների տվյալների թարմացման և համալրման աշխատանքները: Կայքի շնորհիվ Ագրարային համալսարանի շրջանավարտները հնարավորություն են ստացել տեղեկանալ առկա թափուր աշխատատեղերի մասին և անմիջական կապ հաստատել գործատուների հետ: Այսօր նրանցից շատերը հենց այս ճանապարհով են գտել իրենց բարձր վարձատրվող աշխատանքը:
- Կապի մյուս միջոցներին զուգահեռ ՀԱԱՀ-ում գործող օնլայն հարց ու պատասխանի «Skype» ծրագրի միջոցով ՏՏ և ԻՕ կենտրոնի աշխատակիցներն ամբողջ ուսումնական տարվա ընթացքում բուհի բազմաթիվ ուսանողների, դիմորդների և շահագրգիռ անձանց մշտապես տեղեկատվություն են տրամադրել համալսարանի գործունեության, ընդունելության կարգի, առկա ծրագրերի և այլ հարցերի վերաբերյալ:
- 2017թ. Վանաձորի, Սիսիանի և ԼՂՀ Շուշիի մասնաճյուղերի համար բաժինը կազմակերպել և իրականացրել է 320 ժամ հեռավար ուսուցման դասընթաց:
- Հաշվետու տարում ՏՏ և ԻՕ կենտրոնի կողմից համալսարանում ստեղծվել է ժամանակակից համակարգչային տեխնիկայով հագեցած 4 մուլտիմեդիոն լսարան:
- Այս տարի ամբողջությամբ ավարտվեց համալսարանի հինգ մասնաշենքերի հեռախոսակայանների թվայնացման աշխատանքները, նախագծվել և մոնտաժվել են բոլոր հեռա-

խոսագծերը: Այսօր արդեն համալսարանում գործում է ամբողջապես նորացված հեռախոսագծերի ցանց:

- Ինչպես նախորդ տարիներին, 2017 թվականին ևս ՏՏ և ԻՕ կենտրոնի իրականացրած կազմակերպչական աշխատանքների շնորհիվ Ագրարային համալսարանը պատշաճ մակարդակով ներկայացել է «Արմպրոդէքսպո-2017» և «Կրթություն և կարիերա EXPO-2017» ամենամյա մասնագիտացված ցուցահանդեսներին: Ցուցադրվել են գիտական կենտրոնների վերջին ձեռքբերումները, «Զովետ կաթ» կաթնամթերքի տեսականին, պաստառներ, տեսաֆիլմ, որոնցում պատշաճ կերպով ներկայացվել են համալսարանի ֆակուլտետները, քոլեջը, միջազգային կրթական ծրագրերը, ուսումնաարտադրական պրակտիկաները, մասնաճյուղերը, պրոբլեմային լաբորատորիաները, գիտություն-արտադրություն սերտ կապը՝ նպաստելով դիմորդների մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը: «Արմպրոդէքսպո-2017» ցուցահանդեսում ունեցած ակտիվ մասնակցության համար Հայաստանի ազգային ագրարային համալսարանն արժանացել է ոսկե մեդալի, իսկ «Կրթություն և կարիերա EXPO-2017» ցուցահանդեսում Ագրարայինի տաղավարը լավագույնը որակվեց կազմակերպիչների կողմից:
- ՀՀ Կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի և ՀՀ Վարչապետի 2016 թվականի հոկտեմբերի 26-ի հանձնարարականների հիման վրա 2017 թվականին կենտրոնն ակտիվորեն մասնակցել է գյուղատնտեսության զարգացման ծրագրերի մշակմանը և համապատասխան աշխատանքներին: Կենտրոնի կողմից կատարվել են աշխատանքներ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի զարգացման եռամյա ծրագրի կազմման վերաբերյալ, ինչպես նաև հետագայում դրանց առանձին դրույթների կատարման և վերահսկման ուղղությամբ:
- ՏՏ և ԻՕ կենտրոնի կազմում գործող բաժիններն իրականացրել են տարաբնույթ այլ աշխատանքներ՝ ուղղված գրադարանային գործի կազմակերպմանը, աշխատանքի տեղավորման կենտրոնի զարգացմանը, և մյուս բաժինների աշխատանքներին, որոնք առավել հանգամանորեն ներկայացված են ստորև՝ ըստ համապատասխան ենթաբաժինների:

5.1.ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

2017 թվականին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական գրադարանը կազմակերպել է մի շարք միջոցառումներ:

Ինչպես միշտ, այս հաշվետու տարում ևս փետրվարի 19-ը նշվեց որպես գիրք նվիրելու օր: Գրադարանն այդ օրը համալրվեց դասախոսական կազմի, ուսանողների և աշխատակիցների նվիրած գրականությամբ: Ներկաները կարող էին ոչ միայն նվիրել, այլ նաև իրենց նախընտրությամբ նվեր ստանալ ցուցադրված մասնագիտական և գեղարվեստական գրքերից:

Ապրիլի 18-21-ը «Ազգային գրադարանային շաբաթվա» շրջանակներում գիտական գրադարանը 1-ին և 2-րդ մասնաշենքերի ընթերցասրահներում կազմակերպեց վերջին 5 տարիների ընթացքում գրադարանի ֆոնդը համալրած մասնագիտական գրականության ցուցադրություն:

2017թ. սեպտեմբերի 19-20-ը Ծաղկաձորում տեղի ունեցավ «Նորարար գրադարաններ» աշխատաժողովը, որը կազմակերպվել էր Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հովանավորությամբ: Աշխատաժողովը նպատակ ուներ մասնակիցներին ներկայացնելու նոր տեխնոլոգիաների ներդրումն ու օգտագործումը գրադարաններում և գրադարանների կողմից առաջարկվող նոր ծառայությունները: Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեցին զեկուցումներ, տեղի ունեցան քննարկումներ, կարծիքների և տեսակետների ազատ փոխանակում: Աշխատաժողովին մասնակցում էր ՀԱԱՀ գրադարանի համալրման և մշակման բաժնի վարիչ Լիլիթ Վարդանյանը: Նա ներկայացրեց ՀԱԱՀ գրադարանի ինտերնետային կայքը և koha գրադարանային ծրագրի ներդրումը համալսարանի գրադարանում:

Հաշվետու տարում գրադարանի ցուցափեղկերը ձևավորվեցին նոր, արդիական և հետաքրքիր նյութերով:

ՀԱԱՀ գիտական գրադարանի ֆոնդն առ 01.01.2018 թ. կազմում է 563.516 միավոր գրականություն:

Ըստ հրատարակության տեսակի՝

Ըստ գրականության տեսակի	Միավոր գրականություն
Ուսումնական	203752
Գիտական	310382
Գեղարվեստական	49382
Ըստ լեզուների	**Միավոր գրականություն**
Հայերեն	192463
Ռուսերեն	354664
Անգլերեն	13163
Ֆրանսերեն	1426
Գերմաներեն	1800

2017թ. ստացված գրականության քանակը՝ ըստ համալրման աղբյուրների.

Համալրման աղբյուրը	Անուն	Միավոր
Համալսարանում հրատարակված	66	3509
Որից մեթոդական ցուցումներ	50	1001
Պայմանագրային ձևով	3	110
Գրախանութներից և տարբեր կազմակերպություններից գնված	36	741
Նվիրատվության կարգով	163	500
Ընթերցողների կողմից կորցրած գրականության փոխարեն ձեռք բերված	18	185
Բաժանորդագրությամբ, ինչպես նաև տարբեր կազմակերպությունների և անձանց կողմից նվիրատվությամբ ստացված ամսագրեր	1	446
ՀԱԱՀ-ի մասնագիտական խորհուրդների կողմից պաշտպանության ներկայացված ատենախոսություններ	24	24
ՄԱԿ-ի գյուղատնտեսության և պարենի կազմակերպության (ՖԱՕ) կողմից ստացված գրականություն	19	23
Վերականգնված գրականություն	0	12
Գրքափոխանակության միջոցով ստացված գրականություն	1	8

2017թ. ստացվել է **5.558 միավոր (331 անուն)** գրականություն.

Այդ թվում		Որից		Ըստ լեզուների	
Գիրք, բրոշյուր	**5088**	Ուսումնական	**4697**	հայերեն	**4677**
Ամսագիր	**446**	Գիտական	**810**	ռուսերեն	**609**
Ատենախոսություն	**24**	Գեղարվեստական	**51**	այլ	**272**

Գրադարանն ունի **3.755** ընթերցող, որից.

Ֆակուլտետ	Առկա ուսուցում	Հեռակա ուսուցում
Ագրոնոմիական ֆակուլտետ	162	173
Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետ	235	146
Գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետ	79	148
Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետ	76	96
Տնտեսագիտական ֆակուլտետ	374	497
Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետ	190	149
Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ	270	278
Ասպիրանտուրա	10	7
Քոլեջ	62	
Մագիստրատուրա	59	8
Համալսարանի աշխատակից	736	-

Հաշվետու տարում ՀԱԱՀ գրադարանը մասնաճյուղերին տրամադրել է **85** միավոր գրականություն:

Արցախի մասնաճյուղ	21	միավոր գիրք
Սիսիանի մասնաճյուղ	26	միավոր գիրք
Վանաձորի մասնաճյուղ	38	միավոր գիրք

Koha գրադարանային ծրագրով գրանցված ընթերցողների թիվը **2302** է, որից **Koha** ծրագրով սպասարկվել է **24.425** միավոր գրականություն, որից

Ուսուցման ձև	**Միավոր գրականություն**
Ուսանող (առկա ուսուցում)	**12255**
Ուսանող (հեռակա ուսուցում)	**9333**
Համալսարանի աշխատակից	**2295**
Մագիստրանտ (առկա ուսուցում)	**424**
Մագիստրանտ (հեռակա ուսուցում)	**45**
Ասպիրանտ	**73**

Ընթերցողների հաճախումը սպասարկման բոլոր կետերում կազմում է **117.924**, այդ թվում.

Բաժին	**Հաճախում**
Աբոնեմենտ	88188
Ընթերցասրահներ	23235
Էլեկտրոնային ընթերցասրահներ	6194
Սպասարկման այլ կետեր	307

Հաշվետու տարում սպասարկված գրականության քանակը կազմում է **38.827** միավոր գրականություն, որից.

Բաժին	**Միավոր գրականություն**
Աբոնեմենտ	12658
Ընթերցասրահներ	24258
Սպասարկման այլ կետեր	1911

Ըստ հրատարակության տեսակի սպասարկվել է.

Ըստ հրատարակության տեսակի	**Միավոր գրականություն**
Ուսումնական	29310
Գիտական	5388
Գեղարվեստական գրականություն	838
Ատենախոսություն	196
Ամսագիր	3095

Ըստ լեզուների	**Միավոր գրականություն**
Հայերեն	34509
Ռուսերեն	3634
Օտար	684

2017թ. ընթերցասրահներում գրքերից և ամսագրերից պատճենահանվել է **1202 էջ**:

Ակտավորվեցին գրադարանի ֆոնդում առկա, գիտական արժեքը կորցրած ռեֆերատիվ ամսագրերը:

Գրապահոցներում կատարվել է ֆոնդի տեղաշարժ, ստուգվել է ֆոնդի դասավորվածությունը:

Համալրման և մշակման բաժնում կատարվել են գրացուցակների ստուգման, խմբագրման աշխատանքներ:

ՀԱԱՀ գիտաշխատողների՝ տպագրման պատրաստվող հոդվածների համար գրադարանում նշանակվում է գիտության համապատասխան դասիչ: Հաշվետու տարում նշանակվել է 230 հոդվածի դասիչ:

2017 թ. էլեկտրոնային գրացուցակի ստեղծման նպատակով մուտքագրվել է 3.607 անուն, 14969 միավոր գրականություն:

2007 - 2017 թթ. Մուտքագրվել է 81.974 անուն, 428.600 միավոր գրականություն:

10 տարվա ընթացքում մուտքագրվել է ֆոնդի 76 %-ը:

Գրադարանի կայքում ներկայացված են համալսարանի գրադարանում առկա էլեկտրոնային գրքերը: Գրադարանում առկա, բայց քիչ օրինակ գրքերը, որոնք մեծ պահանջարկ ունեն ընթերցողների շրջանում, թվայնացվում են և տեղադրվում գրադարանի ինտերնետային կայքում:

Գրադարանի կայքում առ 01.01.2018թ. կա 1030 գրքի էլեկտրոնային տարբերակ:

Հաշվետու ժամանակաշրջանում սկսվեցին ՀԱԱՀ–ի գիտաշխատողների հոդվածների թվայնացման և դրանք գրադարանի էլեկտրոնային գրացուցակում ներառելու աշխատանքները: Այս աշխատանքների շնորհիվ համալսարանի գիտաշխատողների հոդվածները հասանելի են հասարակության ավելի լայն շրջանակների: Արդեն 531 գիտական հոդվածի նկարագրություն և էլեկտրոնային տարբերակ առկա են գրադարանի էլեկտրոնային գրացուցակում: Այս աշխատանքները կրելու են շարունակական բնույթ:

5.2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

ՏՏ և ԻԾ կենտրոնի տեղեկատվական համակարգերի կառավարման բաժնի գործունեությունը միտված է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում ՏՏ համակարգերի զարգացմանը:

2017 թվականի ընթացքում բաժնի կողմից պատրաստվել, խմբագրվել և պաշտոնական կայքէջի համապատասխան բաժիններում է տեղադրվել թվով 138 նորություն, 77 հայտարարություն և 60 ագրոլուր:

Հաշվետու տարում բաժնի կողմից շարունակվել է համալսարանում տեղի ունեցող բոլոր միջոցառումների լուսանկարումն ու տեսանկարահանումը: Տեսանյութերը մոնտաժվել և տեղադրվել են «youtube» հարթակի ՀԱԱՀ ալիքում, իսկ լուսանկարները՝ մշակվել և տեղակայվել համալսարանի www.flickr.com հարթակում:

Բաժնի կողմից պատրաստվել են նաև 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության վերաբերյալ գովազդային տեսահոլովակներ, բուկլետներ, դիմորդների մասնագիտական կողմնորոշման թերթիկներ և այլ տեղեկատվական նյութեր, որոնք բաժանվել են համապատասխան շահառուներին և տեղադրվել են համալսարանի պաշտոնական կայքէջում, հեռարձակվել զանգվածային լրատվամիջոցներով:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են համալսարանի կայքէջերում առկա տեղեկատվության թարմացման մշտական աշխատանքները: Օգտատերերի կողմից առավել հաճախ փնտրվող տեղեկատվությունը կամ կայքի համապատասխան բաժինները տեղափոխվել են կայքի գլխավոր էջի առավել տեսանելի հատված՝ համապատասխան տեղեկատվությունն ավելի հեշտ ու արագ գտնելու նպատակով:

Հաշվետու ժամանակաշրջանում նախագծվել է բուհի նոր կայքի կառուցվածքը և դիզայնը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են 2017 թվականի ընթացքում համալսարանի կայքէջերի այցելուների քանակը, էջերի դիտումների քանակն ըստ երկրների, տարիքի և այլն:

Կայք	Այցելուների քանակը	էջերի դիտումների քանակը
https://www.anau.am/	273 379	685 753
http://library.anau.am/	386 481	1 254 489
http://career.anau.am/	51 127	157 543
http://persons.anau.am/	8 705	66 490
Ընդհանուր	**616 385**	**2 112 275**

Հաշվետու տարում բուհի պաշտոնական կայքէջի (https://www.anau.am) նոր այցելուների քանակը կազմել է 42.6%:

Գրաֆիկներում պատկերված են 2017թ. ընթացքում բուհի պաշտոնական կայքէջի

հաճախումները՝ ըստ երկրների ու տարիքային խմբերի համապատասխան տոկոսներով:



Այցելություններ ըստ երկրների

Հ/Հ	Երկիրը		Այցելությունների քանակը
1		Հայաստան	253165
2		Ռուսաստան	9735
3		ԱՄՆ	2113
4		Գերմանիա	845
5		Ուկրաինա	622
6		Վրաստան	599
7		Իրան	521
8		Չինաստան	485
9		Հնդկաստան	369
10		(այլ երկրներ)	4925

Համալսարանի կայքի այցելուների քանակին վերաբերող տվյալները վերցվել են վեբ կայքերի վերլուծությամբ զբաղվող **Google Analytics** համակարգից:

Կայքերի վիճակագրությունն ու վերլուծությունը կարևոր գործընթաց է, որը հնարավորություն է տալիս ստանալ հավաստի և ստույգ տեղեկատվություն: Բաժնի կողմից հավաքվում և վերլուծվում է համալսարանում գործող բոլոր կայքերի այցելությունների մասին տեղեկատվությունը, որն արտապատկերվում է թվերով ու գրաֆիկներով: Կայքերի ռեյտինգային համակարգը հնարավորություն է տալիս հետևելու գրանցված կայքերի օրական, շաբաթական կամ ամսական այցելություններին, էջադիտումների քանակին, ինչպես նաև պարզելու այցելուների ինտերնետ դիտարկիչների տարբերակները, օպերացիոն համակարգերը և այլ տվյալներ:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում կառավարման ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության խթանման հարթակում www.etag.emis.am տեղեկատվության կառավարման, հասանելիության և թափանցիկության ապահովման համար

կենտրոնի կողմից իրականացվել են անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և մուտքագրում:

Հաշվետու տարվա ընթացքում բաժինը կազմակերպել և իրականացրել է 320 ժամ հեռավար ուսուցման դասընթաց մասնաճյուղերում:

Հաշվետու ժամանակաշրջանում բաժինը կազմակերպել և իրականացրել է նաև թվով 17 տեսակոնֆերանսներ (վեբինարներ), որոնք ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Ժամանակահատված	Բուհ
հունվարի 31-ից մինչև փետրվարի 3-ը 2017թ.	«Ղազախստանի ազգային ագրարային համալսարան»
28 փետրվարի 2017թ.	«Կ.Ա. Տիմիրյազևի անվան Ռուսաստանի պետական ագրարային համալսարան»
մարտի 14-ից մինչև 17-ը 2017թ.	«Կ.Ա. Տիմիրյազևի անվան Ռուսաստանի պետական ագրարային համալսարան»
13 ապրիլի 2017թ.	«Կ.Ա. Տիմիրյազևի անվան Ռուսաստանի պետական ագրարային համալսարան»

2017 թվականին բաժինն իր աջակցությունն է ունեցել ՀԱԱՀ դասախոսական անձնակազմի վերապատրաստման արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներում: Կատարվել է ինտերակտիվ գրատախտակների ուսուցողական ծրագրի դասընթացների կազմակերպում և վերապատրաստում, որը հնարավորություն է տալիս տիրապետել էլեկտրոնային հատուկ կրթական ծրագրին՝ ուսանողների համար դասեր պատրաստելու, հարցումներ կատարելու, վարժություններ ու թեստեր կազմելու ուղղությամբ: Դասընթացներն ունեն փուլային շարունակական բնույթ և կշարունակվեն մինչև տարեվերջ:

Պաշտոնական կայքի գլխավոր էջից գործող օնլայն հարց ու պատասխանի համար նախատեսված «Skype» ծրագրի միջոցով բաժնի աշխատակիցները մշտապես պատասխանել են արտաքին շահառուների՝ բուհին առնչվող տարատեսակ հարցերի:

Բաժինն իրականացրել է նաև պետական ավարտական քննությունների, դիպլոմային աշխատանքների, ատենախոսությունների պաշտպանությունների ձայնագրման և դրանց ժամանակավոր արխիվացման գործընթացը:

5.3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔԻ ԲԱԺԻՆ

ՀԱԱՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի գիտելիքի բաժնի առաքելությունն է իրականացնել համալսարանի էլեկտրոնային ուսուցման ներդրման կազմակերպումը, ուսումնական և գիտական անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, մշակումն և տարածումը, ինչպես նաև ուսումնասիրել և բուհում ներդնել նոր ծրագրեր, սպասարկել կայքերն ու սերվերները, հաղորդակցության ներքին և արտաքին ցանցերը, աջակցել գրադարանային գործի ավտոմատացման աշխատանքներին:

Գիտելիքի բաժինը, որպես ՏՏ և ԻՕ կենտրոնի ստորաբաժանում, ինտենսիվորեն ներգրավված է ՀԱԱՀ-ի և Կենտրոնի կողմից իրականացվող, բաժնի գործառույթներին համապատասխան բոլոր աշխատանքներում:

2017 թվականին ՀԱԱՀ-ի էլեկտրոնային ուսուցման բնագավառում (http://elearning.anau.am/) շարունակվել են վերապատրաստման դասընթացները, վերապատրաստվել է 20 դասախոս, այնուհետև ներդրվել են ծրագրային ապահովման, անվտանգության, ինֆորմացիայի պահպանման և կրկնօրինակման թարմացումներ: էլեկտրոնային ուսուցման հարթակի թարմացումից և նոր մոդուլային գործիքների ավելացումից հետո մեզ հասանելի են դարձել կայքէջի հաճախելիության, գրանցվողների և ակտիվ օգտվողների քանակի վերաբերյալ տվյալներ:

Գրանցվածների քանակ	583
Ակտիվ օգտվողներ	772
Հաճախելիություն	1215

Տարվա ընթացքում անընդհատ թարմացվել է համալսարանի պաշտոնական www.anau.am կայքէջի տեղեկատվական բլոկը՝ առկա բոլոր հղումներով և երեք լեզուներով:

ՏՏ և ԻՕ կենտրոնի ծրագրավորողների կողմից ավարտվել են ՀԱԱՀ-ում փորձարկման փուլում գտնվող ebuh.am համակարգի ծրագրավորման աշխատանքները, և համակարգը կարգավորումների համալիր փաթեթով ներդրվել է սերվեր:

Շարունակվում են համակարգում բուհի ուսումնական գործընթացի կառավարման համակարգի ավտոմատացման մոդուլների փորձարկումները, օգտագործման ընթացքում հայտնաբերված թերությունների շտկումը և համապատասխան բաժիններում տեղեկատվության համալրման գործընթացները: ebuh.am համակարգը մասնագիտական կրթության ոլորտում կձևավորի կառավարման նոր մշակույթ, որը հնարավորություն կտա բուհի վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնական անձնակազմին, ուսանողներին, իրենց իրավասությունների շրջանակներում, ավտոմատացված եղանակով իրականացնել հաստատության գործունեության կառավարման և կազմակերպման աշխատանքները:



ebuh.am համակարգի համար մշակվել են անվտանգության ապահովման միջոցներ, մասնավորապես անցանկալի միջամտություններ և մուտքագրված տեղեկատվության ավտոմատացված ձևով արվիվացում:

Կատարվել է փորձնական ներդրում Տնտեսագիտական ֆակուլտետի բոլոր մասնագիտությունների համար, իսկ 2016-2017 ուստարվա համար ներդրման աշխատանքներին ավելացել են ևս 3 ֆակուլտետներ:

Կատարվել են ebuh.am համակարգի հետ առնչվող ամբիոններում պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ, մասնավորապես՝ ամբիոնների ծանրաբեռնվածության մուտքագրում, դասահաճախումների մուտքագրում և ընթացքի հետևում, գնահատականների մուտքագրում և հաստատում: Կատարվել են մշակված համակարգի թերությունների հայտնաբերման ծավալուն աշխատանքներ և այժմ կատարվում է դրանց շտկման և կրկնակի թեստավորման աշխատանքներ:

«Office 365» ծրագրային ապահովման փաթեթի ներդրումից հետո ՀԱԱՀ բոլոր ֆակուլտետների դասախոսներն արդեն գրանցված են համակարգում: «Office 365» ծրագրային ապահովման փաթեթում առկա գործիքներով ավելի հեշտ և արդյունավետ են դառնում էլեկտրոնային հարթակում կատարվող աշխատանքները:

Փաթեթում առկա գործիքները՝

օգտվել 100GB հիշողությամբ էլեկտրոնային փոստից

օնլայն օգտվել WORD, EXCEL, POWER POINT ծրագրերից, այլ ուսանողների և դասախոսների հետ համատեղ աշխատել նույն փաստաթղթերի և առաջադրանքների վրա

1 TB տեղեկատվություն պահպանել One Drive ամպային տիրույթում

պատրաստել շնորհանդեսային կայքեր

իրականացնել ֆորումային քննարկումներ

օնլայն շփվել ուսանողների և դասախոսների հետ

պլանավորում կատարել սեփական օրացույցի վրա

պատասխանել դասախոսի պատրաստած հարցումներին, գնահատվել և մի շարք այլ գործընթացներ:

Գիտելիքի բաժինը հաշվետու տարում իրականացրել է հետևյալ կայքերի սերվերների սպասարկումը, անվտանգության ապահովումը և կրկնօրինակների պահպանումը.

- Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պաշտոնական կայքէջ՝ anau.am
- Ընթերցողների էլեկտրոնային սպասարկման և գրադարանային գործի ավտոմատացման համակարգ՝ koha.anau.am
- Գիտական գրադարանի կայքէջ՝ library.anau.am
- Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի կայքէջ՝ career.anau.am
- Ագրոպարենային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնի կայքէջ՝ ticas.anau.am
- ՀԱԱՀ-ի դասախոսների, շրջանավարտների, երախտավորների շտեմարան-կայքէջ՝ persons.anau.am
- ՀԱԱՀ-ի հեռախոսագիրք՝ phone.anau.am.
- էլեկտրոնային ուսուցման հարթակ՝ elearning.anau.am
- ՀԱԱՀ հաշվապահության բաժնի սերվերներ:

Գիտելիքի բաժինն ապահովում է ՀԱԱՀ-ում անվտանգության նպատակով տեղադրված տեսախցիկների սերվերի սպասարկումը:

Գիտելիքի բաժինը ընթացիկ տարում կատարել է հեռախոսագծերի սերվերների կարգավորման և ընթացիկ վերահսկման աշխատանքները:

Ընթացիկ տարում բաժնի աշխատակիցների կողմից թարմացվել է ՀԱԱՀ հեռախոսահամարների տեղեկատուն: Վերանայվել են բոլոր ստորաբաժանումների, գիտական կենտրոնների, ուսումնափորձնական տնտեսությունների, աշխատակիցների ներքին, քաղաքային և անձնական հեռախոսահամարները, որի հիման վրա տպագրվել է բուհի «Հեռախոսահամարների տեղեկատու»՝ 500 օրինակ տպաքանակով: Թարմացվել է նաև տեղեկատուի էլեկտրոնային տարբերակը՝ phone.anau.am կայքը:

Հաշվետու ժամանակահատվածում Գիտելիքի բաժինը մասնակցել է «Արմպրոդէքսպո-2017» և «Կրթություն և կարիերա EXPO-2017» ամենամյա մասնագիտացված ցուցահանդեսներին՝ պատշաճ ներկայացնելով համալսարանը:

5.4. ՏՏ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ

ՏՏ համակարգերի սպասարկման բաժինը իրականացնում է համալսարանի համակարգչային սարքավորումների տեխնիկական սպասարկումը: Բացի համակարգչային սարքավորումներից, բաժինը կատարում է համալսարանի հեռախոսային, տեսախցիկների ցանցերի տեխնիկական սպասարկման աշխատանքները:

Հաշվետու 2017թ. ժամանակաշրջանում ՏՏ համակարգերի սպասարկման բաժնի կողմից ամբիոններում տեղադրված համակարգիչները պարբերաբար անցել են պրոֆիլակտիկ ստուգումներ և անհրաժեշտության դեպքում կատարվել են համապա-տասխան սպասարկման աշխատանքներ:

1-ին մասնաշենքի $1^{ա1}$, $1^{ա2}$, $437^{ա}$, 114 լսարաններում, 2-րդ մասնաշենքի 405, 425 լսարաններում և ընթերցասրահներում համակարգիչների վրա տեղադրվել են բոլոր անհրաժեշտ ծրագրային փաթեթները. «Հայկական ծրագրեր», Win 10, և մի շարք այլ մասնագիտական ծրագրեր: Նույն ծրագրային ապահովումը տեղադրվել է նաև գրադարանի ընթերցասրահների համակարգիչների վրա:

Ագրոբիզնեսի և շուկայաբանության և Ագրոնոմիական ֆակուլտետների, Բարձրագույն մաթեմատիկայի և տեսական մեխանիկայի, Գրաֆիկայի և մեքենաների նախագծման հիմունքների, Հայոց և ռուսաց լեզուների ամբիոնների համար պատրաստվել է լսարան՝ համալրված պրոյեկտորով և համակարգչով:

Բոլոր ինտերակտիվ գրատախտակների ծրագրերը թարմացվել են և կատարվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ:

Լիցքավորվել և վերանորոգվել է 187 տպիչի քաթրիջ: Համալսարանի հին համակարգիչները հզորացվել են (մոտ 25 համակարգիչ, ավելացվել են հիշողության սալիկներ), որպեսզի հնարավոր լինի դրանց հետագա շահագործումը:

Ձեռք է բերվել անխափան սնուցման սարքերի համար մարտկոցներ, և այն բաժիններում, որտեղ չէին աշխատում այդ սարքերը, դրանք վերականգնվել են: Տեմպուս սենյակում (3-րդ մասնաշենք) առկա բոլոր համակարգիչները վերանորոգվել են և հանձնվել են շահագործման:

Կատարվել են համալսարանի հեռախոսագրքի և «Օգնություն ֆերմերին» գրքի տեքստի հավաքագրումն ու սրբագրումը:

5.5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԱՏԽ բաժնի հիմնական նպատակն այնպիսի մեխանիզմների մշակումն ու կիրառումն է, որոնք ՀԱԱՀ շրջանավարտներին թույլ կտան առավել արդյունավետ կերպով բացահայտել աշխատատեղեր գտնելու հնարավորությունները և աշխատանք գտնել Հայաստանում գործող ագրոպարենային ոլորտի վերամշակող արդյունաբերական ձեռնարկություններում: Այն կապող օղակ է ՀԱԱՀ-ի և հայկական մասնավոր ձեռնարկությունների, Գյուղատնտեսության նախարարության, ագրոբիզնեսի և հարակից ճյուղերի գործատուների ու գյուղացիական ասոցիացիաների միջև:

2017թ. ԱՏԽ բաժինը հաջողությամբ շարունակեց իր գործունեությունը հետևյալ հիմնական ուղղություններով՝

- գյուղատնտեսության և հարակից ոլորտներում աշխատատեղերի հնարավորությունների բացահայտում և դասակարգում,
- խորհրդատվություն կենսագրական փաստաթղթերի և հարցազրույցների տեխնիկայի վերաբերյալ, ծանոթացում ձեռնարկությունների գործունեությանը,
- գործատուների և շրջանավարտների միջև կապերի ստեղծում և հարցազրույցների համակարգում:

Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժինը տարբեր ուղիներով ապահովում է բազմազան և գործնական տեղեկատվություն. այն Եվրոպայում և ԱՄՆ-ում կրթությունը շարունակելու հնարավորությունների մասին տեղեկատվություն տրամադրող տեղական և միջազգային կրթական հաստատությունների ցանցի անդամ է: ԱՏԽԲ-ն հրատարակում է էլեկտրոնային տեղեկագիր, որի միջոցով հաշվետու տարում շահառուներին տեղեկատվություն է տրամադրել ավելի քան 575 թափուր աշխատատեղի, կրթությունը շարունակելու,

մասնագիտական վերապատրաստման և մասնագիտական համաժողովներին մասնակցության հնարավորությունների վերաբերյալ:

2017թ. ընթացքում ԱՏԽ բաժնի կողմից համակարգվել են ՀԱԱՀ շրջանավարտների հարցազրույցներն աշխատանքի տեղավորման նպատակով ՀԱԱՀ գործընկեր «Ագրիմատկո Արմենիա» ՍՊ, «Գրին Ֆարմեր» ՍԸ, «Գրանդ Քենդի ՀՁ» ՍՊ, «Ագրոմաստեր» ՍՊ, «Պողոսյան պարտեզներ» ՍՊ, «Ինեկոբանկ» ՓԲ, «Մավաս» ՍՊ, «էս ընդ էֆ կո» ՍՊ, «Աթենք» ՍՊ, «AIST Գլոբալ», «էֆ ընդ էմ Սոլուսնզ» ՍՊ ընկերությունների հետ:

2017թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում նաև իրականացվել է ՀԱԱՀ ՏՏ և ԻՕ կենտրոնի Տեղեկատվական համակարգերի կառավարման բաժնի վարիչի և ծրագրավորողի թափուր հաստիքների մրցույթին մասնակցող համապատասխան թեկնածուների ընտրության աշխատանքները:

Կրթական ցուցահանդեսները կարևորվում են որպես ուսանողական կազմի համալրման գործիքներ: Մասնակցությունը ցուցահանդեսին հնարավորություն է տալիս հասարակության լայն հատվածին, հատկապես բարձր դասարանցիներին և նրանց ծնողներին ներկայացնել բուհի ձեռքբերումները, տալ մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ տեղեկատվություն: 2017թ. ԱՏԽԲ-ն մասնակցել է Կրթություն և կարիերա EXPO-2017 (2017 թ. ապրիլ) և Արմպրոդէքսպո-2017 (2017թ. հոկտեմբեր) ցուցահանդեսներին՝ ներկայանալով ՀԱԱՀ-ի և Ագրոբիզնեսի դեպարտամենտի հետ միասին:

Դպրոց-բուհ համագործակցության շրջանակներում ԱՏԽ բաժնի աշխատակազմը մշտապես մասնակցում է Երևանի և տարբեր մարզերի բարձր դասարանցիների հետ հանդիպումներին, ներկայացնում ՀԱԱՀ մասնագիտությունները, հեռանկարները, ագրոպարենային և հարակից ոլորտներում կարիերայի հնարավորությունները: 2017թ. ընթացքում Երևանի և ՀՀ մարզերի ավագ դպրոցներից ավելի քան 280 ավագ դպրոցական մասնակցել է նմանատիպ 12 հանդիպման:

Աշխատուժի նկատմամբ կարիքների բացահայտումը չափազանց կարևոր է ԱՏԽԲ գործառույթները լավագույնս իրականացնելու համար: ԱՏԽ բաժնում պարբերաբար թարմացվում է գործատուների բազան՝ ըստ ոլորտների. 2017թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին արվել են կոնտակտային տվյալների բազայի հերթական թարմացումները:

ԱՏԽ բաժինը 2017թ. ընթացքում շարունակել է համակարգել ՀԱԱՀ շրջանավարտների մասին տեղեկատվության մուտքագրման աշխատանքները ԵՄ HEN-GEAR ՏԵՄՊՈՒՍ «Հայաստանում մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտների աշխատունակությանն ուղղված բարձրագույն կրթության ցանց» ծրագրի շրջանակներում ներդրված էլեկտրոնային բազայում, որտեղ 2017թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ գրանցվել է ՀԱԱՀ ավելի քան 3200 շրջանավարտ:

2017թ. մայիս – հունիս ամիսների ընթացքում իրականացվել է ՀԱԱՀ 2014, 2015, 2016 թթ. բոլոր մասնագիտությունների գրանցված շրջանավարտների հարցախույզ՝ պարզելու նրանց զբաղվածության մակարդակը բուհն ավարտելուց հետո: Հարցախույզի պատահական ընտրանքի մեջ ընդգրկված 509 շրջանավարտների շրջանում կատարվել է հեռախոսային հարցում, որի ընթացքում տրվել են հարցեր՝ պարզելու, թե արդյոք համալսարանը ավարտելուց հետո շրջանավարտները շարունակել են ուսումը, աշխատանք ունեն, թե ոչ, եթե աշխատում են, ապա աշխատանքը մասնագիտական է, թե ոչ, նորավարտները ինչ աշխատավարձ են ստանում և ինչպես է այն փոխվում՝ աշխատանքը կամ պաշտոնը փոխելիս, արդյոք կրթական ծրագրերի շրջանակներում ստացած գիտելիքները բավարարում են աշխատաշուկայի ներկայիս պահանջներին, ինչ փոփոխություններ կառաջարկեին կրթական ծրագրերում:

Հարցախույզի ուսումնասիրության արդյունքները ԱՏԽ բաժնի վարիչ Լ Մնացականյանը ներկայացրեց 2017 թ. դեկտեմբերին ՀԱԱՀ Գիտական խորհրդի նիստում, ինչը մեծ հետաքրքրություն առաջացրեց ունկնդիրների շրջանում:

ԱՏԽԲ-ի համար կարևորվում է միջազգային և տեղական տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությունը: Կազմակերպվել են հանդիպումներ Ինեկոբանկ ՓԲԸ, Ռոսգոսստրախ-Արմենիա ապահովագրական ՓԲԸ, Ինգո Արմենիա ապահովագրական ՓԲԸ, HSBC Բանկ Հայաստան, Ջի էն Սի Ալֆա Ռոստելեկոմ ընկերությունների ներկայացուցիչների հետ, ովքեր ուսանողներին ներկայացրեցին իրենց ընկերություններում առկա թափուր աշխատատեղերը, մասնագիտական աճի հնարավորությունները և կարիերայի զարգացման հեռանկարները: Ռոսգոսստրախ-Արմենիա ապահովագրական ՓԲԸ-ի կողմից հայտարարված մրցույթին մասնակցեցին տասնյակ ուսանողներ, որոնցից Արթուր Անտոնյանը գրավեց

պատվավոր երկրորդ տեղը և 2017թ. մայիսին ընկերության կողմից ստացավ աշխատանքի առաջարկ:

ԱՏԽԲ-ուսանող-գործատու եռակողմ շփման արդյունավետությունն ապահովելու համար ՀԱԱՀ տեղեկատվական համակարգերի կառավարման բաժնի հետ համատեղ ստեղծվել է Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի կայքը, որը գործում է 2015 թ-ից: Այս կայքի միջոցով, ուսանողներին ու շրջանավարտներին տրամադրվում է խորհդատվություն և տեղեկատվություն թափուր աշխատատեղերի, վերապատրաստումների և պրակտիկաների, հարցազրույցներին նախապատրաստվելու, ինքնակենսագրական փաստաթղթերի կազմման վերաբերյալ, իսկ գործատուներին՝ աջակցություն համապատասխան աշխատակիցների ընտրության և աշխատանքի տեղավորման հարցերում: www.career.anau.am կայքի տվյալների բազայում կան շուրջ 1250 գրանցված ուսանողներ և շրջանավարտներ, որոնց թիվը պարբերաբար ավելանում է:

Global Media Lab-ի եւ skill.am պլատֆորմի կողմից 2017 թ. մարտի 15-ին մեկնարկեց «Համալսարանական շրջագայություն» նախագիծը: ԱՏԽ բաժնի նախաձեռնությամբ ուսանողական ֆորումների առաջին կանգառը ՀԱԱՀ-ում էր, իսկ միջոցառմանը ներկա էին ՀԱԱՀ-ի բոլոր մասնագիտությունների ավագ կուրսերի ավելի քան 85 ուսանողներ: Ծրագրի հիմնական նպատակն է օգտակար հմտություններ ապահովել ուսանողների համար, ինչը կնպաստի կարիերայի հաջող զարգացմանը:

ԱՏԽԲ կարևոր գործառույթներից է աշխատանքային տոնավաճառների կազմակերպումը, ինչը մասնագիտական կողմնորոշման հզոր գործիք է: Տոնավաճառի ընթացքում երիտասարդներին ներկայացվում են աշխատաշուկայի առկա պահանջները, թափուր աշխատատեղերը, աշխատանքային պրակտիկայի և նոր հմտություններ ձեռք բերելու հնարավորությունները:

2017թ. նոյեմբերին ԱՏԽ բաժինը մասնակցեց Հայաստանում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ Արմենիա Մարիոթ հյուրանոցում կազմակերպված Կարիերայի և ձեռնարկատիրության տոնավաճառին, ինչը Ձեռնարկատիրության համաշխարհային շաբաթվան նվիրված ամփոփիչ միջոցառումն էր: Տոնավաճառին մասնակցող ավելի քան 40 գործատուներն առաջարկում էին մոտ 180 թափուր աշխատատեղեր:

2017թ. ընթացքում ԱՏԽ բաժնի վարիչ Լ. Մնացականյանը մասնակցել է տարատեսակ ուսուցումների և վերապատրաստումների: Դրանցից ուշադրության է արժանի 2017թ. փետրվարին USAID Հայաստանի կողմից կազմակերպված «Բանակցությունների արվեստը» դասընթացը, որի ընթացքում մասնակիցները քննարկել են «Բանակցությունների հայեցակարգ», «Կոնֆլիկտների կարգավորման մեխանիզմները», «Բռնության եռանկյունի», «Բանակցային ոճեր և ռազմավարություններ» թեմաները:

5.6. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Նշված ժամանակահատվածում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պատմության թանգարանը զբաղվել է ընթացիկ աշխատանքներով:

Համալսարանի հիմնադրման 85-ամյակի առիթով տարբեր կազմակերպություններից թանգարանը ստացել էր բազմաթիվ նվերներ. գեղանկարչական աշխատանքներ, քանդակ, գործվածքի գեղարվեստական ձևավորումներ, բատիկ, հուշանվերներ, դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ, մեդալներ և այլն (21 աշխատանք, 38 ուղերձներ): Հայաստանի նկարիչների միությունից հրավիրել ենք մասնագետ, կազմակերպել այդ աշխատանքների ցուցադրությունը թանգարանում ներկայացված այլ գործերի հետ, և այսօր բոլոր աշխատանքները տեղ են գտել թանգարանի ցուցադրությունում:

Ուսումնասիրել ենք ՀԱԱՀ-ի առաջին մասնաշենքի ճարտարապետ Սամվել Սաֆարյանի և նույն շենքի առաջին հարկի դիմացի պատին ցուցադրված գիտնականների գլխաքանդակները վերականգնող-քանդակագործ Յուրի Մինասյանի կյանքն ու գործունեությունը, ստեղծել ենք նոր ցուցանմուշ-պաստառ, և այն ներգրավել թանգարանի ցուցադրությունում:

Կազմել ենք հանձնաժողով, կատարել ցուցանմուշների վերահաշվառում: Հաշվապահության հետ ուղղել ենք նախկինում գույքագրման մեջ տեղ գտած անճշտությունները: Ներկայումս թանգարանն ունի թվով 346 առարկա, որոնցից յուրաքանչյուրի մասին հավաքել ենք հնարավորինս լիարժեք տեղեկություն և կազմել թանգարանի մայր մատյանը, որտեղ

ամեն մի առարկա ստացել է իր գույքագրման համարը, որ փակցվել են տվյալ առարկաների վրա: Վերանայվել են բոլոր գիտական քարտերը, ուղղվել են եղած անճշտությունները:

Թանգարանին կից ստեղծել ենք «Արվեստասեր» խմբակ, որի անդամների հետ կազմակերպել ենք այցելություն Հայաստանի ազգային պատկերասրահ, նրանց ծանոթացրել պատկերասրահի ողջ ցուցադրությանը և հայ անվանի նկարիչների կյանքին ու գործունեությանը:

Անվանի ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծննդյան 200-ամյակի կապակցությամբ ՀԱԱՀ-ի փոքր դահլիճում համալսարանի ուսանողների ու դասախոսների համար կազմակերպել ենք դասախոսություն՝ նվիրված Այվազովսկու կյանքին և գործունեությանը (զեկուցող՝ Սյուզաննա Փիլոսյան):

«Արվեստասեր» խմբակի գործունեության արդյունքում ՀԱԱՀ-ի պատմության թանգարանում ս/թ դեկտեմբերի 13-ին կազմակերպել ենք համալսարանի Ֆինանսա-տնտեսագիտական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի, ինքնուս նկարչուհի Մարիա Հարությունյանի գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը, ներկա էին շուրջ 50 ուսանողներ, դասախոսներ, համալսարանի աշխատակիցներ և հյուրեր:

Տվյալ ժամանակաշրջանում թանգարան են այցելել խմբեր Վիրջինիայի, Հռոմի համալսարաններից, Լեհաստանից, Գերմանիայից, Միչուրինսկ-Նաուկագրադ քաղաքից, Բուլղարիայի Ռուսե քաղաքից, Անգլիայից, Լեհաստանից և այլն, ուսանողներ Ճարտարագիտական համալսարանից, ԲՄՎՏ ամբիոնից (դասախոս Մ.Վարդանյան (10 ուս.), Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետից (16 ուս), աշակերտներ Մեղրու (20 աշակերտ), Երևանի թիվ 194 (30 աշակերտ), թիվ 131 (26 աշակերտ) և մի շարք այլ դպրոցներից: Բացի այդ ունեցել ենք թվով 80 անհատական այցելուներ: Հաշվետու տարում այցելուների ընդհանուր թիվը կազմել է մոտ 435: Նրանց համար վարել ենք էքսկուրսիա, ներկայացրել թանգարանի հիմնական հավաքածուն, իսկ անհատական ցուցահանդեսին հանդես ենք եկել բացման խոսքով, ներկայացրել նկարչուհուն:

5.7. ՏՊԱՐԱՆ

2017թ. ՀԱԱՀ տպարանի տնտեսական տարում կատարողականը՝

Հ/հ	Աշխատանքի անվանումը	Հատ / անուն	էջերի քանակը	Տպագրակա ն մամուլ
1	Մեթոդական ցուցումներ դիպլոմային, կուրսային և լաբորատոր աշխատանքներ կատարելու համար	31,0	1190	119,0
2	Աշխատանքային տետրեր, պրակտիկայի օրագրեր և ծրագրեր	22,0	1328	289,5
3	Գիտական ժողովածուներ, տեղեկագրեր	4,0	694	113,2
4	Օգտագործված թղթի քանակը	5130,0 կգ		

2017թ. տնտեսական տարվա ընթացքում հրատարակված ուսումնական ձեռնարկների անվանացանկը՝

Հ/հ	Գրքի անվանումը	Հեղինակներ	Ծավալը	Տպաք.	Տպագ. մամուլ
1	«Բջջաբանություն»	Ռ.Մխիթարյան	108	200	13,5
2	«Անալիտիկ քիմիա. 2-րդ մաս»	Աղիկյան և ուրիշներ	80	200	5,0
3	«Կենդանիների աճն ու զարգացումը»	Գ.Գիլոյան	100	200	6,25
4	«Բուսասանիտարիայի հիմունքներ»	Ա.Տեր-Գրիգորյան և ուրիշներ	240	500	15,0
5	«Ֆիզիկայի խնդիրների ժողովածու»	Ա.Սողոմոնյան և ուրիշներ	94	150	5,9
6	«Ֆիզիկայի խնդիրների ժողովածու լուծումներով»	Ա.Սողոմոնյան և ուրիշներ	80	150	5,0
7	«Կենդանիների գենետիկա» 1-ին մաս, դասագիրք	Լ.Մելքոնյան	410	250	51,2
8	«Հատիկաբանություն բուսաբուծության հիմունքներով»	Ա.Մելիքյան և ուրիշներ	208	200	13,0
9	«Պահածոյացման տեխնոլոգիա» 2-րդ	Ժ.Աղաջանյան	294	200	18,3

	մաս				
10	«Կաշվի և մորթու քիմիա և տեխնոլոգիա»	Ս.Մարգարյան, Գ.Մարմարյան	214	100	13,5
11	«MS Excel աղյուսակային խմբագիր»	Ս.Կոսեմյան	214	200	13,5
12	«Տրանսպորտի էկոնոմիկա»	Շ.Ճեպեճյան	190	120	12,0
13	«Ձկների ձևակազմաբանություն. (Մորֆոլոգիա)»	Ռ.Մխիթարյան և ուրիշներ	414	150	26,0
14	«Ֆիզիկայի խնդիրների ժողովածու»	Ա.Խաչատրյան և ուրիշներ	78	120	4,8
15	«Ֆիզիկայի խնդիրների ժողովածու լուծումներով»	Ա.Խաչատրյան և ուրիշներ	74	120	4,6
16	«Երկրագործություն հողագիտության հիմունքներով»	Ա.Հակոբյան	204	200	12,75
			3002	3060	220,0

5.8. ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

2017 թ. ընթացքում հրատարակչական-խմբագրական բաժինը տպագրության է հանձնել հետևյալ նյութերը.

1. Մեթոդական ցուցումներ՝ 48 անվանում՝ 123 տպ. մամուլ ընդհանուր ծավալով:
2. Գիտական պարբերական (3 համար) և գիտական աշխատությունների ժողովածու՝ 77 տպ. մամուլ:
3. Հաշվետվություններ, տարեկան զեկույց, բուկլետ և այլ նյութեր՝ 40 տպ. մամուլ:

2016 թ. ընթացքում հրատարակված աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 240 տպագրական մամուլ:

2017 թ. սեպտեմբերի 23-ից տպագրության է պատրաստվում «**Օգնություն ֆերմերին**» գիրքը:

Ձեռնարկում ամփոփված նյութը օգտակար կլինի ոչ միայն սկսնակ ֆերմերներին, այլև տարիների ընթացքում գյուղատնտեսության ոլորտում աշխատող մասնագետներին: Ձեռնարկում ներկայացված են նաև ոլորտի խնդիրներին վերաբերող մի շարք հարցադրումների պատասխաններ, որոնք բնորոշ են ՀՀ ագրոարդյունաբերական համալիրին: Յուրաքանչյուր բաժնում ներկայացված են տվյալ ոլորտին վերաբերող և ուշադրության արժանի առանցքային հարցերը:

« **Օգնություն ֆերմերին**» ձեռնարկը բաղկացած է հետևյալ բաժիններից.

- ՀՀ գյուղատնտեսական գոտիների ագրոկլիմայական և հողային բնութագիրը
- Բուսաբուծություն
- Բանջարաբուծություն
- Պտղաբուծություն
- Խաղողագործություն
- Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման ռեժիմ
- Բույսերի պաշտպանություն
- Բուսական ծագման մթերքի պահպանում և վերամշակում
- Կենդանիների բուծում և կերակրում
- Կենդանիների հիվանդություններ
- Կենդանիների հիգիենա
- Կենդանական ծագման մթերքի պահպանում և վերամշակում
- Գյուղատնտեսության մեքենայացում
- Գյուղատնտեսության էկոնոմիկա
- Ագրոէկոլոգիա
- Կենսագործունեության անվտանգություն
- Խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ:

6. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

2017 թ. ընթացքում Արտաքին կապերի դեպարտամենտը (ԱԿԴ) փորձել է ընդլայնել գործող համագործակցությունների շրջանակն ու ամրապնդել արդեն իսկ գոյություն ունեցողները:

Պայմանագրեր և համաձայնագրեր: ՀԱԱՀ-ն շարունակում է ակտիվորեն մասնակցել տարաբնույթ միջազգային ծրագրերին, ինչպես նաև ընդլայնել համագործակցության աշխարհագրությունն ու միջազգային գործընկերների քանակը: 2017թ. կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 21 հուշագրեր և պայմանագրեր, որոնց մի մասի հետ համագործակցությունն արդեն իսկ ընթացքի մեջ է:

ԷՐԱԶՄՈՒՍ+ ծրագրի արդյունքներ: ՀԱԱՀ-ն ակտիվորեն մասնակցում է էրազմուս+ ծրագրին և դրա շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին: 2017 թ. ՀԱԱՀ-ն ունեցել է շուրջ 21 էրազմուս+ ՀԳ1 միջազգային կրեդիտային շարժունության նոր ծրագրեր եվրոպական տարբեր համալսարանների հետ, որի շրջանակներում իրականացվել են տարաբնույթ ուսուցումներ և վերապատրաստումներ: Բացի այդ, նախորդ տարվանից շարունակվում են 8 ծրագրեր: Այսպիսով, էրազմուս+ ՀԳ1 ծրագրերի ընդհանուր քանակը 29-ն է: Նոր էրազմուս+ ՀԳ1 ծրագրերի քանակով հանրապետության բուհերի շարքում ՀԱԱՀ-ն երկրորդն է:

2017թ. մարտ ամսին մշտադիտարկման նպատակով ՀԱԱՀ են այցելել էրազմուս+ Ազգային գրասենյակի աշխատակիցները և հանդիպել Արտաքին կապերի դեպարտամենտի աշխատակիցների, էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում արտասահմանում ուսումնառություն անցած կամ վերապատրաստված ուսանողների և աշխատակիցների հետ:

2017թ. սովորելու կամ հետազոտական աշխատանք կատարելու նպատակով արտերկիր են մեկնել 37 ուսանողներ, իսկ վերապատրաստման ու հետազոտական աշխատանք կատարելու նպատակով՝ 28 աշխատակիցներ: Միջազգային ծրագրերի և համաձայնագրերի շրջանակներում ՀԱԱՀ-ում վերապատրաստում են անցել Եվրոպայից և Ռուսաստանից ժամանած 10 դասախոսներ:

Ֆոջիայի համալսարանի հետ ՀԱԱՀ-ն իրականացում է նաև MUSA և MOBIS ծրագրերը, որոնք ֆինանսավորվում են Իտալիայի կառավարության կողմից: Այս ծրագրով Ֆոջիայի համալսարան է մեկնել 1, իսկ մոտ ապագայում կմեկնեն ևս 4 ուսանողներ: Ընդ որում, հանրապետության բուհերի շարքում միայն մեր համալսարանն է մասնակցում MUSA և MOBIS ծրագրերին:

Պրակտիկայի ծրագրեր Գերմանիայում: Համալսարանը ներկայումս պայմանագրեր ունի գերմանական մի քանի կազմակերպությունների հետ, որոնք ապահովում են ՀԱԱՀ ուսանողների պրակտիկան Գերմանիայում: Դրանք են՝ Logo e. V., JD East, GeTech, Praxx կազմակերպությունները: Հաշվետու ժամանակաշրջանում 6 ուսանողներ, մագիստրանտներ և ասպիրանտներ իրենց պրակտիկան են անցկացրել/անցկացնում Գերմանիայում. նրանցից երկուսը՝ GeTech ծրագրով, մեկը՝ JD East-ով և 3-ը՝ Praxx-ով:

5 մագիստրանտներ պրակտիկա են անցնում Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանում, իսկ 1-ը նույն համալսարանում՝ Ակտ ծրագրով:

ՏԵՄՊՈՒՍ ծրագրի արդյունքներ: 2017 թվականին ավարտվեցին ՀԱԱՀ-ի մասնակցությամբ իրականացվող Տեմպուս ծրագրերը:

Մասնավորապես, հաշվետու ժամանակաշրջանում ավարտվեց **«Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում ցկյանս ուսուցման զարգացման ցանց» նախագիծը (LeAGUe):** Նախագիծի նպատակն էր համալսարանի և պետական մարմինների միջև համագործակցության միջոցով ցկյանս ուսուցման մոտեցումների և մեթոդաբանության մշակումը, համապատասխան կենտրոնների ստեղծումը, նոր հմտությունների ձեռքբերումը և վերակրթությունը: Նախագծի շրջանակներում ստեղծվել է շարունակական կրթության փորձագիտական պորտալ, ՀԱԱՀ-ում կահավորվել է համապատասխան լսարան, իրականացվել են համապատասխան պիլոտային դասընթացները, ինչպես նաև ներկայացվել է վերջնական հաշվետվությունը: 2017թ նախագծի շրջանակներում իրականացվել է 2 գործուղում (2 աշխատակից):

Ավարտվեց նաև **«Աջակցություն բուհական ինքնավարությանը և հաշվետվողականությանը. Բարձրագույն կրթության կառավարման ժամանակակից և Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համահունչ համակագի մշակում արդյունավետ**

փոփոխությունների իրականացման նպատակով» (GOVERN) ծրագիրը: Ծրագրի նպատակն էր ՀՀ բուհերում ձևավորել արդյունավետ և գործող կառավարման մոդելներ և մեխանիզմներ: Ծրագրի շրջանակներում վերանայվել է կրթական ծրագրերի մշակման ուղեցույցը, տարբեր ոլորտների կառավարման համակարգերը, իրականացվել են կանոնակարգային, փաստաթղթային ու կառուցվածքային փոփոխություններ, մշակվել է բուհի կառավարման ավտոմատացման համակարգ, ստեղծվել են ուսանողակենտրոն ուսուցման և ուսումնառության կազմակերպման, ներդրման ու գործարկման ուղեցույցներ և այլ փաստաթղթեր: 2017 թ. մարտին ASIN գերմանական հավատարմագրման և ՈԱԱԿ-ի կողմից կատարվել է ծրագրի արտաքին գնահատում, որի արդյունքներն արժանացել են դրական գնահատականի: Ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել մի շարք նյութատեխնիկական միջոցներ:

«**Հայաստանում ազգային և սեկտորալ որակավորման շրջանակների ամրապնդում**» **(ARMENQA)** ծրագրի նպատակն էր ՀՀ բուհի շրջանավարտների զբաղվածության մակարդակի բարձրացումն ու աշխատաշուկայում ազգային և միջազգային մակարդակներով Հայաստանում ստացած որակավորումների ճանաչումը, մեթոդական, իրավական փաստաթղթերի ստեղծման և կիրառման միջոցով Հայաստանի որակավորման ազգային շրջանակի գնահատումը: Ծրագրի շրջանակներում մշակվել են ՀՀ ԲԿ Որակավորումների ազգային շրջանակը, որակավորումների ոլորտային (գյուղատնտեսություն) շրջանակը, ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա մասնագիտությունների բակալավրի և մագիստրոսի որակավորումների բնութագրիչները՝ հայերեն և անգլերեն լեզուներով: 2017 թ. մայիսին համալսարանի ներկայացուցիչները մասնակցեցին ԵՊՀ-ում կայացած ամփոփիչ հանդիպմանը, որտեղ ներկայացվեց ՀԱԱՀ-ում մշակված բակալավրային և մագիստրոսական կրթությունների առարկաների մասնագրերը:

ԷՐԱԶՄՈՒՍ ՄՈՒՆԴՈՒՍ: 2017թ. ՀԱԱՀ-ում գործել են էրազմուս-Մունդուսի 2 ծրագրեր:

ERASMUS MUNDUS Գործողություն 2 EMBER «Կրթական հնարավորությունների ընդլայնում» նախագծի նպատակն էր նպաստել բուհերի միջև համագործակցությանը՝ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի ուսանող-ներին, ինչպես նաև վարչական աշխատակազմին նոր կրթական հնարավորություններ տալով, հատկապես խթանելով շարժունությունը ոչ ԵՄ անդամ երկրներից դեպի ԵՄ անդամ երկրներ: 2017թ. EMBER նախագծի շրջանակներում 1 ուսանող 10 ամսով ուսանել է Վիլնյուսի համալսարանում, 1 հետազոտող հետազոտություններ է անցկացրել Լոձի համալսարանում, իսկ վարչական անձնակազմի 1 ներկայացուցիչ 3 ամսով միջազ-գայնացման ուղղությամբ վերապատրաստվել է Սալեռնոյի համալսարանում (Իտալիա): Ծրագիրն ավարտվել է 2017թվականի հուլիսի 14-ին:

ERASMUS MUNDUS Գործողություն 2 EFFORT ,Կրթական ուժ՝ միտված ԵՄ-Արևելյան եվրոպական համագործակցության համար շարժունության խթանմանը նախագիծը համակարգվել է Սալոնիկի Ալեքսանդրի անվան տեխնոլոգիական կրթական ինստիտուտի կողմից (Հունաստան): EFFORT նախագծի հիմնական նպատակն է խթանել համակարգված ակադեմիական համագործակցությունը եվրոպական և արևելյան երկրների բարձրագույն կրթական հաստատությունների միջև, ընդլայնել գիտական հորիզոնները, հավասար հնարավորություններ տրամադրել հաշմանդամ ուսանողներին և այլն: 2017թ. EFFORT նախագծի շրջանակներում բակալավրի 1 ուսանող ուսանել է Վիանա դու Կաշտելոյի պոտիտեխնիկական ինստիտուտում (Պորտուգալիա), 2 ասպիրանտներ՝ Սալոնիկի Ալեքսանդրի անվան ինստիտուտում, իսկ էստոնիայից 1 աշխատակից վերապատրաստվել է ՀԱԱՀ-ում: Նախագծի շրջանակներում իրականացվել է 1 գործուղում (1 աշխատակից): Ծրագիրն ավարտվել է 2017 թվականի հուլիսի 14-ին:

2017թ.-ից **Եվրասիա կրթական ծրագրի** (CPEA-LT-2016/10092) ֆինանսավորմամբ իրականացվում է Նորվեգիայի Թրոմսոյի Արկտիկական համալսարանի, Նորվեգիայի Կենսաէկոնոմիկայի ինստիտուտի և ՀԱԱՀ-ի համատեղ ծրագիր: Ծրագրի շրջանակներում 2017թ. սեպտեմբերին ՀԱԱՀ այցելեցին Թրոմսոյի Արկտիկական համալսարանի պրոռեկտորը, միջազգային կապերի պատասխանատուն և այլ գործընկերներ, ինչպես նաև ՀՀ-ում Նորվեգիայի Թագավորության դեսպանության ներկայացուցիչները՝ դեսպանի գլխավորությամբ: Նախատեսվում է համալսարանի ,Բույսերի սելեկցիա և գենետիկաե մասնագիտության 4-րդ կուրսի բազայի վրա 2017-18 ուստարվանից սկսել ,Բույսերի կենսատեխնոլոգիաե դասընթացի դասավանդումը: ՀԱԱՀ մի քանի մագիստրոսներ և ասպիրանտներ իրենց գիտահետազոտական աշխատանքները կիրականացնեն ու

պրակտիկան կանցկացնեն Նորվեգիայում: 2017 թվականի հունիսին 1 մագիստրանտ 3 ամսով, և բակալավրիատի 1 ուսանող 4 ամսով ուսանել են Նորվեգիայում:

ՀԱԱՀ-ում և ՀՀ-ում կազմակերպված սեմինարներ, միջոցառումներ և հանդիպումներ: **Հաշվետու ժամանակաշրջանում ՀԱԱՀ-ի աշխատակիցները մասնակցել են ՀՀ-ում կազմակերպված տարաբնույթ հանդիպումների և միջոցառումների: Միաժամանակ, համալսարանը հյուրընկալել է տարբեր երկրներից ժամանած հյուրերի, որոնց հիմնական նպատակը երկկողմանի կապերի ստեղծումն էր կամ առկա կապերի ընդլայնումը: Ստորև ներկայացվում են կարևորագույն այցերն ու հանդիպումները:**

1. Վրաստանի Գ. Բ. Քոնսալթինգ ՍՊԸ-ի տնօրեն Գեորգի Բեթսիաշվիլու այցը ՀԱԱՀ, որի շրջանակներում կնքվեց Համաշխարհային բանկի կողմից հաստատված մատակարարման պայմանագիր, համաձայն որի համալսարանի Ոսկեհատ ուսումնափորձնական տնտեսությունում կառուցվող գինեգործարանում տեղադրվեցին իտալական գինեգործական բրենդային սարքավորումներ (2017թ. մարտի 6):
2. Ճապոնիայի Կյորինի համալսարանի տնօրեն, պրոֆեսոր Շիգերու Կամիյայի (Ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոն) այցը ՀԱԱՀ: Պրոֆեսոր Կամիյան ներկայացրեց ‚Helicobacter pylori և ստամոքսի միկրոբիոտանե թեմայով զեկույց (2017թ. հոկտեմբերի 24):
3. Վայիենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի դասախոս Միխայել Թրյոսթերի և Գյուղատնտեսության ֆակուլտետի միջազգային համագործակցության պատասխանատու, գիտաշխատող, ՀԱԱՀ-ի շրջանավարտ Արամ Արիստակեսյանի այցը ՀԱԱՀ (2017թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 3): Միխայել Թրյոսթերին «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի առաջին կուրսի մագիստրանտների համար անցկացրեց մեկշաբաթյա սեմինարներ՝ «Բիզնես մենեջմենթ» առարկայից, իսկ Արամ Արիստակեսյանը «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի վերջին կուրսի մագիստրանտների համար՝ «Նախագծերի պլանավորում, գնահատում» առարկայից:
4. Էրազմուս+ ծրագրի բարձրագույն կրթության բարեփոխումների հայաստանյան փորձագիտական թիմին տեխնիկական աջակցության առաքելության շրջանակներում Եվրահանձնաժողովի Կրթության, աուդիովիզուալ միջոցների և մշակույթի գործադիր գործակալության աջակցությամբ իրականացվող «Բուհերի ֆինանսական կառավարման և եկամտի աղբյուրների դիվերսիֆիկացման ռազմավարություն» թեմայով աշխատաժողով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (2017թ. նոյեմբերի 20):
5. Գերմանիայի Դաշնության Գայզենհայմի համալսարանի նախագահ դոկտոր Հանս Ռեյներ Շուլցի, Խաղողի և գինու միջազգային կազմակերպության նախագահ դոկտոր Մոնիկա Քրիստմանի այցը ՀԱԱՀ (2017թ. նոյեմբերի 24):
6. Կրակովի Յագիելլոնիան համալսարանի (Լեհաստան) Միջազգային հարաբերությունների և քաղաքագիտության ֆակուլտետի դասախոս, դոկտոր Պ. Բայորի այցը ՀԱԱՀ էրազմուս+ ՀԳ1 ծրագրի շրջանակներում (2017թ. նոյեմբերի 27-ից դեկտեմբերի 1): Այցի ընթացում հյուրը դասախոսություններ կարդաց ՀԱԱՀ Տնտեսագիտության, Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետի ուսանողների, ինչպես նաև հարցով հետաքրքրված պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար:

Համագործակցություն ԱՊՀ երկրների շրջանակում: Ընթացիկ տարում համագործակցությունն ակտիվ է եղել նաև ԱՊՀ երկրների շրջանակներում:

2017 թ. ՀԱԱՀ ներկայացուցիչները մասնակցել են Ղազախստանի ազգային ագրարային համալսարանի և Ռուսաստանի Կ. Ա. Տիմիրյազևի անվան պետական ագրարային համալսարանի կողմից կազմակերպված 2 սեմինարների՝ «Կենդանիների կենսատեխնոլոգիայի ասպեկտները (հեռավար դասավանդման տեխնոլոգիաների կիրառմամբ)» և «Պարենամթերքի որակը և անվտանգությունը» թեմաներով:

Փետրվարին պաշտոնական այցով ՀԱԱՀ ժամանեց Եվրասիական գյուղատնտեսական տեխնոլոգիական հարթակի համակարգող-քարտուղար, Ի. Գ. Պետրովսկու անվան Բրյանսկի պետական համալսարանի Կենսատեխնոլոգիաների և էկոլոգիայի նորարարական գիտակրթական կենտրոնի տնօրեն, ակադեմիկոս Ի. Նամը: ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ հանդիպման նպատակն էր բիզնեսի և գիտության փոխգործակցությանը նպաստելը, ԵՏՄ երկրների փորձին ու կիրառվող տեխնոլոգիաներին ծանոթացնելը:

2017թ. ապրիլի 23-ին ՀԱԱՀ պատվիրակությունը մասնակցեց Մոսկվայում կայացած Եվրասիական գյուղատնտեսական տեխնոլոգիական հարթակի համակարգող խորհրդի խորհրդակցությանը, որտեղ Տենտեսագիտության ֆակուլտետի դեկան է. Ղազարյանը Հայաստանի օրինակով ներկայացրեց ԵՏՄ անդամ-երկրներում գյուղական տարածքների զարգացման միտումներն ու հեռանկարները:

2017թ. մարտի 15-16-ը Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի անասնաբուծության ամբիոնի վարիչ Տ. Չիթչյանն ավելի քան 20 երկրների ոլորտի առաջատար մասնագետների հետ մասնակցել է Թբիլիսիում կայացած ,Արևելաեվրոպական կաթնային կոնգրեսինե:

2017 թ. մայիսի 2-5-ին ՀԱԱՀ-ում կայացավ «Ազգային տնտեսությունները գլոբալացման և տեղային վերափոխումների պայմաններում» միջազգային գիտագործնական երրորդ համաժողովը, որի կազմակերպիչներն էին ՌԴ կառավարությանն առընթեր ֆինանսական համալսարանը, ՌԳԱ կենտրոնական տնտեսագիտամաթեմատիկական ինստիտուտը, ՀԱԱՀ-ն, Թելավիի պետական եւ Վրաստանի ազգային համալսարանները:

2017թ. հունիսի 19-21-ը ՀԱԱՀ ռեկտոր Ա. Պ. Թարվերդյանն այցելեց Կուբանի պետական ագրարային համալսարան: Այցի ընթացքում ռեկտորների միջև տեղի ունեցան երկկողմ համագործակցության խորացման վերաբերյալ բանակցություններ, հանդիպումներ տարբեր ստորաբաժանումների ղեկավարների հետ, ինչպես նաև այցելություններ համալսարանի լաբորատորիաներ և կառուցվածքային ստորաբաժանումներ:

2017թ. սեպտեմբերի 5-9-ը ՀԱԱՀ պատվիրակությունը Միչուրինսկի պետական ագրարային համալսարանում մասնակցեց Այգեգործի օրվան, այգեգործ մասնագետների պատրաստմանը նվիրված ԱՊՀ երկրների առաջատար ագրարային բուհերի ռեկտորների խոհրդի նիստին, ինչպես նաև գիտագործնական գիտաժողովին:

2017թ. պաշտոնական այցերով ՀԱԱՀ ժամանեցին Սանկտ Պետերբուրգի պետական ագրարային համալսարանի և Ուկրաինայի Պոլտավայի պետական ագրարային ակադեմիայի, ներկայացուցիչները, կնքվեցին համագործակցության հուշագրեր: Համագործակցության նոր հուշագրեր են ստորագրվել նաև Սպառողական կոոպերատիվների սիբիրյան համալսարանի, Ի. Տ. Տրուբիլինի անվան Կուբանի պետական համալսարանի, Ս.Ա. Նիյարովի անվան թուրքմենական գյուղատնտեսական համալսարանի, Չուվաշական պետական գյուղատնտեսական ակադեմիայի և Բույսերի սորտերի փորձագիտական ուկրաինական ինստիտուտի հետ:

Համագործակցության նոր քայլեր և կարևոր իրադարձություններ: Այս տարի ՀԱԱՀ-ն կարևոր քայլեր ձեռնարկեց արտերկրից, մասնավորապես՝ Հնդկաստանից ուսանողներ ներգրավելու ուղղությամբ: Հուլիսին ՀԱԱՀ այցելեց Bilimoria & Associate ընկերության խորհրդատու Նեհլ Բիլիմորիան, որի ընկերության հետ կնքված պայմանագրի շրջանակներում նախատեսվում է հնդիկ ուսանողների հավաքագրում և ուսուցում՝ ,Անասնաբուժությունե մասնագիտությամբ:

Այդ տեսակետից կարևոր էր նաև ՀԱԱՀ-ի ռեկտոր Ա. Թարվերդյանի հանդիպումը իրանցի ասպիրանտ, Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության զբոսաշրջության, ձեռագործ աշխատանքների և մշակութային ժառանգությունների կազմակերպության ներդրումների և տնտեսական գծով խորհրդատու Մորթեզա Ռամեզանի Գալեշիի հետ, որի ընթացքում քննարկվեցին իրանցի ասպիրանտների ներգրավման նոր հնարավորությունները:

ՀԱԱՀ-ի համար արդյունավետ հանդիպումներից էր նաև Ուելսի Աբերիսթվիթ համալսարանի միջազգային համագործակցության Միջին Արևելքի երկրների գծով համակարգող Մուրցա Ալի Ղազնավիի այցը համալսարան: Նրա հետ քննարկվեցին հետագա համագործակցության ուղղությունները: Մասնավորապես, հնարավոր է ՀԱԱՀ-ում զարգացնել այն դասընթացները, որոնք առնչվում են ագրարային ոլորտում ինովացիոն տեխնոլոգիաների կիրառմանը:

ՀԱԱՀ-ն փորձում է խթանել նաև հարևան երկրների հետ համագործակցությունը: Լիբանանի կանադական համալսարանի պատվիրակության այցի ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց քայլեր ձեռնարկել հողաշինարարության և կադաստրի ոլորտներում կրկնակի դիպլոմների շնորհման ուղղությամբ:

2017թ. ընթացքում Արտաքին կապերի դեպարտամենտի աշխատակիցները մասնակցել են եվրոպական տարբեր բուհերում (Իսպանիա, Նիդերլանդներ, Հունաստան, Ավստրիա և այլն) կազմակերպված միջազգայնացման շաբաթներին, որի ընթացքում ներկայացրել են

ՀԱԱՀ-ն, գործընկերների հետ քննարկել են համագործակցության հնարավորություններն ու նրանցից որոշների հետ սկսել են իրական համագործակցություն: Նման այցերը նպաստավոր են հատկապես նրանով, որ հանդիպումների ժամանակ հաստատվում են ընկերական և գործընկերային հարաբերություններ, ինչն էապես նպաստում է հետագա համագործակցություն սկսելուն: Դրա վառ արդյունքներից է ընթացիկ տարում ՀԱԱՀ-ի թվով 25 էրազմուս+ ծրագրերի առկայությունը, որն ամենաբարձրն է ՀՀ բուհերի շրջանում, նաև թվով 2 էրազմուս+ Հիմնական գործողություն-2 ծրագրերի առկայությունը:

ԱԿԴ աշխատակիցները մասնակցել են նաև Հայաստանի էրազմուս+ ազգային գրասենյակի կողմից կազմակերպված հանդիպումներին, որոնց ժամանակ քննարկվել են էրազմուս+ ծրագրի հիմնահարցերը, իսկ հանդիպումներից մեկի ժամանակ դեպարտամենտի պետ Գ. Համբարձումյանը ներկայացրեց ՀԱԱՀ-ում էրազմուս+-ի տվյալներն ու արդյունքները, ծրագրի նրեդրման թույլ և ուժեղ կողմերը, հիմնական խնդիրներ, ինչպես նաև դեպարտամենտի գործունեության և աշխատանքի առանձնահատկությունները: ԱԿԴ և ՀԱԱՀ այլ աշխատակիցները պարբերաբար մասնակցել են ՏԵՄՊՈՒՍ ծրագրի շրջանակներում տարբեր բուհերում կայացած միջոցառումներին, որոնց ժամանակ ներկայացվել են վերոհիշյալ ծրագրի արդյունքները:

Ս/թ նոյեմբերի 9-10-ը Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում անցկացվեցին էրազմուս+ ծրագրի տեղեկատվական օրեր, որի ընթացքում ներկայացվեցին էրազմուս+ բարձրագույն կրթության միջազգային ծրագրերի մանրամասները: Այդ միջոցառմանը մասնակցեցին ԱԿԴ աշխատակիցները, իսկ ստացված տեղեկատվությունը կարևոր է էրազմուս+-ի նոր մրցույթին մասնակցելու համար:

Ընթացիկ տարում ԱԿԴ-ի ձեռքբերումներից է համալսարանի բոլոր շահակիցների հետ կազմակերպված հանդիպումների շարքը: Հաշվի առնելով այն, որ ՀԱԱՀ շահակիցները բավարար չափով տեղեկացված չեն միջազգային ծրագրերի վերաբերյալ, ԱԿԴ աշխատակիցները հոկտեմբերին հանդիպեցին ՀԱԱՀ բոլոր ֆակուլտետների ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի հետ: Հանդիպումների ընթացքում ԱԿԴ աշխատակիցները ներկայացրեցին տեղեկատվություն ՀԱԱՀ-ի միջազգային համագործակցության և միջազգային կրթաթոշակային ծրագրերի, էրազմուս+ առկա ծրագրերին դիմելու գործընթացի, անհրաժեշտ փաստաթղթերի և այլնի վերաբերյալ: Դրա հիման վրա ստեղծվեց շահակցների տեղեկատվական բազա, որի շնորհիվ շահակիցներն իրենց էլ. փոստով տեղեկացվում են միջազգային բոլոր մրցույթների վերաբերյալ:

7. «ԱԳՐՈԳԻՏԱՍՓՅՈՒՌ» ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոգիտասփյուռ դեպարտամենտը, հիմք ընդունելով 2017 թ. ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի որոշումները, համալսարանի մասնագիտական 22 ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցությամբ, համագործակցելով տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների, գիտական կենտրոնների, անհատ ֆերմերային, գյուղացիական տնտեսությունների և վերամշակող ձեռնարկությունների հետ, հաշվետու ժամանակահատվածում ագրարային ոլորտում 37 թեմաներով ծավալել է խորհրդատվական գործունեություն հետևյալ ուղղություններով՝

Ծրագրերը իրականացվել են հետևյալ ուղղություններով՝

- ՀՀ Տավուշի մարզի Դիտավան, Բաղանիս, Ակնաղբյուր, Պտղավան, Բագրատաշեն համայնք/բնակավայրերում հիմնվող ինտենսիվ տիպի պտղատու այգիներում կաթիլային ոռոգման համակարգերի նախագծման, կառուցման խորհրդատվություն:
- Արմավիրի մարզում ոռոգման կաթիլային եղանակի ներդրման և ջերմատնային տնտեսության հիմնման խորհրդատվություն:
- Թորման եղանակով աղտոտված ջրերի մաքրման խորհրդատվություն Արմավիրի, Արարատի և Գեղարքունիքի մարզերի ֆերմերային տնտեսություններում:
- ,Կայուն այգեգործական համակարգերում ներդրումների քարտեզագրում ու պլանավորումե, ծրագրի շրջանակներում Արարատի մարզի Նոր ուղի, Սուրենավան, Սյունիքի մարզի Հարժիս, Սպանդարյան գյուղական համայնքներում գյուղատնտեսական մթերքների ծավալների և որակի բարձրացմանը, արտահանմանն ուղղված խորհրդատվության կազմակերպում:
- Արարատի, Արմավիրի, Արագածոտնի մարզերի գյուղական բնակավայրերում կենսազանգվածից վառելիք ստանալու տեխնոլոգիաների մասին խորհրդատվական աշխատանքների կազմակերպում:
- Արարատյան արտեզյան ջրային ավազանից ձկնաբուծական տնտեսությունների կողմից ջրի վերաօգտագործման հնարավորությունների խորհրդատվություն Արարատի մարզի գյուղական համայնքներում:
- Սյունիքի մարզի Մեղրիի և Կապանի տարածաշրջանների տեխնածին աղտոտված հողերի վերակազմակերպման, էկոլոգիական անվտանգ սննդամթերքի արտադրության վերաբերյալ խորհրդատվություն:
- Կոտայքի մարզի Ալափարս, Հրազդան, Գեղարքունիքի մարզի Ձորագյուղ, Վարդենիկ համայնքներում թափոններից ստացվող օրգանոմիքս պարարտանյութերի փորձարկման և պարարտացման աշխատանքների վերաբերյալ խորհրդատվության կազմակերպում:
- Արմավիրի մարզի էջմիածնի տարածաշրջանում ազոտ-բարվար, ֆոսֆոր-բարվար տիպի պարարտանյութերի փորձարկում և խորհրդատվություն:
- Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Կարմրաշեն, Շղարշիկ, Ոսկեթաս համայնքներում խոշոր և մանր եղջերավոր կենդանիների խնամքի և պահվածքի վերաբերյալ խորհրդատվություն:
- Կենդանիներից բրուցելոզ, սիբիրախտ և էխինոկոզ հիվանդությունների վարակի կանխարգելման խորհրդատվություն Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում:
- Բնության հատուկ պահպանվող տարածքներում անտառային կենսաբազմազանության հազվագյուտ և վտանգված տեսակների պահպանությանն ուղղված միջոցառումների կազմակերպման և իրականացման մասնագիտական խորհրդատվություն:
- Արագածոտնի և Շիրակի մարզերի համայնքներում անտառապատման խնդիրների և հակաէրոզիոն միջոցառումների խորհրդատվություն:
- Քաղաքապետարանի բնապահպանական վարչության պատվերով Երևան քաղաքի կանաչապատման արդիական խնդիրներին վերաբերող խորհրդատվություն:
- Կլիմայի փոփոխության պայմաններում Արարատի մարզի տարբեր համայնքներում գյուղատնտեսության արդի խնդիրներին նվիրված խորհրդատվություն:
- Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական արտադրության մասնագետների որակավորման բարձրացում և գյուղատնտեսական կրթություն չունեցող ֆերմերների նախնական ուսուցում:

- Խաղողի ֆիլոքսերիայի տարածվածության ուսումնասիրումը և դրա դեմ պայքարի միջոցառումների կազմակերպման խորհրդատվության ուսումնասիրումը Արարատյան դաշտի պայմաններում:
- Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսության տարածքի քարտեզագրում, ոռոգման համակարգի բարելավում ուսանողների մասնակցությամբ:
- Անասնաբուծական տոհմային հաշվառման և տավարի որակի բարելավման միջոցառումների ներդրումը կաթ արտադրող և իրացնող կոոպերատիվներում
- Մասնագիտական կողմնորոշում, էքսկուրսիա:
- Կարկտահարված տարածքների և վաղ գարնանային ցրտահարությունների բացասական ազդեցությունների նվազեցման ուղղությամբ խորհրդատվություն:
- Պտղատու ծառերի վաղ գարնանային աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացում:
- Խաղողի սեղանի սորտերի սառնարանային պահպանման տեխնոլոգիայի բարելավման խորհրդատվություն:
- Հացահատիկային մշակաբույսերի պարարտացման նոր համակարգերի կիրառման խորհրդատվություն բերքատվության բարձրացման նպատակով:
- Բնական կերհանդակների ջրարբիացման և արդյունավետ օգտագործման խորհրդատվություն:
- GIS միջավայրում Սյունիքի մարզի Սիսիանի տարածաշրջանում փոքր ջրամբարների կառուցման ուսումնասիրությունների արդյունքների խորհրդատվություն:
- Խաղողի վազի էտի, ձևավորման, կապի և ոռոգման աշխատանքների կազմակերպման խորհրդատվություն Արարատյան դաշտի գյուղացիական տնտեսություններում:
- Նվազագույն մշակման փորձի խորհրդատվություն Արցախի գյուղացիական տնտեսություններում
- Անշարժ գույքի կադաստրի համակարգի կատարելագործման խորհրդատվություն Արցախի անշարժ գույքի կառավարման համակարգում
- Աղբավայրերի հողաշինարարական կազմակերպման և տարածքների արդյունավետ օգտագործման խորհրդատվական աշխատանքները Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանում:
- Չորային երկրագործության պայմաններում հացահատիկային մշակաբույսերի, աշնանացան ցորենի, գարու բերքատվության բարձրացման հնարավորությունները Թալինի տարածաշրջանի գյուղացիական տնտեսություններում:
- Լոլիկի ցեցը և դրա դեմ պայքարի միջոցառումներն Արարատյան դաշտավայրի պայմաններում:
- Հացահատիկային մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումները Տավուշի մարզի պայմաններում:
- Կարտոֆիլի քաղցկեղի դեմ պայքարի միջոցառումների խորհրդատվություն Գեղարքունիքի մարզի պայմաններում
- Լոլիկի հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների խորհրդատվություն Արմավիրի մարզի պայմաններում:
- Խնձորենու պտղակերի դեմ պայքարի միջոցառումների խորհրդատվություն Արագածոտնի մարզի պայմաններում:
- Հայաստանի ազգային ագրարային համալսարանը տպագրության է հանձնել «Օգնություն ֆերմերին» գիրքը, որը նախատեսված է գյուղացիական տնտեսությունների և անհատ տնտեսվարողների ագրոբիզնեսի ոլորտում գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանը:

Կատարված ծրագրերի արդյունքում - Հանրապետության **10** մարզերում անցկացվել է թվով **245** սեմինար, կատարվել է **305** այցելություն, խորհրդատվություն է մատուցվել **3570** ֆերմերի, սեմինարներին մասնակցել են ՀԱԱՀ-ից և գիտական կենտրոններից **44** դասախոս/գիտնական, **210** ուսանող/մագիստրանտ, հրատարակվել և բաժանվել է**15** անուն խորհրդատվական թերթիկ, **13** անուն խորհրդատվական գրքույկ, կազմակերպվել է **173** դաշտային օրեր և այցելություններ: Համագործակցելով մարզպետարանների և գյուղական համայնքների հետ՝ ՀԱԱՀ-ի 10 մարզերում տարբեր մասնագիտությունների գծով կամակերպվել և իրականացվել են ֆերմերների վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստման դասընթացներին մասնակցել են ՀՀ 10 մարզերի թվով 88 մասնագետներ, համալսարանի 16 դասախոսներ և մագիստրանտներ:

8. ՀԱԱՀ «ՀԱՍՈՒՆ ՀԱՍԿ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

Հաշվետու տարում ՀԱԱՀ լրատվության և հասարակության հետ կապերի բաժինը, համագործակցելով տարբեր ՁԼՄ-ների հետ, շարունակել է լուսաբանել բուհի գործունեությունը, հանրությանն իրազեկել համալսարանում կատարվող իրադարձությունների մասին՝ միջազգային հավատարմագրում, գիտաժողովներ, կրթական բարեփոխումներ, ավարտական և այլ միջոցառումներ:

Շարունակվել է համալսարանում տեղի ունեցող կարևոր իրադրաձությունների լուսաբանումը հեռուստատեսությամբ: Ընթացիկ տարում համալսարանի հետ առավել ակտիվորեն համագործակցել են հատկապես «Արմենիա», «Հ1», «Երկիր մեդիա», «Ար» հեռուստաընկերությունները: Հիշյալ իրադարձությունները լուսաբանվել են նաև հանրապետական նշանակության թերթերով՝ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, «Կրթություն» շաբաթաթերթ: Ընդհանուր առմամբ համալսարանի վերաբերյալ մամուլում տպագրվել է 23 հոդված:

ՀԱԱՀ լրատվության և հասարակության հետ կապերի բաժինը, հավատարիմ մնալով լրատվության ապահովման երկկողմանի գործառույթին, ագրարային ոլորտի հիմնախնդիրները մասնագիտական բարձր մակարդակով լուսաբանելու հարցում շարունակել է պատրաստակամորեն աջակցել լրագրողներին:

2017 թվականի ընթացքում տպագրվել է «Հասուն հասկ»-ի 17 համար: Ընթերցողներն իրազեկվել են ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի, գիտխորհրդի և ռեկտորատի որոշումների մասին: Պաշտոնաթերթն անդրադարձել է նաև Ագրարային համալսարանի ուսանողների անձնվեր, արժանապատիվ ծառայությանը Ազգային բանակում, հանրապետության մասշտաբով ունեցած մարզական հաջողություններին և կրթական կարևոր ձեռքբերումներին:

9. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
(Ուսխորհուրդ)

ՀԱԱՀ-ի ուսանողական խորհուրդը 2017թ. իր գործունեությունը իրականացրել է հետևյալ հիմնական ուղղություններով

- Ուսումնական
- Գիտակրթական
- Ուսումնադաստիարակչական:

Համալսարանի ուսանողական խորհուրդն ունի 25-տոկոսանոց ներկայացվածություն կառամարման բոլոր մարմիններում՝ հոգաբարձուների խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետային գիտական խորհուրդներ:

Ուսանողական խորհրդի անդամներն անմիջական և ակտիվ մասնակցություն են ունեցել ուսանողների շրջափոխման գործընթացին: Ֆակուլտետների դեկանատների և ուսումնական մասի ներկայացուցիչների հետ բոլոր կուրսերում ներկայացվել են շրջափոխման արդյունքները: Ներկայացված արդյունքներն ամբողջությամբ ընդունվել են ուսանողների կողմից:

Ուսանողական խորհուրդը ակտիվ մասնակցություն է ունեցել ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցման, ուսանողներին ֆինանսական օգնությունների հատկացման և անվանական կրթաթոշակների նշանակման գործընթացին:

Ուսանողական խորհրդի ներկայացուցիչներն ուսանողների հիմնախնդիրների բացահայտման և լուծման նպատակով հանդիպումներ են ունեցել ինչպես բոլոր ֆակուլտետների, այնպես էլ կուրսերի հետ:

Համալսարանի ուսանողական խորհրդի գործունեության հիմնական ուղղություններից են ուսանողների իրավունքների և շահերի ներկայացումն ու պաշտպանությունը: Տարվա ընթացքում եղել են բազմաթիվ անհատ ուսանողներ, ենթախմբեր, որ ներկայացրել են բազմաթիվ խնդիրներ՝ կապված ուսումնական գործընթացի, քննությունների կազմակերպման, դասախոսությունների որակի բարելավման և դասախոսների հետ: Դրանք նույնպես ներկայացվել են ամբիոնների, ֆակուլտետների և համալսարանի ղեկավարությանը:

ՈՒԳԸ-ի հետ իրականացվել են բազմաթիվ քննարկումներ, մասնագիտական օլիմպիադաներ, սեմինարներ, բանավեճ-քննարկումներ:

Համալսարանի ուսանողական խորհուրդը մեծ ուշադրություն է դարձրել ուսանողների ուսումնադաստիարակչական հարցերին: Տարվա ընթացքում իրականացվել են մշակութային, մարզական, ժամանցային, ճանաչողական, բնապահպանական, առողջապահական և բազմաթիվ այլ միջոցառումներ ու ծրագրեր:

2017 թ. իրականացվել են հետևյալ միջոցառումները

- Հունվար-փետրվար ամսվա առաջին կեսին ուսանողական խորհուրդը Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հետ միասին կազմակերպել է սոցիալապես անապահով, բարձր առաջադիմություն և բուհում հասարակական ակտիվություն ունեցող, սակայն վճարովի համակարգում սովորող 1-ին կուրսերի ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցման ծրագիրը:
- Մարտի 4-ին ՀՀ վարչապետի ներկայությամբ ՀԱԱՀ մեծ դահլիճում կազմակերպվել է կրթաթոշակ ստացող ուսանողների պարգևատրման արարողությունը:
- Փետրվար ամսվա երկրորդ կեսին կազմակերպվել է ուսանողական խորհրդի նախագահի և ուսանողների հանդիպումներ, ինչպես կուրսերով, ենթախմբերով, այնպես էլ

անհատական կարգով կիսամյակային քննությունների ընթացքում առաջացած խնդիրներին ծանոթանալու համար:

- Ապրիլ ամսին ՀԵՀ-ի հետ համատեղ կազմակերպվել է 2016 թվականի քառօրյա պատերազմի ընթացքում մարտական հերթապահություն իրականացրած, զորացրված ուսանողների վարձավճարների փոխհատուցման ծրագիրը, իսկ վարձավճարների զեղչման հավաստագրերի հանձնումն իրականացվել է մայիսին ՀԱԱՀ մեծ դահլիճում, ՀՀ Պաշտպանության և ՀՀ Կրթության և գիտության նախարարների անմիջական մասնակցությամբ:
- Ապրիլի 20-ին կազմակերպվել է ճանաչողական շրջայց դեպի Մայր աթոռ Սուրբ Էջմիածին:
- Հաշվետու տարվա մարտ-մայիս ամիսներին պարբերաբար կազմակերպվել են հայոց ցեղասպանությանը նվիրված բազմաթիվ միջոցառումներ, հանդիպումներ, սեմինարներ:
- Ապրիլի 20-24-ը Ուսանողական խորհուրդը և ՀԱԱՀ պատմության ամբիոնը համատեղ կազմակերպել են «Անցյալը չի լռում» խորագրով հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցահանդես:
- Ապրիլի 23-ին մասնակցել ենք ջահերով երթին:
- Ապրիլի 24-ին կազմակերպվել է երթ դեպի Ծիծեռնակաբերդ, որից հետո եղել է այցելություն ցեղասպանության թանգարան:
- Ապրիլի-մայիս ամիսներին իրականացվել են «Ուսանողական գարուն 2017» սպորտային, ինտելեկտուալ, մշակութային միջոցառումներ, որոնց մասնակցել են համալսարանի ավելի քան 350 ուսանողներ:
- Մայիսի 9-ին Հայրենական մեծ պատերազմի և արցախյան ազատամարտի հաղթանակների կապակցությամբ կազմակերպվել է այցելություն Հաղթանակի զբոսայգի:
- Օգոստոսին Ագրարային համալսարանի ուսանողական ջոկատը Ծաղկաձորում մասնակցել է «Բազե-2017» համահայկական երիտասարդական հավաքին:
- Օգոստոսի 29-ին տեղի է ունեցել ուսանողական խորհրդի ֆակուլտետային ակտիվիստների հանդիպում ուսանողական խորհրդի նախագահության անդամների հետ՝ սեպտեմբերի 1-ին առաջին կուրս ընդունված ուսանողների հանդիպման հանդիսավոր արարողությունը պատշաճ կազմակերպելու համար:
- Հաշվետու տարվա սեպտեմբերի առաջին շաբաթում տեղի է ունեցել ուսանողական խորհրդի ֆակուլտետային նախագահների հանդիպումներն առաջին կուրսեցիների հետ:
- Հաշվետու տարվա ընթացքում ուսանողական խորհուրդը մասնակցել է համաքաղաքային բոլոր շաբաթօրյակներին, ծառատունկերին:
- Հաշվետու տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ Մայր աթոռի միաբանների հետ:
- Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել են ներֆակուլտետային 15 ինտելեկտուալ, 35 և ավելի սպորտային խաղ մրցույթներ, միջֆակուլտետային ավելի քան 30 սպորտային և ինտելեկտուալ առաջնություններ, որոնց հաղթողները բուհի ղեկավարության և ուսանողական խորհրդի կողմից խրախուսվել են տարբեր մրցանակներով:
- Կազմակերպվել են հանդիպումներ մշակույթի, սպորտի, գիտության և արտադրության ճանաչված գործիչների հետ:
- Տարվա ընթացքում պարբերաբար բացատրական աշխատանքներ են տարվել ցածր առաջադիմություն և վատ հաճախումներ ունեցող ուսանողների հետ:
- Հաշվետու տարում կազմակերպել ենք 10-ից ավել բարեգործական ակցիաներ, այցելություններ մանկատներ:
- Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում պարբերաբար կազմակերպվել են այցելություններ ՀԱԱՀ հանրակացարան՝ ծանոթանալու հանրակացարանաբնակ ուսանողների խնդիրներին:
- Շարունակվել է համագործակցությունը հանրապետության և Արցախի պետական բուհերի ուսանողական կազմակերպությունների, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի, Հայաստանի երիտասարդության ազգային խորհրդի, Հայաստանի ուսանողության ազգային ասոցիացիայի հետ:
- Դեկտեմբերի 26-ին կազմակերպվել է «Ոսկե հասկ» ամենամյա 11-րդ մրցանակա-բաշխությունը:

10. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2017թ. հունվարի 1-ից մինչև 2017 դեկտեմբերի 29-ը, կայացել է ՀԱԱՀ գիտական խորհրդի 15 նիստ:

Գիտական խորհրդի նիստերի օրակարգերը նախատեսվել են՝ համաձայն գիտական խորհրդի 2016-2017 և 2017-2018 ուսումնական տարիների աշխատանքային պլանների:

Նիստերում քննարկված հարցերը վերաբերել են համալսարանի գործունեության տարբեր ոլորտների՝ ուսումնամեթոդական, ուսումնադաստիարակչական աշխատանքներին, ուսումնաարտադրական պրակտիկաների և լաբորատոր գործնական պարապմունքների կազմակերպման հարցերին, ուսանողների հաճախումներին, համալսարանի գիտական խորհրդի հանձնարարականների կատարմանը, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության գործունեությանը:

Պարբերաբար լսվել և քննարկվել են դեպարտամենտներում, ամբիոններում ու բաժիններում ուսումնական գործընթացի կազմակերպմանն առնչվող համակողմանի հարցեր: Ընդունվել են որոշումներ՝ ուղղված ուսումնական գործընթացի հետագա կատարելագործմանը:

Համալսարանի գիտական խորհրդի նիստում (13.01.2017թ.) լսվել և քննարկվել է «Ըստ կրթական ծրագրերի բանվորական մասնագիտությունների առարկայական ծրագրերի և որակավորման բնութագրերի մշակումը» հարցը, որը ներկայացրեց ՀԱԱՀ ռեկտոր Ա.Թարվերդյանը: Ուսուցումը կազմակերպելու համար հանձնարարվեց ֆակուլտետների դեկաններին և համալսարանի Ա.Քոչինյանի անվան քոլեջի տնօրեն Ա.Հովհաննիսյանին համատեղ, կրթության լիազոր մարմնի հետ համագործակցված, մշակել, քննարկել և հաստատմանը ներկայացնել ցանկով սահմանված արհեստագործական և բանվորական մասնագիտությունների կրթական ծրագրերը, որակավորման բնութագրերը և ուսումնական պլանները, որոնց հիման վրա էլ համապատասխան ամբիոններում կազմակերպել առարկայական ծրագրերի մշակումը:

Նույն գիտական խորհրդի նիստում (13.01.2017թ.) որոշվեց «Ֆերմերային տնտեսությունների կազմակերպում և կառավարում» առարկան դասավանդել ՀԱԱՀ բոլոր մասնագիտություններում և առարկայական ծրագրերը մշակելիս հաշվի առնել մասնագիտությունների առանձնահատկությունները:

Գիտական խորհրդի (13.01.2017թ.) նիստի հաջորդ հարցը, որը քննարկման ներկայացրեց պրոռեկտոր Դ.Պետրոսյանը ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ գործող գիտահետազոտական ինստիտուտների և գիտական պրոբլեմային լաբորատորիաների, ինչպես նաև դրամաշնորհային (թեմատիկ) 11 ծրագրերի» ընթացիկ տարեկան հաշվետվություններն էին, որոնք հաստատվեցին և երաշխավորվեցին հետագա ֆինանսավորման համար:

Կարևոր հարցերից, որ լսվել է համալսարանի գիտական խորհրդի նիստում (23.02.2017թ.), «ՀԱԱՀ-ում ուսանողների հաճախումների վիճակը» հարցն է: Նշվեց, որ 2016-2017 ուսումնական տարվա 06.02.2016թ. – 17.02.2017թ. ժամանակահատվածում կատարվել է ուսանողների հաշվառում, որի արդյունքներն ըստ ֆակուլտետների և ամբիոնների ներկայացրեց ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Ս.Դավեյանը: Արձանագրվեց, որ հաճախումների մակարդակը միջինում տատանվում է 70 %-ի սահմաններում, որը չափազանց մտահոգիչ է, քանի որ նման վիճակով հնարավոր չէ կազմակերպել և իրականացնել պատշաճ ուսումնական գործընթաց:

Հանձնարարվեց ֆակուլտետների դեկաններին մանրակրկիտ քննարկել բարձրացված հարցը և ձեռնարկել համապատասխան միջոցներ վիճակը շտկելու համար:

ՀԱԱՀ ռեկտորի հրամանով (22.12.2014թ. N124) ստեղծված համալսարանի համակարգողների խորհրդի անդամ, դոցենտ Ա.Սամվելյանը 14.03.2017թ. գիտական խորհրդի նիստում ներկայացրեց «Ֆակուլտետներում մասնագիտությունների

համակարգողների կողմից տարվող աշխատանքների վիճակը և բարելավման խնդիրները>> հարցը: Նա տեղեկացրեց, որ վերջին տարիներին համակարգողների կողմից կատարվել է զգալի աշխատանք, մասնավորապես առաջին կուրսերի ուսանողների հետ:

<<Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական կենտրոն մասնաճյուղերի փորձակայաններում գիտական հետազոտությունների հետ փոխկապակցված արտադրական գործունեության իրականացման խնդիրների վերաբերյալ>> հարցը գիտական խորհրդի քննարկմանն է ներկայացվել 2017թ. մարտի 20-ի նիստում (Դ.Պետրոսյան): Նշվեց, որ գիտական կենտրոն մասնաճյուղերն Ագրարային համալսարանի հետ միավորվելուց հետո համալսարանը արտաբյուջետային միջոցներից լուրջ ներդրումներ է արել փորձակայաններում և կատարվել են մեծածավալ աշխատանքներ:

2017թ. ապրիլի 5-ի գիտական խորհրդի նիստում լսվել և քննարկվել է «Համալսարանի գիտական ստորաբաժանումներում և ամբիոններում 2016 թվականին իրականացված գիտական աշխատանքների ընթացքը և խնդիրները» հարցը: Հիմնական զեկուցողներից հետո (գիտ. դեպարտամենտի պրոռեկտոր Դ.Պետրոսյան), քննարկվող հարցի վերաբերյալ զեկուցեցին՝ ,Հրանտ Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոնիե տնօրեն Հ.Ղազարյանը, <<Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոնի>> տնօրեն Ա.Սահակյանը, «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոնի» տնօրեն Ֆ.Հարությունյանը: Նշվեց, որ հետազոտական աժխատանքներում ցածր է ուսանողների ու մագիստրոսների ներգրավման աստիճանը և քիչ են ընդգրկված երիտասարդ հետազոտողները: Քննարկման արդյունքում որոշվել է ավելացնել ֆինանսավորվող և նախաձեռնողական ծրագրերում ընդգրկված ուսանողների, մագիստրանտների թվաքանակը:

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման քաղաքականությունը համալսարանի համար շարունակվում է մնալ ռազմավարական զարգացման գլխավոր ուղղություններից մեկը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն, պրոռեկտոր Վ.Մելքոնյանը գիտական խորհրդի նույն նիստում ներկայացրեց հաշվետվություն <<Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում>> ծրագրի շրջանակում Գերմանիայի Դաշնային Հանրապետություն այցի վերաբերյալ:

2017թ. ապրիլի 10-ի գիտական խորհրդի ընդլայնված նիստում քննարկվել են գյուղատնտեսության զարգացմանը նպաստող՝ ՀՀ վարչապետի կողմից համալսարանին հանձնարարված ռազմավարական ծրագրերի մշակման հարցը:

Գիտական խորհրդի 2017թ. ապրիլի 13-ի նիստը նվիրված էր ՀՀ գյուղատնտեսության նախարարության և համալսարանի համատեղ մշակվող աշխատանքային ծրագրերի քննարկմանը: Նիստին մասնակցել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը: Նախարարն առաջարկեց համալսարանի հետ համատեղ ստեղծել միասնական աշխատանքային խումբ, որը տարբեր ուղղություններով հստակ և հիմնավորված ծրագրեր կմշակի:

<<Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակը և բարելավման ուղիները>> հարցի ուսումնասիրության արդյունքները գիտական խորհրդի 2017թ. մայիսի 30-ի նիստում ներկայացրեց ՀԱԱՀ կրթության որակի վերահսկման հանձնաժողովի նախագահ՝ պրոֆեսոր Բ.Շահնազարյանը: Նշվեց, որ ֆակուլտետում որոշակի աշխատանք է կատարվել դասավանդման որակի բարձրացման, ուսանողների առաջադիմության, հաճախումների, պատրաստվող մասնագետների որակի բարձրացման ուղղությամբ, սակայն միաժամանակ արձանագրվել են որոշ խնդիրներ, որոնք լուծում են պահանջում: Քննարկման արդյունքում որոշվել է ուժեղացնել վերահսկողությունը աշխատանքային կարգապահության, ուսանողների հաճախումների, կրթական ժամանակակից տեխնոլոգիաների և նոր մեթոդների ներդրման, բազմագործոնային համակարգերի լիարժեք իրականացման և դրանց կատարման ընթացքի վրա:

2017թ. հունիսի 14-ի գիտական խորհրդի նիստում լսվել և քննարկվել է ավարտական կուրսերում ամփոփիչ ատեստավորման գործընթացում փոփոխություններ կատարելու հարցը: Ռեկտոր Ա.Թարվերդյանը նշեց, որ բուհական համակարգում պետք է գործի միասնական ամփոփիչ ատեստավորում: Այդ ապահովելու նպատակով որոշվեց՝

- ագրոկենսաբանական և ագրոտեխնիկական մասնագիտություններում նախատեսել հիմնականում դիպլոմային աշխատանքի կատարում,

- ագրոտեխնոլոգիական և ագրոճարտարագիտական մասնագիտություններում նախատեսել հիմնականում դիպլոմային նախագծի կատարում,
- «Անասնաբուժություն» և «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» մասնագիտություններում նախատեսել պետական համալիր երկու քննություն՝ մասնագիտական առարկաներից:

«Ուսումնական աշխատանքների կազմակերպման, կրթության որակի վիճակը և բարելավման ուղիները ՀԱԱՀ Վանաձորի և Սիսիանի մասնաճյուղերում» հարցը (զեկուցողներ՝ Ալ.Հակոբյան, Հ.Բաղդասարյան) լսվել և քննարկվել է գիտական խորհրդի 2017թ. հուլիսի 4-ի նիստում: Հանձնարարվել է մասնաճյուղերում առանձնահատուկ ուշադրություն դարձնել ուսումնական գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման, ուսանողների կողմից գործնական հմտությունների ձեռքբերմանն և պատրաստվող մասնագետների որակի բարելավման աշխատանքներին:

Նույն գիտական խորհրդի նիստում (04.07.2017թ.) ռեկտոր Ա.Թարվերդյանի հրամանով (03.04.2017թ. N51/Ա) ստեղծված հանձնաժողովի նախագահ, դոցենտ Մ.Դանիելյանը գիտական խորհրդի քննարկմանը ներկայացրեց «Մագիստրատուրայում ուսումնական գործընթացի կազմակերպման և մագիստրոսական թեզերի կատարման որակի բարձրացման խնդիրները և բարելավման ուղիները» հարցի ուսումնասիրման արդյունքները:

Քննարկման արդյունքում մագիստրատուրայի բաժնի վարիչ Գ.Գասպարյանին հանձնարարվեց արմատապես բարելավել մագիստրատուրայի բաժին-ամբիոն համագործակցությունը, բարձրացնել վերահսկողությունը մագիստրանտների հաճախումների նկատմամբ:

2016-2017 ուստարվա վերջին գիտական խորհրդի նիստը կայացել է 2017թ. հուլիսի 14-ին: Քննարկմանն է ներկայացվել առկա և հեռակա ուսուցման պետական ատեստավորման հանձնաժողովների աշխատանքների արդյունքները և խնդիրները: Հարցի քննարկման արդյունքում, հաշվի առնելով պետական քննական հանձնաժողովների կողմից արված առաջարկությունները և դիտողությունները, որոշվեց վերանայել դիպլոմային նախագծերի (աշխատանքների) բովանդակության և կառուցվածքի, ժամանակացույցով դրանց կատարման, ձևավորման և պաշտպանության հարցերը:

Համաձայն 2017թ. հունիսի 7-ի Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ներբուհական հայտարարության՝ 14.07.2017թ. գիտական խորհրդի նիստում տեղի է ունեցել Գյուղմեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի և Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետների դեկանների պաշտոնների համար առաջադրված թեկնածուների ընտրություն:

2017-2018 ուստարվա առաջին գիտական խորհրդի նիստը կայացել է 2017թ. օգոստոսի 31-ին: ՀԱԱՀ ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Ս.Դավեյանը ներկայացրեց ,2016-2017 ուստարվա ուսումնական աշխատանքների արդյունքներն ու խնդիրներըե հարցը:

Արձանագրվեց, որ նշված ուսումնական տարում հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի և կրթական բոլոր ստորաբաժանումների աշխատանքներն ուղղված են եղել համալսարանում կրթական գործընթացների պատշաճ կազմակերպմանն ու իրականացմանը, կրթական բարեփոխումների խորացմանն ու ընդլայնմանը, կրթական որակի ապահովմանը և գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի ներդրմանը:

Համաձայն 2017թ. հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հայտարարված մրցույթի՝ 27.10.2017թ. գիտական խորհրդի նիստում տեղի է ունեցել մրցութային գործերի քննարկում և թափուր պաշտոնների թեկնածուների ընտրություն:

Նույն գիտական խորհրդի նիստում քննարկման է ներկայացվել «Կլինիկական ուսուցման բարելավման խնդիրներն Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում» հարցը, որի քննարկման արդյունքում հանձնարարվեց ֆակուլտետի դեկան Ա.Վարդանյանին և կլինիկական ամբիոնների վարիչներին իրականացնել ամենօրյա աշխատանքներ կլինիկական ուսուցման որակի բարձրացման նպատակով:

ՀԱԱՀ գիտական խորհուրդը, կարևորելով ագրարային ոլորտի բարձրորակ մասնագետներ պատրաստելու հարցը, 30.11.2017թ. նիստում քննարկել է «Առաջին կուրսերում ուսումնական գործընթացի և ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման ընթացքը և խնդիրները» հարցը: Նշվեց, որ անցած 3 ամիսների ընթացքում

առաջին կուրսերի ուսանողների հետ կատարվել են որոշակի կազմակերպչական աշխատանքներ, հատկապես դպրոց-բուհ անցումային դժվարությունների հաղթահարման ուղղությամբ: Սակայն, միաժամանակ արձանագրվեց, որ առաջին կուրսերի հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներում կան թերություններ, որոնք լուծում են պահանջում:

ՀԱԱՀ ռեկտորի 2017թ. հոկտեմբերի 4-ի թիվ 06/4 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի նախագահ Բ.Շահնազարյանը 30.11.2017թ. գիտական խորհրդի նիստում ներկայացրեց «2016-2017 ուստարում համալսարանի գիտական խորհրդի հանձնարարականների կատարման ընթացքը և վիճակը» հարցի ուսումնասիրության արդյունքները: Նշվեց, որ բոլոր մակարդակներում գիտական խորհրդի հանձնարարականները հիմնականում կատարվել են:

«Համալսարանի գիտական ստորաբաժանումներում 2017թ. կատարած հետազոտական աշխատանքների արդյունքները» հարցի քննարկմանն էր նվիրված գիտական խորհրդի 2017թ. դեկտեմբերի 15-ի նիստը: Հարցը ներկայացրեց պրոռեկտոր Դ.Պետրոսյանը: Նշվեց, որ հաշվետու ժամանակահատվածում համալսարանում գիտական գործունեության ոլորտում արձանագրվել են որոշակի հաջողություններ: Որոշվեց հաստատել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում բաղադրիչով բազային ֆինանսավորմամբ 2017թ. իրականացված 12 ծրագրերի տարեկան և դրամաշնորհային (թեմատիկ) ֆինանսավորմամբ 11 ծրագրերի ամփոփիչ հաշվետվությունները և երաշխավորել հետագա ֆինանսավորման:

Գիտական խորհրդի նիստերում լսվել և քննարկվել են դոկտորական, թեկնածուական ատենախոսությունների հրապարակային պաշտպանության երաշխավորության, ատենախոսական թեմաների հաստատման, գիտական ղեկավարների նշանակման և հայցորդների ձևակերպման հարցերը:

Սահմանվել են անհատական կրթաթոշակներ և հաստատվել են անհատական կրթաթոշակների թեկնածուները, շնորհվել են պատվավոր կոչումներ և ընդունվել են որոշումներ պատվոգրերով և մեդալներով պարգևատրելու մասին: Իրականացվել է պրոֆեսորադասախոսական կազմի ընտրություն՝ փակ (գաղտնի) քվեարկությամբ: Սահմանված կարգով շնորհվել են պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ (մանրամասն տես գիտական խորհրդի արձանագրությունները):

11. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում կայացել է ռեկտորատի 19 նիստ՝ ռեկտորատի բոլոր անդամների և հրավիրվածների մասնակցությամբ:

Ռեկտորատի նիստերում քննարկվել են՝

1. ա) Ըստ ամիսների ուսանողների հաճախումների և դասաճախողումների վիճակը, բաց թողած ժամերի լրացման վիճակը, միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքները, շրջափոխման արդյունքները, ակադեմիական պարտքերի մարման ընթացքը և արդյունքները (14 հարց):

Ռեկտորատի նիստերում ընդունվել են ակադեմիական պարտքերի հանձնման ժամկետների, միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքների, քննությունները սահմանված ժամկետներում չհանձնելու, ավելի մեծ թվով բացակայություններ ունեցող ուսանողների հեռացման վերաբերյալ որոշումներ:

բ) Ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակը և խնդիրները համալսարանի ամբիոններում (2 հարց):

գ) Համալսարանի վճարովի համակարգի ուսանողների ուսման վարձերի զեղչերի քննարկում (3 հարց):

2. Հեռակա ուսուցման դեպարտամենտում 2017-2018 ուստարվա ընդունելության արդյունքները (1 հարց):

3. Ըստ կրթական ծրագրերի բանվորական մասնագիտությունների առարկայական ծրագրերի և որակավորման բնութագրերի մշակումը (1 հարց):

4. Համալսարանի բոլոր մասնագիտություններում ,Ֆերմերային տնտեսությունների կազմակերպում, կառավարումե առարկայի ծրագրերի քննարկում (1 հարց):

5. Համալսարանի 3-ամյա 2017-2019թթ. ծրագրերի վերաբերյալ հարցը (1 հարց):

6. ՀՀ ԿԳ նախարարի մարտի 13-ի թիվ 01/122/3/52-17 գրությամբ ներկայացված ՀԱԱՀ-ի <<Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն>> մասնաճյուղի Երասխահունի փորձամելիորատիվ կայանում կատարված ուսումնասիրությունների արդյունքների քննարկումը (1 հարց):

7. 2017թ. նոյեմբերին կայացած գիտաժողովի նախապատրաստման ընթացքը և խնդիրները (1 հարց):

8. ՀՀ ԿԳ նախարարի գրությունների քննարկում մարտական հերթապահության մասնակցած ուսանողների ուսման վարձերի զեղչերի վերաբերյալ (3 հարց):

9. <<Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին ՀՀ օրենքի>> նախագծի քննարկում (1 հարց):

Ռեկտորատի յուրաքանչյուր նիստում քննարկվել են ընթացիկ հարցեր:

Ռեկտորատի նիստերում քննարկված բոլոր հարցերի վերաբերյալ կայացվել են որոշումներ (տես ռեկտորատի արձանագրությունները):

12.ԿԱԴՐԵՐ ԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐ

(2018թ.-ի հունվարի 1-ի դրությամբ)

Համաձայն ՀԱԱՀ-ի հաստատված հաստիքացուցակի 2018թ. հունվարի 1-ի դրությամբ համալսարանի և նրա մասնաճյուղերի առկա փաստացի հիմնական աշխատակիցների թիվն է 1527, որից՝

Վանաձորի մասնաճյուղ - 26,
Սիսիանի մասնաճյուղ - 26,
Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն մասնաճյուղ - 65,
Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն- մասնաճյուղ - 32,
Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն- մասնաճյուղ - 24,
Շիրակի ակադեմիկոս Մ.Թումանյանի անվան գյուղատնտեսական քոլեջ-մասնաճյուղ - 38,

Համալսարանի հիմնական փաստացի աշխատակիցների թիվն է՝ 1316:

Բացի այդ տարվա ընթացքում սեզոնային աշխատանքներ կատարելու համար աշխատանաքային պայմանագրեր են կնքվել **66** անձանց հետ:

Շին. վերանորոգման աշխատանքներ կատարելու համար աշխատանաքային պայմանագրեր են կնքվել **103** անձանց հետ :

Քաղաքացիաիրավական պայմանագրեր 2017 թվականի ընթացքում կնքվել է **196** անձանց հետ:

Ստորև բերված աղյուսակում խմբավորված են փաստացի աշխատակիցների թվաքանակն ըստ գործունեության ոլորտների:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում	Հիմնական փաստացի աշխատողների թիվը	
Վարչական	43	
Պրոֆեսորադասախոսական անձնակազմ	565	
Պրոֆեսորադասախոսական անձնակազմում ընդգրկված է 605 դասասխոս, որից ներքին համատեղությամբ աշխատակիցների թիվը կազմում է 40 դասախոս:		
Ժամավճարային դասախոսներ	1	
Դեկանատների, ամբիոնների և լաբորատորիաների ուսումնաօժանդակ անձնակազմ	206	
Ուսումնամեթոդական կենտրոն	26	
Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոն	80	
Գիտության դեպարտամենտ՝ իր ստորաբաժանումներով	15	
բազային ֆինանսավորմամբ ԳՀ ինստիտուտ և կենտրոն	52	
պրոբլեմային լաբորատ.(բազային), ծրագրեր		
գիտահետազոտական ինստիտուտներում, պրոբլեմային լաբորատորիաներում ընդգրկված է 140 աշխատող:		
Հեռակա ուսուցման դեպարտամենտ	20	
Ագրոբիզնես դեպարտամենտ	4	
Ագրոբիզնես դեպարտամենտի ծրագիր	2	
Ագրոբիզնես դեպարտամենտի ժամավճարային դասախոսներ	6	
Տարվա ընթացքում կնքվել է աշխատանքային պայմանագիր 14 դասախոսների հետ ժամավճարային կարգով աշխատելու համար:		
Տնտեսական մաս	174	
Քոլեջ	8	
Հենակետային վարժարան	27	

Լեզվի կենտրոն	1	
Լեզվի կենտրոնի դասախոսներ	2	
Առանձնացված բաժիններ՝ լրատվության և հասարակայնության հետ կապերի արխիվ ակումբ պատմության թանգարան	8	
«Բալահովիտ» և «Ոսկեհատ» ՈՒՓՏՄ միավորում	47	
Տարվա ընթացքում սեզոնային աշխատանքներ իրականացնելու համար կնքվել է աշխատանքային պայմանագիր 43 մարդու հետ:		
Աղավնաձորի «Զարթոնք» հանգստյան տուն	23	
Տարվա ընթացքում սեզոնային աշխատանքներ իրականացնելու համար կնքվել է աշխատանքային պայմանագիր 23 մարդու հետ:		
Ուսանողական սննդի կազմակերպման սեկտոր	6	

2017 թ. ընթացքում՝ աշխատանքի են ընդունվել 10 երիտասարդ դասախոս:

26 աշխատակիցներ համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու կապակցությամբ ենթարկվել են վարչական տույժի (ստացել են նկատողություն):

2017 թ.-ի ընթացքում 5 աշխատող պարգևատրվել են համալսարանական «Ոսկե հուշամեդալներով» և պատվո գրերով, 1 աշխատող՝ շնորհակալագրով:

Համալսարանի ֆինանսատնտեսական գործունեությունը պայմանավորող մյուս կարևոր ցուցանիշի՝ հաստիքակազմի պատկերը հետևյալն է.

ա. Պրոֆեսորադասախոսական կազմ՝ 565, որից 40-ը՝ ներքին համատեղությամբ,

ժամավճարային դասախոս՝ 1 -ը

բ. Ուսումնաօժանդակ անձնակազմ՝ 206

Լեզվի կենտրոն – 1+ 2 դասախոս,

Ագրոբիզնես դեպարտամենտ – 4 + 6 ժամավճարային դասախոսներ + 2 ծրագիր

Հարաբերակցությունը՝ 3,0 , ինչը ագրարային համալսարանի համար լավ ցուցանիշ է:

գ. Տեղեկատվան տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոն՝ 80,

դ. Վարչական աշխատողներ՝ 43,

ե. Ուսումնամեթոդական կենտրոն՝ 26,

զ. Հեռակա ուսուցման դեպարտամենտ և պետական քոլեջ՝ 20,

է. Հենակետային վարժարան՝ 27,

ը. Գիտական կենտրոն իր բոլոր ստորաբաժանումներով 67 , որից 52 զուտ գիտական:

թ. Տնտեսական մաս՝ 174, որից 7-ը՝ որոշակի ժամկետով:

ժ. Առանձնացված ստորաբաժանումներ 8 ,

Ընդհանուր թվից 1527, գիտամանկավարժականը՝ 978 (շուրջ 64%), սա նույնպես լավ ցուցանիշ է:

Տարվա ընթացքում ընդունվել են աշխատանքի 516 մարդ, ազատվել են՝ 569 մարդ:

2017 թվականի ընթացքում ընդունվել և ազատվել են

	Ընդունում	*Ազատում*	*աշխատողների ընդհանուր թվաքանակը*
ամիսը	թվաքանակը	թվաքանակը	
2017թ-ի հունվարի 1-ի դրությամբ	-	-	1580
հունվար	20	35	1565
փետրվար	33	19	1579
մարտ	54	9	1624
ապրիլ	49	42	1631
մայիս	14	73	1572
հունիս	51	67	1556
հուլիս	22	9	1569
օգոստոս	49	47	1571
սեպտեմբեր	112	82	1601
հոկտեմբեր	30	39	1592
նոյեմբեր	45	63	1574
դեկտեմբեր	37	84	1527
Ընդամենը	**516**	**569**	

ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղ

N⁰	Հաստիքային տարակարգի անվանումը	Հաստատված հաստիքներ	Փաստացի աշխատողների թվաքանակը	
		51	**26**	
1.	Վարչական	9	6	
2.	Ուսումնաօժանդակ	8	7	
3.	Վարչատնտեսական	16	10	
4.	Դասախոսական	18	3	
			Ուսումնական տարվա ընթացքում աշխատանքի են ընդունվել ժամավճարային կարգով 32 մարդ	

ՀԱԱՀ-ի Սիսիանի մասնաճյուղ

N⁰	Հաստիքային տարակարգի անվանումը	Հաստատված հաստիքներ	Փաստացի աշխատողների թվաքանակը	
		37	**26**	
1.	Վարչական	8	7	
2.	Ուսումնաօժանդակ	6	6	
3.	Վարչատնտեսական	11	9	
4.	Դասախոսական	12	4	
5.			Ուսումնական տարվա ընթացքում աշխատանքի են ընդունվել ժամավճարային կարգով 27 մարդ	

ՇԻՐԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ-ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

N⁰	Հաստիքային տարակարգի անվանումը	Հաստատված հաստիքներ	Փաստացի աշխատողների թվաքանակը	
		52	**38**	
1.	Վարչատնտեսական	25	15	
2.	Ուսումնաօժանդակ անձնակազմ	2	2	
3.	Դասախոսական անձնակազմ	25	21	

ՀԱԱՀ-ի ԱԳՐՈԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ-ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

N⁰	Հաստիքային տարակարգի անվանումը	Հաստատված հաստիքներ	Փաստացի աշխատողների թվաքանակը	
		20,5	**24**	
1.	Վարչատնտեսական	9,25	10	
2.	Գիտական աշխատողներ			
	բաժնի վարիչ	1	2	
	ավագ գիտ.աշխատող	2,5	2	
	գիտ.աշխատող	4	6	
	կրտսեր գիտ.աշխատող	1	1	
3.	Ուսումնաօժանդակ անձնակազմ			
	1 կարգի լաբորանտ	1	1	
	2 կարգի լաբորանտ	1,75	2	
			Կենտրոնում աշխատում է 1 գիտությունների դոկտոր, 6 գիտությունների թեկնածու	

ՀԱԱՀ-ի ԽԱՂՈՂԱՊՏՂԱԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ-ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

N⁰	Հաստիքային տարակարգի անվանումը	Հաստատված հաստիքներ	Փաստացի աշխատողների թվաքանակը	
		32,5 + 6 սեզոնային	**32**	
1.	Վարչատնտեսական	10	11	
2.	Գիտական աշխատողներ			
	բաժնի վարիչ	3,5	3	
	առաջատար գիտ. աշխատող	2,5	1	
	ավագ գիտ.աշխատող	5	4	
	գիտ.աշխատող	6,5	7	
	կրտսեր գիտ.աշխատող	1,5	2	
3.	Ուսումնաօժանդակ անձնակազմ			
	լաբորանտ	3,5	4	
4.	Գիտական թեմա	-	-	
			Կենտրոնում աշխատում են 3 գիտությունների դոկտոր, 11 գիտությունների թեկնածու	
	Տարվա ընթացքում սեզոնային աշխատողներ ընդունվել են՝ 6 մարդ			

Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱԳՐՈՔԻՄԻԱՅԻ ԵՎ ՄԵԼԻՈՐԱՑԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ-ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

N⁰	Հաստիքային տարակարգի անվանումը	Հաստատված հաստիքներ	Փաստացի աշխատողների թվաքանակը	
		77,5 + 15 սեզոնային	65	
1.	Վարչատնտեսական	18	15	
2.	Գիտական աշխատողներ			
	բաժնի վարիչ	5	4	
	առաջատար գիտ.աշխատող	1	-	
	ավագ գիտ.աշխատող	10,5	10	
	գիտ.աշխատող	7	4	
	կրտսեր գիտ.աշխատող	4	3	
	լաբորատորիայի վարիչ	3	2	
	քիմիկ-անալիտիկ	13	13	
	լաբորանտ	-	-	
	գործավար, օպերատոր-տեխնիկ	7	6	
	Երասխահունի փորձակայան	9 + 15 սեզոնային	6	
	գիտական թեմա	1	2	
			Կենտրոնում աշխատում են 5 գիտությունների դոկտոր, 14 գիտությունների թեկնածու	
	Տարվա ընթացքում սեզոնային աշխատողներ ընդունվել են՝ 15 մարդ			